ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՔԱՄԻՆ

ԱԲԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

DARAK
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 821.19-31 Միքայելյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Մ 780

Խմբագիր՝ Վարդան Օնանյան

Միքայելյան Աբել
Մ 780 Փոփոխության քամին/ Ա. Միքայելյան.-Եր.: Դարակ, 2020.-
304 էջ:

Աբել Միքայելյանի «Փոփոխության քամին» վեպի իրադարձությունները տեղի են ունենում 2018 թվականին: Արտասովոր սյուժեով այս վեպում, որի գործողությունները սրընթաց զարգացում ունեն ու մինչև վերջ լարվածության մեջ են պահում ընթերցողին, ուղեկցվում են Հայաստանում քաղաքական իրադարձությունների համայնապատկերի ներկայացմամբ: Վեպն ունի վառ արտահայտված հերոսներ, որոնք տիպական, ընդհանրական բնույթ ունեն, և նրանց նկատմամբ վերաբերմունքով ի ցույց են դրվում հեղինակի քաղաքացիական ազնիվ մոտեցումները: Վեպը կառուցված է արկածային վեպին հատուկ տարրերով, ունի հումորի անսպառ չափաբաժին, միանգամից կլանում է ընթերցողին՝ թողնելով մեծ տպավորություններ:

ՀՏԴ 821.19-31 Միքայելյան
ԳՄԴ 84(5Հ)-44

© «Դարակ» հրատարակչություն, 2020
© Միքայելյան Աբել, 2020
© Գրիգորյան Արիկ, նկարիչ, 2020

ISBN 978-9939-885-25-4

ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՔԱՄԻՆ

ԱԲԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆ

Երբ այս գիրքը տպարան էր գնում, մեր Հայրենիքում հերթական պատերազմը սկսվեց, ճիշտ կլինի ասել՝ ընդհատված պատերազմը բորբոքվեց նոր, չտեսնված ու նախադեպը չունեցող թափով:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին փոփոխության քամին վերածվեց պատերազմի փոթորկի:

Երբ այս գիրքը դուրս կգա տպարանից, ու դուք էլ կարդալիս կլինեք այս տողերը, պատերազմը գուցե ավարտված լինի, գուցե դեռ կռվելիս լինենք օրվա հաղթանակների համար և երազելիս այն մեծ ու իրական հաղթանակի մասին, որն անպայմանորեն գալու է:

Յանկացած պարագայում՝ դրա մասին էլ է գրվելու... Գրելու է այս գրքի հեղինակը... Հայտնի չէ, երևի կգրի, եթե ողջ-առողջ լինի, եթե ցանկություն ու տրամադրություն ունենա:

«Փոփոխության քամին» էլ տրամադրություն ունենալու արդյունք է՝ գրելու տրամադրություն, որն ընկերոջս՝ հեղինակին, ոչ ամեն օր էր այցելում, բայց երբ նա «հավես» ու ժամանակ էր ունենում՝ գրում էր:

Եվ, ահավասիք, այս գիրքը, որը մինչև կարդալն էլ գիտեի, որ կարդալու բան է լինելու, վստահ էի, որ մեր ու մեր ժամանակների մասին է, մեր տեսակի ու մեր հայրենիքի: Վստահ էի, որովհետև նախորդ գրքերը՝ «Կարուսելն» ու «Քաղաքական հարբեցողությունը» նման իրավունք տվել էին: Կարդացողը կհամաձայնի: Դրանում էլ եմ վստահ:

«Փոփոխության քամին» գեղարվեստա-փաստագրա-

վերլուծական պատմություն է: Գեղարվեստական առումով, համոզված եղեք՝ հավանելու եք, կարդալու, ինչպես ասում են՝ մեկ շնչով: Արկածային գրականության գործող ու չգործող օրենքները պահպանված են: Փաստագրական տեսանկյունից անխոցելի է. հեղինակը պարբերաբար մեջբերելով պաշտոնական լրահոսը հիշեցնում է 2018-ի գարնանից սկսած ներքաղաքական անցուդարձը, որն հետագա աղավաղումից ապահովագրված չէ: Վերլուծական առումով գիրքը մտածելու նյութ է տալու: Այսօրվա ընթերցողն ընդունելու է կտրուկ՝ «այո» կամ «ոչ»-ի սկզբունքով: Քամի բերողները, քամու հետ եկածներն ու քամուն ընդդիմացողները գոնե այս պահին (2020 թվական) շատ չեն փոխվել: Ուրիշ բան, թե տարիներ կամ տասնամյակներ անց ինչպես կընկալի հեղինակի մտքերը սովորական ընթերցողը:

Ամեն դեպքում, գիրքը մեր իրական պատմությունն է, այստեղ, ուզենք-չուզենք՝ բոլորս կանք: Մտահոգ կամ անտարբեր, ակտիվ մասնակից կամ կողքից «թամաշա» անող, «սև» կամ «սպիտակ», նախկին կամ ներկա:

Ինչևէ. հուսամ, որ «փոփոխության քամին» ընթերցելու պահին Հայաստան աշխարհում անցած կլինի պատերազմի փոթորիկը, չի լինի նաև ներքին անհանդուրժողականության մթնոլորտը, փոխարենը կթևածի խաղաղության ու համերաշխության մեղմ զեփյուռը, որն այնքան կարևոր է ներքին և արտաքին արդարության հասնելու համար:

ՎԱՐԴԱՆ ՕՆԱՆՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՊԵՍ ՄԻ ԲԱՆ

Այս պատմությունը, որ պատահեց Հայաստանում երկու հազար տասնութ թվականին, իհարկե կարող էր պատահել այլ երկրում, այլ թվականի:

Օրինակ… կարևոր չէ:

Որովհետև, եթե անգամ պատահել է մի տեղ, մի թվականի, դրանից ոչինչ չի փոխվում: Մեծ է հավանականությունը, որ նման մի բան նորից տեղի կունենա ուրիշ մի տեղ, ուրիշ մի թվականի, և սա էլ չէ էականը:

Ճանապարհը, որով անցնում են աշխարհի երկրներում ապրող ժողովուրդները, եթե անգամ նույնը չէ, միևնույն է՝ նույնն է: Պարզապես որոշ ժողովուրդներ այդ ճանապարհի տասներորդ կիլոմետրին են, որոշները՝ հիսուն, իսկ որոշներն էլ՝ հարյուր հիսուն: Այն, ինչ պիտի տեղի ունենա հիսուներորդ կիլոմետրին, բոլորի մոտ էլ տեղի է ունենում, գուցե տարբերվող սյուժեներով ու հերոսներով, բայց իմաստը նույնն է:

Լինում է իհարկե նաև այնպես, որ որոշ ժողովուրդներ առաջ են ընկնում իրենց ժամանակից և այն մանևրը, որ պիտի անեին հիսուներորդ կիլոմետրին, անում են երեսունին: Դա, որպես կանոն, նրանց դուրս է գցում ճանապարհից և բավականաչափ ժամանակ է պահանջվում, մինչև նրանք ելնեն ընդհատումից ու նույն կետից շարունակեն իրենց ճանապարհը:

Մի բան է հստակ՝ աշխարհը զարգանում է, և ոչ մի ժողովուրդ չի կարող անմասն մնալ այդ զարգացումից: Աշխարհի երկու տարբեր կետերում կանանց վրա քարեր չեն նետում, կամ ոստիկանական բաժանմունքներում մարդկանց ծեծելով ցուցմունքներ չեն կորզում, կամ ընտրություններ չեն կեղծում, կամ անճաշակ երաժշտություն չեն լսում

քսան, հիսուն տարի և անգամ մեկ դար տարբերությամբ: Ընդամենը պիտի հասունանա դրա ժամանակը, և աշխարհի այդ կետում ապրող այդ ժողովուրդը դրան պատրաստ լինի: Այլապես այս ամենը բնական չի լինի և ոչ մի օգուտ չի տա ոչ ծեծվողին, ոչ ընտրություններին, ոչ երաժշտությանը, ոչ պետությանը, ոչ էլ ժողովրդին:

Բայց անդրադառնանք այս պատմությանը, որը տեղի ունեցավ Հայաստանում՝ երկու հազար տասնութ թվականին:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ԿԻՐԱԿՈՍԸ

Երբ քսանութ տարվա բացակայությունից հետո Պետրոսն առաջին անգամ պիտի ոտք դներ հայրենի հողին և շնչեր հայրենիքի օդը, ինչպես արդեն ասվեց, երկու հազար տասնութ թվականն էր՝ ապրիլ ամսի վեցը, օրն ուրբաթ: Սակայն առաջինը, ուր ոտք դրեց նա, մի ջրափոս էր, որը գոյացել էր Բագրատաշենի սահմանային անցակետի մուտքի դիմաց, իսկ հայրենի օդի փոխարեն նրա թոքերը լցվեցին դիզելի թանձր ծխով, որն արձակում էին այսուայնկողմ շարված բեռնատարները:

Եվ սա, հավանաբար, խորհրդանշական էր՝ նկատի ունենալով այն, ինչ սպասվում էր Պետրոսին իր կյանքի քսանութերորդ տարում, որը պիտի անցկացներ Հայաստանում:

Անքուն գիշերից հետո սահմանապահները, մաքսավորները, ուղևորներն ու մի անտեր շուն հորանջելով դիմավորում էին անձրևոտ լուսաբացը: Սառը քամի էր խաղում՝ ցրելով ողջ գիշեր կուտակված ու չհավաքված աղբը: Ինչ-որ մեքենայից լսվում էր երաժշտության պես մի բան, մեկն ասում էր, որ մենակ է մնացել այս աշխարհում ու թախանձագին խնդրում էր մեկ ուրիշին՝ մի գնա:

Եվ այս անհյուրընկալ մթնոլորտում Պետրոսին ուրիշ ոչինչ չէր մնում անել, քան փոխել թրջված գուլպան: Ու գուցե մի բաժակ սուրճ խմել:

Գուլպան, ավելի ճիշտ՝ գուլպաները Պետրոսը որոշեց փոխել «Ոսկե թագ» անվամբ խանութ-սրճարանում, որն իրենից ներկայացնում էր տեղ-տեղ ժանգոտած ու ծռմռված նախկին մի վագոն կամ նման մի բան, և որի ցուցանակին, ոսկե թագից բացի, նկարված էին նաև հինգ շողշողացող աստղեր: Ցուցափեղկ-սառնարանի հետևում՝ էլեկտրական սալօջախի վրա կռացած, թմբլիկ մի կին ինչ-որ բան էր խառնում՝ իսկ երեք սեղաններից մեկի մոտ նստած էր սպիտակ

կեպիով ու սպիտակ կաշվե բաճկոնով մի տղամարդ, ում համար էլ ըստ ամենայնի չարչարվում էր տիկինը՝ քնքշորեն տարուբերելով ծավալուն հետույքը:

-Պարո՛ն զբոսաշրջիկ, սա Ձեզ համար հանդերձարան չէ,- կոտրտված անգլերենով Պետրոսին դիմեց տղամարդը,- մարդիկ այստեղ պատրաստվում են նախաճաշել:

Սպիտակ կեպիով տղամարդու անունը Կիրակոս էր, և նա էլ քիչ առաջ էր եկել հայրենիք, բայց չէր հայտնվել այն ջրափոսում, որում հայտնվել էր Պետրոսը, որովհետև վրաց-հայկական սահմանը հատել էր իր «Range Rover»-ով: Նա թքած ունենալու աստիճանի անտարբեր էր եղել նաև այն ամենին, ինչ տեսել կամ չէր տեսել շուրջը՝ նրան չէր հետաքրքրել լուսաբացը, նրան չէին մտահոգել անձրևն ու քամին: Փոխարենը Կիրակոսի մոտ անզուսպ ցանկություն էր առաջացել լոլիկով ձվածեղ ուտելու, և նա նույնպես մտել էր առաջին պատահած սրճարանը, նույն սրճարանը, ուր քիչ հետո պիտի մտներ Պետրոսը: Սրճարանն այդ, որ կոչվում էր «Ոսկե թագ» ու այնքան սրճարան չէր, որքան՝ խանութ, ուներ մի աշխատակցուհի, ով համատեղության կարգով նաև տիրուհին էր, և ում անունն, ի դեպ, Թագուհի էր: Թագուհին մաքսատան նախկին պաշտոնյաներից մեկի նախկին սիրուհին էր և իր վագոն խանութում արդեն տասնհինգ տարի մթերքից ու ծխախոտից բացի վաճառում էր նաև սուրճ, կարկանդակներ ու այլ մանր-մունր բաներ, բայց լոլիկով ձվածեղ դեռ երբեք չէր վաճառել: Եվ այսօր էլ չվաճառեց, այլ հյուրասիրեց, որովհետև Կիրակոսն ամենևին էլ այն մարդը չէր, ում ինչ-որ վագոն-խանութի տիրուհի և առավել ևս՝ նախկին մաքսավորի նախկին սիրուհի կարող էր մերժել ինչ-որ հարցում և կամ նրան հյուրասիրելու առիթը բաց թողնել:

-Ինչո՞ւ որոշեցիք, որ ես զբոսաշրջիկ եմ,- իրեն ուղղված կոտրտված անգլերենով նկատողությանը հայերենով արձագանքեց Պետրոսը՝ շարունակելով փոխել թաց գուլպաները:

Կիրակոսը աչքերից քիչ բարձրացրեց սպիտակ կեպին, ծոցագրպանից հանեց ակնոցի տուփը, տուփից՝ ակնոցը, անշտապ մաքրեց այն թավշյա կտորով, դրեց աչքերին և սկսեց ուշադիր նայել Պետրոսին:

-Զբոսաշրջիկ եք,- ասաց նա:

Հետո աչքերից հանեց ակնոցը, նորից դրեց այն տուփի մեջ, տուփը դրեց գրպանը, կեպին քաշեց աչքերին և մի ծխախոտ վառեց:

Պետրոսը ոչինչ չասաց, հագավ կոշիկները, վերցրեց ուսապարկը, դուրս եկավ, թաց գուլպաները նետեց շեմի աղբարկղը և մոտեցավ քիչ այն կողմ տեղադրված սուրճ պատրաստող սարքին:

Այդ ընթացքում Թագուհին հասցրեց սեղանին դնել ափսեով ձվածեղը, երկու հատ կարտոֆիլով կարկանդակ ու մի շիշ հանքային ջուր:

-Հաց չունեմ, հարգելիս, դեռ չեմ ստացել,- դիմեց նա Կիրակոսին:

-Իսկ կարկանդակը ե՞րբ եք ստացել:

-Դե լա՛վ, երեկվա է, շատ հին չէ:

Կիրակոսը ոչինչ չասաց, այնպիսի արագությամբ կլանեց ողջ սնունդը, կարծես վախենում էր, որ գլխավերևում կանգնած Թագուհին կփոշմանի ու այն հետ կտանի: Հետո խմեց հանքային ջուրը, վեր կացավ, մի լավ բղկաց ու ասաց.

-Այս լոլիկով ձվածեղը քիչ էր մնում ինձ ստիպեր, որ Ձեզ ամուսնության առաջարկ անեմ, բայց ամեն ինչ փչացրին մեկ օրվա վաղեմության կարկանդակները: Ես հիմա գնում եմ, բայց խոստանում եմ մի առավոտ նորից վերադառնալ:

-Գուցե միասին սո՞ւրճ խմենք, ես դեռ սուրճ չեմ խմել,- կմկմաց խանութպանուհին:

Բայց Կիրակոսն արդեն դրսում էր:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍԸ ՄՆԱՆԿԱՑԱՎ

Հայաստան գալուց մեկ ամիս առաջ սկսվեցին Պետրոսի անհաջողությունները: Լաս Վեգասի «Վին» հյուրանոցի իր համարում նա հաշվում էր վերջին երկու ամսվա ընթացքում աշխատած գումարը, և երբ հասել էր հարյուր հիսուն հազարին, սենյակի դուռը թակեցին:

-Պետք չէ, հետո եկեք,- ձայն տվեց նա՝ մտածելով, որ թակողը մաքրուհին է:

-Հյուրանոցի անվտանգության ծառայությունից է, խնդրում ենք բացել,- լսվեց դռան հետևից:

Պետրոսը հապճեպ պայուսակը լցրեց մինչև վերջ չհաշված թղթադրամները, պայուսակը խոթեց զգեստապահարանը, մոտեցավ դռանը և կիսաբաց արեց այն:

-Լսում եմ,- ասաց:

Դռան հետևում կանգնած էին երեքը՝ սափրած գլխով բարձրահասակ մի սևամորթ, որի դեմքին նայելուց հետո մյուս երկուսին կարելի էր այլևս չնայել:

Նրանք ներս մտան և շատ քաղաքավարի բացատրեցին Պետրոսին, որ նրա վերջին խարդախությունը բացահայտված է, և առաջարկեցին նրան կամավոր վերադարձնել նախօրեին «Վին» խաղատան դրամարկղից ստացած ութսունութ հազար դոլարը՝ հակառակ դեպքում սպառնալով դիմել ոստիկանություն:

-Սյանցզյանն ամեն ինչ խոստովանել է,- ասաց անվտանգության ծառայության աշխատակիցներից մեկը:

Սյանցզյանը «Վին» խաղատան դիլերուհին էր, ում վրա Պետրոսը բավականաչափ ժամանակ և այլ ռեսուրսներ էր ծախսել: Ուղիղ երկու շաբաթ ուսումնասիրել էր մի քիչ փոքրամարմին ու մի քիչ հրապուրիչ այս չինուհու առօրյան, որո-

շակի տեղեկություն հավաքել նրա անցյալից, հետո ծանոթացել էր հետը, ևս երկու շաբաթ սիրահետել ու նոր միայն առաջարկել գործարքը: Ընդհանրապես Պետրոսի «գործընկերները» երկու տիպի էին լինում՝ նրանք, ովքեր Պետրոսի հետ գործարքի էին գնում շահախնդրորեն և նրանք, ովքեր դա անում էին բացառապես անշահախնդրորեն՝ հանուն սիրո: Սյանցզյանը երկրորդ տեսակն էր և երկու շաբաթվա ընթացքում հասցրել էր այնպես սիրահարվել Պետրոսին, որ մոռացել էր աշխարհում ամեն ինչ, բացի խարտյաշ մազերով այս երիտասարդի երկնագույն աչքերից: Իսկ գործարքը, որը Պետրոսն առաջարկում էր իր «գործընկերներին»՝ տարբեր խաղատների «Բլեք ջեք» թղթախաղի դիլերներին, շատ պարզ էր՝ օգնել իրեն հաղթել՝ խաղի ընթացքում նախապես պայմանավորված ժեստերով հուշումներ անելով: Հաղթած գումարը Պետրոսը կա՛մ կիսում էր «գործընկերոջ» հետ, եթե վերջինս շահախնդրորեն էր մտել գործարքի մեջ, կա՛մ թանկարժեք մի զարդ առնում, եթե նա սիրահարվել էր իրեն: Երկու դեպքում էլ գործարքից հետո Պետրոսն անհետանում էր:

Այդպես էր պատրաստվում անել նաև այդ օրը, միայն թե ամեն ինչ խառնեցին «Վին» խաղատան անվտանգության աշխատակիցները, ովքեր պարզվեց ունեին ոչ միայն խաղի տեսագրությունը, ուր ակնհայտ երևում էր, որ չինուհի դիլերը բավականին փնթի հուշումներ է անում, այլ նաև տեսագրություններ Լաս Վեգասի տարբեր վայրերից, ուր «սիրահար զույգը» միասին ժամանակ էր անցկացրել:

Եվ Պետրոսը ստիպված էր առանց որևէ խոսքի վերադարձնել ամբողջ ութսունութ հազարը՝ ցենտ առ ցենտ: Միայն թե սա նրա անհաջողությունների դեռ սկիզբն էր:

Պետրոսը դա կռահեց այն ժամանակ, երբ «Վին» հյուրանոցի ավտոկայանատեղիի մուտքի մոտ տեսավ իր մեքենան մոտեցնող տղային. նա չինացի էր: Տղան ժպտաց

չինարեն և ասաց, որ Սյանցզյանն ուզում է խոսել իր հետ: Փոքրամարմին չինուհու հետ մեքենան նստեցին ևս երկու մեծամարմին չինացի, և արդյունքում Պետրոսը Լաս Վեգասից հեռացավ զրո ցենտով և երկու մեծ կապտուկներով՝ երկնագույն աչքերի տակ, որոնք այդպես գերել էին Սյանցզյանին:

Բայց սա էլ դեռ ամբողջը չէր: Տանը, որը Պետրոսը ամսական ինը հազար դոլարով վարձակալում էր Կալիֆորնիայի Սանտա Բարբարա փոքրիկ քաղաքում՝ Խաղաղ օվկիանոսի ափին, նրան նոր անակնկալ էր սպասվում՝ ծանուցում ոստիկանությունից: «Վին» խաղատան անվտանգության ծառայությունը ամեն դեպքում դիմել էր ոստիկանություն՝ այլ կերպ չէր էլ կարող լինել: Պետրոսը պարզապես խաբվել էր՝ վերադարձնելով խաբեությամբ հաղթած գումարը, որովհետև պիտի կռահեր, որ իր առջև թակարդ է: Ինչևէ, հետևանքները կարող էին շատ ավելի ծանր լինել՝ ընդհուպ մինչև կալանավորում, բայց շնորհիվ փորձառու փաստաբանի, որի ծառայությունների համար Պետրոսը ստիպված էր վճարել տարիների ընթացքում կուտակած գրեթե ողջ գումարը, դա տեղի չունեցավ: Միայն թե երիտասարդ խաբեբայի համար այլևս փակ էին Ամերիկայի Միացյալ Նահանգների բոլոր խաղատները՝ Լաս Վեգասից մինչև Ատլանտիկ Սիթի, և հարկավոր էր փող վաստակելու այլ ձևեր փնտրել: Իսկ դրա համար նախնական կապիտալ էր պետք, որը Պետրոսը նույնպես չուներ:

ԿԻՐԱԿՈՍՆ ՈՒ «ԿՈՐՈՎԿԻՆԸ»

«Կորովկին» մսամթերքի գործարանը, որը գտնվում էր Սամարայի մարզի փոքրիկ քաղաքներից մեկում՝ Վոլգա գետի ափին, վաղուց արդեն աշխատում էր վնասով: Երկու տարի առաջ, երբ գործարանի սեփականատեր Նիկոկայ Սոկոլովին սպանեց նրան իսկ պատկանող ֆերմայի ցլերից մեկը, գործարանը և ֆերման ժառանգեց տիկին Վառվառա Սոկոլովան: Առաջին իսկ գործով նա կարգադրեց դելիկատես երշիկի վերածել մարդասպան ցլին, որին հանգուցյալ ամուսինը կոչել էր Վլադիմիր՝ ի պատիվ իր կուռքի:

Գուցե Վլադիմիր ցլի անեծքն էր պատճառը, գուցե տիկին Սոկոլովայի վատ կառավարումը, այնուամենայնիվ, գործարանի վիճակը սկսեց օր օրի վատանալ:

Ասել, որ Վառվառան աշխատանքին քիչ ժամանակ էր հատկացնում՝ ճիշտ չէր լինի: Ամեն օր նա գործարան էր մտնում ցերեկվա ժամը մեկին, անցնում բոլոր արտադրամասերով և ստուգում, որ աշխատողները լինեին տեղում: Աշխատանքի արդյունավետության բարձրացման համար տիկին Սոկոլովան կարգադրել էր վերացնել ճաշի ընդմիջումը: Բայց պետք չէ կարծել, թե տիկինը չափազանց դաժան էր: Սնվել աշխատակիցները կարող էին, միայն նրանք դա պիտի անեին աշխատելով: Ավելին, գործարանի տիրուհին իր աշխատողներից յուրաքանչյուրին ապահովում էր օրը հարյուր գրամ երշիկով, իհարկե խոսքն այն երշիկների մասին էր, որոնք տարբեր պատճառներով չէին առաքվում խանութներ:

Ուղիղ ժամը երկուսին նա նստում էր վերջերս ձեռք բերած իր երեք «PORSCHE»-ներից մեկը, կախված եղանակից՝ ամենագնացը, սեդանը կամ կուպեն, և սլանում էր Սամարա՝ իր սիրելի ֆիթնես ակումբը: Այստեղ նա անցկացնում էր օրը չորս ժամ, երկուսը՝ ցերեկը, երկուսը՝ երեկոյան:

Եվ հենց այստեղ էլ ձմռան մի օր նա հանդիպեց սպիտակ մարզահագուստով, սպիտակ մարզակոշիկով և սպիտակ կեպիով ամրակազմ ու առնական մի տղամարդու: Տղամարդու անունը Կիրակոս էր:

Կիրակոսից ուղիղ մեկ օր պահանջվեց՝ գրավելու հանգուցյալ Նիկոլայ Սոկոլովի ննջասենյակը, որի պատին կախված էր գավառական նկարիչներից մեկի վրձնած այրու մեծադիր նկարը: Իսկ ննջասենյակի հարևանությամբ գտնվող



աշխատասենյակում կար նույն նկարչի վրձնին պատկանող ևս երկու կտավ: Մեկում պատկերված էր Վլադիմիր ցուլը, մյուսում՝ Վլադիմիր կուռքը:

Նոր տարին Կիրակոսն ու տիկին Սոկոլովան նշեցին միասի՝ Եգիպտոսի Շարմ Էլ Շեյխում: Այս հանգիստը Կիրակոսի վրա նստեց ուղիղ յոթանասուն հազար ռուբլի: Եվս այդքան նա ստիպված էր ծախսել առաջիկա երկու ամսվա ընթացքում, մինչև որ կստանար այրու համաձայնությունը՝ վաճառել մսամթերքի գործարանը, ֆերման և «Կորովկին» ապրանքանիշը և ստացված գումարով բացել ֆիթնես ակումբ ՝ «Վառվառա» անվամբ:

Վառվառան վաճառքից գոյացած հարյուր երեսուն միլիոն ռուբլուց տասնհինգ միլիոնը տվեց Կիրակոսին, որ վերջինս Մոսկվայից ձեռք բերի ֆիթնես ակումբի համար անհրաժեշտ սարքավորումները:

Դրանց փոխարեն, սակայն, չորս միլիոն ռուբլով Կիրակոսը ձեռք բերեց «Range Rover» մակնիշի երեք տարեկան սպիտակ մի մեքենա և ուղևորվեց հայրենիք, որն անկեղծորեն կարոտել էր:

«ԺՈՒԼԻԿՆԵՐԸ»

Պետրոսի և Կիրակոսի պես մարդիկ իհարկե շատ են աշխարհում: Պարտադիր չէ, որ նրանք «ալֆոնսներ» կամ խաղացողներ լինեն: Կարող են լինել տաքսու վարորդներ, առևտրականներ, լրագրողներ, բժիշկներ, բանկիրներ, պետական ծառայողներ, քաղաքական գործիչներ, անգամ պետությունների ղեկավարներ:

Կասկածելի ծագման մի բառ կա, որ լավագույնս բնորոշում է այդ մարդկանց՝ «ժուլիկ»: «Ժուլիկները» մեծամասամբ մանր ու միջին են, խոշորները հազվադեպ են պատահում: Բայց երբ պատահում են, կարելի է միայն պատկերացնել, թե որքան մարդ կարող է տուժել նրանց պատահելուց:

Եթե մանր «ժուլիկների» զոհ են դառնում անհատները, միջիններինը՝ տասնյակ մարդիկ, ապա խոշոր ժուլիկների գործունեությունից կարող են վնասվել ամբողջ ժողովուրդներ:

Միշտ չէ, որ «ժուլիկները» չար մարդիկ են կամ վերջացած սրիկաներ, երբեմն նույնիսկ նրանք ընդունակ են լավ արարքների: Կարող են օգնել մեկին կամ շատերին, կամ անգամ մի ամբողջ ժողովրդի: Նրանք կարող են նորմալ ընկեր լինել, կարող են լինել հայրենասեր, բայց միևնույն է՝ «ժուլիկը» մնում է «ժուլիկ»: «Ժուլիկությունը» նրանց էության մեջ է, և նրանք գործում են ավելի շատ բնազդաբար:

Այլ բան է նրանց պարագան, ում խաբում են «ժուլիկները»: Երբեմն անհատներ, երբեմն կոլեկտիվներ, երբեմն՝ մի ամբողջ ժողովուրդ:

Նախ պետք է ասել, որ հեշտ չէ չխաբվելը, բավականին դժվար է: Երբ ասենք ազնիվ մեկը մի գործարարի առաջարկում է դնել պայմանական տասը դրամ և մեկ ամիս հետո ունենալ տասներկուսը, գործարարը մտածում է, որ իրեն խաբում են, և չի համաձայնում: Բայց, երբ առաջարկողը ոչ թե ազնիվ

մեկն է, այլ «ժուլիկ», և առաջարկում է տասը դրամը մեկ ամսում դարձնել ոչ թե տասներկու, այլ՝ հարյուր, գործարարը, չգիտես ինչու, նրան հավատում է և կուլ է տալիս խայծը:

Սա՝ անհատների պարագայում:

Ավելի բարդ է ժողովուրդների պարագան: Երբ ընտրությունների ժամանակ ազնիվ քաղաքական գործիչը խոստանում է բարձրացնել ժողովրդի կենսամակարդակը պայմանական տասը տարում և տասը տոկոսով, ժողովուրդը նրան չի հավատում: Փոխարենը հավատում է «ժուլիկին», ով խոստանում է դա անել անմիջապես և հարյուր տոկոսով:

Բայց ինչո՞ւ միայն ընտրությունների ժամանակ: Լինում է նաև այնպես, որ ժողովուրդը հավատում է «ժուլիկներին», գնում նրանց հետևից և հեղափոխություն անում:

Բայց բավ է ժուլիկների մասին, աշխարհում կան շատ ավելի լավ ու սիրուն մարդիկ: Հատկապես սիրուն: Ինչպես օրինակ՝ Քսյուշան:

ՔՍՅՈՒՇԱՆ

Ռուսաստանցի մուլտիմիլիոնատեր Մարկ Պոպովիչը խալաթով շրջում էր շվեյցարական Ալպերում գտնվող Սենտ Մորից փոքրիկ քաղաքի հյուրանոցի ահռելի համարի հյուրասենյակում և հեռախոսով ինչ-որ մեկի հետ, ըստ ամենայնի, շատ լուրջ հարց քննարկում: Ապակե պատից այն կողմ, նույն համարի ցուրտ պատշգամբում կանգնած՝ ռուսաստանցի մոդել Քսյուշան նայում էր Պիզա Բերնինա լեռան գագաթին, որը հսկա փաթիլների միջից ուրվագծվում էր եղևնիների կատարների ու ձյունածածկ սրածայր տանիքների հետևում:

Քսյուշան մտածում էր, որ Աստծո ամենատարօրինակ ստեղծագործությունն է լեռը: Ինչպես նաև մարդը: Ինչո՞ւ է մարդը ձգտում բարձունքի: Որպեսզի վերևի՞ց նայի իրպեսներին, ինչպես լեռն է նայում դաշտերին ու գետերին, անտառներին ու լճերին, որ նույնպես Աստծո ստեղծագործություն են:

Ահա հյուրանոցի այս համարը, ուր մեկ գիշեր մնալու համար ինքը վճարում է հազար յոթ հարյուր հիսուն շվեյցարական ֆրանկ: Ավելի ճիշտ, վճարում է ոչ թե ինքը, այլ Մարկը, բայց դրանից հարցի էությունը չի փոխվում: Պահարանում կախված է երկու կիսամուշտակ, մեկը՝ ջրասամույրի, մյուսը՝ շինշիլայի մորթուց, որոնցից յուրաքանչյուրի արժեքը տասն անգամ գերազանցում է աղքատ երկրներում ապրող սովորական մարդկանց տարեկան եկամուտը: Երեկվա ընթրիքի համար Մարկը վճարեց մոտ հազար ֆրանկ, որից յոթ հարյուրը՝ մեկ շիշ շամպայնի արժեքն էր, մինչդեռ աշխարհում մի տեղ, ասենք՝ Բոտստվանայում կամ Նեպալում կամ ինչու շատ հեռուն գնալ՝ իր հայրենիք Հայաստանում, շատ շատերն օրվա հացի փող չունեն:

-Կսառես, Քսյո՛ւշա,- պատշգամբի ապակե դուռը բացելով՝ ասաց Մարկը:

-Բան չկա,- առանց շրջվելու արձագանքեց Քսյուշան:

-Ամեն դեպքում ներս արի: Ներքևում նախաճաշե՞նք, թե՞ պատվիրենք համար:

-Գիտե՞ս, Մարկ, մի տեսակ ախորժակ չունեմ. դու իջիր նախաճաշի, ես սուրճին կմիանամ:

Քսյուշան այդպես էլ ներս չմտավ, ոչ էլ շրջվեց: Շարունակեց պատշգամբի բազրիքին հենված նայել Պիզա Բերնինայի գագաթին, որ ձյան առատ փաթիլների միջից ուրվագծվում էր հեռվում:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԼԵՆԻՆՆ ԱՉՔՈՎ ԱՐԵՑ ՊԵՏՐՈՍ ԳՐԻԳՈՐԻՉԻ ՏԻԿՆՈՋԸ՝ ՍԵԴԱ ԼԵՎՈՆՈՎՆԱՅԻՆ

Երևանի Սայաթ-Նովա պողոտայի վրա գտնվող իր չորսսենյականոց բնակարանի խոհանոցում Սեդա Լևոնովնան կանգնած էր տնտեսուհու թիկունքում և հետևում էր, որ նա տոլման ճիշտ փաթաթի: Տնտեսուհին նոր էր սկսել աշխատել իրենց տանը և ճիշտ տոլմա փաթաթել դեռ չէր սովորել, իսկ Պետրոս Գրիգորիչը ամեն ինչում պահանջում էր կոկիկություն:

Պետրոս Գրիգորիչը Սեդա Լևոնովնայի ամուսինն էր: Նա սիրում էր տոլմա և այն հազվադեպ օրերին, երբ շուտ էր աշխատանքից գալիս տուն, պահանջում էր, որ ընթրիքին անպայման տոլմա լինի՝ համաչափ փաթաթած: Սակայն այդ օրը՝ հազար ինը հարյուր իննսուն թվականի մարտի երեքին, Պետրոս Գրիգորիչը տուն չեկավ:

Երեկոյան ժամը վեցն անց կես դռան զանգի փոխարեն հնչեց հեռախոսի զանգը, և վարորդը, չկարողանալով թաքցնել անհանգստությունը՝ ասաց.

-Պետրոս Գրիգորիչին տարան հիվանդանոց… կաթված…

Սեդա Լևոնովնայի ձեռքից ընկավ բալի կոմպոտը, որը նույնպես ամուսինը շատ էր սիրում: Եվ առաջին բանը, որ վկայեց Սեդա Լևոնովնայի սիրտը, այն էր, որ Պետրոս Գրիգորիչն այլևս երբեք բալի կոմպոտ չի խմի և տոլմա չի ուտի…

Ննջասենյակից լսվեց փոքրիկ Պետրոսի լացը: Երկու ամսական թոռնիկին ծնողները թողել էին տատիկի խնամակալությանը, իսկ իրենք մեկնել աշխատելու արաբական երկրներից մեկում Խորհրդային Միության դեսպանատանը: Այդ աշխատանքը որդու և հարսի համար, բնականաբար, դասավորել էր Պետրոս Գրիգորիչը: Վերջինս անցել էր Հա-

յաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Կոմունիստական կուսակցության նոմենկլատուրայի բոլոր աստիճաններով և արդեն մի քանի տարի՝ հանգրվանել Կենտրոնական կոմիտեում:

Սայաթ-Նովա պողոտայի չորսսենյականոց բնակարանից բացի, Պետրոս Գրիգորիչն ուներ ևս հինգ բնակարան, բոլորը՝ Երևանի կենտրոնում և մի ամառանոց՝ Ջրվեժում: Դրանց մասին Սեդա Լևոնովնան գիտեր: Բայց նա չգի-

տեր, թե ինչ է արել ամուսինը այն ոսկիները, որ իր աչքի առջև, նախ՝ գրամներով, ապա՝ կիլոգրամներով, հավաքել էր բարձր պաշտոններ զբաղեցնելու քսան տարիների ընթացքում:

Ամուսնու հանդեպ տածած սիրուց, թերևս, ավելի շատ դա էր պատճառը, որ Սեդա Լևոնովնան, մոռանալով թոռանը և տոլման, շտապեց հիվանդանոց: Եվ պետք է ասել, որ ճիշտ արեց, որովհետև հասավ այն պահին, երբ բարձրաստիճան կոմունիստը, ով պարզվեց սրտի լայնածավալ կաթված է տարել, հոգին էր տալիս, եթե իհարկե նա այդպիսի բան ուներ:

-Լենինը…

Սա էր այն վերջին բառը, որ շշնջաց Պետրոս Գրիգորիչը մահանալուց առաջ:

Նա իհարկե հավատավոր կոմունիստ էր, և այդ մասին գիտեին բոլորը: Վերջին երկու տարիներին, ինչ սկսվել էր Ղարաբաղյան շարժումը Գրիգորիչը երկու կաթված էր տարել: Նա փաստորեն զգում էր իր սիրելի պետության և կուսակցության մոտալուտ վախճանը, միայն թե ստացվեց այնպես, որ ինքն ավելի շուտ վախճանվեց:

Ամուսնու աշխատավայր Սեդա Լևոնովնան գնաց նույն օրը, վարորդի հետ: Վերջինիս կարգադրեց սպասել ընդունարանում և մի խեթ հայացք նետելով կարմրահեր քարտուղարուհու վրա՝ մտավ ամուսնու կաբինետ: Չհրկիզվող պահարանը հանգստի սենյակում եր: Սեդա Լևոնովնան բացեց այն ամուսնու գրպանից նախօրոք վերցրած բանալիով, և այ քեզ բան՝ այն դատարկ էր…

Ավելի ճիշտ, այնքան էլ դատարկ չէր՝ տարատեսակ թղթերից բացի, այստեղ կար տասը հազար ռուբլի, բայց դա ինչ էր Սեդա Լևոնովնայի ակնկալիքների համեմատ: Նա վստահ էր, որ չհրկիզվող պահարանում գտնելու է տասնյակ

կիլոգրամներով ոսկի: Տիկնոջ նման վստահությունը պատահական չէր: Բացի նրանից, որ նա տեղյակ էր, թե որքան ոսկի է հավաքել ամուսինը տարիների ընթացքում, նա նաև ականատեսն էր եղել ամուսնու և իրենց ծանոթ ոսկերիչ Հովսեփի հանդիպմանը և լսել պատառիկներ նրանց խոսակցությունից, որից հասկացել էր, որ ամուսինը պատվիրել էր Հովսեփին իր ունեցած ոսկին վերածել ինչ-որ բանի: Ամուսնուց ոչինչ իմանալ չէր կարողացել: Չէր կարողացել նաև հետո գտնել ծանոթ ոսկերչին, ով փակել էր իր արհեստանոցը և մշտական բնակության մեկնել Միացյալ Նահանգներ:

Ամուսնու հանգստի սենյակը տակնուվրա անելուց հետո Սեդա Լևոնովնան անցավ աշխատասենյակին: Այստեղ էլ ոչինչ չգտնելով՝ ուժասպառ ընկավ Գրիգորիչի աթոռին:

Ինչպիսի հիմարություն՝ մտածում էր Սեդա Լևոնովնան, որտե՞ղ է ոսկին: Որ այն իրենց ամառանոցում չէր ու ոչ էլ հինգ բնակարաններից մեկում, նա գիտեր, որովհետև հասցրել էր մանրակրկիտ ուսումնասիրել դրանք դեռ ամուսնու կենդանության ժամանակ՝ աղոտ կասկածներ ունենալով, որ նա մի օր վերջին կաթվածը կստանա ու իր հետ կտանի գաղտնիքը: Իսկ ամենասարսափելին այն էր, որ տիկինը գիտեր ամուսնու ու քարտուղարուհու տևական կապի մասին, և մտավախություն ուներ, որ ոսկին կժառանգի կարմրահեր այդ «կապիկը»:

Եվ Սեդա Լևոնովնան, ամուսնու աթոռին նստած՝ սկսեց լաց լինել: Ներս մտան վարորդը ու էլի ինչ-որ մարդիկ ու ապարդյուն փորձեցին հանգստացնել նրան:

Իսկ քիչ հետո եկավ ինքը՝ Կոմկուսի առաջին քարտուղարը:

-Պետրոս Գրիգորիչը հավատավոր կոմունիստ էր,- ասաց նա,- այս թափթփուկները ոչնչի չեն կարող հասնել: Ողորմի Ձեր ամուսնուն: Մոսկվան ամեն ինչ կկարգավորի:

Սեդա Լևոնովնան վեր կացավ ամուսնու աթոռից, փաթաթվեց առաջին քարտուղարին և հեծկլտաց:

-Մահանալուց առաջ նա ասաց՝ Լենին:

-Այո, նա Լենինի գաղափարի իրական հետևորդ էր:

Եվ առաջին քարտուղարի ուսի վրայից Սեդա Լևոնովնան տեսավ, թե ինչպես իրեն աչքով արեց Լենինի կիսանդրին, որ դրված էր ամուսնու աշխատասեղանի ահյակ կողմում հսկա մի պատվանդանի վրա:

ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ, ԿԱՄ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍՆ ԱՅՑԵԼԵՑ ՀՈԳԵԲՈՒԺԱՐԱՆ

Պետրոս Գրիգորիչի՝ Երևանի կենտրոնում գտնվող վեց բնակարաններից հինգը վաղուց արդեն վաճառվել էին, և մնացել էր միայն Սայաթ-Նովայի չորսսենյականոց բնակարանը, ուր կյանքի ութսունհինգերորդ տարին էր անցկացնում Սեդա Լևոնովնան:

Ամուսնու մահից հետո նա հինգ տարին մեկ վաճառել էր մեկական բնակարան, որպեսզի հոգա իր և որդու ընտանիքի կեցությունը: Որդու դիվանագիտական կարիերան, թիկունքից զրկվելով, կտրուկ ընդհատվել էր հազար ինը հարյուր իննսունին, և նա մշտական բնակության էր մեկնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ իր հետ տանելով Պետրոս կրտսերին: Այստեղ էլ նա ոչնչի չէր կարողացել հասնել և նախ իրեն տվել էր խմիչքին, հետո՝ թմրանյութերին և վերջում հայտնվել հոգեբուժարանում: Պետրոսին մեծացրել էր մայրը, ով մահացել էր երկու հազար տասին, երբ որդին քսան տարեկան էր և արդեն ընդունվել էր Սանտա Բարբարայի համալսարան: Վերջին բնակարանի վաճառքից ստացված գումարը, որ պիտի ծառայեր իբրև Պետրոս կրտսերի ուսման վարձ, շատ արագ մսխվել էր, ավելի ճիշտ՝ տանուլ էր տրվել խաղատներում, որովհետև ավելորդ է ասել, որ մոր մահից և հոր հոգեբուժարանում հայտնվելուց հետո երիտասարդն անիմաստ էր համարել ուսումը շարունակելը:

Մի խոսքով, բնակարանները վերջացել էին, իսկ Պետրոսին փող էր պետք: Ավելի ճիշտ՝ բնակարաններն այնքան էլ չէին վերջացել. դեռ մնում էր Սայաթ-Նովա պողոտայի չորսսենյականոցը, ուր ծնվել էր ինքը, և ուր հիմա ապրում էր տատը՝ Սեդա Լևոնովնան, ում, ճիշտն ասած, Պետրոսը չէր էլ հիշում: Բայց վստահ էր, որ նա կուրախանա իրեն տես-

նելով: Եվ աշխարհը չէր քանդվի, եթե տատիկը չորսսենյականոց բնակարանի փոխարեն ապրեր մեկսենյականոցում:

Պետրոսին փող էր պետք: Դիմել բանկերին չէր կարող, որովհետև վաղուց էր նրանց սև ցուցակում, ոչ մի սեփականություն ձեռք չէր բերել, որովհետև նկատի ունենալով իր զբաղմունքի բնույթը՝ ամեն պահի կարող էր զրկվել դրանից, չուներ նաև այնպիսի մեկը, ումից կարող էր պարտք անել:

Բայց մինչև տատին դիմելը, Պետրոսը որոշեց այցելել հոգեբուժարանում գտնվող հորը, գուցե նա՞ հոգապահուստ ինչ-որ բան ունենար:

Բժիշկն ասաց, որ հայրը նախորդ օրը հերթական նոպան է ունեցել և հիմա գտնվում է հսկողության ներքո: Բայց Պետրոսին այնուամենայնիվ հաջողվեց մի քանի րոպեով տեսնել նրան:

-Սուտ է, այստեղ ժողովրդավարություն չկա, Ամերիկան այլևս այն չէ,- գոռում էր մահճակալին պառկած հիվանդը,- ես ուզում եմ հանդիպել նախագահի հետ: Իմ իրավունքները ոտնահարվում են:

Հետո տեսնելով հիվանդասենյակ մտած որդուն՝ բացականչեց.

-Ի՞նչ արեցիք հորս ոսկին: Կե՞րաք Լենինի գլուխը:

Պետրոսը զարմացած նայեց բժշկին:

-Սա սովորական է,- հորանջելով ասաց բժիշկը,- նա անընդհատ խոսում է ինչ-որ ոսկու մասին և պահանջում է բերել Լենինի գլուխը:

Պետրոսը խնդրեց իրեն մենակ թողնել հոր հետ:

-Ինձ ոչ ոք չի հավատում,- ասաց հայրը,- չեն թողնում, որ ես խոսեմ: Հետո ասում են՝ ժողովրդավարություն ու խոսքի ազատություն: Սուտ է: Ես ուզում եմ հանդիպել նախագահի հետ:

Պետրոսը նստեց մահճակալին՝ հոր ոտքերի մոտ, և ասաց.

-Ես վատ վիճակում եմ, ինձ փող է պետք:

-Իսկ ինչ արեցիք ոսկին: Այնտեղ հիսուն կիլոգրամ ոսկի էր: Ինձ ոսկերիչ Հովսեփն ասաց:

-Ո՞վ է ոսկերիչ Հովսեփը:

Նա, ով քանդակել է Լենինի գլուխը:

-Որտեղ է նա:

-Ո՞վ, Լենինը:

-Ոչ, Հովսեփը:

-Ինչ իմանամ, երևի մեռել է:

ՈՍԿԵՐԻՉ ՀՈՎՍԵՓԸ

Ոսկերիչ Հովսեփը ողջ էր: Ավելին, իննսուն տարեկանում նա շարունակում էր աշխատել և սեփական փոքրիկ խանութ-արհեստանոց ուներ Արևմտյան Հոլիվուդում: Ուներ նաև երկու աշակերտ, մեկը՝ լեհ, մյուսը՝ պակիստանցի: Իհարկե, այդ մարդկանց աշակերտ ասելը գուցե այնքան էլ տեղին չէր: Լեհը հիսուն տարեկան էր, պակիստանցին՝ վաթսուն: Համենայնդեպս նրանք արդեն համարյա երեսուն տարի աշխատում էին իրենց վարպետի մոտ և շարունակում սովորել նրանից:

Վարպետ Հովսեփը սիրում էր նրանց պատմել իր կյանքի տարօրինակ պատմությունները և երեսուն տարվա ընթացքում այնքան էր պատմել, որ աշակերտները դրանք անգիր գիտեին: Բայց միևնույն է, շարունակում էր պատմել:

Պատմություններն այդ հիմնականում կապված էին նրա աշխատանքային գործունեության այն ժամանակահատվածի հետ, որն անցել էր Խորհրդային Հայաստանում:

Վարպետ Հովսեփի հաճախորդները պատահական մարդիկ չէին. կուսակցական նոմենկլատուրայի ներկայացուցիչներ, առևտրի ոլորտի շնաձկներ, այսպես կոչված «ցեխավիկներ», բարձրաստիճան միլիցիոներներ և «օրենքով գողեր»: Բայց հետաքրքիրը ոչ թե հաճախորդներն էին այլ նրանց պատվերները:

Օրինակ, մի «ցեխավիկ» պատվիրել էր մեկ կիլոգրամ քաշով ոսկյա սալիկը վերածնել «Վոլգա ԳԱԶ 24 10» ավտոմեքենայի մոդելի և այնպես, որ պարտադիր երևան համարանիշները՝ հիսունհինգ, հիսունհինգ: Մի պահեստապետ էլ պատվիրել էր ոսկե առյուծ՝ երախը բաց, բավականին մեծ, բայց մեջը՝ փուչ, հինգ կիլոգրամ ընդհանուր քաշով: Երբ պատվերը համարյա պատրաստ էր, եկել էր և ասել, թե

ուզում է, որ առյուծի բաց երախում լինի եղնիկ: Հետո, երբ իմացել էր, որ դրա համար հարկ կլինի երկու կիլոգրամ ոսկի ավելացնել և համապատասխան հավելավճար, ասել էր, թե եղնիկ պետք չէ, թող լինի նապաստակ: Միլիցիայի մի գեներալ էլ ցանկացել էր ոսկեջրել իր ատրճանակը, իսկ «օրենքով մի գող» ոսկե ձեռնաշղթաներ էր պատվիրել: Հենց որ ինձ բռնեն, կպահանջեմ, որ սրանք հագցնեն՝ ասել էր:

Բայց ամենատարօրինակը Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի մի քարտուղարի պատվերն էր: Դա վարպետ Հովսեփի երբևէ ունեցած ամենագաղտնի պատվերն էր: Կոմկուսի քարտուղարը, ում անունն էր Պետրոս, և ում ինքը վաղուց էր ճանաչում, իրեն էր տվել ոչ ավելի, ոչ պակաս՝ հիսուն կիլոգրամ ոսկի և պատվիրել ձուլել Լենինի կիսանդրին: Բայց դա դեռ ամենը չէր: Պետրոսը նաև պատվիրել էր գործն ավարտելուց հետո կիսանդրին քողարկել՝ այնպես, որ հասկացվի, թե այն գիպսից է:

Դա հազար ինը հարյուր ութսունականների վերջին էր: Հետո վարպետը տեղափոխվել էր Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Որոշ ժամանակ նա, ինչպես և խոսք էր տվել, պահել էր գաղտնիքը, բայց ավելի ուշ, իմանալով, որ պատվիրատուն մահացել է, և նկատի ունենալով, որ Խորհրդային Միությունը քանդվել է՝ իր փլատակների տակ թողնելով լենինիզմը, այս պատմությունը, ի թիվս այլ հուշերի, սկսել էր պատմել աշակերտներին:

Ու մի օր էլ լեհ աշակերտի կինը, որ իբրև բուժքույր աշխատում էր մոտակայքում գտնվող հոգեբուժարանում, լսելով վարպետի պատմությունը, ասել էր, որ իրենց մոտ բուժվում է մի հայ հիվանդ, ով հաճախակի կրկնում է, որ իր հայրը եղել է Խորհրդային Հայաստանի ղեկավարներից:

Վարպետը վեր էր կացել ու գնացել հոգեբուժարան՝ կասկած իսկ չունենալով, որ սա ընդամենը զուգադիպութ-

յուն է: Պարզվել էր՝ զուգադիպություն չէ: Հիվանդն իսկապես իր հաճախորդ Պետրոս Գրիգորիչի՝ Խորհրդային Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի քարտուղարի որդին էր: Վարպետը մի քիչ զրուցել էր նրա հետ, հարցրել, թե ինչ եղավ Լենինի ճակատագիրը, բայց լսելով իր վաղեմի ծանոթի որդու պատասխանները, հասկացել էր որ նա իսկապես ցնդած է և զղջացել էր, որ եկել է տեսության:

Դա հինգ տարի առաջ էր: Իսկ այդ օրը ոսկերիչ Հովսեփը, մայթին կանգնած, հետևում էր, թե ինչպես են աշխատողները փակում իր ոսկերչական արհեստանոց-խանութի մետաղյա փեղկերը, երբ նրան մոտեցավ մի երիտասարդ և ասաց.

-Բարև Ձեզ, պարոն Հովսեփ: Ես Պետրոսն եմ, Պետրոս Գրիգորիչի թոռը:

ԱՐԻ ԲԱԺԱՆՎԵՆՔ

-Չե՞ս նեղանա, եթե այստեղ բաժանվենք,- Ցյուրիխ-Մոսկվա չվերթով օդանավի առաջին դասի սրահից դուրս գալիս անսպասելի Մարկին դիմեց Քսյուշան:

-Քեզ ի՞նչ պատահեց Քսյուշա,- զարմացավ Մարկը:

-Եվ ընդհանրապես,- շարունակեց Քսյուշան՝ չլսելու տալով նրա հարցը,- արի՛ բաժանվենք:

Ժպիտը սառեց օդանավի դռան մոտ կանգնած ուղեկցորդուհու դեմքին: Նա պատրաստվում էր ցտեսություն ասել ու ամենայն բարիք մաղթել «կարևոր» այս ուղևորներին, միայն թե փոխարենը անհասկանալի ինչ-որ բան կմկմաց:

-Մի խելագարվիր, Քսյուշա, մեքենան մեզ է սպասում:

Շարժասանդուղքի տակ կանգնած էր VIP ուղևորներին սպասարկող «Mercedes»-ը:

-Ես լուրջ եմ ասում, սիրելիս: Դու գնա, իսկ ես կսպասեմ սովորական ուղևորներին ու դուրս կգամ նրանց հետ:

«Սիրելիս» բառն իհարկե չափազանցված էր: Մարկին Քսյուշան չէր սիրում: Մոտ մեկ տարի առաջ, երբ հանդիպեց նրան «Նաշա մոդա» ամսագրի կազմակերպած ամանորյա ընդունելության ժամանակ, անմիջապես հասկացավ, որ այս տղամարդը ամբողջովին համապատասխանում է սիրեկանի համար սահմանած իր չափանիշերին՝ մեծ գրպաններով, բայց փոքր փորով, ահռելի հեղինակությամբ ու նույնքան համեստությամբ, ուժեղ, բայց բարի… Արժանիքներն իսկապես չափից ավելի շատ էին, և կարելի էր աչք փակել շատ բաների վրա: Քսյուշան այդպես էլ արեց և մեկ տարվա ընթացքում նվեր ստացավ մոտ մեկ միլիոն դոլարի շարժական և անշարժ գույք՝ ստուդիա-բնակարան Մոսկվա գետի ափին՝ մի նորակառույցում, «Maserati» ավտոմեքենա և զարդերի մի բուռ:

Սերը, բնականաբար, չհայտնվեց: Եղան շատ սիրուն երեկոներ, ճամփորդություններ և մի երկու միջադեպ Մարկի կնոջ հետ, ով պարզվեց՝ չափից ավելի խանդոտ էր: Միջադեպերն իհարկե Մարկն իրեն հատուկ նրբանկատությամբ հարթեց, բայցևայնպես, ժամանակն էր լրջորեն մտածել ապագայի մասին:

Եվ Քսյուշան սկսեց մտածել, եզրակացություններ անել, բայց որոշում կայացնել ոչ մի կերպ չէր ստացվում: Եվ ահա եկել էր պահը: Առաջին դասի սրահը վաղուց արդեն դատարկվել էր, և էկոնոմ դասի ուղևորները սպասում էին օդանավից դուրս գալու իրենց հերթին: Մարկը դեռ կանգնած էր շարժասանդուղքին՝ դեռևս չհասկանալով, թե ինչ է տեղի ունենում:

-Գնա՛, խնդրում եմ, ինձ մի՛ սպասիր,- տխուր ժպիտով ասաց Քսյուշան,- հետո կխոսենք:

Հետո նա միացավ «սովորական» ուղևորներին, նրանց հոսքի մեջ անցավ անձնագրային ստուգումն ու մաքսակետը, դուրս եկավ օդանավակայանի շենքից, նստեց առաջին պատահած տաքսին և տվեց իր հին տան հասցեն՝ վերջնականապես որոշելով Մարկին վերադարձնել Մոսկվա գետի ափի ստուդիա-բնակարանը և «Maserati»-ն: Զարդերը կարող էին մնալ. նվեր ստացած զարդերը բոլորովին այլ իմաստ ունեն:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ԿԻՐԱԿՈՍԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ

Երբ Պետրոսը Թագուհու վագոն-խանութում թաց գուլ-պաները փոխելուց հետո մոտեցավ սուրճի ապարատին, հիշեց, որ դրամ չունի: Թբիլիսիի օդանավակայանից Բագ-ռատաշեն էր հասել տաքսիով՝ վճարելով երեսուն դոլար և հիմա մտադիր էր սուրճ խմելուց հետո մի ուրիշ տաքսիով հասնել Երևան: Նա սկսեց նայել շուրջը՝ հասկանալու հա-մար, թե որտեղ կարող է տարադրամ փոխանակել:

Նույն պահին Թագուհու վագոն-խանութից դուրս եկավ Կիրակոսը և տեսնելով շփոթված երիտասարդին՝ հարցրեց.

-Ինչո՞վ կարող եմ օգնել, պարոն զբոսաշրջիկ:

-Որտե՞ղ կարելի է դոլար փոխանակել,- հարցրեց Պետ-րոսը՝ այս անգամ ուշադրություն չդարձնելով իրեն ուղղված խայթոցին:

-Եթե քեզ դրամ է պետք սուրճ խմելու համար, ապա ես քեզ կհյուրասիրեմ, իսկ եթե մտադիր ես այնքան դոլար փո-խանակել, որի հետևանքով կտատանվի հայկական դրա-մի փոխարժեքի կայունությունը՝ ոչնչով օգնել չեմ կարող: Ի դեպ, հո դու լրտե՞ս չես, դու նման չես հայի:

-Եթե նման չեմ հայի, ուրեմն պիտի լրտե՞ս լինեմ:

Կիրակոսը մանրադրամ նետեց սուրճի ապարատի մեջ և դիմեց Պետրոսին.

-Ի՞նչ սուրճ ես ուզում:

-«Ամերիկանո»:

-Եվ ի՞նչ հետևություն ես ուզում, որ ես անեմ այդքանից հետո:

-Ի՞նչ նկատի ունես:

-Ընտրագույն կաշվից պայուսակով և թանկարժեք վե-

ռարկուով մի երիտասարդ չգիտես ինչու ոտքով հատում է վրաց-հայկական սահմանը, հետո փոխում գուլպաները ու «Ամերիկանո» սուրճ խմում,- Կիրակոսը տաք սուրճով բաժակը մեկնեց թանկարժեք վերարկուով երիտասարդին:

Վերջինս մի կում արեց իրեն հյուրասիրած սուրճից, ծամածռեց դեմքը և լիքը բաժակը նետեց աղբարկղը:

-Անգամ լրտեսին չի կարելի այսպես դիմավորել,- ասաց նա,- ինչպե՞ս եք խմում այս սուրճը:

-Առավոտյան լավագույն սուրճը կարելի է խմել Փարիզի րյու Մարտիր և րյու Տրուդեն փողոցների հատման կետում գտնվող «Cafeshop» սրճարանում, որի հարևանությամբ գտնվում է էրոտիկայի թանգարանը:

-Իմ անունը Պետրոս է,- ասաց Պետրոսը՝ մեկնելով ձեռքը:

-Իմ անունը Կիրակոս է,- ասաց Կիրակոսը՝ մեկնելով ձեռքը:

Այդպես Պետրոսն ու Կիրակոսը ծանոթացան:

Հետո նրանք որոշ ժամանակ լռեցին՝ անթաքույց ուսումնասիրելով միմյանց: Երկուսն էլ անկասկած իրար մեջ մրցակից էին տեսնում և ուզում էին հասկանալ, թե դիմացինն ինչ թռչուն է, որտեղից և ինչի համար է թռել-եկել:

-Որտեղի՞ց ես գալիս,- հարցրեց Կիրակոսը:

-Պիտի որ կռահած լինեիր,- պատասխանեց Պետրոսը:

-Ամերիկան մեծ է:

-Աշխարհը նույնպես:

-Լավ, իսկ ո՞ւր ես գնում:

-Երևան:

-Կարող եմ տանել:

Կիրակոսը գլխով ցույց տվեց քիչ այն կողմ կանգնած սպիտակ «Range Rover»-ը: Պետրոսն ի պատասխան սուլեց, և դա կարելի էր ընդունել իբրև համաձայնության նշան:

Եվ այդպես Պետրոսն ու Կիրակոսը միասին ուղևորվեցին Երևան:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ԿԻՐԱԿՈՍՆ ԱՐԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՔԱՅԼԸ

«Իմ Քայլը արշավի մասնակիցները Լոռու և Տավուշի մարզերի սահմանագծին ճամբար են խփել, պատրաստվել գիշերակացի: Այսօր նրանց են այցելել երաժիշտներ, զուռնա-դհոլով ապահովել մասնակիցների բարձր տրամադրությունը, ոգևորել նրանց»,- գրում էր հայաստանյան լրատվական կայքերից մեկը:

«Իմ Քայլը նախաձեռնության մասնակիցներն անցել են հարյուր կիլոմետր և ճամբար են խփել Դիլիջան քաղաքում: Նիկոլ Փաշինյանի փոխանցմամբ՝ ճամբար են այցելել իրենց ընկերները Դիլիջանից, Իջևանից, Նոյեմբերյանից, Հրազդանից:»,- գրում էր նույն կայքը հաջորդ օրը՝ երկու հազար տասնութ թվականի ապրիլի վեցին:

Ընթերցողներին իրազեկել, թե ուր են հասել «Իմ քայլը» նախաձեռնության մասնակիցները, այս լրատվամիջոցը սկսել էր երկու հազար տասնութ թվականի մարտի երեսունմեկից, երբ մեկնարկել էր քայլարշավը: Դրա տեղաշարժը ներկայացնելուն զուգահեռ, կայքը նաև պարբերաբար զրուցում էր նախաձեռնության առաջնորդի հետ.

«Նիկոլ Փաշինյանը նշել է, որ անկախ ՀՀԿ-ականների սպառնալիքներից՝ իրենք կատարելու են իրենց քայլերը: Ամփոփելով այս վեց օրերի իրենց քայլերթը, նա նշել է, որ արդյունքները երևալու են ապրիլի տասներեքին՝ մարդկանց ներկայությունից: Իրենց քայլարշավը ուղերձ է քաղաքացիներին՝ անելու իրենց քայլը, որովհետև, եթե քաղաքացին անի իր քայլը, ուրեմն Սերժ Սարգսյանն ու Հանրապետական կուսակցությունը կանեն իրենց հետքայլը:»,- գրում էր կայքը ապրիլին:

Մինչ Պետրոսը մեքենայի պատուհանից նայում էր, թե

ինչպես է բացվում առավոտը հայրենի լեռներում, ղեկի մոտ նստած Կիրակոսը փորձում էր կռահել նրա՝ հայրենիք գալու պատճառը: Մեքենայում հնչում էին Ձախ Հարութի երգերը:

-Կարոտել էիր Հայաստանը,- հարցրեց Կիրակոսը՝ իջեցնելով երաժշտության ձայնը:

-Չգիտեմ: Իսկ դո՞ւ:

-Իհարկե: Որքա՞ն ժամանակ չես եղել Հայաստանում:

-Երկար: Իսկ դո՞ւ:

-Երեք տարի: Ինչո՞վ ես զբաղվում:

-Տարբեր բաներով: Իսկ դո՞ւ:

Եվ Կիրակոսը հասկացավ, որ որ սխալ տեղից է սկսում. նորից բարձրացրեց երաժշտության ձայնը ու կտրուկ արագացրեց մեքենայի ընթացքը ճիշտ այն պահին, երբ դիմացից գալիս էր ոստիկանության մի մեքենա: Վերջինս շրջադարձ կատարեց, հասավ «Range Rover»-ին և կանգնելու հրահանգ տվեց:

Կիրակոսը չիջավ մեքենայից, սպասեց մինչև ոստիկանը կմոտենա, լսեց թե ինչպես նա ներկայացավ և պահանջեց իր փաստաթղթերը, ապա ասաց.

-Քիչ առաջ խա՞շ ես կերել:

Ոստիկանը շփոթված այս ու այն կողմ նայեց:

-Այո,- պատասխանեց նա,- բայց չեմ խմել:

-Խաշ ես կերել ու չե՞ս խմել,- պնդեց Կիրակոսը,- որտե՞ղ ես կերել խաշը:

-Օբյեկտում:

-Ո՞ւմ հետ ես կերել:

-Դե, տղերքի հետ:

-Ո՞վ փակեց հաշիվը:

-Վաղոն:

-Հաստա՞մտ չես խմել:

-Չէ, երդվում եմ:

-Դե լավ, գնա:

Ոստիկանը շրջվեց և խեղճ-խեղճ վերադարձավ դեպի իր մեքենան:

Կիրակոսը նորից բարձրացրեց երաժշտությունը, և Ձախ Հարութը շարունակեց երգել:

Այդպես հասան մինչև Դիլիջան, ուր ճամփեզրին տեսան քայլող մարդկանց մի խումբ՝ մոտ տասնհինգ-քսան հոգի:

-Ովքե՞ր են այս մարդիկ և ինչո՞ւ են քայլում,- հարցրեց Պետրոսը:

Կիրակոսն, ի տարբերություն Պետրոսի, ժամանակ առ ժամանակ հետևում էր հայաստանյան լրահոսին:

-Այս մարդիկ մեր ապագան են,- ասաց նա, կտրուկ արգելակեց մեքենան՝ քիչ առաջ անցնելով քայլողներից և իջավ: Նախ ինչ-որ տոպրակ վերցրեց մեքենայի բեռնախցիկից, ապա մոտեցավ խմբին: Պետրոսը հետևեց նրան՝ զուտ հետաքրքրությունից ելնելով:

-Մենք սիրով կմիանայինք ձեզ, սակայն չենք կարող, Երևանում կարևոր գործ ունենք: Բայց համարեք, որ ձեզ հետ ենք և լիովին կիսում ենք ձեր հայացքները: Խնդրում եմ, վերցրեք սա,- ասաց Կիրակոսը՝ տոպրակի միջից հանելով շոկոլադե կոնֆետների երկու մեծ տուփ:

-Որտեղի՞ց եք, տղաներ,- հարցրեց ուսապարկով ու կիսաճերմակ մորուքով մի տղամարդ: Այսինքն բոլորն էլ ուսապարկով էին և մորուքներով, բացի կարծես երկու-երեքից, ովքեր հիմնավոր պատճառ ունեին՝ մորուք չունենալու:

-Ես Ռուսաստանից եմ, գործընկերս Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Շարունակեք ձեր պայքարը և վստահ եմ, որ մի օր կհաղթեք:

-Կեցցեք, տղաներ, այդ օրը անպայման կգա, և դրան կնպաստի նաև ձեր քայլը,- ասաց կիսաճերմակ մորուքովը և սեղմեց Կիրակոսի ձեռքը: Հետո սեղմեց նաև Պետրոսի ձեռքը, ով այդպես էլ չհասկացավ՝ նախ, թե երբվանից դարձավ Կիրակոսի գործընկերը, երկրորդ՝ թե ինչ քայլի մասին էր խոսքը և վերջապես՝ թե ովքեր էին այս մարդիկ:

ՔՍՅՈՒՇԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԱՅՐԵՆԻՔ

Մոդելի տասնամյա կարիերայի ընթացքում, որն հաջող չես համարի, բայց չի կարելի համարել նաև անհաջող, Քսյուշան մի ամբողջ կյանք էր ապրել, երևի հենց այնքան, որքան տևում է մոդելի կյանքը: Եկել էր ժամանակը, երբ այս գործով զբաղվող ցանկացած աղջկա մոտ տեղի է ունենում նպատակի փոփոխություն, համապատասխանաբար փոխվում են նաև մոտեցումները, ի հայտ են գալիս նոր առաջնահերթություններ: Եվ որքան էլ որ տարօրինակ է, երբեմն դա լինում է միանգամից: Այսինքն՝ արթնանում ես առավոտյան ու հասկանում, որ ամեն ինչ այնպես չէ, ինչպես երեկ էր:

Քսյուշայի մոտ դա տեղի ունեցավ շվեյցարական Ալպերում, երբ արթնացավ, դուրս եկավ պատշգամբ ու հասկացավ, որ ավարտվեց իր կյանքի այն ժամանակահատվածը, երբ կարելի էր ապրել անհոգ ու աննպատակ՝ միայն այսօրվա օրով:

Հիմա, երբ հավաքում էր իրերը Մարկի նվիրած բնակարանից, փորձում էր վերաիմաստավորել ապրած կյանքը: «Վերաիմաստավորել»՝ տարօրինակ բառ էր ու մի տեսակ ծանր էր հնչում:

Մարկն իհարկե միշտ էլ չափազանց շռայլ էր եղել ու միաժամանակ նրբանկատ, բայց չկար սերը: Իսկ երբ չկա սերը նման կարգի հարաբերություններում, ուրեմն ակնհայտ է մի բան. դու պարզապես վաճառում ես քո գեղեցկությունը: Կամ տալիս ես վարձով, ինչից խնդրի էությունը չի փոխվում: Ինչևէ, Մարկի հետ կապված Քսյուշայի որոշումը վերջնական էր, ինչպես և վերջնական էր այս բնակարանը վերադարձնելու որոշումը: Իսկ որ ամենագլխավորն է՝ վերջնական էր մոդելի կարիերան ավարտելու մասին որոշումը:

«Նաշա մոդա» ամսագրի հետ պայմանագրի ժամկետը

սպառվում էր մի քանի օրից, գործակալությունը, որի հետ համագործակցում էր, վաղուց արդեն իրեն չէր ներգրավում մոդայի լուրջ ցուցադրություններում: Պետք էր նոր բան մտածել: Իսկ նոր բան Քսյուշան մտածել էր: Վերադառնալ հայրենիք և հրատարակել սեփական ամսագիրը:

ԹԵ ԻՆՉ ԷԻՆ ՄՏԱԾՈՒՄ ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ԿԻՐԱԿՈՍԸ

Պետրոսը մտածում էր, թե ինչպես կարող է միջպետական մայրուղու վրա գտնվող թունելը լուսավորված չլինել: Ինչպե՞ս կարող են այդ թունելով անցնող ճանապարհին այսչափ մեծ փոսեր լինել: Չէ՞ որ այդ փոսերից խուսափելու համար պետք է դուրս գալ հանդիպակաց գիծ: Հետո մտածում էր, թե որքան սիրուն ու միևնույն ժամանակ որքան փնթի է այս երկիրը:

Մի անգամ Լաս Վեգասի «Caesars Palace» խաղատանը նա ծանոթացել էր Չանդրականտա անունով հնդկուհի մի դիլերի հետ: Նման գեղեցկություն ինքը դեռ չէր տեսել: Չանդրականտայի աչքերն այնպես էին գրավել Պետրոսին, որ քիչ էր մնում՝ սիրահարվեր և մոռանար գործի մասին: Բայց ամեն ինչ փոխվել էր, երբ միասին գնացել էին աղջկա վարձած սենյակը: Ամենուրեք թափված էին կեղտոտ շորեր ու ուտելիքի մնացորդներ, և անտանելի գարշահոտության մեջ պահմտոցի էին խաղում ուտիճները: Իսկ ամենազարմանալին այն էր, որ այս ամենը Չանդրականտայի համար կարծես թե նորմալ էր, նա սահուն տանում էր Պետրոսին դեպի մահճակալը՝ հընթացս հանելով դիլերի իր համազգեստը:

Բայց ամենակարևորը, ինչի մասին մտածում էր Պետրոսը՝ Լենինի կիսանդրին էր: Որտե՞ղ էր հիմա այն, արդյո՞ք բացահայտվել էր դրա գաղտնիքը, ինչի՞ց և ինչպե՞ս սկսել որոնումները: Ամենավատն այն էր, որ ինքը Հայաստանին ընդհանրապես ծանոթ չէր և ոչ մի առումով: Ավելին, ոչ միայն Հայաստանին ծանոթ չէր, այլև որևէ ծանոթ չուներ այստեղ, բացի տատից, ում օգնությանն ապավինելը իհարկե լուրջ չէր լինի:

Եվ Պետրոսը սկսեց մտածել առաջին հայացքից շատ

ռիսկային թվացող մի գաղափարի շուրջ: Իսկ ինչ կլինի, եթե նա Կիրակոսին վերցնի իբրև գործընկեր: Գաղափարը ռիսկային էր, որովհետև Պետրոսը շատ լավ հասկանում էր, թե ով է Կիրակոսը: Իրենից զգալի փորձառու, թրծված և որ պակաս կարևոր չէ՝ ֆիզիկապես շատ ավելի ուժեղ: Այս չակերտավոր արժանիքները իհարկե կարող էին նպաստել գործին, սակայն ցանկացած պահի, առավել ևս գործի հաջողվելու դեպքում, կարող էին աշխատել իր դեմ:

Բայց, այնուամենայնիվ, գուցե ճակատագիր էր, որ առաջինը, ում հանդիպեց ինքը Հայաստանում, հենց Կիրակոսն էր: Ու չնայած Պետրոսը դադարել էր հավատալ ճակատագրին Լաս Վեգասի վերջին դեպքից հետո, նա չկարողացավ հրաժարվել չափազանց ռիսկային, բայց միևնույն ժամանակ, չափազանց գայթակղիչ այդ մտքից:

Կիրակոսը մտածում էր բոլորովին այլ բանի մասին: Նա, ճիշտն ասած, զղջացել էր, որ հերիք չէ՝ կանգնեց քայլարշավի մասնակիցների մոտ, դեռ մի բան էլ աջակցություն հայտնեց նրանց և հյուրասիրեց: Չէ՞ որ մեծ էր հավանականությունը, որ նրանց տեղաշարժը հսկողության տակ է, և բոլոր նրանք, ովքեր ինչ-որ կետում և ինչ-որ ձևով աջակցում են քայլարշավին, կարող են հայտնվել հատուկ մարմինների ուշադրության ներքո: Առավել ևս, եթե այս շարժումը հաջողություն ունենա: Իսկ որ այն հաջողություն է ունենալու, Կիրակոսը, չգիտես ինչու, չէր կասկածում:

Մյուս կողմից էլ, սակայն, եթե շարժումն իսկապես հաջողություն ունենա, նա անշուշտ կհիշեցնի այդ դրվագը՝ ում որ հարկն է:

Եվ ի վերջո, ինքը Հայաստան եկել էր պարզապես հանգստանալու, որովհետև անկեղծորեն կարոտել էր այն, և չէր պատրաստվում որևէ հակաօրինական բան անել: Այնպես որ, գուցե այնքա՞ն էլ կարիք չկար մտահոգվելու:

Երկրորդը, ինչի, ավելի ճիշտ՝ ում մասին մտածում էր Կիրակոսը՝ իր ուղեկիցն էր: Դեռ Բագրատաշենում Կիրակոսը թռուցիկ հաշվարկ էր արել, թե որքան արժե երկնագույն աչքերով այս երիտասարդի հագուկապը: Միայն բաճկոնը, ճամպրուկը, ժամացույցն ու արևային ակնոցը միասին պիտի որ կազմեին առնվազն տասը հազար դոլար: Ուրեմն որքա՞ն գումար կունենար գրպանում և բանկային հաշվին: Գուցե չափազանց շատ, գուցե՝ ոչինչ: Դա Կիրակոսը գիտեր իր փորձից: Եվ առհասարակ երիտասարդը շատ բաներով հիշեցնում էր իրեն՝ մի տասնհինգ տարի առաջ: Իսկ դրանից կարելի էր եզրակացնել, որ ոչ մի գումար էլ նա չուներ: Թանկարժեք հագուկապը հավանաբար հաջող որևէ գործի մնացուկն էր, որը ցանկացած պահի կարող էր վաճառվել կամ գրավադրվել: Ուրեմն ինչո՞ւ է նա եկել Հայաստան: Հոտառությունը Կիրակոսին հուշում էր, որ այստեղ մի լուրջ բան կար:

Ահա այսպիսի բաներ էին մտածում Պետրոսն ու Կիրակոսը, երբ անցնում էին Սևանա լճի կողքով:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ԿԻՐԱԿՈՍԸ ԴԱՐՁԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Սևանա լճի ափին գտնվող ռեստորաներից մեկում ձուկ ուտելուց հետո Պետրոսը բացեց իր գաղտնիքը:

Ձուկը, որը Կիրակոսը հյուրասիրեց ուղեկցին, սիգ էր, որի որսը Սևանա լճում օրենքով արգելված էր: Բայց միևնույն է՝ այս և այլ ռեստորաններում ձուկը մատուցվում էր, և այն՝ տապակած, խորոված կամ խաշած վիճակում, հաճույքով վայելում էին թե՛ օրենքն ընդունողները, թե՛ վերահսկողություն իրականացնողները, թե անգամ բնապահպանները:

Օրենք ընդունողներին գուցե կարելի էր հասկանալ, քանի որ կոճակ սեղմելիս նրանք մեծամասամբ չգիտեին թե ինչի համար են սեղմում այդ կոճակը, թե ինչ օրենք է ընդունվելու և թե իրենց ընդունած օրենքն ինչին է վերաբերում:

Կարելի էր հասկանալ նաև վերահսկողություն իրականացնողներին, չէ՞ որ նրանք մի տեղ պիտի անցկացնեին իրենց ընդմիջումները, կամ ծանրաբեռնված աշխատանքային օրվանից հետո՝ ընթրեին:

Դժվար էր հասկանալ միայն բնապահպաններին. մի անգամ Երևանում անցկացվող միջազգային բնապահպանական կոնֆերանսի ընթացքում կազմակերպիչները մասնակիցներին բերել էին այս ռեստորանը՝ տեղում իրավիճակին ծանոթանալու: Տեղում իրավիճակին ծանոթանալուց հետո կազմակերպիչները մասնակիցներին հյուրասիրել էին տապակած սիգով:

Պետրոսն ու Կիրակոսը, սակայն, ոչ գիտեին օրենքի մասին, ոչ էլ երբևէ հետաքրքրվել էին բնապահպանական հարցերով: Նրանք պատվիրել էին չորս բաժին ձուկ, երկուսը՝ տապակած, երկուսը՝ խորոված և սպասում էին, թե մատուցողուհին երբ կբերի ուտելիքը:

Երբ վերջապես նա մոտեցավ՝ հսկայական մատուցարանը ձեռքին և սկսեց սեղանին շարել ախորժաբույր ու արգելված ուտելիքը, Կիրակոսը դիմեց նրան.

-Դուք գիտեք, որ ձկան թեփուկների բաղադրիչները լայնորեն կիրառվում են շրթներկի արտադրության մեջ:

Մատուցողուհին երևի չհասկացավ՝ դա դիտողություն էր, թե հաճոյախոսություն, հապճեպ ավարտեց գործն ու վազեց զուգարան՝ հայելու մեջ նայելու, թե ինչ տեսք ունի իր շրթներկը:

-Երբևէ մտածել ես, թե ով է ավելի հեշտ կուլ տալիս խայծը,- շարունակեց Կիրակոսը՝ արդեն դիմելով սեղանակցին,- ձուկը, թե՞ մարդը:

-Նայած ձուկ, և նայած մարդ,- առանց մտածելու պատասխանեց Պետրոսը, հետո մի քիչ մտածեց և ավելացրեց,- բայց մարդիկ, ի տարբերություն ձկների, լինում են երեք տեսակի. խայծ տվողներ, խայծ կուլ տվողներ և ևս մի տեսակ, որը ոչ մեկն է անում, ոչ մյուսը:

Կիրակոսը ծոցագրպանից հանեց ակնոցի տուփը, տուփից՝ ակնոցը, դրեց այն և սկսեց զբաղվել իր ձկով: Հետո, բերանից հանելով հերթական փուշը՝ ասաց.

-Ես մտածում, մտածում և չեմ կարողանում հասկանալ, թե ինչն է քեզ բերել Հայաստան:

-Իսկ ինչո՞ւ ես ուզում հասկանալ:

-Որովհետև գիտեմ, որ դու եկել ես գործով: Ընդ որում, անորոշ գործով, որը, սակայն, մեծ փողերի հետ է կապված: Եվ գիտեմ մի ուրիշ բան. դու մենակ չես կարող գլուխ բերել այդ գործը՝ երկու պատճառով. նախ՝ որովհետև այստեղ ծանոթներ չունես և ամենակարևորը՝ բացարձակապես չգիտես Հայաստանը:

-Եվ դու առաջարկում ես քո օգնությունը:

-Ես ոչ մեկի չեմ օգնում հենց այնպես: Իսկ եթե օգնում ես շահախնդրորեն, դա արդեն օգնություն չէ, այլ՝ գործարք:

-Իսկ ինչո՞ւ ես պետք է գործարքի գնամ հատկապես քեզ հետ:

-Որովհետև միայն այդպես երաշխավորված կլինի քո հաջողությունը: Ի դեպ, մենք խմիչք չպատվիրեցինք. գործարքը կնքելուց հետո պետք է թրջել:

-Բայց ես դեռ չեմ համաձայնել:

-Վստահ եմ, որ մտքում արդեն համաձայնել ես: Ես շատ

չեմ ուզում՝ գործի հաջողության դեպքում, ինչն անխուսափելի է և երաշխավորված, ես ակնկալում եմ քառասուն տոկոս:

-Քսան:

-Երեսուն:

-Քսանհինգ:

-Ի՞նչ կխմես:

-Եթե չեմ սխալվում՝ ձկան հետ գինի են խմում:

Գործընկերները կանչեցին մատուցողուհուն, ով հասցրել էր մաքրել վառ կարմիր շրթներկը, և գինի պատվիրեցին:

ՏԱՏՈՒ ԵՎ ԹՈՌԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ. ԻՍԿ ՈՐՏԵՂ Է ԼԵՆԻՆԸ

Սեդա Լևոնովնան վերջին անգամ թոռանը տեսել էր, երբ նա մի քանի ամսական էր: Փոքրիկ Պետրոսին ծնողներն իրենց հետ տարել էին Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Սեդա Լևոնովնային խոստացել էին, որ որոշ ժամանակ անց նա նույնպես կտեղափոխվի այնտեղ: Բայց դա տեղի չէր ունեցել: Փոխարենը որդին մի քանի անգամ եկել էր Հայաստան՝ հորից ժառանգություն մնացած մեկական բնակարան վաճառել ու դարձյալ վերադարձել: Սեդա Լևոնովնայի սիրտը ցավում էր: Նրա միակ հույսը փոքրիկ Պետրոսն էր, ով, մտածում էր, կմեծանա և տիրություն կանի սիրելի տատիկին: Սակայն նա մեծանում էր, բայց տատիկին այդպես էլ չէր հիշում:

Ու մի օր էլ անսպասելի զանգ ստացավ նրանից: Երբ թոռն ասաց՝ տատիկ ջան, կարոտել եմ քեզ, Սեդա Լևոնովնայի ձեռքից ընկավ բալի կոմպոտը: Նա մինչև հիմա, պարտաճանաչ ամեն տարի բալի կոմպոտ էր փակում: Իսկ այդ օրը՝ երկու հազար տասնութ թվականի ապրիլի վեցին, տոլմա պատրաստեց և սպասում էր թոռանը:

Պետրոսը դատարկաձեռն չեկավ: Նա տատի համար մի վզնոց էր բերել՝ երեքկարատանոց շափյուղայով: Շափյուղան իհարկե կեղծ էր, բայց Պետրոսը վստահ էր, որ տատն այդ մասին չի իմանա:

Տոլման ուտելուց հետո Պետրոսը ստիպված էր ամբողջ երեկո լսել տատի պատմությունները նրա կյանքի լավագույն ժամանակների մասին: Հետո ստիպված էր արդարանալ, թե այսքան տարիների ընթացքում ինչո՞ւ ոչ մի անգամ չի հիշել նրան և վերջում միայն, երբ Սեդա Լևոնովնան նստած տեղում արդեն քնում էր՝ անդրադառնալ պապի թողած ժառանգությանը:

Այստեղ Սեդա Լևոնովնայի քունն անմիջապես փախավ.

-Ահա՛ թե ինչն է քեզ հետաքրքրում:

-Իհարկե հետաքրքրում է,- Պետրոսը նույնիսկ չփորձեց առարկել,- ես վերջերս իմացա, որ պապիկը մեծ քանակությամբ ոսկի է ունեցել: Ես հորս նման չեմ: Ես կապահովեմ քեզ ամեն ինչով: Քեզ կտանեմ Ամերիկա, ու դու կապրես իմ շքեղ առանձնատանը՝ օվկիանոսի ափին:

Տատը երկար նայեց թոռան աչքերին ու հարցրեց:

-Իսկ առանց դրա չե՞ս տանի:

-Իհարկե կտանեմ,- այնքան վստահ պատասխանեց թոռը, որ ծեր կինը չէր կարող նույնիսկ կասկածել:

Հետո Պետրոսը երկար խոսեց, թախծոտ, գրեթե լացակումած պատմեց տատին, թե ի՞նչ դժվարությունների միջով է անցել, ի՞նչ տխուր ու ծանր կյանք է ապրել: Տատը այնպես հուզվեց, որ եթե ամուսնուց մնացած ժառանգությունը մոտը լիներ, անմիջապես կհաներ ու կտար թոռանը: Բայց մոտը չէր:

-Ոչինչ չի ստացվի: Պապիդ հարստությունը անհետ կորել է,- արցունքները սրբելով՝ ասաց Սեդա Լևոնովնան:

-Իսկ ի՞նչ հարստություն էր դա,- հարցրեց Պետրոսը՝ իր թաշկինակը մեկնելով նրան:

-Չգիտեմ,- ասաց տատը,- ես հաստատ ոչինչ չգիտեմ: Բայց նա ոսկի ուներ, շատ ոսկի: Ես բոլոր հնարավոր ու անհնար տեղերում փնտրել եմ, սակայն անօգուտ:

Ավելորդ է ասել, որ մինչ տատի հետ սրտագին զրույցի բռնվելը Պետրոսը շրջել էր բնակարանում և փնտրել Լենինի կիսանդրին: Եվ առավել ավելորդ է ասել, որ եթե գտած լիներ՝ սրտագին այդ զրույցը տեղի չէր ունենա: Մի պատրվակով կվերցներ Լենինին ու ցտեսություն կասեր տատին: Իհարկե հետո մի բան կտար նրան, բայց Ամերիկա, բնականաբար չէր տանի, և տատը օվկիանոսի ափին չէր ապրի:

Միայն թե Լենինը չկար և Պետրոսը ստիպված էր բացել իր իմացած գաղտնիքը:

-Լենի՞նը…- կմկմաց տատը,- Լենի՞նը… չի կարող պատահել…

-Հանգստացիր, տատիկ, մի հուզվիր: Իսկ ի՞նչ եղավ կիսանդրու հետ:

-Ես ուզում էի այն վերցնել ու տուն բերել, բայց երկիրը քանդվում էր, և մտածեցի՝ ավելի լավ է, թող մնա:

-Որտե՞ղ, որտեղ մնա:

-Այն Պետրոս Գրիգորիչի աշխատասենյակում էր՝ Կենտկոմի շենքում:

-Հիմա ի՞նչ է այդ շենքում:

-Ազգային ժողովը:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԸ ՈՐՈՇԵՑ ՀԵՏԱՔՐՔՐՎԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

Կիրակոսը հաճախ էր գալիս Երևան: Այստեղ նա ուներ բազմաթիվ ծանոթներ՝ տարատեսակ շրջանակներից՝ գործարար, քաղաքական, մտավորական, ընդհուպ մինչև՝ քրեական: Այդ ծանոթները ճանաչում էին նրան իբրև ռուսատանաբնակ հաջողակ գործարարի:

Կիրակոսը մեծացել էր Երևանում և շատ լավ գիտեր քաղաքը, այստեղի մարդկանց ու բարքերը: Հայրենիքում նա երբեք իր գործով չէր զբաղվել, որովհետև նպատակ ուներ մի օր վերադառնալ: Ռուսաստանը, որքան էլ, որ անծայրածիր էր, և այնտեղ ապրող հարուստ այրիներն անթիվ-անհամար, իր կարիերան վաղ թե ուշ պիտի ավարտվեր: Մի շենք կար Կասկադի բարձրունքին, որը Կիրակոսը շատ էր սիրում: Նա մտադիր էր հետագայում բնակարան գնել այդտեղ: Իսկ առայժմ իր կարճաժամկետ կամ երկարաժամկետ այցելությունների ժամանակ նա ապրում էր վարձով՝ այդ շենքի վերջին հարկում և երեկոները պատշգամբում նստած՝ խմում իր սիրելի իռլանդական վիսկին ու ծխում իր սիրելի դոմինիկյան սիգարը:

Հենց դրանով էր զբաղված Կիրակոսը երկու հազար տասնութ թվականի ապրիլի յոթի երեկոյան, երբ զանգահարեց Պետրոսը: Այդ զանգին նա սպասում էր դեռ նախորդ երեկոյան և համոզված էր, որ հավելյալ մեկ օրը կապուտաչյա երիտասարդն օգտագործել է՝ հասկանալու համար, թե արդյոք միայնակ չի՞ կարող գլուխ բերել գործը: Մինչ այդ, գործարքը համաձայնեցնելու ժամանակ Պետրոսը շատ մանրամասներ չէր բացահայտել. ասել էր միայն, որ իր պապից մնացել է մի քանի տասնյակ կիլոգրամ ոսկի, որի տեղն ինքը դեռ չգիտի:

Կիրակոսին երբեք հոտառությունը չէր խաբում: Ու, թեև

նա երբեք գործ չէր ունենում սեփական սեռի ներկայացուցիչների հետ, համոզված էր, որ այստեղ ևս չի սխալվի, և նորաթուխ գործընկերն անպայմանորեն կգա իր մոտ:

-Մեզ ծանոթ պատգամավորներ են պետք, ոսկու հետքերը տանում են Ազգային ժողով,- հեռախոսով ասաց նորաթուխ գործընկերը:

Ծանոթ պատգամավորներ Կիրակոսն իհարկե ուներ: Բայց նախ պետք էր հասկանալ, թե ինչ ոսկու մասին է խոսքը, և ինչ կապ ունի այստեղ Ազգային ժողովը:

-Արի քեզ վիսկի հյուրասիրեմ,- առաջարկեց Կիարկոսը:

Երիտասարդը եկավ շատ արագ՝ ձեռքին մի հին թղթապանակ:

-Եթե ուզում ես, որ գործն հաջողի, նախ պետք է ինձ ամենայն մանրամասնությամբ պատմես ամեն ինչ՝ առանց որևէ դետալ թաքցնելու,- նրան դիմեց Կիրակոսը:

-Շատ լավ,- հեշտությամբ համաձայնեց Պետրոսը և հին թղթապանակից ինչ-որ լուսանկարներ հանեց:

Լուսանկարներում կային խորհրդային շրջանի տարբեր հայտնի դեմքեր, ընդհուպ մինչև ինքը՝ Միխայիլ Սերգեևիչ Գորբաչովը: Այդ հայտնի մարդկանց կողքին բոլոր նկարներում կանգնած էր փոքրամարմին, գանգուր մազերով ու երկար այտմորուսներով մի տղամարդ:

-Պապս է,- ասաց Պետրոսը հպարտորեն,- Պետրոս Գրիգորիչը:

-Ե՞րբ է նա մահացել,- ուշադիր զննելով լուսանկարները՝ հարցրեց Կիրակոսը:

-Կարծեմ իննսունին, ճիշտ չեմ հիշում:

-Իսկ որտե՞ղ էր նա աշխատում:

-Կոմկուսի կենտկոմում:

Կիրակոսը վերադարձրեց լուսանկարները.

-Ուրեմն պարզ է, թե ինչու Ազգային ժողով:

Հետո Պետրոսն ամենայն մանրամասնությամբ, ինչպես պահանջել էր Կիրակոսը, պատմեց Լենինի կիսանդրու պատմությունը:

Կիրակոսը լսեց՝ առանց ընդհատելու, ժամանակ առ ժամանակ կում անելով վիսկիի բաժակից:

-Հիսուն կիլոգրա՞մ, ուրեմն,- ասաց նա, երբ Պետրոսն արդեն ավարտել էր,- դա փոքր թիվ չէ:

-Իհարկե փոքր չէ:

-Այսինքն՝ հինգ հարյուր հազար դոլար: Սա արդեն մեծ թիվ չէ:

-Ինչո՞ւ հինգ հարյուր հազար,- զարմացավ Պետրոսը,- ոսկու մեկ կիլոգրամն այսօր արժե մոտավորապես քառասուն հազար դոլար, հետևաբար հիսուն կիլոգրամը կլինի երկու միլիոն:

-Ես հաշվում եմ իմ մասնաբաժինը: Եվ այն ինձ դուր չի գալիս: Ես համոզված եմ, որ քո հարգարժան պապը, եթե իմ նման գործընկեր ունենար, կհամաձայներ կիսովի աշխատել: Ա՛յ մեկ միլիոնը սիրուն թիվ է:

-Հազիվ թե պապս գործ բռներ մեկի հետ, ով խախտում է պայմանավորվածությունը:

-Դե լավ, լավ, ես կատակում եմ. կես միլիոն, ուրեմն՝ կես միլիոն,- Կիրակոսը մի շնչով դատարկեց վիսկիի լիքը բաժակը,- ստիպված եմ լինելու հետաքրքրվել քաղաքականությամբ: Ավելի ճիշտ Հայաստանի ներքաղաքական կյանքով:

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

Պատմությունը, ավա՜ղ, չի կարող ճիշտ պատասխանել որոշ հարցերի: Օրինակ՝ հետևյալ հարցին. իսկ ի՞նչ կլիներ, եթե «այսպես» չլիներ:

Ի՞նչ կլիներ, եթե Հայաստանի Հանրապետության երրորդ նախագահը պահեր իր խոստումը և նախագահության ժամկետը լրանալուց հետո հրաժարվեր պետական բարձրագույն պաշտոն զբաղեցնելուց:

Հազար ու մի բան կարող էր լինել, և ոչ ոք, այդ թվում՝ պատմագիրները չեն կարող հստակ ասել, թե՝ ինչ: Բայց մի բան կա, որ հաստատ կլիներ: Նախագահը կմնար իր խոսքի տերը:

Իր ամբողջ պաշտոնավարման ընթացքում «ճշտով» առաջնորդվող, «ճշտով» հարցեր լուծող այդ մարդը փաստորեն չկարողացավ պահել սեփական «ճիշտը»:

Նրան հարգողներն ու նրան քծնողները, նրան գնահատողներն ու նրանից վախեցողները, նրան սիրողներն ու նրան ատողները միաբերան կրկնում էին՝ նա անփոխարինելի է:

«Անփոխարինելի» այդ մարդը բավականին հարմար նստած էր իր տեղում երկու հազար տասնութ թվականի ապրիլին և հազիվ թե ինչ-որ վտանգի կանխազգացում ուներ: Բոլոր հարցերը լուծված էին. «Կենտրոնը» տվել էր իր «դոբրոն», իր քաղաքական թիմը լավագույնս կատարել էր և շարունակում էր կատարել իր բաժին աշխատանքը, իր ֆեոդալները շարունակում էին կանոնավոր մուծումները: Մի խոսքով՝ ամեն ինչ վերահսկվում էր:

Կար իհարկե մի խումբ՝ նախկին «տանիքների վրա թռչկոտողներ», իսկ հիմա «տրասսայի վրա քայլողներ», ով-

քեր պատրաստվում էին ինչ-որ բան անել, բայց դա էլ մտահոգիչ չէր:

Դե իսկ ժողովուրդը… Բայց՝ ինչ ժողովուրդ: Ժողովուրդն իր համար ապրում էր:

Ինչ կարող է անել այգեպանը, երբ իր այգին ոռոգելու համար ջուր չունի: Ստիպված պիտի ծառերը թողնի իրենց բախտին: Կգոյատևեն՝ կգոյատևեն, կչորանան՝ կչորանան:

Միայն թե ջուր կար: Քիչ, բայց կար: Սակայն այն բաժին էր հասնում ոչ բոլոր ծառերին: Հարյուր ծառից լավ բերք էր տալիս հինգը, ևս տասնհինգ-քսանը տալիս էին սակավ բերք, նույնքան ծառ պարզապես դիմանում էր ու չէր չորանում, իսկ մնացածը… Մնացածը չորանում էին:

Մինչդեռ կարելի էր այնպես բաշխել ջուրը, որ բաժին հասներ բոլոր ծառերին: Եվ զուգահեռ փորել նոր առուներ:

Ինչպե՞ս էր ապրում ժողովուրդը Հայաստանում երկու հազար տասնութ թվականի ապրիլին: Պաշտոնական վիճակագրությունը հավանաբար ուներ իր տվյալները: Բայց արդյո՞ք դրանք անհրաժեշտ էին ժողովրդի վիճակի մասին պատկերացում կազմելու համար:

Եթե Երևանի կենտրոնի հարյուրավոր սրճարան-ռեստորանները երեկոյան լեփ-լեցուն էին, մի՞թե դա ժողովրդի լավ ապրելու ցուցանիշ էր: Չէ՞ որ Հայաստանի հարյուրավոր գյուղեր երեկոյան և օրվա բոլոր ժամերին դափ-դատարկ էին:

Ժողովրդի մի փոքր մասը, հավանաբար՝ հինգ տոկոսը, իսկապես շատ լավ էր ապրում: Ապահովված, կայուն ու երջանիկ: Ուներ էլիտար բնակարաններ, ամեն երեկո դուրս էր գալիս այդ բնակարաններից, նստում լյուքս մեքենաները և գնում ընթրելու վերոնշյալ ռեստորաններում, տարին մի քանի անգամ էլ մեկնում էր հանգստանալու այս կամ այն ծովի ափին:

Կար ուրիշ տասնհինգ-քսան տոկոս, որ նույնպես լավ էր ապրում: Ուներ վարկով գնված բնակարան, վարկով գնված ավտոմեքենա, ի վիճակի էր ժամանակին մարել այդ վարկերը, ժամանակ առ ժամանակ կարող էր իրեն թույլ տալ ընթրել ռեստորաններում՝ այս մեկն առանց վարկի, տարին մեկ անգամ էլ մեկնել հանգստանալու՝ վարկով կամ առանց:

Եվս քսան-երեսուն տոկոսը հազիվ ծայրը ծայրին էր հասցնում:

Մնացած ժողովուրդը վատ էր ապրում, շատերը՝ ծայրահեղ վատ:

Իսկ այգեպանը համառորեն չէր ուզում իր տեղը զիջել ուրիշին: Ուրիշին, ով կարող էր ջուրը հավասարաչափ բաշխել բոլոր ծառերին և փորել նոր առուներ:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ՔՍՅՈՒՇԱՅԻՆ

Արաքսը Հայաստանից հեռացել էր տասներկու տարի առաջ: Եվ Մոսկվայում դարձել Քսյուշա: Նա երբեմն այցելում էր Երևան: Այստեղ էին մայրը, քույրը և մանկության մի քանի ընկերներ: Մի անգամ նույնիսկ եկել էր Մարկի հետ, ում մորն ու քրոջը սակայն չէր ներկայացրել՝ բավարարվելով միայն ընկերուհիներով:

Ընկերուհիներից մեկը՝ Լիլիթը, ժամանցային մի ամսագիր ուներ, որի գործերը սակայն լավ չէին, և այն փակման եզրին էր: Քսյուշան առաջարկել էր միասին վերակենդա-

նացնել ամսագիրը. նկատի ունենալով իր փորձը ամսագրային բիզնեսում, իր կապերը նորաձևության աշխարհում և ոչ միայն, և իհարկե գումարային այն խնայողությունները, որ ուներ ու պատրաստ էր ներդնել այս գործում, կարելի էր հաջողության հասնել:

Եվ այսօր ընկերուհին հրավիրել էր Քսյուշային երեկոյան միասին զվարճանալ երևանյան փաբերից մեկում, ուր նվագելու էր մի ռոք խումբ:

Համերգը դեռ չէր սկսվել, բայց սրճարանն արդեն լիքն էր: Մի քանի ազատ սեղաններ կային միայն, որոնց վրա, սակայն, տեղադրված էին «պատվիրված է» գրությամբ վահանակները: Լիլիթն ինչ-որ բան ասաց մատուցողուհու ականջին, և նրանց տեղավորեցին մուտքի դռան մոտ՝ հատուկ նրանց համար ավելացնելով մի սեղան:

-Դե ինչ, Արաքս, Մոսկվայի գլամուրային երեկույթների հետ ոչ մի նմանություն, այնպես չէ՞,- հարցրեց Լիլիթը՝ ուսումնասիրելով խմիչքների ցանկը,- ինչ խմենք:

-Վաղուց ինձ իմ իսկական անունով չէին դիմել: Կարծես ինձ այդպես ավելի է դուր գալիս: Եվ ինձ ավելի է դուր գալիս այստեղ, քան քո ասած գլամուրային միջավայրում: Այնտեղ ես ինձ զգում եմ ինչպես շամպայնի շիշ:

-Ինչո՞ւ հենց շամպայնի շիշ:

-Որովհետև ես ատում եմ շամպայնը: Ինչպես ցանկացած կեղծ բան: Ինչպես մանեքենուհին: Շամպայնը խմիչքների մանեքենուհին է: Ատում եմ, երբ մարդիկ ինձ նայում են իբրև մանեքենուհու:

-Բայց մարդիկ ինչ մեղավոր են, որ դու այդքան սիրուն ես:

-Մեղավոր չեն: Մարդիկ տեսնում են այն, ինչ տեսնում են: Իսկ ես համառորեն փնտրում եմ մեկին, ով կտեսնի ան-

տեսանելին: Գիտես ինչ, արի շամպայն խմենք:

Հերթական անգամ բացվեց սրճարանի դուռը, ներս մտան երկու տղամարդ և հանրությունը, չգիտես ինչու, անմիջապես հայացքները սևեռեց նրանց վրա: Նույնն արեց և Քսյուշան: Նորեկներից մեկը՝ գանգուր մազերով, երկնագույն աչքերով ու սլացիկ կազմվածքով, իրեն հիշեցրեց ոչ վաղ անցյալում իր հետ ցուցահարթակ բարձրացող տղամարդ մոդելների: Երկրորդը՝ ճերմակ պիջակով, ճերմակ կեպիով և շատ ավելի առնական դեմքով ու կազմվածքով, նման էր նրանց, ովքեր նորաձևության ցուցադրության ժամանակ նստում են առաջին շարքում և մտածում, թե մոդելներից որին արժե երեկոյան հրավիրել ընթրիքի՝ մտովի հաշվելով, թե որքան կնստի իրենց վրա այդ ընթրիքը և դրան հաջորդող ծախսերը:

-Դեմ չե՞ք, եթե տղաները նստեն ձեզ հետ,- հարցրեց մատուցողուհին,- ուրիշ ազատ տեղ չունենք:

Պետրոսն ու Կիրակոսը այս փաբում հայտնվել էին պատահաբար: Նրանք նախ զբոսնել էին Ազգային ժողովի շենքի շուրջ, ապա Բաղրամյան պողոտայով իջել ներքև և շարունակել էին քայլել Սարյան փողոցով: Կիրակոսն առաջարկել էր մի բաժակ խմել, և գործընկերները մտել էին առաջին իսկ պատահած տեղը: Պարզվել էր այստեղ շուտով համերգ է լինելու, և ազատ սեղան չկա: Միայն թե ոչ Կիրակոսի համար: Չնայած տեղը նրան առանձնապես դուր չէր եկել, և ոչ էլ համերգ լսելու ցանկություն ուներ, կար մի հանգամանք, որ անկարող էր նրան այստեղ չպահել: Սեղաններից մեկի մոտ նստած էր մի գեղեցկուհի:

Պետրոսին, հակառակը, տեղը դուր էր եկել, և երաժշտություն լսելու տրամադրություն նա ևս ուներ: Անտարակույս, նկատել էր նաև գեղեցկուհուն:

Իսկ գեղեցկուհուն այս երկուսն առանձնապես չհե-

տաքրքրեցին: Պիժոնն ու սիրունիկը՝ մտովի այսպես անվանեց նա անկոչ հյուրերին: Կարելի էր իհարկե չհամաձայնել, որ նրանք նստեին իրենց սեղանի շուրջ, և հավանաբար Քսյուշան այդպես էլ կաներ, եթե չորսար ընկերուհու ոգևորված հայացքը: Տղաներն ակնհայտորեն հմայել էին Լիլիթին, և դա զարմանալի չէր. երկուսն էլ հանգիստ կարող էին լինել նրա ամսագրի շապիկին:

-Իսկ դուք գիտե՞ք, որ ճնշումը շամպայնի շշում կազմում է վեց մթնոլորտ, և այն մի քանի անգամ գերազանցում է ավտոմեքենայի անվադողերի մեջ առկա ճնշմանը:

Խոսողը «պիժոնն» էր: Նա սպիտակ պիջակի գրպանից հանեց ակնոցների տուփը, տուփից՝ ակնոցները, դրեց դրանք աչքերին և սկսեց ուսումնասիրել աղջիկների պատվիրած շամպայնի շիշը:

-Ավելի լավ է՝ բացեք այն,- ժպտաց Լիլիթը:

-Ես իհարկե կբացեմ,- շարունակեց Կիրակոսը,- բայց նկատի ունեցեք, որ շամպայնի խցանը կարող է զարգացնել ավելի քան հարյուր քսան կիլոմետր ժամ արագություն և օդ բարձրանալ մինչև տասնհինգ մետր:

Սա ասելուց հետո հնչեց մի պայթյուն: Թե ինչ արագությամբ օդ թռավ շամպայնի խցանը, հայտնի չէ, հայտնի չէ նաև, թե քանի մետր կարող էր այն բարձրանալ, որովհետև անմիջապես բախվեց առաստաղին և կտրուկ վայրէջք կատարեց կողքի սեղանի մոտ նստած մի սփյուռքահայի քաչալին:

-Աս ի՞նչ էր,- տեղից վեր թռավ ու բացականչեց քաչալը,- ասոր մարիկը…

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ԿԻՐԱԿՈՍԸ ԳՐԱՋ ԵԿԱՆ

Իսկ ինչո՞ւ չզվարճանալ՝ մտածեց Քսյուշան: Ռոքնռոլը տրամադրող էր, ջենթլմեններն՝ ուրախ, շամպայնը՝ շատ: Եվ, ի վերջո, նոր կյանք էր սկսվում:

Եվ Քսյուշան սկսեց զվարճանալ: Նրա պարը նման էր հրավառության, և այդ հրավառությունից բոլորն այնպես խանդավառվեցին, որ համերգի ավարտին սրահում կարծես ռումբ պայթած լիներ:

Առավոտյան արթնացավ հուժկու գլխացավով: Զանգում էր հեռախոսը: Նայեց՝ էկրանին գրված էր «Կիրակոս»: Չպատասխանեց զանգին ու քնեց: Քիչ հետո նորից զանգ եկավ: Հիմա էլ գրված էր «Պետրոս»: Այս անգամ անջատեց հեռախոսն ու դարձյալ քնեց, այդպես էլ չմտաբերելով, թե ովքեր էին այդ Կիրակոսն ու Պետրոսը, և ինչու էին նրանց անունները գրանցված իր հեռախոսում: Հետո եկավ Լիլիթը:

-Վե՜ր կաց,- ասաց նա շնչակտուր,- տղաները ներքևում մեզ են սպասում:

-Ի՞նչ տղաներ,- զարմացավ Քսյուշան,- ինչո՞ւ են սպասում:

-Կիրակոսն ու Պետրոսը: Չե՞ս հիշում, պայմանավորվել ենք քաղաքից դուրս գնալ:

Քսյուշան սկսեց աստիճանաբար մտաբերել նախորդ երեկոն: Բայց հիշելու բան առանձնապես չկար՝ սովորական զվարճանք՝ գուցե շամպայնի չարաշահումով:

-Ես նման բա՞ն եմ պայմանավորվել,- հարցրեց հորանջելով:

-Չե՞ս հիշում:

-Չեմ հիշում: Լսի՛ր, սիրելիս, ցրի՛ր նրանց, ասա, որ կատակել եմ, ու արի սուրճ խմենք:

Եվ այդպիսով Քսյուշան երկրորդ անգամ «ցրեց» Կիրակոսին ու Պետրոսին: Առաջին անգամ դա արել էր գիշերը, երբ համերգի ժամանակ մի լավ պարելուց և փաբի ողջ շամպայնը խմելուց հետո տղաներն առաջարկել էին շարունակել:

Մինչդեռ Կիրակոսն ու Պետրոսը նման վերաբերմունքի չէին սպասում: Երկուսի կյանքում էլ չէր եղել դեպք, երբ ինչոր աղջիկ, թեկուզ Քսյուշայի պես գեղեցկուհի, որոշեր իրենց «ցրել», այն էլ՝ երկու անգամ:

-Դե ինչ, «и на старуху бывает проруха»,- ասաց Կիրակոսը ռուսերեն, և քանի որ Պետրոսը նրան չհասկացավ, ստիպված էր թարգմանել,- բառացի դա նշանակում է՝ պառավն էլ կարող է սայթաքել: Իսկ իմաստն այն է, որ անգամ փորձառու աղվեսը կարող է բաց թողնել հավին:

Պետրոսին երևի դուր եկավ բացատրությունը, և նա սկսեց ծիծաղել:

-Բայց դեռ տեսնենք, թե ինչ կլինի,- շարունակեց փորձառու աղվեսը,- ուրիշ բան կմտածենք:

-Անիմաստ է,- նետեց Պետրոսը,- իզուր մի՛ չարչարվիր, քեզ մոտ ոչինչ չի ատացվի:

-Իսկ քե՞զ մոտ կստացվի:

-Կասկածո՞ւմ ես:

Կիրակոսը մի քիչ մտածեց ու ասաց.

-Դե որ այդպես է՝ առաջարկում եմ գրազ գալ:

-Ի՞նչ գրազ:

-Մեզանից ով կկարողանա բռնել հավին:

-Բռնել ու ի՞նչ անել:

-Քաշել փետուրները՝ ինչ անել:

-Համաձայն եմ:

-Ինչի՞ վրա ենք գրազ գալիս:

-Քսանհինգ տոկոսի:

Պետրոսը զարմացած նայեց նրան:

-Եթե հաղթում ես դու, գործարքի վերջում ես ոչինչ չեմ ունենում,- բացատրեց Կիրակոսը,- եթե հաղթում եմ ես՝ ունենում եմ հիսուն տոկոս:

-Ինձ դուր է գալիս գրազը:

-Միայն մի պայմանով՝ գրազն ուժի մեջ է մինչև Լենինին գտնելը: Դե ինչ, պայմանավորվեցի՞նք,- Կիրակոսը մեկնեց ձեռքը:

Պետրոսը սեղմեց այն և ասաց.

-Պայմանավորվեցինք: Բայց մի՛ անհանգստացիր, ես քեզ այնուամենայնիվ մի տասը տոկոս կտամ: Հո ձրի չե՞ս աշխատելու:

ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐ

Կան մարդիկ, ում կյանքի նպատակը ուտելն է ու զուգարան գնալը: Նրանք ամեն ինչի ընդունակ են, եթե ինչ-որ պատճառով քչանա իրենց կերը, կամ ինչ-որ մեկը զբաղեցնի զուգարանը այն պահին, երբ իրենք են ուզում այնտեղ մտնել:

Նման մարդկանց գոյությանը կարելի է հիարկե ուշադրություն չդարձնել՝ թող իրենց համար ուտեն ու զուգարան գնան, միայն թե երբեմն նրանք դառնում են վտանգավոր շրջապատի, անգամ ժողովրդի ու երկրի համար: Որովհետև այդ մարդիկ ժամանակի ընթացքում սկսում են ընկալել երկիրը որպես կերակրատաշտ և արտաքնոց:

Այդ մարդիկ դժբախտաբար ամենուրեք են: Նրանք կարող են լինել երթուղայինի վարորդներ, ռեստորանային երգիչներ, համայնքապետեր կամ պատգամավորներ:

Առողջ պետությունում նրանք հազիվ թե կարողանային գլուխ բարձրացնել, որովհետև առողջ պետությունն ունի առողջ հասարակություն և այդ հասարակության կողմից ընտրված առողջ իշխանություններ: Թե՛ մեկը, թե՛ մյուսը թույլ չեն տա խժռել ու կեղտոտել իրենց երկիրը:

Բայց երբ այլևս իշխանության համար է երկիրը դառնում կերակրատաշտ ու զուգարան, իսկ հասարակությունը հարմարվում է դրան, այս դեպքում արդեն վերոնշյալ մարդիկ իրենց իրավացիորեն զգում են՝ ինչպես ճանճը թրիքի վրա: Եվ լինեն երթուղային վարելիս, բեմում կլկլացնելիս, համայնքով շրջելիս, թե կոճակ սեղմելիս, նրանց մտքին երկու բան է՝ ուտել և…

Կա մարդկանց մեկ այլ տեսակ, որը նույնքան զզվելի է: Դա շնագայլերի տեսակն է: Այս տեսակը նույնպես շատ է ու ամենուրեք: Բայց վտանգավոր է հիմնականում մի տեղ՝ քա-

ղաքականության մեջ: Որովհետև եթե շնագայլ «ժեկի» պետի վրա կարելի է պարզապես գոռալ, և նա վախից կմտնի իր սեղանի տակ, ապա շնագայլ պատգամավորի դեպքում դա չի աշխատի: Որովհետև նա թաքնված է: Նա թաքնված է իր ընտրողների հետևում և սպասում է այնքան, մինչև ուտողներն ու զուգարան գնացողները նույն այդ ընտրողներից թողնեն միայն կաշին ու ոսկորը: Հետո արդեն նա կանի իր գործը:

Իհարկե, կան մարդկանց ուրիշ շատ բացասական տեսակներ՝ թե՛ քաղաքականությունից դուրս, թե՛ հատկապես քաղաքականության մեջ, բայց Կիրակոսի երկու պատգամավոր ծանոթները պատկանում էին հենց վերոնշյալ երկու տեսակներին: Եվ քանի որ Ազգային ժողովի բոլոր այսօրինակ պատգամավորները ունեին մականուններ, այս երկուսին ևս կարելի է կոչել պայմանական մականուններով՝ Թրիք և Շնագայլ:

ՇԵՖԻ ԿԵՆԱՑԸ 1

Երկու հազար տասնութ թվականի ապրիլի տասնչորսին «Assosiated Press» գործակալությունն անդրադարձել էր Հայաստանի ներքաղաքական վերջին իրադարձություններին ու Երևանի Ֆրանսիայի հրապարակում մեկնարկած հանրահավաքներին:

«Հազարավոր ընդդիմադիր հայացքներով մարդիկ փակել են Երևանի հրապարակներից մեկի մուտքային չորս կարևոր փողոցներ՝ պարալիզացնելով երթևեկությունը: Ընդվզումների պատճառը Հայաստանում սահմանադրական փոփոխություններն են, որոնցով, ըստ ցուցարարների, երկրի արդեն պաշտոնաթող նախագահ Սերժ Սարգսյանին վարչապետի պաշտոնում հանձնում են երկրի հետագա ղեկավարումը: Նա կորցրել է իր լիազորությունները ապրիլի իննին, երբ Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը ստանձնել է Արմեն Սարգսյանը: Վերջինս նախագահ է լինելու թույլ լիազորություններով, երկրի հիմնական ղեկավարը լինելու է վարչապետը, որի պաշտոնում էլ հենց առաջադրվում է Սերժ Սարգսյանը: Ցուցարարները նշում են, որ շրջափակելու են շենքը, որտեղ քվեարկելու են Սերժ Սարգսյանի օգտին»,- գրում էր «Assosiated Press»-ը:

Նույն օրը՝ երկու հազար տասնութ թվականի ապրիլի տասնչորսին, Կիրակոսը պայմանավորվել էր հանդիպել Շնագայլի և Թրիքի հետ: Հանդիպելու էր առանձին-առանձին, որովհետև այս երկուսը, չնայած նույն քաղաքական թիմից էին՝ իշխող կուսակցությունից, իրար տանել չէին կարող: Երկուսին էլ Կիրակոսն ասել էր, որ կարևոր գործ ունի նրանց հետ: Թե ինչ գործ՝ դեռ չէր որոշել:

Առաջինի հետ պայմանավորված էր երեկոյան ժամը վեցին՝ սրճարանում, երկրորդի հետ՝ յոթին՝ ռեստորանում:

Հանդիպումների հերթականությունը, ժամանակն ու տեղը հատուկ էր այդպես դասավորել: Շնագայլի հետ բավական էր մի բաժակ սուրճ խմել և զրուցել մի կես ժամ, իսկ Թրիքին հարկ կլիներ կերակրել:

Սակայն երկուսն էլ չեկան հանդիպումներին: Կիրակոսը սպասեց սրճարանում կես ժամ՝ այդ ընթացքում անընդհատ զանգելով Շնագայլին: Վերջինիս հեռախոսն անջատված էր:

Ռեստորանում, ուր բավական ճոխ սեղան էր գցել, սպասեց մեկ ժամ, և քանի որ Թրիքի հեռախոսը նույնպես անջատված էր, ստիպված հրավիրեց Պետրոսին՝ ափսոսելով սեղանին շարված դելիկատեսները:

Մինչ Պետրոսը կժամաներ, ինտերնետային կայքերից մեկում կարդաց հետևյալ լուրը:

«Այսօր Ծաղկաձորում տեղի է ունեցել ՀՀԿ գործադիր մարմնի և խորհրդի արտագնա նիստ: Գործադիր մարմինը կուսակցության նախագահի առաջին տեղակալ Կարեն Կարապետյանի առաջարկությամբ որոշել է ՀՀ վարչապետի պաշտոնում ՀՀԿ խորհրդին ներկայացնել Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահ Սերժ Սարգսյանի թեկնածությունը: Խորհրդի նիստում գործադիր մարմնի որոշումը ներկայացրել է ՀՀԿ նախագահի առաջին տեղակալ Կարեն Կարապետյանը: Խորհուրդը քննարկել է հարցը և միաձայն կողմ արտահայտվել թեկնածությանը: Ապրիլի տասնվեցին ՀՀ վարչապետի պաշտոնում ՀՀ Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցությունը պաշտոնապես կառաջադրի Սերժ Սարգսյանի թեկնածությունը: Հիշեցնենք՝ Սերժ Սարգսյանի իշխանավարման երկարաձգման դեմ պայքարող ցուցարարները նախատեսել էին շրջափակել Երևանում՝ Մելիք Ադամյան փողոցում գտնվող ՀՀԿ գրասենյակը, որպեսզի խափանեն ՀՀԿ խորհրդի նիստը: Առավոտյան ընդդիմադիր առաջնորդ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ

իրենց տեղեկություններով՝ նիստը տեղի է ունենալու այսօր երեկոյան Ծաղկաձորում, ինչի կապակցությամբ ցուցարարները որոշել էին ավտոերթ անցկացնել դեպի Ծաղկաձոր»:

Ահա՛ թե ինչ, մտածեց Կիրակոսը: Փաստորեն հարգարժան պատգամավորները մեղավոր չեն, նրանք էլ են անակնկալի եկել: Չնայած, մի՞թե չէր կարելի զանգել և զգուշացնել:

Հետո նրա աչքով ընկավ մեկ այլ հրապարակում, որում նշվում էր, որ իշխող կուսակցության ներկայացուցիչներից մեկը հայտարարել է թե իրենց կուսակցության խորհրդի նիստը Ծաղկաձորում անցկացնելու որոշումը կայացվել է մեկ շաբաթ առաջ: Նա հերքել էր այն տեղեկությունները, ըստ որոնց՝ նիստը Ծաղկաձորում անցկացնելու որոշումը պայմանավորված է եղել «Իմ քայլը» նախաձեռնության անդամների հայտարարությունների հետ, թե պատրաստվում են շրջափակել ՀՀԿ-ի գրասենյակը: «Երբ Հանրապետական կուսակցությունը որոշել է, որ նիստը պետք է Ծաղկաձորում լինի, Նիկոլ Փաշինյանը իր գործընկերների հետ ճեմում էր Վանաձոր-Դիլիջան մայրուղում»,- ասել էր նա:

Սա հարյուր տոկոսանոց սուտ է, մտածեց Կիրակոսը: Եթե իսկապես նախապես որոշված է եղել նիստն անցկացնել Ծաղկաձորում, ապա այդ մասին տեղյակ կլինեին Շնագայլն ու Թրիքը, իսկ եթե տեղյակ լինեին, արդյո՞ք կպայմանավորվեին իր հետ հանդիպել նույն ժամանակ՝ Երևանում:

Ինչևէ, ժամը ութին, երբ Կիրակոսն ու Պետրոսը խմում էին իրենց ձեռնարկած գործի հաջողության կենացը, զանգահարեց Շնագայլը.

-Երևանում չէի, չկարողացա գալ: Շեֆն էր կանչել՝ պետական գործերով,- ասաց նա՝ շատ լուրջ տոնով և հատուկ շեշտելով «շեֆ» բառը:

-Լո՞ւրջ է վիճակը,- հարցրեց Կիրակոսը:

-Ի՞նչ վիճակ:

-Երկրի վիճակը:

-Հեռախոսով չեմ կարող ասել,- չգիտես ինչու շշնջաց Շնագայլը,- արի հանդիպենք վաղը:

Եվ պայմանավորվեցին հանդիպել վաղը:

Քիչ հետո զանգահարեց Թրիքը:

-Դեռ ռեստորանո՞ւմ ես,- հարցրեց նա:

-Այո,- պատասխանեց Կիրակոսը:

-Սոված եմ, գամ մի կտոր հաց ուտեմ:

Հեռախոսն անջատելով՝ Կիրակոսը մտքերի մեջ ընկավ: Նման զարգացման նա չէր սպասում: Նախ կանչեց մատուցողին ու խնդրեց թարմացնել սեղանը, ապա դիմեց Պետրոսին:

-Երևի ավելի ճիշտ կլինի, որ դու գնաս: Իմ նախատեսած սցենարով դու պիտի ավելի ուշ հայտնվես:

-Իսկ կարելի՞ է իմանալ, թե ինչպիսին է քո նախատեսած սցենարը,- թերահավատորեն հարցրեց գործընկերը:

-Ի՞նչ է, ինձ չե՞ս հավատում,- այնպես հարցրեց Կիրակոսը, որ ուրիշ մեկը կմտածեր, թե նա կյանքում ոչ ոքի չի խաբել:

-Դա կարևոր չէ,- ասաց Պետրոսը,- քեզ ձեռնտու չէ ինձ խաբելը: Պարզապես ուզում էի ծանոթանալ սցենարին:

-Իմ սցենարը իմպրովիզն է…

Կիրակոսը Թրիքին դիմավորեց ռեստորանի մուտքի մոտ: Երբ մոտեցան սեղանին, պատգամավորի հոգնած ու խոժոռ դեմքին անմիջապես ժպիտ հայտնվեց: Գորգանման սփռոցի վրա կողք-կողքի շարված էին կովկասյան խոհանոցի առնվազն տասը ճաշատեսակներ և անհայտ խոհանոցի պատկանող մի ճագար, որից էլ սկսեց իր ընթրիքը Կիրակոսի հյուրը, ասես վախենալով, որ երկարականջն իրեն տես-

նելով շունչ կառնի ու կփախչի:

Կիրակոսն օղի լցրեց նրա բաժակը և հարցրեց.

-Ինչ կար Ծաղկաձորում: Ինչպե՞ս է շեֆի տրամադրությունը:

Թրիքը կուլ տվեց հերթական կտորը և թերահավատորեն նայեց սեղանակցին՝ հավանաբար մտածելով, թե ինչու նա հիշատակեց շեֆին:

-Ճիշտն ասած՝ ես բան չեմ հասկանում: Դրանց բոլորին պետք է բռնել: Դրանք ովքե՞ր են, ես դրանց…

-Իսկ ի՞նչ է մտածում շեֆը,- պնդեց Կիրակոսը:

-Դե, շեֆը…- Թրիքն ուզում էր ինչ-որ բան ասել, բայց կտրուկ դադար տվեց, փորձելով հասկանալ, թե որքա՞ն անկեղծ կարելի է լինել զրուցակցի հետ: Մի քիչ մտածեց ու ավելացրեց,- Ինչ իմանամ, թե ինչ է մտածում: Երևի մի բան գիտի:

-Ինչ գիտի,- շարունակեց համառել Կիրակոսը:

Բայց Թրիքը տեղի չտվեց:

-Ես մի բան կասեմ, դրանց բոլորին պետք է բռնել: Մենք էլ կհանգստանանք, հազար հարց ունենք: Համաձայն չե՞ս:

-Իհարկե, համաձայն եմ,- Կիրակոսը բարձրացրեց բաժակը,- խմենք շեֆի կենացը, նա գիտի, թե ինչ է անում:

Թրիքը ուղղեց փողկապը, մի կողմ հրեց ափսեն, բարձրացրեց բաժակը, վեր կացավ տեղից ու զգաստ դիրք ընդունելով՝ ասաց.

-Շեֆի կենացը:

Երկրորդ բաժակը խմեցին հայրենիքի կենացը, երրորդը՝ ծնողների, չորրորդը՝ ընկերության:

Դրանից հետո միայն Կիրակոսն անցավ բուն գործին: Նա ասաց, որ Ամերիկայի Միացյալ Նահանգերից մի ծանոթ

ռեժիսոր է եկել և ինչ-որ ֆիլմ է նկարում: Նկարահանումներ են նախատեսված նաև Ազգային ժողովի շենքում, ուր մտնելու համար անցաթուղթ է պետք:

-Ի՞նչ կինո, հետաքրքրվեց Թրիքը,- սերիա՞լ:

-Ոչ, նա վավերագիր է, ֆիլմ է նկարահանում խորհրդային ժառանգության մասին: Եվ քանի որ Ազգային ժողովի շենքում նախկինում եղել է Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն, նա ուզում է տեսնել, թե խորհրդային շրջանից ինչեր են մնացել այնտեղ:

Թրիքն իհարկե շատ բան չհասկացավ Կիրակոսի ասածից, բայց խոստացավ օգնել:

ՇԵՖԻ ԿԵՆԱՑԸ 2

Երևանի կենտրոնի սրճարաններից մեկում նստած՝ Շնագայլը սպասում էր Կիրակոսին և հեռախոսի ինտերնետով հետևում օրվա լրահոսին:

Լրատվական կայքերից մեկը գրում էր, որ ներկայացվել են քաղաքացիական անհնազանդության քայլերը: Ըստ այդմ՝ առաջին փուլի արդյունքներով կա համատարած համակրանք Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մոտ, սակայն համակրանքը պետք է վերածել կոնկրետ քաղաքական գործողությունների, և դա պետք է արվի հաջորդ օրվանից: Զանգվածային քաղաքացիական անհնազանդության ժամ է հայտարարվել ապրիլի տասնվեցի առավոտյան ութն անց տասնհինգը: Գործողությունների ծրագիրը հետևյալն է. առաջին քայլով պետք է արգելափակվեն Դավթաշենի, Հաղթանակի և Կիևյան կամուրջները: Քաղաքացիները պետք է կամուրջների վրա կանգնեցնեն իրենց ավտոմեքենաները, միացնեն վթարայինները և ոտքով շարժվեն դեպի Ազգային ժողովի շենք՝ ճանապարհին ժողովրդին իրազեկելով, որ հավաքվում են այնտեղ:

Հաջորդ քայլը բոլոր հնարավոր փողոցների արգելափակումն է: Զուգահեռաբար պետք է կանգնեցվի նաև Երևանի մետրոպոլիտենի աշխատանքը: Ուղևորները՝ չորս-հինգ հոգանոց խմբերով, պետք է պառկեն գնացքների դռների մեջ և թույլ չտան, որ գնացքները շարժվեն: Բոլորը պետք է կանխիկացնեն բանկային հաշիվների իրենց գումարները և դնեն իրենց գրպանը: Այնուհետև պետք է հայտարարվեն գործադուլ և դասադուլ: Երիտասարդները պետք է պառկեն ավտոբուսների առաջ, իջեցնեն տրոլեյբուսների «շտանգաները»:

Թե ինչ պիտի լինի հետո՝ Շնագայլը չհասցրեց կարդալ, որովհետև ներս մտավ Կիրակոսը:

-Ի՞նչ է տեղի ունենում երկրում,- ողջագուրվելուց հետո հարցրեց նա:

- Ոչ մի վտանգավոր բան չկա, սրանց նմանների՞ հախից են եկել:

Կիրակոսը կանչեց մատուցողուհուն և կոնյակ պատվիրեց:

-Սիրտս լավ բան չի վկայում...

-Ինչ-որ բա՞ն գիտես,- անհանգստացավ Շնագայլը,- Մոսկվա՞ն է խառնված:

-Բոլորովին,- շտապեց հանգստացնել նրան Կիրակոսը,- պարզապես անհանգիստ եմ:

-Եթե Մոսկվան խառնված չէ, անհանգստանալու բան չկա:

Կիրակոսը պայուսակի միջից երկու սիգար հանեց և մեկը մեկնեց Շնագայլին:

-Իսկ ի՞նչ է մտածում շեֆը,- կրկնեց նա նույն հարցը, որը նախորդ օրը տվել էր Թրիքին:

Շեֆի անունը լսելով՝ Շնագայլը նայեց շուրջը.

-Շը22,- ասաց նա,- մի քիչ ցա՛ծր խոսիր:

-Իսկ ի՞նչ է մտածում շեֆը,- գրեթե անլսելի ձայնով հարցը կրկնեց Կիրակոսը:

Շնագայլը աթոռը մոտ քաշեց, կքվեց սեղանին ու շշնջաց.

-Վաղը դրանց հարցերը կլուծեն, կազմակերպիչներին կկալանավորեն, ու ամեն ինչ կվերջանա: Ովքե՞ր են այդ կապիկները: Մենք կրկեսի վերածելու հայրենիք չունենք: Շեֆի խոսքերն են:

Նա կրկին թիկնեց բազկաթոռին ու իր ասածներից գոհ՝ վառեց սիգարը:

Մոտեցավ մատուցողուհին ու սեղանին դրեց կոնյակի բաժակները:

Կիրակոսը բարձրացրեց դրանցից մեկն ու ասաց.

-Շեֆի կենացը:

Շնագայլը սիգարը դրեց մոխրամանի մեջ ու ոտքի կանգնեց.

-Շեֆի կենացը,- կրկնեց նա:

Հետո միայն Կիրակոսը խոսեց նրա հետ այն գործի մասին, որի համար խնդրել էր հանդիպել:

Բանն այն է, որ Թրիքն ու Շնագայլը տարբեր տրամաչափի պատգամավորներ էին: Եվ եթե Թրիքից Կիրակոսն ակնկալում էր միայն անցագիր, ապա Շնագայլից ակնկալիքներն ավելի մեծ էին: Կարող էր անհրաժեշտություն առաջանալ հանդիպել Ազգային ժողովի ղեկավարության հետ: Այստեղ Թրիքը հազիվ թե կարողանար օգնել, մինչդեռ այս մեկը կարող էր:

Շնագայլն իհարկե մերժել չէր կարող, չէ՞ որ միասին խմել էին շեֆի կենացը:

ԻՍԿ Ո՞ՒՐ Է ՔՍՅՈՒՇԱՆ

Քսյուշան զբոսնում էր Երևանում: Մենակ: Նա ուզում էր հասկանալ քաղաքն ու այստեղ ապրող մարդկանց:

Երևանը նման էր տեղ-տեղ անհաջող հավաքած, իսկ տեղ-տեղ էլ՝ չհավաքված «փազլի»: Այնպիսի տպավորություն էր, որ մի քանիսը, իրար հաջորդելով, փորձել են ճիշտ դասավորել կտորները, չեն կարողացել ու այդպես էլ թողել են թափված: Մինչդեռ եթե կարողանային հավաքել ու ճիշտ հավաքեին, ինչ-որ պատկեր կստացվեր: Գեղեցիկ, կամ պակաս գեղեցիկ, կամ գուցե տգեղ՝ բայց ինչ-որ պատկեր:

Անպատկեր՝ ահա թե ինչպիսին էր Երևանը, անկանոն, անիմաստ ու աննկարագիր, բայց ամենասարսափելին դա չէր: Ամենասարսափելի այն էր, որ քաղաքը հոգի չուներ:

Ո՞վ էր մեղավոր. իշխանությունը:

Իշխանությունը կարող է տրանսպորտի հարց լուծել, աղբահանության հարց լուծել, վերելակի հարց լուծել, որ անում է լավ կամ վատ, բայց իշխանությունը չի կարող հոգի տալ քաղաքին, որովհետև քաղաքին հոգի են տալիս մարդիկ:

Իսկ մարդիկ... Քսյուշան քայլում էր Երևանի փողոցներով ու հետևում մարդկանց: Նրանց մոտ բացակայում էր ամենակարևորը՝ հարգանքը: Հարգանքը դիմացով քայլող մարդու հանդեպ, հարգանքը հուշարձանի հանդեպ, հարգանքը ծառի հանդեպ, հարգանքը բետոնի հանդեպ: Հարգանքը քաղաքի հանդեպ: Հարգանքը Հայրենիքի հանդեպ:

Երբ մարդը կարող է իր քաղաքում թքել կամ հայհոյել, ուրեմն նա չի հարգում իր քաղաքը, ուրեմն նա չի հարգում իր Հայրենիքը:

Սերն այստեղ սուտ է: Մարդը կարող է օրը տասն անգամ երդվել, որ սիրում է իր Հայրենիքը, կենացներ ու բանաս-

տեղծություններ ձոնել Հայրենիքին, պատշգամբում կանգնած՝ երգել հայրենասիրական երգեր ու վերջացնելուց հետո թքել այդ նույն պատշգամբից ներքև: Կամ քայլել մայթով ու թքել: Այսինքն թքել իր քաղաքի վրա: Բայց չէ՞ որ մարդն իր տանը չի թքում:

Երբ մարդու տունը իր չորս պատերի մեջ է, իսկ դրանցից դուրս ոչինչ իրենը չէ, քաղաքը դառնում է օտար նրա համար: Եվ ոչ մի իշխանություն այստեղ ոչինչ անել չի կարող:

Քսյուշան քայլում էր Երևանում, նայում շենքերին ու մարդկանց, և նրան թվում էր, թե քաղաքը չէր շնչում, այլ միայն արտաշնչում էր:

Եվ այս անհասկանալի, անհրապույր ու անառույգ մթնոլորտում Քսյուշան ապարդյուն փորձում էր մի բան գտնել, որ ներշնչանք լիներ, ոգևորություն կամ առնվազն՝ հաճելի:

Սակայն այն, ինչի հանդիպեց, ո՛չ մեկն էր, ո՛չ մյուսը, ո՛չ էլ, առավել ևս՝ երրորդը:

Երբ քայլում էր Սայաթ-Նովա պողոտայով՝ քիչ առջևում, տեսավ մայթեզրի մոտ կայանված մի սպիտակ մեքենա, որից գլուխը դուրս էր հանել սպիտակ կեպիով մի տղամարդ:

-Ա՛յ քեզ անակնկալ, չէի մտածում, որ քեզ նորից կտեսնեմ,- ասաց տղամարդը՝ իջնելով մեքենայից:

Քսյուշան անմիջապես ճանաչեց նրան և անմիջապես էլ հասկացավ, որ ոչ մի անակնկալ էլ չկար, Կիրակոսը պարզապես հետևել էր իրեն և սպասել հարմար առիթի՝ դեմ-դիմաց դուրս գալու: Բանն այն է, որ ռուսական համարանիշներով այս սպիտակ «Range Rover»-ը Քսյուշան մի քանի անգամ ֆիքսել էր իր զբոսանքի ընթացում:

-Ինչո՞ւ ես դու այդքան սիրում սպիտակ գույնը,- հարցրեց նա:

Կիրակոսը ժպտալով մոտեցավ նրան:

-Սպիտակը խորհրդանշում է հավերժ երիտասարդությունը:

-Բայց մարդը չի կարող հավերժ երիտասարդ լինել:

-Կարող է, եթե նրան աչքով չտան: Իսկ սպիտակ հագուստը պաշտպանում է չար աչքից:

-Ահա՜ թե ինչ,- ծիծաղեց Քսյուշան,- իսկ ես կարծում էի, թե հակառակը:

-Ուրեմն դու էլ ես հավատում չար աչքերին:

-Ամենևին, ես հավատում եմ բարի աչքերին: Բարի ու սիրուն: Ուրախ էի քեզ տեսնել:

Քսյուշան ձեռքով արեց ու հեռացավ: Կիրակոսի դեմքին սառեց ժպիտը: Նա ուզում էր ինչ-որ բան ասել, բայց այդպես էլ մնաց քարացած ու սառած դեմքով:

Իսկ տանը Քսյուշային նոր անակնկալ էր սպասվում՝ կարմիր վարդերի մի հսկա փունջ:

Հավանաբար այդ պիժոնից է՝ մտածեց նա: Բայց սխալվեց. ծաղկեփունջը Պետրոսից էր:

ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՔԱՄԻՆ

Երկու հազար տասնութ թվականի ապրիլի տասնյոթին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը հատուկ նիստում վարչապետ ընտրեց Սերժ Սարգսյանին: Կողմ քվեարկեց յոթանասունյոթ, դեմ՝ տասնյոթ պատգամավոր: Խորհրդարանը ծափերով շնորհավորեց Սերժ Սարգսյանին: Նույն օրը Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը հրամանագիր ստորագրեց Սերժ Սարգսյանին վարչապետ նշանակելու մասին:

Մինչ այդ, ապագա վարչապետը ելույթ էր ունեցել խորհրդարանի ամբիոնից և անդրադարձել իր կառավարման տասը տարիներին. «Այդ ընթացքում մենք երկու խոշոր տնտեսական ճգնաժամեր ենք դիմագրավել, պատերազմական իրավիճակ ենք հաղթահարել, մեր անվտանգության ներքին և արտաքին լրջագույն մարտահրավերներ ենք կանգնեցրել, վատ պայմաններում կարողացել ենք առաջընթաց ապահովել, բազմաթիվ բարեփոխումներ իրականացնել կամ սկսել, կարողացել ենք պարզաճակատ կանգնել միջազգային բարդ ու հարափոփոխ հարթակում և ուղիղ նայել մեր բոլոր գործընկերների աչքերին: Անցած տասը տարին մեր երկրի ու բոլորիս պատմությունն է, Սերժ Սարգսյանի պատմությունը չէ: Եվ չարժե ամեն գնով սևացնել այն»,- ասել էր նա և հավելել, որ այդ տարիների մասին դեռ լուրջ վերլուծություններ կլինեն և մասնագիտական ուսումնասիրություններ: «Չեն կարող չլինել, և ի վերջո, պատմությունն է տալու իրական գնահատականը»,- իր խոսքն ամփոփել էր Սերժ Սարգսյանը:

Զուգահեռաբար ողջ Հայաստանում և մասնավորապես Երևանում շարունակում էր թափ հավաքել ժողովրդական շարժումը: Շարժման առաջնորդ Նիկոլ Փաշինյանը երե-

կոյան հանրահավաքի ժամանակ պիտի ասեր. «Առաջիկա օրերին կձևավորենք ժողովրդական թավշյա հեղափոխության կոմիտեներ, որոնք կղեկավարեն այս շարժումը և կհասցնեն հաղթական ավարտին: Հեղափոխական կոմիտեներ կստեղծվեն հանրապետության բոլոր բնակավայրերում ու մարզերում: Շատ շուտով ՀՀ բոլոր գերատեսչությունները, այդ թվում՝ ոստիկանությունը պետք է կատարեն ոչ թե Սերժ Սարգսյանի, այլ հեղափոխական կոմիտեների հրամանները: Վաղը առավոտը պետք է կաթվածահար լինի ամբողջ Երևանը՝ իններորդ զանգվածից մինչև երրորդ, չորրորդ գյուղ: Սերժ Սարգսյանը և սպասարկուները Երևան քաղաքում շարժվելու տեղ չպետք է ունենան, նրանք պետք է շարժվեն մեր սահմանած անցակետերով: Վաղը Երևանի բոլոր փողոցներում սահմանում ենք անցակետեր, որոնք գործում են միայն հանրապետականների ու նրանց բաշիբոզուկների համար»:

Փոփոխության քամին վաղուց էր հասել Հայաստան:

Այս երկու մարդկանցից առաջինը հազիվ թե երբևէ լսել էր «Scorpions»-ի սույն հանճարեղ քաղաքական երգը, երկրորդը գուցե լսել էր, գուցե՝ ոչ:

Այս երկու մարդիկ էլ որոշ բաներ ճիշտ էին ասում, որոշ բաներ՝ սխալ: Երկուսն էլ իրենց ձևով օգտագործում էին ժողովրդին, և ամենացավալին այն էր, որ ժողովուրդը չէր կարողանում տարբերել ճիշտն ու սխալը ու չէր ուզում հասկանալ, որ իրեն օգտագործում են:

Ժողովրդի մեծամասնությունն ատում էր առաջինին և գուցե ժամանակի ընթացքում ատեր երկրորդին: Բայց նույն այդ ժողովուրդն էր մեկին դարձրել այն, ինչ կար և երկրորդին դարձնում էր այն, ինչ դառնալու էր:

Եվ նույն այդ ժողովրդի գուցե իննսունինը տոկոսը ծանոթ չէր «Wind of change» երգին: Փոփոխության քամին չնա-

յած վաղուց էր հասել Հայաստան, բայց ժողովուրդը դեռ պատրաստ չէր փոփոխությունների: Որովհետև ինքը պատրաստ չէր փոխվել:

Ժողովուրդն ուզում էր, որ փոխվեր իր կենցաղը, փոխվեր իր աշխատավարձը, փոխվեր իր հեռախոսը, հեռուստացույցն ու ավտոմեքենան: Բայց ժողովուրդն ինքը չէր ուզում փոխվել: Չէր ուզում փոխել իր մտածողությունը, չէր ուզում փոխել իր մոտեցումները, չէր ուզում փոխել իր ճաշակը:

Հազար ինը հարյուր իննսուն թվականին, երբ «Scorpions»-ը ներկայացրեց «Wind of Change» երգը, Արևելյան Եվրոպայի ժողովուրդները, այդ թվում՝ հայ ժողովուրդը, պատրաստ էին ոչ միայն ինչ-որ բան փոխելու, այլև իրենք փոխվելու: Եվ փոխվեցին, ինչի արդյունքում քանդվեց չարի կայսրությունը, և մեկ տասնյակից ավելի ժողովուրդներ, այդ թվում՝ հայ ժողովուրդը, սկսեցին ապրել անկախ պետություններում:

Այդ պետություններից մի քանիսում, այդ թվում և Հայաստանում ամեն բան չէր, որ լավ ընթացավ, և նրանց միակ լուրջ ձեռքբերումը մնաց անկախությունը: Իսկ այնտեղ, ուր ամեն բան չէ, որ լավ է, մի օր նորից փչելու է փոփոխության քամին: Միայն թե ժողովուրդը պիտի պատրաստ լինի այդ քամուն: Ժողովուրդը պիտի պատրաստ լինի փոխվել, այլապես այդ քամին կարող է ավերել ամեն ինչ, այդ թվում՝ միակ ձեռքբերումը:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԸ ԿՈՐՑՐԵՑ ԻՐ ԿԵՊԻՆ

Արդեն մի քանի օր՝ գործընկերները սպասում էին, որ ծանոթ պատգամավորները կազմակերպեն իրենց այցելությունը Ազգային ժողովի շենք: Սակայն ոչ Թրիքը, ոչ Շնագայլը չէին կարողանում դա անել: Այս երկուսն իհարկե շահագրգռված պիտի լինեին իրենց օգտակար լինել, որովհետև դրա համար Կիրակոսը հնարավոր ամեն ինչ արել էր: Թրիքին խոստացել էր օգնել, որ նրան պատկանող արտադրամասի արտադրանքն իրացվի Մոսկվայի խանութներում, իսկ Շնագայլին

խոստացել էր նրա որդու հարսանիքին ապահովել մի ռուս հայտնի երգչի մասնակցությունը: Ավելորդ է ասել, որ երկու խոստումն էլ նա չէր պատրաստվում կատարել: Հետո մի բան կմտածեր, իսկ առայժմ պետք էր տեղից շարժել սայլը:

-Ես չեմ ուզում նեղացնել հարգարժան պապիդ, բայց նա կարող էր հեռատես լինել և իր ոսկուց ձուլեր ոչ թե Լենինի, այլ Նիկոլի գլուխը,- Պետրոսին դիմեց Կիրակոսը,- այդ դեպքում մենք ստիպված չէինք լինի այսքան չարչարվել:

-Ինձ թվում է՝ այդ երկու գլուխներն իրար շատ նման են,- արձագանքեց Պետրոսը,- և ոչ միայն գլուխները: Ես մի անգամ մի վավերագրական ֆիլմ եմ տեսել Լենինի մասին: Նա անընդհատ գոռում էր:

-Ի դեպ, դու հիշո՞ւմ ես, որ վավերագրական ֆիլմերի ռեժիսոր ես:

-Մի՛ մտահոգվիր,- հանգստացրեց նրան Պետրոսը:

Գործընկերները նստած էին Մաշտոցի պողոտայի մի սրճարանում, երբ զանգեց Շնագայլը.

-Ես Ազգային ժողովում եմ, կարող ես բերել ամերիկացուն,- ասաց նա,- միայն թե շուտ արեք, երկար մնալ չեմ կարող:

Շուտ անելն այնքան էլ հեշտ չէր: Մաշտոցի պողոտայով երթ էին անում ցուցարարները:

-Դեպի ո՞ւր է շարժվում երթը,- դուրս գալով սրճարանից՝ հարցրեց Պետրոսը ցուցարարներից մեկին:

-Բաղրամյան պողոտա:

-Դե ինչ, միանանք ժողովրդին,- ասաց Կիրակոսը, սպիտակ կեպին քաշեց աչքերին և սկսեց վանկարկել ամբոխի հետ,- քայլ արա՛, մերժի՛ր Սերժին:

Երթը հասել էր Բաղրամյան պողոտա, երբ ուժեղ հրմշտոց սկսվեց: Քիչ ավելի վերևում ոստիկանները պատնեշ էին կազմել:

-Ոստիկանը մե՛րն է,- գոռում էր ամբոխը:

Բայց ոստիկանները երևի չէին հասկանում, թե ինչու են իրենք նրանցը, և չէին թողնում, որ ցուցարարներն առաջ շարժվեն:

-Ժամանակն է ծլկելու,- Պետրոսի ականջին գոռաց Կիրակոսը:

Բայց դա էլ հեշտ չէր: Ամբոխն այնպես էր սեղմվել, որ շարժվելու տեղ չկար: Մարդիկ հրում էին իրար ու շարունակում գոռալ: Սակայն ոստիկանները չէին պատրաստվում տեղի տալ:

Երբ Կիրակոսին վերջապես մի կերպ հաջողվեց դուրս գալ փողոցից և հասնել մայթ, ուր համեմատաբար ավելի խաղաղ էր, նա նկատեց, որ կորցրել է Պետրոսին: Բայց դա չէր այնքան սարսափելի, որքան այն, որ նա կորցրել էր իր սպիտակ կեպին: Դա դեռ բավական չէ՝ պատռվել էր սպիտակ կոստյումը: Կիրակոսը սկսեց մտքում հայհոյել Սերժին ու Նիկոլին, և պետք է ասել, որ արդարացիորեն, որովհետև երկուսի մեղքն էլ այստեղ կար: Միայն թե կարող էր հանգիստ հայհոյել բարձրաձայն, միևնույն է՝ նրան ոչ ոք չէր լսի: Ու հանկարծ նա ոտքերի տակ տեսավ մի գլխարկ, որ հավանաբար կորցրել էր իր պես մեկը: Գլխարկի վրա գրված էր՝ «դուխով»: Կիրակոսը բարձրացրեց այն, մաքրեց վրայի փոշին ու դրեց գլխին:

Ինչ կմտածեին մեր բարեկամ պատգամավորները, եթե տեսնեին ինձ այս գլխարկով՝ մտածեց նա:

Ավելորդ է ասել, որ բարեկամ պատգամավորներն այդ օրը նրան չտեսան, որովհետև գործընկերներին այդպես էլ չհաջողվեց հասնել Ազգային ժողովի շենք:

ԵՍ ՀՈՎԱՆԱՎՈՐ ԿԳՏՆԵՄ

Քսյուշան ու Լիլիթը գնացել էին թատրոն: Ավելի ճիշտ, վայրը, ուր գնացել էին ընկերուհիները, այնքան էլ թատրոն չէր:

Երևանի ծայրամասերից մեկում գտնվող մի լքված շենքում, որը նախկինում գործարան էր եղել կամ նման մի բան, բավական մեծ մի տարածքում, որը ժամանակին արտադրամաս էր եղել կամ նման մի բան, արդեն մի քանի ամիս գործում էր «Մարդկանց երկիր» անունով ստուդիան:

Տարածքը վերանորոգված չէր, չէր ջեռուցվում, հատակն ու պատերը բետոնից էին, իսկ պատուհաններին ապակիների փոխարեն ցելոֆաններ էին: Լուսավորությունը ապահովում էին առաստաղից կախված մի քանի լապտերներ, բեմը հավաքված էր մետաղյա կոնստրուկցիաներով, իսկ հանդիսատեսի նստատեղերը՝ բեռնափոխադրումների համար նախատեսված հատուկ փայտե ներքնակներից, որոնք աստիճանաձև շարված էին սրահի կենտրոնում:

Պարզից էլ պարզ լուծումներով այս միջավայրում շաբաթը երկու անգամ հանդիսատեսը կարող էր ականատես լինել բավական հետաքրքիր ներկայացումների:

Ստուդիայի խաղացանկը նույնպես օրիգինալ էր: Ներկայացվում էին ոչ թե պիեսեր, այլ պատմվածքներ, պոեմներ ու հեքիաթներ: Խաղացանկի գլխավոր ներկայացումը կոչվում էր «Մարդկանց երկիրը», ճիշտ այնպես, ինչպես կոչվում էր ստուդիան և ճիշտ այնպես, ինչպես կոչվում էր Էքզյուպերիի վիպակը:

Սակայն այդ օրը՝ երկու հազար տասնութ թվականի ապրիլի քսանմեկին, հանդիսատեսը պիտի դիտեր այլ ներկայացում, որը կոչվում էր «Ամբոխները խելագարված»:

Թե ինչ էր տեղի ունենում բեմում, իհարկե, հնարավոր

չէ նկարագրել, դա պետք էր տեսնել: Մեկ տասնյակից ավելի դերասաններ՝ իրար խառնված ու իրար հերթ չտալով, ձայնում էին Չարենցի հանճարեղ պոեմը.

«Արևի տակ իրիկնային, իրիկնային հրով վառված՝
Այդ հին դաշտում կռվում էին ամբոխները խելագարված:
Քաղաքներից ու գյուղերից, ստեպներից հեռու ու մոտ՝
Եկել էին նրանք նորից՝ հուսավառված ու կրակոտ:
Ով քաղաքից էր հեռացել, նա թողել էր մշուշը ծեր,
Մշուշը, որ կյանքի վրա մխաշաղախ ամպ էր դարձել:
Ով եկել էր գյուղից հեռու, նա թողել էր հողը խոնավ,
Որի վրա կյանքը հլու ո՛չ մի ոսկի հասկ չծնավ:
Ով եկել էր ստեպներից, նա թողել էր անծայրածիր
Լայնությունը հորիզոնի, որ իր համար բանտ էր դարձել:
Ով քաղաքից էր հեռավոր, ուր մառախուղ էր անորոշ՝
Նա բերել էր թոքախտավոր սիրտը, որպես կարմիր դրոշ:
Ով եկել էր, թողած հեռուն անծայրածիր մութը գյուղի՝
Բերել էր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի:
Ով եկել էր ստեպներից, ուր ապրում էր որպես գերի
Բերել էր իր լուրթ աչքերում լայնությունը ստեպների...
Ըմբոստացած, խելագարված, չդանելով հին կյանքը էլ,
Անծիր դաշտում այդ հավաքված՝ նրանք կռվի էին ելել»...

Քսյուշան այնքան էր տպավորված, որ պարզապես չէր կարող չտեսնել տարօրինակ ու հրաշալի այս գաղափարի հեղինակներին: Պարզվեց՝ նրանք երիտասարդ տղաներ ու աղջիկներ էին՝ պրոֆեսիոնալ ու ոչ պրոֆեսիոնալ դերասաններ, ռեժիսորներ ու երաժիշտներ:

-Իսկ ի՞նչ կարծիքի եք, եթե ես ձեզ գինի հյուրասիրեմ,- հարցրեց Քսյուշան:

-Մենք գինի ունենք, շատ գինի,- ասաց երիտասարդներից մեկը:

-Ուրեմն խմենք ձեր գինին ու մի քիչ խոսենք:

Խոսեցին ոչ թե մի քիչ, այլ երկար: Երիտասարդներն ասում էին տարբեր բաներ, բայց ըստ էության, ասում էին մի բան: Նրանք ասում էին, որ հայ ժողովուրդն, ինչ խոսք, յուրահատուկ ժողովուրդ է՝ բոլոր առումներով, բայց հատկապես մեկ առումով՝ ծայրահեղությունից ծայրահեղություն: Ծայրահեղ խելացի և ծայրահեղ անխելք, ծայրահեղ կամեցող և ծայրահեղ նախանձ, ծայրահեղ հանդուրժող և ծայրահեղ ագրեսիվ, ծայրահեղ ճաշակով և ծայրահեղ «ռաբիս»: Հատկապես վերջինի պարագայում միջինը հազվադեպ է լինում: Այլ հարց է, թե որ ծայրահեղությունն է գերակշռում: Հավանաբար բացասականը: «Ռաբիսը»՝ անճաշակը, գռեհիկը այնպես է բուն դրել մեր տեսակի մեջ, որ թվում է՝ այլևս հանել չի լինի: Եվ ինչպե՞ս հանել, երբ այն ամենուրեք է՝ փողոցներում ու տներում, սրճարաններում ու ռեստորաններում, ռադիոյով ու հեռուստատեսությամբ: Ինչպե՞ս հանել «ռաբիսը» մեր միջից, երբ այն խրախուսվում և քարոզվում է պետական մակարդակով: Մինչդեռ մեր տունը քանդողը հենց այդ «ռաբիսն» է: Այն ավելի սարսափելի է, քան արտաքին թշնամին, որովհետև եթե թշնամին քեզ կարող է կրակելով սպանել, «ռաբիսը» քայքայում ու սպանում է ներսից՝ ինչպես քաղցկեղը:

Ժողովրդի բարեկեցության մասին պատկերացում կազմելու համար բավական է տեսնել, թե ինչ գիրք է նա կարդում, ինչ կինո է դիտում, ինչ երաժշտություն լսում: «Ռաբիս» սիրող ժողովուրդը չի կարող լավ ապրել, եթե անգամ տիրապետի նավթի ու ոսկու ամենամեծ պաշարներին, չի կարող ազդեցիկ լինել իր սահմաններից դուրս, եթե անգամ միջուկային հարյուր ռումբ ու մարտագլխիկ ունենա: «Ռաբիս» սիրող ժողովուրդը չի կարող արդարության համար պայքարել՝ ո՛չ ներքին, ո՛չ արտաքին, որովհետև այն երևույթը, որն ինքն է մղում անարդարության, ինքնին անարդարություն է:

Ահա թե ինչ էին ասում այս երիտասարդները:

Իսկ Քսյուշան նրանց առաջարկեց «Մարդկանց երկիրը» դարձնել իսկական թատրոն՝ նոր տարածքում, նոր հարմարություններով և նոր հնարավորություններով:

-Ես ձեզ համար հովանավոր կգտնեմ, խոստանում եմ,- ասաց նա:

ՇԵՖԻ ԿԵՆԱՑԸ 3

Երկու հազար տասնութ թվականի ապրիլի քսաներկուսի կեսօրին Պետրոսը խորը քնած էր, երբ զանգահարեց Կիրակոսը:

-Արա՛գ պատրաստվիր, գնում ենք Ազգային ժողով:

Կիրակոսին իր հերթին զանգել էր Թրիքը:

-Ամեն ինչ վերջացավ,- ասել էր նա:

-Ի՞նչը վերջացավ,- հարցրել էր Կիրակոսը, ով այդ պահին լվանում էր իր մեքենան «Լվա ինքդ» կոչվող լվացման կետում:

-Դրանց բոլորին բռնեցին, ես ասո՞ւմ էի, չէ…

-Ի՞նչ է դա նշանակում,- հետաքրքրվեց Կիրակոսը:

-Նշանակում է, որ ամեն ինչ վերջացավ: Եկեք Ազգային ժողով, ես անցագիր կիջեցնեմ: Հետներդ կոնյակ բերեք, իմը վերջացել է:

Թրիքն իհարկե սխալվում էր: Ամեն ինչ նոր էր սկսվում: Եվ Կիրակոսը դա շատ լավ էր հասկանում: Առավոտվանից նա Երևանի կենտրոնում ավտոլվացման կետ էր փնտրում, բայց ամենուրեք փակ էր: Բոլոր ավտոլվացողները թողել էին իրենց աշխատանքը, որպեսզի մասնակցեն «Ժողովրդական շարժմանը», և Կիրակոսը ստիպված էր ավտոմեքենան «լվալ ինքը»:

Բայց Ազգային ժողով գնալ պետք էր, քանի դեռ դրա հնարավորությունը կար և նա ստիպված էր կիսատ թողնել մեքենայի մաքրությունը: Սակայն ամեն դեպքում, նախ ճշտեց լուրի իսկությունը:

«Ոստիկանները որպեներ առաջ Երևանի Արցախ փողոցից բերման ենթարկեցին վարչապետ Սերժ Սարգսյանի դեմ բողոքի ցույցերը առաջնորդող ընդդիմադիր պատգամավոր Նիկոլ Փաշինյանին: Ոստիկանները հատուկ միջոցներ կիրառեցին՝ ուժայինների գործողություններից զայրա-

ցած ցուցարարներին զսպելու համար: Կան նաև այլ բերման ենթարկված քաղաքացիներ»,- կարդաց Կիրակոսը ինտերնետային կայքերից մեկում:

Գործընկերները դեռ չէին հասել Բաղրամյան պողոտա, երբ Կիրակոսը մեկ այլ զանգ ստացավ: Այս անգամ զանգողը Շնագայլն էր:

-Իմացա՞ր նորությունը,- հարցրեց նա՝ չափազանց ուրախ ձայնով:

-Այո, բայց դա ի՞նչ է նշանակում,- Կիրակոսը տվեց նույն հարցը, որը տվել էր Թրիքին:

-Ինչպե՞ս թե ինչ՝ նշանակում է, որ Մոսկվան մեզ հետ է:

-Բայց ցուցարարները…- Կիրակոսն ուզում էր շարունակել, սակայն Շնագայլն ընդհատեց նրան:

-Ցուցարարները Արցախի փողոցում են, կարող ես ամերիկացուդ բերել Ազգային ժողով, ես անցաթուղթ կիջեցնեմ:

Եվ Կիրակոսը հայտնվեց դժվար կացության մեջ: Նա վաղուց զղջացել էր, որ նույն հարցով դիմել էր միաժամանակ այս երկու պատգամավորներին, որովհետև գիտեր, որ նրանք իրար հետ չունեն: Ընդունել նրանցից միայն մեկի հրավերը և մյուսին ասել, որ չեն կարող գալ՝ ճիշտ չէր լինի, քանի որ կարող էին հեշտությամբ բռնվել, իսկ ընդհանրապես չեղարկել այցելությունը չէր կարելի, որովհետև ուրիշ հարմար առիթ գուցե չլիներ կամ շատ ուշ լիներ:

Ու Կիրակոսը գտավ միջանկյալ լուծում. նա զանգահարեց Թրիքին և ասաց, որ անցագիր իջեցնել պետք չէ, քանի որ իրենք արդեն ունեն, թող նա սպասի իր աշխատասենյակում:

-Կսպասեմ բուֆետում,- ասաց Թրիքը,- կոնյակն առե՞լ ես:

Կոնյակ Կիրակոսն առել էր, բայց դրանից ոչ մի լավ բան դուրս չէր գալու: Գործընկերներին Շնագայլը դիմավորեց Ազգային ժողովի ծառայողական մուտքի մոտ:

-Տեսա՞ք, թե ինչ եղավ,- ոգևորված ասաց պատգամավորը՝ հյուրերին դեպի շենք առաջնորդելով,- եկեք գնանք բուֆետում մի-մի բաժակ խմենք:

-Ինչո՞ւ բուֆետում,- անակնկալի եկավ Կիրակոսը,- գուցե բարձրանանք Ձեր աշխատասենյակ:

Բայց պարզվեց, որ Շնագայլի աշխատասենյակը վերանորոգում են: Դեպքերի հետագա ընթացքն այնքան էլ հաճելի չստացվեց: Թրիքին բուֆետում տեսնելով Շնագայլը ցածրաձայն ասաց .

-Այս եզի թրի՞քն ինչ է անում այստեղ:

Իսկ Թրիքը ողջագուրվեց Կիրակոսի հետ և շշնջաց նրա ականջին.

-Այս «շակալին» ինչո՞ւ եք բերել:

Կիրակոսն իրեն չկորցրեց, սեղանին դրեց կոնյակի շիշն ու ասաց.

-Իմաստուն մարդ է շեֆը: Տեսա՞ք ինչպես դրանց վերջը տվեց: Եկեք խմենք շեֆի կենացը:

Երրորդ անգամ շեֆի կենացը խմելը գործին բավականաչափ օգուտ տվեց: Իմանալով, որ «ամերիկացի ռեժիսորին» հետաքրքրում են խորհրդային շրջանից մնացած ատրիբուտներ՝ Շնագայլն ասաց, որ պետք է դիմել ինչ-որ բաժնի ինչ-որ պետի:

Իսկ Թրիքն ասաց.

-Ատրիբուտը ո՞րն է:

Ինչ-որ բաժնի ինչ-որ պետը՝ լսելով, որ «ամերիկացի ռեժիսորին հետաքրքրում է» հիմնարկի գույքը, նախ մի քիչ վախեցավ, սակայն իմանալով, որ խոսքը վերաբերում է մոտ երեսուն տարվա վաղեմության գույքին, թեթևացած շունչ քաշեց:

-Կոնկրետ ի՞նչ է ձեզ հետաքրքրում:

Պետրոսն ուզում էր ինչ-որ բան ասել, բայց Կիրակոսն առաջ ընկավ:

-Ընկերոջս հետաքրքրում են կոմունիստական ոգով դրոշներ, ցուցապաստառներ, նկարներ կամ քանդակներ,- բացատրեց նա:

-Այստեղ ոչինչ չի մնացել,- ձեռքը թափ տվեց բաժնի պետը,- մենք անգամ պահոցներ չունենք: Հետո էլ դրանք անպետք բաներ են, ո՞վ պիտի պահեր:

-Ինչո՞ւ են անպետք բաներ,- Կիրակոսը զարմացած դեմք ընդունեց,- ինչպե՞ս կարող են անպետք բաներ լինել մի ամբողջ դարաշրջան խորհրդանշող արվեստի գործերը:

-Ձեզ պետք է դիմել Մնացական Պողոսիչին,- ասաց բաժնի պետը:

-Ո՞վ է Մնացական Պողոսիչը:

-Նա հին մարդ է, նա ամեն ինչ գիտի:

ՀԻՆ ՄԱՐԴԸ, ԿԱՄ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍԸ ՓՈԽԵՑ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հին մարդը», պարզվեց, իսկապես հին էր: Այնքան հին, որ նույնիսկ բջջային հեռախոս չուներ: Գործընկերները գտան նրա տան հեռախոսահամարը և զանգահարեցին հաջորդ առավոտյան: Կիրակոսը երկար-բարակ խոսեց նրա դստեր հետ, ապա անջատեց հեռախոսը և հարցրեց Պետրոսին:

-Դու պատահաբար չե՞ս բողոքում ստամոքսաաղիքային տրակտի խանգարումներից:

-Դա ի՞նչ է,- չհասկացավ Պետրոսը:

-Չգիտեմ ինչ է, բայց մեր ծերուկը հենց դա է բուժում Ջերմուկ քաղաքի առողջարանում: Մենք գնում ենք Ջերմուկ:

-Իսկ դա հեռո՞ւ է:

-Մոտ հարյուր վաթսուն կիլոմետր, որն անցնելու համար մեզանից կպահանջվի երեք ժամ:

-Ինչո՞ւ այդքան երկար,- զարմացավ Պետրոսը:

-Որովհետև մենք գնալու ենք Հայաստանի ճանապարհներով: Ի դեպ, մեր արկածներն ինձ վրա բավական թանկ են նստում, և ժամանակն է, որ ես քեզ ներկայացնեմ արածս ծախսերը:

-Լա՜վ, մի մանրացիր:

-Ինչպե՞ս թե մի մանրացիր: Բիզնեսի օրենքն է. գործընկերները նախնական ծախսերն անում են միասին,- Կիրակոսը հանեց կեպին և քորեց գլուխը,- և քանի որ ես արդեն ծախսել եմ հազար դոլար, բարի եղիր վերադարձնել յոթ հարյուր հիսունը:

-Չհասկացա,- մտքում հաշվարկներ անելով՝ ասաց Պետրոսը,- ինչու յոթ հարյուր հիսուն:

-Որովհետև շահույթից դու ունենալու ես յոթանասուն-հինգ տոկոս, ես՝ քսանհինգ, հետևաբար նախնական ծախսերն էլ պիտի արվեն նույն հաշվարկով:

-Դու գիտե՞ս, որ ես ավարտել եմ Սանտա Բարբարայի համալսարանի բիզնես կառավարման ֆակուլտետը...

Երկու գործընկերներն էլ, բնականաբար, ճիշտը չէին ասում. Պետրոսը Սանտա Բարբարայի համալսարանում սովորել էր ընդամենը մեկ տարի և սովորել էր բոլորովին այլ մասնագիտություն, իսկ Կիրակոսը ծախսել էր երեք անգամ պակաս:

-Սակայն կա մի կարևոր նրբություն,- շարունակեց Կիրակոսը,- մեր գրազը: Ես այն իհարկե կհաղթեմ, և իմ մասնաբաժինը կդառնա հիսուն տոկոս: Հետևաբար կարող ես ինձ տալ ոչ թե յոթ հարյուր հիսուն, այլ հինգ հարյուր: Խոստանում եմ դրանով մի նվեր առնել Քսյուշայի համար:

-Դու իհարկե չես հաղթի գրազը, և Քսյուշային նվեր կառնեմ ես: Բայց դա չէ կարևորը: Գործընկերներին չի սազում նման խոսակցություն,- Պետրոսը թղթադրամներ հանեց դրամապանակի միջից:- Ես քեզ կտամ երկու հարյուր հիսուն դոլար: Սա մի բան էլ շատ է:

Կիրակոսը չառարկեց, վերցրեց թղթադրամները և ասաց ժպտալով.

- Ճիշտ է, գործընկերներին չի սազում նման խոսակցություն: Իսկ դու ասում ես, թե մանրանում եմ:

Ջերմուկ հասնելը տևեց ոչ թե երեք ժամ, այլ ավելի երկար: Մնացական Պողոսիչը առողջարանի իր սենյակում նստած մեղր էր ուտում և հեռուստացույց դիտում, երբ բուժքույրը բացեց դուռը ու ներս հրավիրեց հյուրերին:

-Այս մարդիկ այնքան էլ նման չեն բժիշկների,- ասաց ծերուկը:

-Դուք հոյակապ տեսք ունեք, Ձեր ինչի՞ն են պետք բժիշկները,- Կիրակոսը մոտեցավ և սեղանին դրեց կոնյակի մի շիշ,- մենք եկել ենք Ձեզ հետ զրուցելու հին ժամանակների մասին:

-Ի՞նչ եք անում,- բացականչեց բուժքույրը,- Մնացական Պողոսիչին խմել չի կարելի:

-Հին ժամանակները մնացին հին ժամանակներում,- ծերուկը չլսելու տվեց բուժքրոջ ասածը և երջանիկ հայացքով նայեց կոնյակի շշին,- հիմա նոր ժամանակներ են: Տեսեք, թե ինչ է կատարվում երկրում: Հսկա պետությունը ավերակների վերածեցին, դաս չեղավ: Հիմա էլ այդ ավերակներն են ուզում քանդել:

Հեռուստացույցով ցույց էին տալիս Հանրապետության հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր մարդկանց: Նրանք վանկարկում էին՝ քա՛յլ արա, մերժի՛ր Սերժին:

-Մնացական Պողոսիչ, Դուք գիտե՞ք, թե ես ով եմ,- առաջ գալով՝ անսպասելի ասաց Պետրոսը:

Բոլորը զարմացած նայեցին Պետրոսին, բայց ամենից զարմացածը Կիրակոսն էր: Նա ուզում էր ինչ-որ բան ասել, բայց Պետրոսը շշնջաց նրա ականջին.

-Պետք է փոխել մարտավարությունը,- ապա բարձրաձայն ավելացրեց,- ես Պետրոս Գրիգորիչի թոռն եմ:

-Ես մեկ Պետրոս Գրիգորիչ էի ճանաչում,- ասաց ծերուկը,- նա մեր Կենտկոմի քարտուղարներից էր՝ իսկական կոմունիստ: Եթե դու նրա թոռն ես, բարով ես եկել:

Փաստորեն մարտավարությունը փոխելը ճիշտ էր: Կիրակոսը, որ մի պահ իրար էր խառնվել, լսելով «բարով ես եկել»-ը՝ հանգստացավ: Կարելի է հետագա զարգացումները վստահել Պետրոսին՝ մտածեց նա, ի վերջո երիտասարդը Ամերիկայից է եկել, ոչ թե՝ երկնքից իջել:

Պետք է ասել, որ Պետրոսը պատվով դուրս եկավ այդ վստահության տակից: Նա, նախ բուժքրոջը խնդրեց բաժակներ բերել, և դա այնպես արեց, որ եթե անգամ բաժակների փոխարեն նրանից խնդրեր թույն բերել հիվանդի համար, բուժքույրը չէր մերժի:

Կոնյակի շիշը դատարկելու ընթացքում ծերուկը համարյա չթողեց, որ երիտասարդները խոսեն: Նա դեռ երկար կպատմեր իր լավ ժամանակների պատմությունները, եթե Պետրոսը ստիպված չլիներ ընդհատել:

Ձայնին ողբերգական տոն տալով՝ նա ասաց, որ պապից ոչ մի հիշատակ չի մնացել: Այն, ինչ եղել է տանը, տատն ամբողջությամբ վաճառել է: Եվ ուզում է իմանալ, թե որտեղ կարող է լինել պապի աշխատասենյակի գույքը՝ մասնավորապես իրեն հետաքրքրում են սոցռեալիզմի ոճով կտավները կամ Մարքսի ու Լենինի քանդակները: Հետո փոխեց ձայնի տոնը և շատ ավելի խրոխտ շարունակեց.

-Ես ինքս կոմունիստական գաղափարների կրող եմ, երևի գեներով է գալիս:

Դժվար է ասել՝ Պետրոսի խոսքերը հուզեցին ծերուկին, թե կոնյակն էր պատճառը, համենայնդեպս նա սկսեց արտասվել: Դա բավականին երկար տևեց, և Կիրակոսն ու Պետրոսն արդեն զղջացել էին, որ եկել են, ու ուզում էին դուրս գալ՝ ծերուկին մենակ թողնելով իր հիշողությունների հետ, բայց տեղի ունեցավ երկու բան, որ չթողեց նրանց դա անել:

-Մարքսի քանդակ չկար, կար Լենինի քանդակ,- արցունքների միջից ասաց ծերուկը,- եթե չեմ սխալվում, այն իր հետ տարավ պապիդ քարտուղարուհին…

Գործընկերները չհասցրին որևէ բան ասել, որովհետև այդ պահին գլխապատառ ներս մտավ բուժքույրը և գոռաց.

-Սերժը հրաժարական տվեց:

ՆԻԿՈԼԸ ՃԻՇՏ ԷՐ, ԵՍ ՍԽԱԼՎԵՑԻ

«Դիմում եմ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներին, մեծերին ու իմ սիրելի երիտասարդներին, կանանց ու տղամարդկանց, դիմում եմ փողոցներում «Մերժիր Սերժին» կոչով օր ու գիշեր կանգնածներին և փակ փողոցներով այս օրերին դժվարությամբ աշխատավայր հասնող և իրենց պարտքն անտրտում իրականացողներին, դիմում եմ ուղիղ եթերի առաջ օրերով գամվածներին և օր ու գիշեր հասարակական անվտանգությունը տղամարդու պես պահողներին, դիմում եմ սահմանին կանգնած մեր քաջարի զինվորներին ու սպաներին, դիմում եմ իմ զինակից ընկերներին, դիմում եմ իմ կուսակից ընկերներին, քաղաքական բոլոր ուժերին և գործիչներին:

Որպես երկրի ղեկավար՝ դիմում եմ վերջին անգամ: Նիկոլ Փաշինյանը ճիշտ էր: Ես սխալվեցի: Ստեղծված իրավիճակն ունի մի քանի լուծում, բայց դրանցից ոչ մեկին ես չեմ գնա: Դա իմը չէ:

Ես թողնում եմ երկրի ղեկավարի՝ Հայաստանի վարչապետի պաշտոնը: Փողոցի շարժումն իմ պաշտոնավարման դեմ է: Ես կատարում եմ ձեր պահանջը:

Խաղաղություն, ներդաշնակություն և տրամաբանություն մեր երկրին:

Շնորհակալ եմ:»

Այսպիսի խոսքով հեռացավ Սերժ Սարգսյանը: Սակայն այդ խոսքի մեջ կար ընդամենը երկու արտահայտություն, որոնք հետագա զարգացումների համար չափազանց կարևոր նշանակություն պիտի ունենային:

«Նիկոլ Փաշինյանը ճիշտ էր: Ես սխալվեցի»:

Եթե այս փոքր հատվածը չլիներ Սերժ Սարգսյանի խոս-

քում, գուցե հետագայում շատ բան այլ կերպ լիներ: Բանն այն է, որ մինչ այդ պահը, փողոց դուրս եկած ժողովուրդը, շարժման ակտիվիստները և անգամ առաջնորդները ոչ մի կերպ չէին հավատում, որ երկրի երկարամյա ղեկավարը կարող է հենց այնպես հեռանալ: Բացի այդ, իր ողջ պաշտոնավարման ընթացքում «գողական ճշտով» առաջնորդված և իր գրեթե ոչ մի սխալ չընդունած այս մարդը հանկարծ վեր է կենում և ասում, որ հերիք չէ ինքը սխալվել է, մի բան էլ՝ ճիշտն իր հակառակորդն է:

«Գողական» մոտեցումներով կառավարվող ժողովուրդը ժամանակի ընթացքում ստիպված, պարտադրված, ուզած, թե չուզած դառնում է այդ մոտեցումների կրողը, անկախ իրենից հավատում է ոչ թե օրենքի, այլ «գողական» ճշտին: Երբ ժողովուրդը տեսնում է, որ օրենք գրել պարտավոր պատգամավորները, օրենքով առաջնորդվել պարտավոր իրավապահները, օրենքով վճիռներ կայացնել պարտավոր դատավորները թքած ունեն օրենքի վրա և առաջնորդվում

են մեկ այլ «օրենքով», ինքն էլ, կամա թե ակամա, ապրում է այնպես, որ չխախտի ոչ թե իրական, այլ այն մյուս օրենքը: Ինչպե՞ս կարող են նման իրականությունում կայանալ օրենսդիր, իրավապահ և դատական համակարգը: Եվ ո՞վ է նման իրականության թիվ մեկ պատասխանատուն, եթե ոչ երկրի ղեկավարը:

Երկրի ղեկավարը, ով հրապարակ դուրս եկած ժողովրդի մոտ ընկալվում է իբրև անհաղթահարելի մի չարիք, իբրև հրեշ, որ փակել է իր կենսատու աղբյուրը:

Թե որքանով էր ճշմարիտ ժողովրդի ընկալումը, այլ հարց է, փաստն այն էր, որ գտնվել էր մեկը, ով հրեշին հեռացրել էր այդ աղբյուրից, և «հրեշն» ինքն էր տվել նրա անունը:

Ժողովուրդը մտածում էր, որ հրեշին հեռացնելով կբացվի իր աղբյուրը և կենսատու ջուրը կսկսի հոսել: Եվ հրեշին հաղթողը ժողովրդի համար անխուսափելիորեն պիտի դառնար կուռք:

Կհոսեր կենսատու ջուրը, թե ոչ՝ ցույց պիտի տար ժամանակը, և նույն այդ ժամանակը պիտի ցույց տար, թե արդյո՞ք հրեշն էր այն փակողը, և արդյո՞ք օրվա կուռքը, ժամանակի ընթացքում, ինքը չէր դառնալու հրեշ:

Եվ մի հարց էլ կար, որ այդ պահին ցնծացող ժողովուրդն, ավա՜ղ, չէր տալիս ինքն իրեն: Եթե այդ մարդն իսկապես հրեշ էր, ապա ինչո՞ւ չխեղդեց իրենց իր ճիրաններում:

Հաղթեցի՞նք՝ գոռում էին մարդիկ, և չկար մեկը, որ հարցներ ինքն իրեն՝ իսկ ի՞նչ է լինելու հետո:

ՔՍՅՈՒՇԱՆ ԻՐ ԽՈՍՏՄԱՆ ՏԵՐՆ Է

Երբ Քսյուշան խոստանում էր «Մարդկանց երկիրը» ստուդիայի երիտասարդներին, որ նրանց համար հովանավոր կգտնի, չափից ավելի ոգևորված էր ու տպավորությունների ազդեցության տակ: Հետո, երբ անցավ ոգևորությունը և փորձեց պատկերացնել, թե որքան կարժենա թատրոնի համար թեկուզ և փոքր տարածք ձեռք բերելը, այն վերանորոգելն ու անհրաժեշտ ամեն ինչով հագեցնելը, հասկացավ, որ դա հեշտ չի լինելու: Եթե անգամ հրաժարվեր ամսագիր հրատարակելու գաղափարից և իր խնայողությունները ծառայեցներ այդ գործին, կրկին բան դուրս չէր գա, որովհետև դրանք առնվազն հինգ անգամ պակաս էին անհրաժեշտ գումարից: Մարկին դիմելը բացառվում էր, նրա նվիրած բնակարանն ու ավտոմեքենան վերադարձնելուց հետո Քսյուշան վերջնականապես հրաժեշտ էր տվել նրան:

Բայց խոստումը տրված էր, և դրանից հրաժարվելը Քսյուշայի ոճը չէր: Բացի այդ, կային նաև ուրիշ հանգամանքներ: Նախ՝ այն, ինչ անում էին այդ երիտասարդները, իսկապես հրաշալի էր, և պետք էր օգնել նրանց: Երկրորդ՝ հանդիսատես ունեցող թատրոնը կարող է եկամտաբեր լինել: Եվ վերջապես՝ Քսյուշան շատ էր ուզում մի լավ բան անել:

Այսպիսի մտքերի մեջ էր Քսյուշան՝ երեկոյան Կասկադի բացօթյա սրճարաններից մեկում նստած պաղպաղակ ուտելիս, երբ զանգեց հեռախոսը: Կիրակոսն էր: Այդ երկուսը ոչ միայն անընդհատ զանգում էին, այլև բառացիորեն հետևում էին իրեն, և Քսյուշան արդեն չգիտեր, թե ինչպես վարվել նրանց հետ:

-Եթե հիմա նայես դեպի աջ ու վերև, կտեսնես մերժված ու հուսահատված մի տղամարդու, ով պատրաստվում

է իրեն ցած նետել իններորդ հարկից:

Քսյուշան, չհասկացավ, թե ինչ է ասում Կիրակոսը, բայց ամեն դեպքում նայեց աջ ու վերև:

-Մի քիչ էլ վերև նայիր,- շարունակեց մերժված ու հուսահատված տղամարդը,- ես քեզ ձեռքով եմ անում:

Քսյուշան մի քիչ էլ վերև նայեց ու տեսավ բարձրահարկ շենքի վերջին հարկի պատշգամբում կանգնած Կիրակոսին: Վերջինս, սակայն, իրեն ցած նետելու մտադրություն ամենևին չուներ: Նա իր համար խմում էր իռլանդական իր վիսկին ու ծխում դոմինիկյան իր սիգարը և պատրաստվում էր հերթական անգամ զանգել Քսյուշային, երբ պատահաբար տեսավ նրան ներքևում:

-Դե, քեզ տեսնեմ,- ասաց Քսյուշան,- ես միշտ հիացել եմ այն տղամարդկանցով, ովքեր պատրաստ են ինքնասպանություն գործել հանուն սիրո:

Դեպքերի նման զարգացումը, սակայն, Կիրակոսին ձեռնտու չէր: Երկար փնտրտուքից հետո նրան վերջապես հաջողվել էր գտնել Պետրոսի պապի քարտուղարուհուն, իսկ դա նշանակում էր, որ հնարավոր է՝ գտնվեր նաև Լենինի գլուխը: Այնպես որ, բոլորովին ինքնասպան լինելու ժամանակը չէր:

-Ավելի լավ է՝ բարձրացի վերև, միասին վայելենք մայրամուտը,- առաջարկեց Կիրակոսը:

Քսյուշան ուզում էր ուղարկել նրան գրողի ծոցը, բայց հանկարծ նրա մտքով մի բան անցավ. նոր «Range Rover», բնակարան Կասկադում: Կիրակոսը, պետք է որ, հարուստ լինի: Դրան գումարած՝ նրա վերաբերմունքն իր հանդեպ... Մի խոսքով, կարելի է նրան ներկայացնել թատրոնի ծրագիրը: Ինչ կա որ, մի՞թե դա ինքնասպան լինելուց լավ չէ:

-Ես չեմ բարձրանա,- ասաց Քսյուշան,- բայց դու կարող

ես իջնել: Եվ պարտադիր չէ դա անել ամենակարճ ճանապարհով:

Կիրակոսն այդպիսի պատասխանի չէր սպասում: Առանց շտապելու նա փոխեց սպիտակ սպորտային համազգեստը, հագավ սպիտակ կոստյումը և դուրս եկավ տանից՝ հարյուր տոկոսով համոզված, որ հաղթել է գրազը: Բայց սրճարան հասնելով՝ չհավատաց աչքերին: Քսյուշայի կողքին նստած էր Պետրոսը:

Պետրոսը՝ իբրև իսկական խաղացող, ամենայն լրջությամբ էր վերաբերվել գրազին: Պարտվելու դեպքում նա ստիպված էր լինելու կիսել Լենինի գլուխը Կիրակոսի հետ, եթե իհարկե իրենց հաջողվեր գտնել այն: Իսկ գտնելը, կարծես թե, իրատեսական էր դառնում: Եվ Պետրոսը որոշել էր ժամանակ չկորցնել ու ամեն գնով հանդիպել Քսյուշային, և քանի որ վերջինս չէր պատասխանում իր հեռախոսազանգերին, սկսել էր հետևել նրան:

Մեկ այլ բան էլ էր որոշել Պետրոսը: Նա մտադիր էր պատմել Քսյուշային գործի մասին և առաջարկել նրան մասնակցել որոնումներին՝ հաջողության դեպքում տասը տոկոս ստանալու երաշխիքով: Այդպիսով ավելի մեծ կլիներ և՛ Լենինին գտնելու, և՛ գրազն հաղթելու հավանականությունը:

Ու մինչ Կիրակոսն առանց շտապելու հագնում էր իր սպիտակ կոստյումը և ոչ ուղիղ ճանապարհով իջնում ինները որդ հարկից, Պետրոսն արդեն հասցրել էր Քսյուշային առաջարկել դառնալ միլիոնատեր:

-Դո՛ւ որտեղից հայտնվեցիր,- Պետրոսին դիմեց Կիրակոսը:

-Բոլորովին պատահաբար, որոշել էի պաղպաղակ ուտել,- դեմքի անմեղ արտահայտությամբ ասաց Պետրոսը,- դու մի՞թե չգիտես, թե որքան եմ ես սիրում պաղպաղակ:

-Պաղպաղակ շատ էր սիրում Նապոլեոնը, բայց դա նրան չօգնեց հաղթել Ռուսաստանին,- նետեց Կիրակոսը՝

չկարողանալով զսպել զայրույթը:

-Ի դեպ, ես առաջարկեցի Քսյուշային մտնել գործի մեջ,- այնպես հանգիստ ասաց Պետրոսը, կարծես ասում էր, որ առաջարկել է Քսյուշային սուրճ խմել:

-Ինչ գործի,- զարմացավ Կիրակոսը:

-Մեր գործի: Մենք նրան կտանք տասը տոկոս, հուսով եմ՝ դու դեմ չես:

ԺՈՒԼԻԿՆԵՐԸ 2

Այն բանից հետո, երբ երկու հազար տասնութ թվականի մայիսի մեկին Ազգային ժողովում տեղի ունեցած քվեարկության արդյունքում Նիկոլ Փաշինյանը չընտրվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ, երեկոյան Հանրապետության հրապարակում նա կրկին կոչ արեց փակել բոլոր փողոցները, երկաթուղիներն ու օդանավակայանը:

«Ես՝ որպես վարչապետի ժողովրդի թեկնածու, դիմում եմ բոլոր պետական ծառայողներին, վաղը հայտարարում ենք տոտալ գործադուլ»,- հայտարարեց վարչապետի ժողովրդի թեկնածուն:

Նրա կեցվածքը շարժման ողջ ընթացքում եղել էր իսկապես համարձակ, ինչպես ինքն էր ասում՝ «դուխով», ծայրահեղ ճակատային և կոմպրոմիսներ չհանդուրժող: Եվ վստահաբար հենց դա էր եղել հաջողության հասնելու հիմնական պատճառը: Եվ այդ կեցվածքը գուցե իսկապես արժանի էր հարգանքի ու չէր կարող չգոտեպնդել ժողովրդին:

Կարելի է ոտքի հանել մի ամբողջ ժողովրդի, կարելի է անել այնպես, որ ժողովուրդը հավատա, որ իր կյանքում ու իր երկրում ամեն ինչ շատ արագ փոխվելու է դեպի լավը: Դա այնքան էլ բարդ բան չէ: Դա բարդ բան չէ, երբ ժողովրդի կյանքում ու երկրում իսկապես ամեն ինչ լավ չէ, և ժողովուրդը, բնականաբար, փոփոխություն է ուզում: Այդ դեպքում ցանկացած մեկը կարող է օգտագործել ժողովրդի նման վիճակը ու ոտքի հանել նրան: Այլ հարց է, թե նրա մղումները որքանո՞վ են ազնիվ և մինչև ո՞ւր է նա պատրաստ գնալ: Բայց սա էլ դեռ ամբողջը չէ: Եթե նրա մղումներն իսկապես ազնիվ են, և նա պատրաստ է կանգ չառնել կես ճանապարհին ու գնալ մինչև վերջ, ինչպես եղավ այս դեպքում, մնում է ամենակարևոր հարցը՝ հնարավո՞ր է արդյոք փոխել ժողովրդի

կյանքը և երկրի վիճակը:

Մինչև երկու հազար տասնութ թվականի մայիսի մեկը ժողովրդի կյանքը և երկրի վիճակն իսկապես վատ էր: Իշխանություններն իսկապես ավելի շատ անարդար էին, քան արդար, ավելի շատ վերցնում էին, քան տալիս, և այդ իշխանություններին ժողովուրդն արդարացիորեն չէր սիրում:

Բայց ժողովրդի վիճակը վատ էր, և ժողովուրդն իշխանություններին չէր սիրում նաև հազար ինը հարյուր իննսունութին, երբ պատրաստ էր գնալ Խորհրդային Հայաստանի նախկին ղեկավարի հետևից, ում իշխանության տարիներին երկրում ծաղկում էր կոռուպցիան ու հովանավորչությունը, կամ դրանից մի քանի տարի հետո, երբ պատրաստ էր գնալ ռուսաստանահայ մի «դուքյանչու» հետևից, ով հետո բանտ նստեց մարդասպանություն պատվիրելու մեղադրանքով, կամ երկու հազար ութին, երբ պատրաստ էր գնալ առաջին նախագահի հետևից, ում ժամանակին մեղադրում էր աշխարհի բոլոր հնարավոր մեղքերի մեջ, և ով դարձյալ հայտնվեց ու մարտի մեկին թաքնվեց ժողովրդի թիկունքում՝ իր առանձնատանը, կամ երկու հազար տասներեքին, երբ պատրաստ էր գնալ իր տված բարևների քանակով Գինեսի ռեկորդակրի հետևից, ով ժողովրդին ոտքի հանելուց հետո նրան թողեց փողոցում և ինքը գնաց աղոթելու…

Այս գրքի սկզբում մի տեղ խոսք գնաց «ժուլիկների» մասին:

Ափսոս, այս բառը հայերեն շատ վատ է հնչում՝ «խարդախ», և թերևս չի արտահայտում կերպարի իրական էությունը: Ուրեմն ավելի լավ է՝ «ժուլիկ»:

Իհարկե, չէր կարելի պնդել, որ ժողովրդական շարժման առաջնորդը ժուլիկ էր: Բայց, դա չէր խնդիրը: Խնդիրն այն էր, որ չէր կարելի պնդել նաև հակառակը:

ՊԵՏՐՈՍ ԳՐԻԳՈՐԻՉԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻՆ

Պետրոս Գրիգորիչի քարտուղարուհուն, ում անունը Չնաշխարհիկ էր, պարզվել էր՝ այդքան էլ հեշտ չէր գտնել: Գործընկերները նախ ծանոթ պատգամավորների միջոցով դիմել էին Ազգային ժողովի կադրերի բաժին, քրքրել արխիվները, բայց Չնաշխարհիկ անունով ոչ մի աշխատակցուհու տվյալ այնտեղ չէին գտել: Այնուհետև սկսել էին ուսումնասիրել Կոմունիստական կուսակցության նորօրյա պատմությունը՝ մտածելով, որ Չնաշխարհիկը՝ իբրև երդվյալ կոմունիստի քարտուղարուհի և համատեղության կարգով սիրուհի, կարող էր շարունակել գաղափարական պայքարը՝ մնալով հարազատ կուսակցությունում: Բայց պարզվել էր, որ այնտեղ մնացել էին մի քանի ծերունիներ, որոնցից ոչ մեկը առանձնապես չնաշխարհիկ չէր:

Պետրոսը ստիպված էր եղել դիմել տատին՝ Սեդա Լևոնովային:

-Ինչի՞դ է պետք այդ կապիկը,- զայրացած հարցրել էր վերջինս:

Թոռը բացատրել էր, որ հիմնավոր կասկածներ ունի, թե նա է վերցրել Լենինի գլուխը:

-Չի կարող պատահել,- բացականչել էր Սեդա Լևոնովնան,- ես նրա գերեզմանին էլ չեմ գնա:

-Ո՞ւմ գերեզմանին,- զարմացել էր Պետրոսը:

-Պապիդ:

-Չեմ կարծում, որ պապս է տվել այն նրան, ավելի հավանական է, որ նա վերցրել է՝ չիմանալով, թե ինչ է ներսում:

-Ամեն դեպքում ես կսպանեմ նրան:

-Ո՞ւմ:

-Կարմրահեր այդ կապիկին:



-Բայց սպանելու համար նախ պետք է գտնել:

-Դա դժվար չէ, ես նրան հաճախ տեսնում եմ մեր սուպերմարկետում:

-Նրա մազերը կարմի՞ր են:

-Այն էլ ի՞նչ կարմիր...

Եվ գործընկերները սկսել էին հերթապահել սուպերմարկետի մոտ: Երրորդ օրը՝ երեկոյան վեցն անց կես, Չնաշխարհիկը հայտնվել էր: Նա գնել էր մեկական տուփ յուղազրկված թթվասեր ու կաթնաշոռ, վարսակ և մեկական կիլոգրամ խնձոր ու թուրինջ: Կիրակոսը նրա հետևից դուրս էր եկել խանութից և ասել Պետրոսին.

-Երկու բան է հստակ՝ Չնաշխարհիկը չի փոխել իր մասնագիտությունը և ապրում է մենակ:

-Ի՞նչ ես կարծում, քանի՞ տարեկան է նա,- հարցրել էր

Պետրոսը:

-Չգիտեմ՝ քանի տարեկան է, բայց եթե մեկը նրան ասի, որ քառասունից ավելի է, ստիպված կլինի պատասխան տալ դրա համար, հնարավոր է՝ անմիջապես նրա ննջարանում:

Կիրակոսը չէր սխալվում: Չնաշխարհիկը ապրում էր մենակ՝ Աբովյան փողոցի նրբանցքերից մեկում գտնվող իր մեկսենյականոց բնակարանում, որը հին ու բարի ժամանակներում նվիրել էր Պետրոս Գրիգորիչը, և աշխատում էր Պետական եկամուտների կոմիտեում՝ որպես բազմաթիվ պետերից մեկի քարտուղարուհի:

-Դե ինչ, ստպված եմ լինելու բարձրացնել նշաձողս,- ասել էր Կիրակոսը:

-Ի՞նչ նշաձող,- հարցրել էր Պետրոսը:

-Կանանց տարիքային շեմին վերաբերող: Ես սիրով կարմրահեր այս գեղեցկուհուն կզիջեի քեզ, բայց վախենում եմ, որ դու նրան էլ կներգրավես գործի մեջ՝ խոստանալով ևս տասը տոկոս, ինչպես դա արեցիր Քսյուշայի դեպքում:

Հաջորդ առավոտյան Կիրակոսը հագավ իր սպիտակ կոստյումներից մեկը և գնաց Պետական եկամուտների կոմիտեի բազմաթիվ պետերից այն մեկի մոտ, ում քարտուղարուհին էր Չնաշխարհիկը: Նա ներկայացավ իբրև ռուսաստանաբնակ գործարար, ով պատրաստվում է Հայաստանից արտահանել մեծ քանակությամբ թուրինջ:

-Հայաստանում թուրի՞նջ է աճում,- զարմացավ քարտուղարուհին:

-Դեռ ոչ,- ամենայն պատասխանատվությամբ հայտարարեց Կիրակոսը,- բայց շատ շուտով կաճի:

Շենքից դուրս գալով՝ նա ասաց դրսում անհամբեր իրեն սպասող Պետրոսին.

-Քարտուղարուհիները լինում են երեք տեսակի՝ քար-

տուղարուհիներ, ովքեր չեն քնում շեֆի հետ, քարտուղարուհիներ, ովքեր քնում են շեֆի հետ, և քարտուղարուհիներ, ովքեր քնում են ոչ միայն շեֆի հետ: Մեր Չնաշխարհիկը, բարեբախտաբար, պատկանում է երրորդ տեսակին: Երեկոյան մենք միասին ընթրում ենք սիրիական ռեստորանում:

-Ինչո՞ւ սիրիական,- հարցրեց Պետրոսը:

-Որովհետև նա համակարգչով լսում էր արաբական երգեր:

Սիրիական ռեստորանում իր երկարամյա դիետան մի լավ խախտելուց և կես շիշ անիսոնի օղի խմելուց հետո Չնաշխարհիկը չէր կարող Կիրակոսին չհրավիրել իր բնակարան: Թե ինչ տեղի ունեցավ այստեղ՝ Կիրակոսն այնքան պարկեշտ գտնվեց, որ չպատմեց Պետրոսին:

-Կարևորն այն է, որ պրոլետարիատի առաջնորդն այնտեղ չէր,- այսքանն ասելով բավարարվեց նա:

-Իսկ որտե՞ղ է,- հարցրեց գործընկերը:

-Երկար ժամանակ Չնաշխարհիկն այն պահել է իբրև իր սիրելիից մնացած ոչ նյութական մասունք և ուղիղ քսան տարի առաջ՝ հազար ինը հարյուր իննսունութին, նվիրել մի բանաստեղծի, ում հանդեպ, ըստ ամենայնի, նույնպես անտարբեր չի եղել:

-Հուսով եմ, դու իմացար բանաստեղծի անունը:

-Ես անգամ ստիպված էի լսել նրա բանաստեղծություններից մի քանիսը…

ԱՀԱ ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ԿԵՐՏՎՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանաստեղծ Լյուդվիգին գործընկերները գտան «Վերնիսաժում»: Նա, ով ժամանակին գրավել էր դեռ երիտասարդ Չնաշխարհիկի սիրտը, հիմա լավ մարզավիճակում չէր: Երկար ալեխառն մազերով, չխնամված մորուքով ու դեմքն արևից կարմրած՝ նա կանգնած էր մայթեզրին անկանոն դարսված գրքերի կույտի առջև և զրուցում էր փողկապով մի տղամարդու հետ: Վերջինիս ձեռքին «Հայաստանի դեղաբույսերը» վերնագրով մի գիրք էր, և նա համոզում էր Լյուդվիգին այն վաճառել հազար դրամով: Բայց Լյուդվիգը, կարծես համաձայն չէր:

-Գոնե երկու հազար,- ասաց նա,- հազարով կարող եմ տալ «Հայաստանի թռչունները» գիրքը:

-Բայց ինձ դեղաբույսերն են հետաքրքրում,- պնդեց փողկապով մարդը,- ես երիկամների խնդիր ունեմ:

Հաշտվեցին հազար հինգ հարյուրով: Լյուդվիգը վերցրեց փողը, խնդրեց հարևանությամբ կանգնած դրոշմանիշեր վաճառող ծերուկին հետևել իր գրքերին և վազեց ինչ-որ տեղ: Քիչ անց վերադարձավ՝ ձեռքին երկու շիշ գարեջուր:

-Ի՞նչ է Ձեզ հետաքրքրում,- դիմեց նա Կիրակոսին՝ գրպանի ծալովի դանակով բացելով գարեջրի շիշը:

Կիրակոսը թերթում էր հաստափոր ռուսերեն մի գիրք, որի շապիկին գրված էր՝ «Վլադիմիր Իլյիչ Լենինի կյանքը. հարցեր և պատասխաններ»:

-Ինձ շատ բաներ են հետաքրքրում, պատասխանեց Կիրակոսը՝ տեղը դնելով գիրքը,- բայց այս պահին ամենից շատ հետաքրքրում է, թե ինչու մերօրյա ամենահանճարեղ բանաստեղծներից մեկը այլևս չի ստեղծագործում:

Քիչ էր մնում գարեջուրը կանգներ Լյուդվիգի կոկորդին: Նա սկսեց հազալ ու նայեց շուրջը՝ փնտրելով մերօրյա ամենահանճարեղ բանաստեղծներից մեկին: Հետո երևի համոզվելով, որ խոսքն իր մասին է, հուզված հարցրեց.

-Դուք ծանոթ եք իմ բանաստեղծություններին:

-Այն էլ ինչպե՞ս,- իր ձայնին ևս հուզական երանգ տալով՝ պատասխանեց Կիրակոսը,- ինչո՞ւ այլևս չեք գրում:

-Գրում եմ, իհարկե գրում եմ,- բացականչեց Լյուդվիգը, մաշված պիջակի գրպանից հանեց ծոցատետրը, բացեց այն և, որոշ բաղաձայններ կուլ տալով՝ սկսեց կարդալ հայրենիքին նվիրված մի բանաստեղծություն:

-Բրավո՛,- ձայնեց Կիրակոսը, երբ ավարտվեց ընթերցանությունը,- Դուք սիրո մեծագույն բանաստեղծ եք:

-Բայց բանաստեղծությունը հայրենիքի մասին էր,- զարմացավ Լյուդվիգը:

-Կապ չունի,- ամենևին չշփոթվեց Կիրակոսը, ով ասմունքի ողջ ընթացքում ուսումնասիրում էր Լյուդվիգի ատամնաշարը, որի դիմացի հատվածից բացակայում էին բոլոր ատամները՝ բացառությամբ վերևի երկուսի և ներքևի մեկի,- ի՞նչ է հայրենիքը, եթե ոչ սեր:

Դժվար է ասել, թե հետագա ինչ զարգացում կստանար խոսակցությունը, եթե չմիջամտեր Պետրոսը:

-Գուցե հրավիրենք հարգարժան բանաստեղծին մի բաժակ խմելո՛ւ,- ասաց նա:

-Ես հենց դա էի պատրաստվում անել,- հավելեց Կիրակոսը:

Հարգարժան բանաստեղծը, բնականաբար, դեմ չէր: Նա նորից խնդրեց հարևան դրոշմանիշերի վաճառականին ուշադիր լինել գրքերին, տվեց նրան մի շիշ գարեջուր և զգաստ կեցվածք ընդունելով ասաց.

-Ես պատրաստ եմ, գնացինք:

Մտան մոտակա բացօթյա սրճարանը, ուր Կիրակոսը պատվիրեց մի շիշ օղի ու էլի ինչ-որ բաներ: Ամեն բաժակը խմելուց հետո Լյուդվիգը հանում էր ծոցատետրն ու կարդում հերթական բանաստեղծությունը, և միայն երրորդ բաժակին՝ տեսնելով, որ հարգարժան բանաստեղծն արդեն ասմունքում է՝ գոռալով և ձեռքը սեղանին խփելով, Կիրակոսը ստիպված էր ընդհատել նրան և խոսել իրեն հետաքրքրող թեմայից:

Բարեբախտաբար, բանաստեղծն անմիջապես հիշեց թե՛ Չնաշխարհիկին, թե՛ Լենինին:

-Ես նրա մասին անգամ բանաստեղծություն եմ գրել,- հայտարարեց նա:

-Ո՞ւմ,- հարցրեց Կիրակոսը,- Չնաշխարհիկի՞, թե՞ Լենինի:

-Իհարկե Չնաշխարհիկի: Կուզե՞ք արտասանեմ:

-Ոչ, ոչ, պետք չէ,- միջամտեց Պետրոսը,- ավելի լավ է՝ ասեք, թե ինչ արեցիք Լենինի քանդակը:

Լյուդվիգը նախ խմեց մի բաժակ, ապա քթի տակ երգեց Խորհրդային Միության հիմնից մի հատված, հետո նոր անդրադարձավ իրեն տված հարցին: Պարզվեց, որ Չնաշխարհիկից նվեր ստացած Լենինի կիսանդրին երկար տարիներ դրված է եղել նկարիչ ընկերոջ արվեստանոցում և միայն հինգ տարի առաջ, երբ ինքը սկսել է առևտուր անել Վերնիսաժում, հիշել է այն ու բերել այստեղ վաճառելու:

-Եվ ի՞նչ, վաճառեցի՞ր,- անհամբեր հարցրեց Պետրոսը:

-Այն էլ ինչպես վաճառեցի. հարյուր դոլարով:

-Ո՞ւմ վաճառեցիր:

-Դատավոր Բոզոյանին:

Լյուդվիգը վերցրեց օղու շիշը, լցրեց իրեն ևս մի բաժակ, խմեց, ապա վեր կացավ ու արդեն բարձրաձայն շարունակեց երգել Խորհրդային Միության հիմնը:

Հասկանալով, որ բանաստեղծն այլևս անկառավարելի է դառնում, Կիրակոսը դիմեց Պետրոսին.

-Կարող ենք գնալ, նման ազգանունով դատավորին դժվար չի լինի գտնելը:

Ապա կանչեց մատուցողուհուն և խնդրեց հաշիվը:

Լյուդվիգն ընդհատեց երգելը և գոռաց:

-Բոլորդ ոտքի՛ կանգնեք՝ հնչում է Խորհրդային Միության հիմնը:

-Ահա թե ինչպես է կերտվում ժամանակակից հայ գրականությունը,- մատուցողուհուն ասաց Կիրակոսը՝ վճարելով հաշիվը:

ՄԱՔՈՒՐ ԷՋԻՑ

Երկու հազար տասնութ թվականի մայիսի ութին միջազգային հեղինակավոր լրատվամիջոցների գլխավոր լուրերը վերաբերում էին Հայաստանին.

«Հայաստանի խորհրդարանը երկրի վարչապետ ընտրեց ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանին՝ վերջ դնելով մի քանի շաբաթ տևած քաղաքական խառնաշփոթին»,- հաղորդում էր «CNN»-ը:

«Հեղափոխական առաջնորդը հաղթում է վարչապետի ընտրությունում»,- այսպիսին էր «BBC»-ի կայքէջում հրապարակված հոդվածի վերնագիրը:

«Ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանը ընտրվեց Հայաստանի նոր վարչապետ՝ այդպիսով ավարտին հասցնելով խաղաղ հեղափոխությունը»,- տեղեկացնում էր «France 24»-ը:

«Նա պոպուլիստ չէ, նա պոպուլյար է. Նիկոլ Փաշինյանը դարձավ Հայաստանի վարչապետ»,- գրում էր «The Guardian»-ը:

Նույն օրը, քիչ ավելի առաջ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը հիսունինը կողմ և քառասուներկու դեմ ձայներով վարչապետ էր ընտրել Նիկոլ Փաշինյանին, իսկ Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը հրամանագիր էր ստորագրել՝ նրան վարչապետ նշանակելու մասին:

«Հիմք ընդունելով Ազգային ժողովի 2018 թվականի մայիսի 8-ի՝ Նիկոլ Փաշինյանին վարչապետ ընտրելու վերաբերյալ ԱԺՈ-11-Ա որոշումը՝ Սահմանադրության 149-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Նիկոլ Փաշինյանին նշանակել վարչապետ»,- ասվում էր հրամանագրում:

Այսպիսով, Նիկոլ Փաշինյանին հաջողվեց անել այն, ինչ անկախությունից ի վեր չէր հաջողվել անել ոչ մեկի:

Դա իսկապես այդպես էր: Սակայն Հայաստանի Հանրապետության նոր վարչապետը չէր պատասխանել մի շարք չափազանց կարևոր հարցերի:

Հայաստանի Հանրապետության և ոչ մի ղեկավար պաշտոնանկությունից հետո ներողություն չէր խնդրել ժողովրդից՝ իր արած սխալների համար: Սա նշանակում է, որ կա՛մ նրանք սխալներ չէին արել, կա՛մ չէին ընդունում իրենց սխալները, կա՛մ արժանի չէին համարում ժողովրդին իրենցից ներողություն լսելու:

Ամենամեծ բացթողումը, սակայն, առաջին նախագահինն էր, որովհետև հենց նրա իշխանության տարիներին կեղծվեցին առաջին ընտրությունները, և առաջին անգամ ուժ կիրառվեց այդ ընտրությունների արդյունքները վիճարկող խաղաղ ցուցարարների դեմ: Հայաստան պետության զարգացումը բոլորովին այլ կերպ կլիներ, եթե այդպես չլիներ: Խոսքը տնտեսական զարգացման մասին չէ: Խոսքը ժողովրդի, հասարակության, մարդու՝ ինքն իր ու իր պետության հանդեպ հավատի ու վստահության մասին է, որոնք խարխլվեցին Հայաստանի Հանրապետության առաջին նախագահի աչալուրջ ու ատելությամբ լի հայացքի ներքո:

Բացի այդ, հենց առաջին նախագահն առաջին անգամ փորձեց պարտադրել պատերազմում հաղթանակած ժողովրդին հետ կանգնել իր տարած հաղթանակից՝ հանուն խաղաղության, այն էլ՝ չերաշխավորված խաղաղության:

Այն, ինչ պիտի լիներ հետո, պարզապես չէր կարող չլինել, որովհետև կորսված էր պահը իսկապես մաքուր և արդար և ուժեղ պետություն ու հասարակություն կառուցելու:

Երկու հազար տասնութ թվականի մայիսին, Հայաստանի առաջին Հանրապետության հարյուրամյակի խորհրդան-

շական տարում ու ամսին Հայաստանի երրորդ Հանրապետության վարչապետը բացառիկ հնարավորություն ուներ՝ ամեն ինչ նոր, մաքուր էջից սկսելու: Սակայն դրա համար, ինչպես ասվեց վերևում, նա պիտի պատասխաներ մի շարք չափազանց կարևոր հարցերի:

Առաջինը՝ ի՞նչ էր նա մտածում հազար ինը հարյուր իննսունվեց թվականի իրադարձությունների և դրանք սանձազերծած մարդու մասին: Եթե դատապարտում էր, ապա ինչո՞ւ էր ավելի ուշ միացել այդ մարդու քաղաքական թիմին և մասնակիցը եղել «Մարտի մեկ» անունը ստացած նորանկախ պետության պատմության թերևս ամենաամոթալի իրադարձության կազմակերպմանը: Եթե հետագայում զղջացել էր դրա համար, ապա ինչո՞ւ ներողություն չէր խնդրում ժողովրդից:

Եվ երկրորդ՝ ի՞նչ էր մտածում Հայաստանի համար ամենակարևոր՝ Արցախի հարցի վերաբերյալ առաջին նախագահի մոտեցումների մասին: Եթե համաձայն չէր դրանց հետ, ապա ինչո՞ւ էր ավելի ուշ միացել նույն այդ մարդուն, ով ամենևին էլ չէր փոխել իր մոտեցումները: Կամ եթե հետագայում զղջացել էր դրա համար, ապա ինչո՞ւ չէր արտահայտվում այդ մասին:

Իսկ եթե երկու դեպքում էլ ո՛չ դատապարտում էր, ո՛չ էլ զղջացել էր, ապա ոչ մի նոր ու մաքուր էջ էլ չէր լինելու:

ՎԼԱԴԻՄԻՐ ԼԵՆԻՆԸ ԵՎ ՎՍԵՎՈԼՈԴ ԺՈՊԿԻՆԸ

Քսյուշան իհարկե սիրում էր արկածներ: Նա եղել էր Հյուսիսային բևեռում, բարձրացել Էլբրուս լեռան գագաթը, ռուսական «Կամազ» թիմի կազմում մասնակցել էր Փարիզ-Դաքար ավտոմրցվազքին ու էլի տարբեր բաներ էր արել:

Սակայն այն, ինչ առաջարկել էր իրեն Պետրոսը, մի քիչ տարբեր էր: Քսյուշան սկզբում լուրջ չէր վերաբերվել՝ մտածելով, որ դա իրեն գրավելու պատրվակ է ընդամենը: Այն, որ այս երկու տղաները իրեն սիրահետում են ինչ-որ հաշվարկներ ունենալով, նա իհարկե հասկացել էր: Հիմնավոր կասկածներ ուներ անգամ, որ նրանք գրազ են եկել, թե ով կկարողանա հասնել իրեն: Դա բնականաբար վիրավորական էր, բայց Քսյուշան վաղուց սովորել էր նման բաներից չվիրավորվել, ավելին՝ օգուտ քաղել:

Անշուշտ, թե Պետրոսը, թե առավել ևս Կիրակոսը, տաղանդավոր «ժուլիկներ» էին, բայց նրանցից ևս օգուտ քաղել կարելի էր: Եվ Քսյուշան որոշել էր մտնել խաղի մեջ:

-Որոշ բաներ կան, որ դուրս են տրամաբանությունից,- դիմեց Քսյուշան տղաներին, երբ նրանք միասին նստած էին Կիրակոսի տան պատշգամբում,- և ես շատ կուզեի լսել ձեր կարծիքը:

-Ինչն է անտրամաբանական,- հարցրեց Պետրոսը:

-Նախ՝ ինչո՞ւ էր պապդ իր ունեցած ահռելի քանակությամբ ոսկուց ձուլում հենց Լենինի գլուխն ու պահում այն իր աշխատասենյակում՝ բոլորի աչքի առջև, և երկրորդ՝ ինչո՞ւ նա չէր տեղեկացրել որդուն կամ կնոջը:

-Որդուն, այսինքն՝ հորս, կարծում եմ, նա չէր վստահում,- մի քիչ մտածելուց հետո պատասխանեց Պետրոսը,- կնոջն, այսինքն՝ տատիս, երևի՝ նույնպես:

-Մի րոպե,- միջամտեց Կիրակոսը,- պետք չէ մոռանալ, որ մահանալուց առաջ հարգարժան Գրիգորիչը փորձել է ասել կնոջը, թե որտեղ է ոսկին, սակայն հասցրել է արտաբերել միայն «Լենին» բառը, ինչը հարգարժան տիկինը վերագրել է պրոլետարիատի առաջնորդի հանդեպ տածած նրա անսահման սիրուն:

-Իսկ ինչո՞ւ էր Լենինին պահում աշխատասենյակում՝ բոլորի աչքի առջև,- իր հարցի առաջին մասը կրկնեց Քսյուշան:

Պետրոսի փոխարեն դարձյալ պատասխանեց Կիրակոսը.

-Նա այն պահում էր ոչ միայն բոլորի, այլ նաև իր աչքի առջև: Այդպես երևի ավելի ապահով էր համարում: Չեմ կարծում, թե հիսուն կիլոգրամ ոսկին Պետրոսի հարգարժան պապը հավաքել էր օրինական ճանապարհով, և եթե այն վերածեր զարդերի կամ ձուլակտորների ու պահեր ասենք իր տան նկուղում, խուզարկության դեպքում շատ հեշտ կլիներ գտնելը: Պետք չէ մոռանալ, թե դրանք ինչ ժամանակներ էին, չնայած դուք այդ ժամանակ դեռ չէիք ծնվել:

-Եվ ո՞վ է խոսում օրինականության մասին,- քմծիծաղով ասաց Պետրոսը:

-Դրանք իսկապես դաժան ժամանակներ էին,- չլսելու տվեց Կիրակոսը,- քանդվում էր հսկա պետությունը, և ով ինչ հասցնում՝ փախցնում էր:

-Դու քանի՞ տարեկան ես,- անսպասելի հարցրեց Քսյուշան:

-Տղամարդկանց տարիքը չեն հարցնում,- լուրջ դեմքով պատասխանեց Կիրակոսը,- բայց ավելի լավ է՝ անցնենք գործին: Մեզ գործողությունների պլան է հարկավոր:

-Ի՞նչ գիտենք մենք անպարկեշտ ազգանվամբ այդ դատավորի մասին,- հարցրեց Քսյուշան:

Անպարկեշտ ազգանվամբ դատավորի մասին գործընկերները բավականաչափ տեղեկություններ էին հավաքել: Ավելի ճիշտ՝ նախկին դատավորի: Պարոն Բոզոյանը մեկ տարի առաջ անցել էր վաստակած հանգստի:

Հիմա նա ապրում էր Ձորաղբյուրի իր շքեղ ամառանո-

ցում, որի երրորդ հարկն ամբողջությամբ վերածել էր ցուցասրահի: Չար լեզուներն ասում էին, որ Բոզոյանն ուներ հայ գեղանկարիչների կտավների ամենամեծ հավաքածուներից մեկը: Թե ինչպես և ինչ միջոցներով էր նախկին դատավորը կազմել այդ հավաքածուն՝ չար լեզուները չէին ասում:

Առանձին հետաքրքրության առարկա էր, սակայն, պարոն Բոզոյանի այգին: Բազմատեսակ, հիմնականում դեկորատիվ ծառերի ու թփերի տակ շարված էին մի քանի տասնյակ քանդակներ և արձանիկներ: Ճիշտ է, դրանց նյութական և գեղարվեստական արժեքը զգալիորեն զիջում էր ցուցասրահում կախված նկարների արժեքին, բայց գաղափարն իհարկե հետաքրքիր էր:

Գործընկերներին դեռ չէր հաջողվել լինել ամառանոցի տարածքում, բայց ցանկապատի վրայից նրանք տեսել էին այգին, որտեղ տեղադրված քանդակներից երկուսը աղոտ հիշեցնում էին Վլադիմիր Իլյիչին:

-Դե ինչ, պարոնա՛յք գանձեր որոնողներ,- ասաց Քսյուշան դատավորի մասին տեղեկությունները լսելուց հետո,- ի՞նչ եք պատրաստվում անել: Հուսով եմ՝ Լենինին գողանալը չի մտնում ձեր պլանների մեջ:

-Ինչո՞ւ գողանալ,- զարմացավ Պետրոսը,- կարելի է պարզապես վերցնել: Չէ՞ որ քանդակի օրինական ժառանգորդը ես եմ:

-Եվ դու պատրաստվում ես ժառանգության թեմաներով վիճել դատավորի հետ,- ծիծաղեց Կիրակոսը,- ես ավելի լավ տարբերակ ունեմ:

Ու անցավ իր տարբերակի իրագործմանը:

Գործընկերների մոտից նա զանգահարեց նախկին դատավորին, ներկայացավ որպես Սանկտ Պետերբուրգում բնակվող սկսնակ կոլեկցիոներ և ասաց, որ շատ կուզեր տեսնել նրա հավաքածուն: Պայմանավորվեցին հանդիպել

երեկոյան՝ Զորաղբյուրի ամառանոցում:

Առաջիկա մի քանի ժամը Կիրակոսը խնդրեց իրեն չխանգարել և անցկացրեց հայ կերպարվեստի պատմությունն ուսումնասիրելով: Հետո հագավ իր սպիտակ կոստյումը, վերցրեց նախապես գնված տասնութ տարեկան վիսկին և գնաց հանդիպման:

Պարոն Բոզոյանը նրան ընդունեց ինչպես կոլեկցիոներ՝ կոլեկցիոներին: Նախ մի բաժակ խմեցին կաբինետում, սիգար ծխեցին, խոսեցին քաղաքականությունից, հետո նոր միայն բարձրացան ցուցասրահ՝ նկարները նայելու, որոնք, հասկանալի է, Կիրակոսին բոլորովին չէին հետաքրքրում:

Նախկին դատավորը, ում վրա հյուրը բավական լուրջ տպավորություն էր թողել, իր տարերքի մեջ էր: Նա գլուխը բարձր, հպարտ կեցվածքով քայլում էր Կիրակոսի կողքով ու հետևում նրա հիացական բացականչություններին: Իսկ Կիրակոսը դրանից ավելի ոչինչ անել չէր կարող: Նա հույս ուներ, որ նկարների կողքին փակցված կլինեն հեղինակների անունները, ինչպես դա լինում է թանգարաններում, և մի քանի ժամվա ինքնուսուցման շնորհիվ ինքը կկարողանա մի քանի խոսք ասել մոտավորապես հետևյալ բովանդակության՝ «ինչ հրաշալի են Մինասի գույները»: Բայց նկարների կողքին ոչինչ գրված չէր, և Կիրակոսը ստիպված էր ընդամենը հիացական բացականչություններ անել կամ լավագույն դեպքում՝ սուլել:

-Այսպիսի գործ մեր կոլեկցիոներներից ոչ մեկը չունի,- ասաց դատավորը՝ Եղիշե Թադևոսյանի կտավը ցույց տալով,- անգամ ինքը…

Այստեղ նա մի պահ դադար տվեց, մտածեց, հետո ինչոր բան հիշելով համարձակ շարունակեց.

-Անգամ ինքը՝ նախկին նախագահը:

-Այո,- լուրջ հայացք ընդունելով,- ասաց Կիրակոսը,- այս

գործն իսկապես հրաշալի է:

-Իսկ Դո՞ւք ինչ հայ դասականների գործեր ունեք,- անսպասելի հարցրեց դատավորը:

Կիրակոսն ուզում էր արտաբերել հայ դասականների այն անունները, որ անգիր էր արել, բայց մտածեց, որ դատավորը կարող է լրացուցիչ հարցեր տալ ու փաստի առաջ կանգնեցնել իրեն: Ուստի ասաց.

-Ինձ մոտ միայն ռուս դասականներ են, հայկական գեղանկարչությանը ես նոր պիտի անդրադառնամ:

-Իսկապե՞ս,- անկեղծորեն զարմացավ դատավորը,- ի՞նչ ռուս նկարիչների գործեր ունեք:

Նման զարգացումը Կիրակոսի պլանների մեջ չէր մտնում: Ռուսական կերպարվեստի դպրոցից նա տեղյակ էր այնքան, որքան իր կողքին կանգնած կոլեկցիոները՝ կանանց ներքնազգեստի տեսակներից:

-Ավելի լավ է՝ ես Ձեզ հրավիրեմ Սանկտ Պետերբուրգում գտնվող իմ պատկերասրահը, և Դուք Ձեր աչքով տեսնեք կտավները,- պատասխանից խուսափեց նա,- ի դեպ Դուք ակնարկեցիք նախկին նախագահին, ի՞նչ եք կարծում՝ նա այս ամենը ծրագրվա՞ծ արեց:

Նախկին նախագահի մասին նախկին դատավորը գերադասեց չխոսել: Փոխարենը՝ նա առաջարկեց շրջել այգում և դիտել իր քանդակները, ինչն էլ հենց պետք էր Կիրակոսին:

Իրական արվեստը գնահատողներին պարոն Բոզոյանի քանդակները հազիվ թե հետաքրքրեին: Նա ինքն էլ հավանաբար դա շատ լավ գիտեր, քանի որ այգի մտնելով ասաց Կիրակոսին.

-Այս քանդակներն առանձնապես արժեքավոր չեն, ես դրանք պարզապես հավաքել եմ ըստ իմ նախասիրությունների:

Նախկին դատավորի նախասիրությունները, պարզվեց, շատ բազմաժանր էին: Հսկայական այգում դեկորատիվ ծառերի տակ տեղադրված էին առյուծների ու արծիվների, ձիերի ու եղնիկների, հրեշտակների ու հրեշների, կիսամերկ տղամարդկանց ու կանանց ու էլի շատ տարբեր քանդակներ: Կային նաև հայտնի մարդիկ: Այստեղ էին Կարլ Մարքսը, Իոսիֆ Ստալինը, Ջավահարլալ Ներուն, Յուրի Գագարինը, Մաքսիմ Գորկին, և իհարկե՝ Վլադիմիր Իլյիչ Լենինը՝ երեք օրինակից:

Քանդակներից մեկում պրոլետարիատի առաջնորդը կանգնած էր ողջ հասակով, մյուս երկուսը նրա կիսանդրիներն էին, առաջինը՝ մետաղից, երկրորդը՝ գիպսից:

Փաստորեն, դատավորը հարյուր դոլարով գնել է հիսուն կիլոգրամ ոսկի և դրա մասին տեղյակ չէ, մտածեց Կիրակոսը և մոտեցավ գիպսե կիսանդրուն: Այն տեղադրված էր մի արծաթափայլ եղևնու տակ մարմարե պատվանդանի վրա: Իլյիչը նայում էր խիստ հայացքով, կարծես ուզում էր ասել՝ հեռու մնացեք ինձանից, իսկ Կիրակոսը պատրաստ էր համբուրել նրա լայն ճակատը:

-Ինչպիսի հետաքրքիր զուգադիպություն,- դիմեց նա դատավորին՝ փորձելով թաքցնել հուզմունքը,- ես էլ եմ հավաքում Լենինի քանդակներ:

-Լենինգրադում դրանք պիտի որ ավելի շատ մնացած լինեն,- ասաց դատավորը:

-Հավատացեք, որ այդպես չէ: Կոմունիստները հավաքել են բոլորը: Ես ինքս ունեի քսան քանդակ, որոնցից հինգը նվիրեցի մեծարգո ընկեր Զյուգանովին, երբ նա հյուրընկալվել էր իմ պատկերասրահում:

-Իզուր էլ նվիրել եք,- բարկացավ Բոզոյանը,- Զյուգանովը թույլ կոմունիստ էր: Հազար ինը հարյուր իննսունվեցին նախագահական ընտրություններում նա հաղթել էր Ելցի-

նին, բայց մինչև վերջ չպայքարեց և գործարքի գնաց իշխանությունների հետ: Մինչդեռ եթե պայքարեր, կարող էր հաջողության հասնել՝ այդ ժամանակ ռուսը պատրաստ էր վերականգնել կոմունիստական իշխանությունը:

-Հնարավոր է, հնարավոր է,- անտարբեր արտաբերեց Կիրակոսը, իրենից անկախ շոյելով Լենինի գլուխը:

Եվ այստեղ տեղի ունեցավ անսպասելին: Բոզոյանը թևը դրեց նրա ուսին և ասաց.

-Եթե այդքան հավանել եք այս քանդակը, կարող եմ վաճառել այն Ձեզ: Կամ փոխանակել, ասենք՝ ռուս նկարչի ինչոր կտավի հետ: Բայց նկատի ունեցեք, սա շատ թանկարժեք քանդակ է:

«Թանկարժեք» բառը լսելով՝ Կիրակոսը մի պահ վախեցավ, չգիտի՞ արդյոք դատավորը քանդակի գաղտնիքը, բայց հետո անմիջապես հասկացավ, որ դա անհնար է:

-Շատ լավ,- ասաց նա, ես ձեզ կտամ Վսեվոլոդ Ժոպկինի կտավներից մեկը:

-Դա ո՞վ է,- զարմացավ դատավորը:

-Պիտերցի երիտասարդ նկարիչ է, շատ խոստումնալից,- բացատրեց Կիրակոսը:

Վսեվոլոդ Ժոպկին իրականում կոչում էին այն մարդուն, ումից Կիրակոսը գնել էր իր սպիտակ «Range Rover»-ը, չգիտես ինչու մտապահել էր այդ անունը, և չգիտես ինչու, այդ պահին հենց այն եկավ իր մտքին: Բայց հիմա դա կարևոր չէր: Հիմա կարևոր էր ավարտին հասցնել գործարքը, և քանի հարգարժան դատավորը չէր փոշմանել, Լենինի գլուխը հնարավորինս շուտ տեղափոխել իր մեքենան:

Երբ «Range Rover»-ը սլանում էր Ձորաղբյուրից Երևան, և բեռնախցիկում դխկդխկում էր Լենինի կիսանդրին, Կիրակոսը մտածում էր, թե ինչպես վարվել: Կասկադի սրճա-

ռանում նրան էին սպասում Պետրոսն ու Քսյուշան: Նա կարող էր գնալ այնտեղ և որևէ օրիգինալ ձևով մատուցել անակնկալը: Բայց կարող էր նաև անել ուրիշ բան: Կարող էր պարզապես անհետանալ և այդ դեպքում հարկ չէր լինի հիսուն կիլոգրամ ոսկին կիսել որևէ մեկի հետ: Սակայն կար երկու հանգամանք, որ խանգարում էր Կիրակոսին այդպես վարվել: Երբ դեպի իր մեքենան էին տեղափոխում Լենինի կիսանդրին, այն նրան զարմանալիորեն թեթև թվաց: Եթե քանդակի ներսում իսկապես հիսուն կիլոգրամ ոսկի կար, ապա այն պետք է կշռեր առնվազն հիսուն կիլոգրամ: Իսկ եթե ոչ մի ոսկի էլ չկա՞ր, և այն բոլորովին ուրիշ քանդակ էր: Սա առաջին հանգամանքն էր: Իսկ երկրորդ հանգամանքի մասին Կիրակոսը նույնիսկ չէր էլ ուզում մտածել: Ինչ ազնվություն այս դարում, երբ բոլորը միմյանց խաբում են:

Թե որ հանգամանքը ստիպեց Կիրակոսին միայնակ չտնօրինել քանդակի հետագա ճակատագիրը, հայտնի չէ:

Վլադիմիր Իլյիչի գլուխը ջարդեցին հենց մեքենայի բեռնախցիկում, քաղաքից դուրս ամայի մի վայրում:

Այնտեղ ոչինչ չկար:

-Չեմ հասկանում,- բացականչեց Պետրոսը,- իսկ որտե՞ղ է պապիս ոսկին:

Կիրակոսը ոչինչ չպատասխանեց, մտածեց մի քիչ, ապա վերցրեց հեռախոսն ու զանգեց դատավորին:

-Դուք գուցե չհավատաք,- ասաց նա ծիծաղելով,- բայց քանդակը ձեռքիցս ընկավ ու ջարդուփշուր եղավ:

-Ինչպիսի՜ անախորժություն,- ասաց դատավորը,- զգույշ է պետք լինել:

-Չեք պատկերացնի, թե ինչ ցավալի է ինձ համար,- ձայնին հնարավորինս ողբերգական տոն տվեց Կիրակոսը,- դուք ուրիշ քանդակ չունե՞ք:

-Դե կա ևս մեկը, բայց այն պղնձից է և շատ թանկ արժե: Ես կարող եմ…

-Ոչ, ես չեմ սիրում մետաղյա քանդակները,- ընդհատեց նրան Կիրակոսը,- որտեղից կարող եմ գտնել գիպսից քանդակ, գուցե ձեր ծանոթներն ունեն:

-Վերնիսաժում փնտրեք,- հուշեց դատավորը,- ես ինքս մի անգամ այդտեղից գնել եմ մեկը:

-Այն մեկը, որը ես կոտրեցի՞,- անհամբեր հարցրեց Կիրակոսը:

-Ոչ, ուրիշը: Ես այն վաճառեցի ռեժիսոր Չոբանյանին:

-Չոբանյանի ինչի՞ն էր պետք Լենինի քանդակը:

-Կարծեմ նա ինչ-որ կինո էր նկարում խորհրդային ժամանակների վերաբերյալ: Ի դեպ, ես ման եկա ինտերնետում և այդպես էլ ոչ մի ինֆորմացիա չգտա Վսեվոլոդ Ժոպկինի մասին…

Ո՞ՒՄ Է ՀԱՂԹԵԼ ԵՐԿՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ ԵՎ Ո՞ՒՄ ՊԻՏԻ ԴԵՌ ՀԱՂԹԻ

Հազար ինը հարյուր տասնութ թվականի մայիսի քսանութին Թիֆլիսում «Հայկական ազգային խորհրդի» կողմից հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը:

Դրանից ուղիղ հարյուր տարի հետո՝ երկու հազար տասնութ թվականի մայիսի քսանութին Սարդարապատում ունեցած իր ելույթի ժամանակ Հայաստանի Հանրապետության նորընտիր վարչապետը պիտի ասեր՝ *«Մենք հաղթել ենք և հաղթելու ենք բոլոր այն դեպքերում, երբ որոշենք հաղթել, երբ հույսը դնենք մեր և ոչ թե ուրիշների վրա, երբ չընկրկենք որևէ դժվարության առաջ, սիրենք, անսահման սիրենք մեր հայրենիքն ու միմյանց, չփորձենք մեր ներանձնական շահերը կապել սեփական ժողովրդի ու պետության վզին, երբ յուրաքանչյուր քաղաքացի գիտակցի, որ տեր է սեփական երկրում, ոչ թե հպատակ»:*

Հիրավի փառահեղ խոսքեր, որոնք լավագույնս կարող էին արտահայտել օրվա խորհուրդը: Սակայն, ավա՜ղ, պետության նոր ղեկավարը այնքան էլ ճիշտ չէր հասկացել այդ խորհուրդը:

«Հենց այսպես Սարդարապատի հաղթանակից ուղիղ 100 տարի անց 2018-ի ապրիլ-մայիսին հայ ժողովուրդը տարավ իր հերթական փառահեղ հաղթանակը՝ սեփական իշխանությունը հաստատելով սեփական հայրենիքում: Այդ հաղթանակը նույնքան անհնար էր թվում»,- պիտի ասեր նա իր խոսքի շարունակությունում:

Այստեղ բնական հարց է առաջանում՝ ո՞ւմ հանդեպ տարավ «իր հերթական փառահեղ հաղթանակը» հայ ժողովուրդը Սարդարապատի հաղթանակից ուղիղ հարյուր տարի անց: Սակայն այդ հարցը անիմաստ էր տալ երկրի նոր

վարչապետին:

Եթե մեկն այնքան է խանդավառված իշխանության համար պայքարում տարած իր հաղթանակով, որ այն համեմատում է արտաքին թշնամու դեմ տարած հաղթանակի հետ, ուրեմն ի՞նչ ասես նրան:

Ո՞ւմ էր հաղթել վարչապետը: Եթե նախկին իշխանություններին, ապա ի՞նչ էր իր պայքարը, եթե ոչ պայքար իշխանության համար:

Որքան էլ, որ վատն էին նախկին իշխանությունները, մի՞թե նրանք կոտորում էին ժողովրդին, յաթաղան էին քաշում ծեր ու մանուկի վրա, բռնաբարում կանանց ու աղջիկներին: Ու հետևաբար ինչպե՞ս կարելի էր համամատել այսօրվա հաղթանակը հարյուր տարի առաջ տարած հաղթանակի հետ:

Որքա՞ն էլ որ վատ էր կառավարվում երկիրը, մի՞թե այն անկախ չէր: Որքան էլ որ վատ էր ժողովրդի վիճակը, մի՞թե այն անկախ երկրում չէր ապրում: Ինչպե՞ս կարելի էր համեմատել իշխանության դեմ տարած հաղթանակը անկախության համար տարած հաղթանակի հետ:

Իսկ գուցե նոր վարչապետը հաղթել էր իր իսկ երկրին և սեփական ժողովրդի՞ն:

Եթե պետության ղեկավարի համար համեմատելի են անկախության համար մղվող պայքարն ու իշխանության համար մղվող պայքարը, ապա այդ ղեկավարը կարող է հետագայում իր իշխանությունը պահելու համար հաղթել սեփական ժողովրդին:

«ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ «ՍԻԹՔՈՄԸ»

Ռեժիսոր Չոբանյանը, ում դատավոր Բոզոյանը վաճառել էր Լենինի կիսանդրին, իրականում ոչ թե ֆիլմ էր նկարահանում, այլ սերիալ կամ ավելի ճիշտ՝ այսպես կոչված «սիթքոմ»: Գործընկերները ստիպված էին հերթափոխով դիտել ամբողջ «սիթքոմը», սակայն այդպես էլ ոչ մի դրվագում չհանդիպեցին Լենինի կիսանդրուն: Փոխարենը զարմանքով հանդիպեցին ուրիշ բանի: Դերասանները, ովքեր խաղում էին այստեղ, հեղափոխական իրադարձությունների ակտիվ մասնակիցներն էին, իսկ գլխավոր դերասաններից մեկին հաճախ կարելի էր տեսնել հեղափոխության առաջնորդի կողքին:

«Սիթքոմի» մի դրվագում մի երեխա վերոհիշյալ դերասանի հերոսին հարցնում է՝ *«Գիտե՞ս ինչպես է անհետացել Խաչատուր Աբովյանը»: «Ո՞նց չգիտեմ»,*- պատասխանում է հերոսը՝ գարեջուր խմելով,- *«Բարձրացել ա Արագածի գագաթը ու այլևս չի վերադարձել»: «Արագածի»,*- զարմանում է երեխան: *«Հա, ինձ թվում ա՝ իրա ընկերները իրան խաշի էին հրավիրել, իմիջիայլոց ընդեղ գժական խաշ են տալի»,*- բացատրում է հերոսը: Երեխան, այնուամենայնիվ, պնդում է, որ Խաչատուր Աբովյանը բարձրացել է ոչ թե Արագածի, այլ՝ Արարատի գագաթը, ինչին հերոսը պատասխանում է. *«Գժվե՞լ ես, Արարատի վրա խաշ չեն տալի, բարձրանում էր Արարատի վրա, ինչ աներ»:* Հետո երեխան հարցնում է, թե կվերադառնա՞ արդյոք Աբովյանը: *«Որ իմանա Աբովյանի վրի տները ինչ թվեր են, հաստատ հետ կգա»,*- պատասխանում է հերոսը, ում մարմնավորում էր հանրության շրջանում լայն ճանաչում ունեցող դերասանը, ում միշտ կարելի էր տեսնել ժողովրդական շարժման առաջնորդի կողքին, և ում, ըստ շշուկների, վերջինս տեսնում էր Երևանի քաղաքապե-

տի պաշտոնում:

Եվ եթե այդ ու նմանօրինակ բազմաթիվ այլ «սիթքոմ-ներն» ու սերիալները ցուցադրվում էին հայաստանյան ամենահայտնի հեռուստաալիքներով և հավաքում էին ամենամեծ լսարանը, ապա ինչո՞ւ չէին կարող «սիրելի» դերասանները դառնալ նաև «սիրելի» բարձրաստիճան պաշտոնյաներ: Եթե հեղափոխությունը վերածվում է «սիթքոմի», ապա ինչո՞ւ հասարակությունն ակամա հանդիսատեսից չպիտի վերածվի գործող անձի: Եթե հասարակությունը հաճույքով նայում ու լսում է, թե ինչպես են «կարգին տղերքը» ծաղրում իր պատմության ամենալուսավոր կերպարներից մեկին, ինչո՞ւ պիտի նա այդ նույն «կարգին տղերքին» չվստահի իր ապագան:

Ինչևէ, Լենինի գլուխը չկար:

-Ստիպված ենք լինելու կերպարվեստից սահուն անցնել կինոարվեստին,- ասաց Կիրակոսը՝ դիմելով գործընկերներին:

-Եթե այն, ինչ մենք դիտեցինք, կինո էր, ապա կապիկները դերասաններ են,- ծիծաղեց Քսյուշան,- բայց մի՛ ան-

հանգստացեք, Լիլիթը ծանոթ է ողջ այս «բոմոնդի» հետ:

Նկարահանումների տաղավար գնացին Լիլիթի հետ, բայց առանց Քսյուշայի: Նա ասաց, որ եթե ցանկություն ունենա կապիկներ տեսնելու, կգնա գազանանոց:

Տաղավարը գտնվում էր նորակառույց շենքի մի մեծ բնակարանում, որը զբաղեցնում էր երկու հարկ: Գործընկերները ներս մտան այն պահին, երբ «բոմոնդը» նշում էր ութերորդ եթերաշրջանի ավարտը: Կենաց էր ասում գլխավոր ռեժիսորը, նույն ինքը՝ Չոբանյանը:

-Այսօր ողջ Հայաստանն է նայում մեր «սիթքոմը» և հիանում մեր ստեղծածով: Մենք հեղափոխություն արեցինք ոչ միայն Հայաստանում, այլև հայկական կինոյում…

Տեսնելով ներս մտնող հյուրերին՝ ռեժիսորն ընդհատեց կենացը և հրավիրեց նրանց սեղանի մոտ: Կիրակոսը, ում Չոբանյանը ներկայացրեց իբրև ռուսաստանաբնակ բարերար, բաժակ բարձրացրեց և շարունակեց ընդհատված կենացը:

-Թույլ տվեք խոսել արտերկրում բնակվող հայերի անունից,- ասաց նա,- այսօր ոչ միայն ողջ Հայաստանն է նայում ձեր «սիթքոմը», ինչպես նշեց մեր սիրելի ռեժիսորը, այլև ողջ Սփյուռքը:

Կիրակոսը բավականաչափ երկար խոսեց, և նրա բաժակաճառն այնքան բոցաշունչ ստացվեց, որ ծափահարությունները երկար ժամանակ չէին դադարում: Դերասանուհիները, իրար հերթ չտալով, մոտենում էին «ռուսաստանաբնակ բարերարին» ու փորձում ծանոթանալ նրա հետ: Հերթից դուրս մնացողները ապավինում էին Պետրոսին:

Երբ կրքերը հանդարտվեցին, Կիրակոսը մի կողմ տարավ Չոբանյանին:

-Իմ լավ բարեկամ դատավոր Բոզոյանն ասաց, որ վեր-

ջերս Դուք իրենից գնել եք մի Լենինի կիսանդրի:

-Այո, եղել է նման բան,- հիշողությունը լարելով ասաց ռեժիսորը:

-Բայց ոչ մի սերիայում այն չկար:

-Այո, ըստ սցենարի, մեր հերոսներից մեկը պետք է այն դուրս նետեր տասներորդ հարկի այ այս պատուհանից,- ռեժիսորը ցույց տվեց պատուհանը,- բայց հետո սցենարը փոխվեց, և քանդակը մեզ պետք չեկավ:

Կիրակոսը քիչ էր մնում ասեր, թե որքան լավ է, որ սցենարը փոխվել է, որովհետև անմիջապես պատկերացրեց, թե ինչ կլիներ, եթե Լենինին դուրս նետեին պատուհանից:

-Ինչո՞ւ է Ձեզ այն հետաքրքրում,- հարցրեց ռեժիսորը:

-Բանն այն է, որ ես Լենինի քանդակներ եմ հավաքում... Եթե այն Ձեզ այլևս պետք չէ, գուցե վաճառեք ինձ:

-Ես այն Ձեզ ոչ թե կվաճառեի, այլ մեծ սիրով կնվիրեի, բայց ցավոք արդեն նվիրել եմ ուրիշին:

-Ափսո՜ս,- հերթական հիասթափությունը թաքցնել չկարողանալով՝ արտաբերեց Կիրակոսը,- իսկ ո՞ւմ եք նվիրել, եթե գաղտնիք չէ, գուցե նա՞ ինձ վաճառի:

-Վաճառի՞,- ծիծաղեց Զոբանյանը,- նա Հայաստանի ամենահարուստ մարդկանցից մեկն է՝ օլիգարխ:

Այլ բան օլիգարխի մասին ռեժիսորը չասաց, և գործընկերները ստիպված էին դիմել իրենց վաղեմի ծանոթ պատգամավորների օգնությանը: Օգնեց Շնագայլը, ով, պարզվեց, քավորսանիկական հարաբերությունների մեջ էր օլիգարխի հետ: Վերջինս, ըստ պատգամավորի, Հայաստանում չէր: Նա մեկնել էր Արաբական Միացյալ Էմիրություններ՝ մասնակցելու մեկ այլ օլիգարխի ծննդյան տարեդարձին: Շնագայլը խոստացավ հանդիպում կազմակերպել, սակայն տեղեկացրեց, որ նման տարեդարձները սովորաբար տևում են

յոթ օր-յոթ գիշեր, հետևաբար մեկ շաբաթից շուտ օլիգարխին սպասելն անիմաստ է:

-Դե ինչ, կարծես թե մեզ հարկադիր պարապուրդ է սպասվում,- Քսյուշային դիմեց Կիրակոսը,- առաջարկում եմ այն անցկացնել Դիլիջանում, ես այնտեղ մի գեղեցիկ քոթեջ եմ վարձակալել անտառի մեջ:

Պետրոսը, ում բոլորովին էլ ուղղված չէր այս հրավերը, չհամաձայնեց.

-Ավելի լավ է՝ մնանք Երևանում, մեկ էլ տեսար՝ օլիգարխը շուտ վերադարձավ:

-Երկու գաղափարն էլ հրաշալի են,- ասաց Քսյուշան,- այնպես որ մեկդ կարող է հանգիստ գնալ Դիլիջան, մյուսդ՝ մնալ Երևանում, իսկ ես, կներեք, ուրիշ պլաններ ունեմ:

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Քսյուշայի պլանները կապված էին «Մարդկանց երկիրը» ստուդիայի երիտասարդների հետ: Նա խոստացել էր կիրակի օրը միասին գնալ Տաթևի վանք: Քսյուշան երբեք չէր շփվել իր սերնդի հայրենակիցների հետ և շատ էր ուզում հասկանալ, թե ինչ են նրանք մտածում, ինչ են ուզում, ինչի են հավատում: Ճանապարհին, ավտոբուսի մեջ, Քսյուշան պատրաստվում էր հարցեր տալ, բայց դրա անհրաժեշտությունը չեղավ: Երիտասարդներն իրենք սկսեցին խոսել, և Քսյուշան դեռ չգիտեր, որ այդ խոսակցություններից որոշ պատառիկներ ինքը երկար կհիշի:

«Որքա՜ն լավ կլիներ, որ Երկիր մոլորակի վրա վերանային սահմանները, և մարդիկ վերջապես գային այն գիտակցության, որ ամենուրեք իրենք տանտեր են, և հավասարապես՝ հյուր»:

«Այո, միայն թե դա լինելու բան չէ՝ գոնե ներկա հարյուրամյակում: Երկիր մոլորակի վրա ապրող մարդկանց մի մեծ մասը դեռևս ամեն ինչ անում է մյուս մասի հաշվին ապրելու համար, իսկ մյուս մասն էլ ոչ մի կերպ չի ուզում հանդուրժել դա»:

«Մենք խոսում ենք մարդկա՞նց, թե՞ ազգերի մասին: Որովհետև, հազիվ թե մարդկանց ազգությունների բաժանելիս Աստված առավելություն տված լինի որևէ մեկին: Բայց փաստ է, որ որոշ ազգեր իրենց էվոլյուցիայի ընթացքում ավելի վաղ եկան այն գիտակցությանը, որ պետք է հոգատար լինել ինչպես սեփական, այնպես էլ օտար անձի, ինչպես սեփական, այնպես էլ՝ օտար ազգի, և ընդհանրապես՝ մարդկության հանդեպ, իսկ որոշ ազգեր դեռ շարունակում են սեփական և օտարի արյունը խմել: Ազգե՞ր, թե՞ մարդիկ:

Մարդիկ, այնուամենայնիվ»:

«Բոլոր դեպքերում ճիշտը հանդուրժողականությունն ու խաղաղությունն է»:

«Խաղաղություն կարելի է քարոզել, երբ հաղթանակել է արդարությունը: Որովհետև հակառակ դեպքում դու հենց անարդարություն ես քարոզում: Հանդուրժողականության մասին կարելի է խոսել միայն ուժեղի դիրքից, որովհետև երբ խոսողը թույլն է, դա ոչ թե հանդուրժողականություն է, այլ պարզ վախկոտություն»:

«Իսկ ի՞նչ անեն թույլերը, որոնք չեն ուզում բռնություն, որոնք պարզապես ուզում են ապրել»:

«Նրանք չեն կարող ապրել»:

«Ինչպե՞ս թե: Պիտի մեռնե՞ն»:

«Ոչ: Չեն մեռնի, սակայն կապրեն անարժանապատիվ կյանքով: Նրանց կարհամարհեն, կճնշեն, կնվաստացնեն, քանի դեռ նրանք թույլ են և համակերպվել են իրենց թույլ

լինելու հետ: Միթե դա ապրել է»:

Հետո արդեն Սյունյաց լեռներում՝ Տաթևի վանքի մոտ մի բացատում նստած՝ երիտասարդները շարունակեցին խոսել:

«Ինչո՞ւ է մեր ժողովուրդն այսքան եկեղեցի կառուցել և շարունակում է կառուցել»:

«Կարևորը եկեղեցի կառուցելու նպատակը չէ, կարևորը եկեղեցու հետագա դերակատարությունն է»:

«Իսկ ավելի լավ չէ՞՝ մեկ եկեղեցի կառուցելու փոխարեն տասը տուն կառուցել և տալ անտուն մարդկանց»:

«Եկեղեցին նույնպես տուն է, բայց ոչ թե տասը, այլ հազարավոր մարդկանց համար»:

«Բայց չէ՞ որ տունն ապրելու համար է, և տանն ապրում են»:

«Այո՛, տանն ապրում են, մինչդեռ եկեղեցին ապրեցնում է»:

«Այսինքն, եկեղեցի գնալո՞վ են մարդիկ ապրում»:

«Կարևորը սոսկ ապրելը չէ, այլ՝ ինչպե՛ս ապրելը: Երբ մեկը մի սխալ բան է անում՝ անազնիվ, անարդար մի բան ու հետո գնում է տուն, ինչպե՞ս պիտի նայի ծնողի կամ զավակի աչքերին: Իսկ Աստծո աչքերին նայել կարող է, ու նա գնում է եկեղեցի, ու եկեղեցին է նրա տունը: Երբ մեկը մտածում է ոչ միայն իր, այլև բոլորի մասին, սակայն ոչինչ չի կարող անել բոլորի համար, նա գնում է եկեղեցի ու աղոթում ու եկեղեցին բոլորի տունն է: Այո՛, հազար ոսկով կարելի է կառուցել տասը տուն՝ մեկ եկեղեցու փոխարեն, բայց դրանով կլուծվի տասը ընտանիքի սոսկ ապրելու տեղի խնդիրը, սակայն կմնա ամենակարևորը՝ ինչպես ապրելը»:

«Իսկ չի՞ լինի, որ յուրաքանչյուր մարդ ինքը որոշի՝ ինչպես ապրել: Եթե մեկը եկեղեցին ընկալում է սոսկ որպես կառույց, չի գնում այնտեղ աղոթելու, և դա չի խանգարում նրան ճիշտ ապրել»:

«Գուցե, բայց չէ՞ որ մարդը չի ապրում միայն իր համար: Պետք է մտածել մնացածների մասին: Պատկերացրու՝ երբ մեկը հիվանդ է, ու դու ոչ մի կերպ չես կարող օգնել նրան: Դու գնում ես եկեղեցի ու աղոթում նրա համար: Աղոթում ես նրա համար, ով նեղության մեջ է և ում դու չես կարող ձեռք մեկնել, ով քեզանից հեռու մի տեղ ճանապարհին է, ու դու չես կարող նրան ուղղություն ցույց տալ: Մտածիր ժողովրդի մասին. պատկերացրու, երբ պատերազմ է: Ինչ անեն ծերունիները, զինվորների մայրերն ու քույրերը: Նրանք գնում են եկեղեցի ու աղոթում: Եվ խնդիրն այն չէ, թե աղոթքը տեղ կհասնի, թե չի հասնի, Աստված քեզ կլսի, թե չի լսի, աղերսդ կկատարի, թե չի կատարի: Նրանք պարզապես պետք է աղոթեն: Իհարկե կարելի է նաև աղոթել տանը՝ սրբապատկերի առջև, կամ դրսում՝ երկնքին նայելով, կամ պարզապես՝ աչքերը փակ: Բայց մարդն ավելի մոտ է Աստծուն, երբ եկեղեցում է»:

«Հավատը պետք է սոսկ նրա համար, որ մարդիկ անչար ապրեն: Ոչ թե վախենան, որ իրենց արած չարության համար Աստված իրենց կպատժի, այլ պարզապես իմանան, որ Աստված բարի է, հետևաբար ճիշտը բարի լինելն է»:

«Աշխարհի բոլոր վատ բաների հիմքում ընկած է չարությունը: Սովի, աղքատության, պատերազմների: Մարդը պետք է գիտակցի՝ ինչու բարի լինել: Պիտի գիտակցի նաև, որ Աստված բարի է, չնայած աշխարհում կան սով, աղքատություն ու պատերազմներ: Պետք չէ վախենալ Աստծուց, պետք է մերձենալ նրան: Իսկ մարդն իրեն ավելի մոտ է զգում Աստծուն, երբ գնում է եկեղեցի: Դրա համար էլ թող եկեղեցիները շատ լինեն»:

Իսկ վերադարձի ճանապարհին նոր սերունդի խոսակցությունից Քսյուշայի մոտ տպավորվեցին հետևյալ պատառիկները:

«Անգամ այն պետությունները, որոնք մարդու իրավունքների և ազատության պահպանման իրական ջատագովներն են, մեծ հաշվով հակասում են իրենք իրենց: Չէ՞ որ մարդը միայն ԱՄՆ-ի, Կանադայի կամ Եվրամիության պետություններից մեկի քաղաքացին չէ: Մարդ է նաև Կամբոջիայի, Բոտսվանայի կամ Ղրղզստանի քաղաքացին: Միայն թե, վերջինիս իրավունքներն ու ազատությունները կավարտվեն այն պահին, երբ նա փորձի հատել մարդու իրավունքների և ազատությունների պահպանման իրական ջատագով պետություններից մեկի սահմանը: Դիցուք, մի ղրղզ, ով երբևէ չի հետաքրքրվել քաղաքականությամբ ու տեղյակ չէ, թե ինչ է կատարվում աշխարհում, որոշել է շրջել այդ աշխարհով, որն իրեն է պատկանում նույնքան, որքան, ասենք, ֆրանսիացուն: Եվ ահա նա դուրս է գալիս Ղրղզստանից, անցնում Ղազախստանը, ապա Ռուսաստանն ու Ուկրաինան և հասնում Սլովակիայի սահմանին: Եվ հենց այստեղ էլ ավարտվում են նրա մարդու իրավունքներն ու ազատությունները, որովհետև պարզվում է, որ աշխարհի այս հատվածը գոց է նրա համար: Կամ կամբոջիացին նստում է իր փոքրիկ մոտորանավակը, անցնում է Սիամական ծոցը, ապա՝ Հարավչինական ծովը, նավարկում Հնդկական և Խաղաղ օվկիանոսներով ու հասնում ԱՄՆ-ի ափերին. և այստեղ էլ ավարտվում են նրա մարդու իրավունքներն ու ազատությունները»:

«Ե՞րբ է գալու արդարության ժամանակը: Բոլորի համար: Բոլոր ազգերի և յուրաքանչյուր ազգի: Բոլոր մարդկանց և յուրաքանչյուր մարդու: Եվ ի՞նչ պիտի անեն դրա համար բոլորն ու յուրաքանչյուրը կամ, առնվազն, նրանք, ովքեր մտածում են այդ մասին: Ե՞րբ են աշխարհից վերանալու պատերազմները, բռնությունն ու դաժանությունը: Եվ ի՞նչ պետք է անեն դրա համար մարդիկ»:

«Մի՞թե հնարավոր չէ միմյանց հետ խոսել պարզ, մարդկային լեզվով, որն հասկանալի կլինի նաև աշխարհի բո-

լոր մարդկանց: Պարոնայք և տիկնայք պետությունների ղեկավարներ, բավական է, եկեք վերջապես դադարեցնենք աշխարհը կործանելուն ուղղված մեր քայլերը և զբաղվենք աշխարհը կառուցելու գործով: Պետք չէ խորամուխ լինել, թե ինչը և ովքեր են դրան խանգարում: Դա շատ պարզ է, և դրա կարիքը չկա: Կարևորը ձեր սկզբունքային համաձայնությունն է, ձեռքսեղմումը, ազնիվ խոսքը, փոխադարձ վստահությունն ու հավատը: Որովհետև դուք եք աշխարհի փաստացի ղեկավարները, դուք ունեք ձեր թիկունքում ժողովուրդ, իսկ ժողովուրդն անպայմանորեն կխրախուսի ձեզ, որովհետև ժողովրդին ինչ է պետք, եթե ոչ անհոգ կյանք, ինչը կարելի է ապահովել, եթե Երկիր մոլորակի հարստություններն օգտագործվեն ոչ թե աշխարհը քանդելու, այլ կառուցելու համար, միմյանց հետ խաղաղ, անհոգ և արդար ապրելու համար: Արեք այդ քայլը, և մարդիկ՝ Երկիր մոլորակի բնակչությունը կկանգնի ձեր թիկունքին»:

Տուն հասնելով ու վերհիշելով տեսածն ու լսածը Քսյուշան մտածում էր, որ պետք է անել հնարավորն ու անհնարինը, որ հրաշալի այս երիտասարդները կարողանան մնալ, ապրել ու ստեղծագործել իրենց երկրում ու իրենց տեսակով օրինակ ծառայեն մյուսներին:

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ 2

Քանի որ Կիրակոսն ու Պետրոսը միմյանց չէին վստահում, և երկուսն էլ ունեին դրա հիմքերը, հարկադիր պարապուրդը նրանք անցկացրին միասին: Մեկական սենյակ վերցրեցին Ծաղկաձորի շքեղ հյուրանոցներից մեկում և որոշեցին հանգստանալ: Իհարկե, այդ հանգիստը նրանցից յուրաքանչյուրը յուրովի էր պատկերացնում: Պետրոսը առաջին իսկ երեկոյան հարևանությամբ գտնվող խաղատանը հաղթեց «Ջեքփոթը», որն այդ օրը կազմում էր հինգ միլիոն դրամ, իսկ Կիրակոսը հաջորդ առավոտյան երկու ռուս զբոսաշրջիկ կանանցից նվեր ստացավ ադամանդե ճարմանդներ և ոսկյա ժամացույց՝ իբրև հիշողություն միասին անցկացրած գիշերվա մասին: Նվերները, որոնք տիկնայք գնել էին դեռ Երևանում, նախատեսված էին իրենց ամուսինների համար, սակայն այդպես էլ տեղ չհասան:

Երկրորդ օրը երեկոյան, երբ գործընկերները ռեստորանում նշում էին իրենց հաջողությունը, Կիրակոսն ասաց:

-Գուցե չարժե՞ վերադառնալ Երևան, մեզ այստեղ էլ լավ են կերակրում:

Խորհրդային մուլտիպլիկացիային անծանոթ Պետրոսը, սակայն, չհամաձայնեց գործընկերոջ հետ և մատնացույց արեց իր առջև դրված սթեյքը:

-Հակառակը, այստեղ շատ վատ են կերակրում: Ճաշացանկում գրված է հորթի միս: Արդյո՞ք սա հորթի միս է:

-Լավագույն սթեյքը պիտի լինի ոչ թե հորթի, այլ ցլիկի մսից: Ի դեպ, ցլիկը պետք է մեծացնել հատուկ մեթոդներով՝ կերակրել ընտրագույն հացահատիկով, երբեմն հրամցնել գարեջուր, անցկացնել ամենօրյա մերսման սեանսներ և պարտադիր՝ դասական երաժշտության ներքո:

-Ինչո՞ւ հենց դասական,- հետաքրքրվեց Պետրոսը:

Բայց Կիրակոսը չհասցրեց պատասխանել, որովհետև այդ պահին կողքի սեղանի մոտ իրարանցում սկսվեց: Քսան-քսանհինգ տարեկան մի քանի երիտասարդներ վիճում էին մատուցողի հետ: Նրանցից մեկը՝ ճակատն ամբողջովին մազերով ծածկված, նիհար ու չսափրված դեմքով մի լակոտ, գոռալով ասաց մատուցողին.

-Որտեղ ուզում եմ, էնտեղ էլ ծխում եմ, հարցեր կա՞ն:

-Բայց այստեղ ծխել չի կարելի,- հանգիստ բացատրեց մատուցողը:

-Քեզ համար չի կարելի, ինձ համար կարելի է, հարցեր կա՞ն,- նույն տոնով շարունակեց լակոտը:

Մեկ ուրիշ երիտասարդ՝ նույնպիսի սանրվածքով ու մռութով, ցուցադրաբար փչեց սիգարետի ծուխը մատուցողի դեմքին ու ասաց.

-Քեզ ասում են՝ մոխրամա՞ն բեր:

-Մոխրաման չունենք,- տեղի չտվեց մատուցողը:

Այստեղ միջամտեց երրորդ երիտասարդը, ով մյուսների հետ կարծես մի մորից ծնված լիներ:

-Հիմա շիշը կտամ գլխիդ,- գոռաց նա:

Մատուցողն ուզում էր ինչ-որ բան ասել, բայց երևի փոշմանեց, շրջվեց ու հեռացավ: Լակոտները, իրենցից գոհ, սկսեցին քրքջալ ու լցրեցին օղու բաժակները: Բայց նրանց ուրախությունը երկար չտևեց: Շուտով մոտեցավ սևազգեստ մի տիկին, ով ըստ ամենայնի, ռեստորանի մենեջերն էր, և ցածրաձայն ինչ-որ բան ասաց: Նրան պատասխանեց առաջին լակոտը.

-Ինձ չի հետաքրքրում՝ ում ռեստորանն է, իսկ դու գիտե՞ս՝ մենք ով ենք:

Սևազգեստ տիկինը տարուբերեց գլուխը:

-Դե որ չգիտես, գնա իմացիր,- ասաց երկրորդ լակոտը:

Հասկանալով, որ իր առաքելությունը ևս անհաջող է անցնելու, մենեջերը նույնպես հեռացավ ու կանգնեց սրահի հեռավոր անկյունում: Լակոտները նորից սկսեցին քրքջալ: Հարևան սեղաններից մեկի մոտ նստած մի ընտանիք կիսատ թողեց ընթրիքը և հեռացավ:

-Գուցե մե՞նք էլ գնանք,- մի քիչ անհանգիստ ասաց Պետրոսը,- դուրս չի գալիս այս տեղը:

-Ավելի լավ է՝ նայենք ու լսենք,- չհամաձայնեց Կիրակոսը,- քեզ հետաքրքիր չէ՞, թե ինչպիսին է նոր սերունդը:

Եվ գործընկերները շարունակեցին հետևել նոր սերունդին և լսել պատառիկներ նրանց խոսակցությունից:

-Գիտե՞ս էս օբյեկտի տիրոջը,- հարցրեց լակոտներից մեկը:

-Թքած ունեմ,- ասաց մյուսը,- որ ավտոյիս համարները տեսնի, կվախենա մոտենալ:

-Սրանք լրիվ Եվրոպա են,- մեջ ընկավ երրորդը,- ո՞նց թե՝ չի կարելի ծխել:

-Էս երկիրը երկիր չի,- եզրակացրեց չորրորդը,- ես էս երկրի…

Նա գցեց սիգարետը սեղանի տակ և ոտքով հանգցրեց այն:

Սեղաններից մեկի մոտ նստած մի տղամարդ, ով մինչ այդ լուռ ընթրում էր մի կնոջ հետ, վեր կացավ և մոտեցավ լակոտներին: Նա ոչինչ չասաց, պարզապես բռնեց լակոտներից մեկի ականջից և գլուխը մտցրեց լոլիկով աղցանի մեջ: Երկրորդ լակոտը փորձեց թպրտալ, բայց արմունկով մի հարված ստացավ ծնոտին և ընկավ տեղը: Մյուս երկուսը ոչ մի ծպտուն չհանեցին և վախից քարացան տեղում:

-Մտեք սեղանի տակ,- այնպիսի հանգիստ տոնով ասաց տղամարդը, կարծես մոտեցել էր և աղ էր խնդրում:

Լակոտները զարմացած նայեցին նրան, ապա՝ իրար:

-Մի հատ ճանաչենք իրար, հոպար,- գլուխը սալաթի միջից հանելով և թևքով մռութը սրբելով՝ ասաց առաջին լակոտը,- ես…

Բայց չհասցրեց ասել, թե ով է ինքը, տղամարդը նորից բռնեց նրա ականջից և հրեց սեղանի տակ: Մյուս երեքից երկուսը խելոք հետևեցին ընկերոջ օրինակին: Երրորդը կտրուկ ցատկեց տեղից և ուզում էր փախչել, սակայն չհասցրեց: Տղամարդը կտրեց նրա առաջը, բռնեց օձիքից և սրան էլ քարշ տվեց սեղանի տակ: Ապա դիմեց ռեստորանի մենեջերին.

-Ոստիկանություն կանչեք, թող սրանց տանեն:

Մինչ ոստիկանները կգային, անցավ մոտ տասնհինգ-քսան րոպե: Ողջ այդ ընթացքում լակոտները մնացին սեղանի տակ՝ չհամարձակվելով գլուխները դուրս հանել:

Թե ինչ եղավ հետո, ռեստորանում ներկա հյուրերը չիմացան, միայն տեսան, որ ոստիկանները բաժին տարան թե՛ լակոտներին, թե՛ նրանց սանձահարած տղամարդուն:

ԻՍԿ ԻՆՉ ԿԱ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Մեծապատիվ օլիգարխը Դուբայից ժամանել է Երևան ու անմիջապես մեկնել Մոսկվա՝ մասնակցելու մեկ այլ օլիգարխի ծննդյան տարեդարձին: Այս մասին Կիրակոսին տեղեկացրեց Շնագյալը:

Նրանք հանդիպել էին Կասկադի սրճարանում: Կողքի սեղանի մոտ նստած էին Պետրոսն ու Քսյուշան:

-Բայց չէ՞ որ տարեդարձը Դուբայում էր,- զարմացավ Կիրակոսը:

-Սա ուրիշ օլիգարխ է,- բացատրեց Շնագյալը,- ինձ էլ էին հրավիրել, բայց ես չեմ կարող գնալ:

-Այս մե՞կն ինչքան կտևի,- հետաքրքրվեց Կիրակոսը:

-Նույնը,- պատասխանեց Շնագյալը:

-Այսինքն՝ յոթ օր-յոթ գիշեր:

-Առնվազն: Իսկ ինչ գործով ես ուզում հանդիպել նրա հետ, եթե գաղտնիք չէ:

-Մեր ամերիկացին մի գործ ունի նրա հետ,- Կիրակոսը ցույց տվեց կողքի սեղանի մոտ նստած Պետրոսին,- բայց գործը շատ կարևոր է:

Շնագյալը նայեց Պետրոսի ուղղությամբ և նրա կողքին տեսնելով Քսյուշային՝ տարօրինակ մի ձայն հանեց, մոտավորապես այսպես՝ վաաա…

-Ո՞վ է այս գեղեցկուհին,- հարցրեց՝ ուշքի գալուց հետո:

-Շատ կարևոր ֆիգուր է, միջազգային մասշտաբների,- հանպատրաստից հորինեց Կիրակոսը և անմիջապես փոխեց թեման,- ի դեպ, իսկ ինչ կա քաղաքականությունից:

-Ինչ նկատի ունես,- այնպես զարմացավ պատգամավորը, կարծես երբեք ոչ մի կապ չէր ունեցել քաղաքականության հետ:

-Նկատի ունեմ, թե ինչ է լինելու այս երկրի ապագան,- բացատրեց Կիրակոսը:

-Ես ի՞նչ իմանամ, ինչ է լինելու,- հոգոց հանեց Շնագայլը,- այնպես չքաշեց բոլորիս, որ իմանանք, թե ինչ է լինելու:

-Ո՞վ, սա՞:

-Ոչ՝ նա:

-Նա՞:

-Այո, նա: Ու ձեր Մոսկվան էլ հետը:

-Մոսկվա՞ն ինչ կապ ունի:

-Ինչպե՞ս թե ինչ. առանց Մոսկվայի ոչինչ չի լինում:

-Հիմա ի՞նչ է լինելու:

-Ի՞նչ պիտի լինի: Ընկել են բոլորի հետևից: Ուզում են բոլորին նստեցնել: Չմտածես թե իմ մասին է խոսքը, ես այդ գործերում չկամ:

-Ասում են՝ պայքարում են կեղծարարության ու կաշառակերության դեմ:

-Այ մա՛րդ, ի՞նչ պայքար, այս երկրում կաշառակերությունը վերացնե՞լ կլինի, առանց կեղծիքի ընտրությո՞ւն կլինի: Հանգիստ ապրում էինք էլի մեզ համար...

-Իսկ սրանց հետ լեզու չե՞ք կարող գտնել:

-Սրանք իրենք մեզ հետ կփորձեն լեզու գտնել մի օր: Քեզ թվում է՝ սրանք վաղը չէ մյուս օրը ընտրություն չե՞ն կեղծելու, կաշառք չե՞ն վերցնելու: Ասում ես՝ ո՞վ է այդ աղջիկը:

-Ուրեմն ի՞նչ է պետք անել,- կրկին աղջկա հարցը շրջանցեց Կիրակոսը:

-Ոչինչ էլ պետք չէ անել, սպասել է պետք:

-Բայց ասում ես, որ ընկել են ձեր հետևից: Ուզում են նստեցնել:

-Կնստի նա, ով որ չի մուծվի: Իսկ ով որ կմուծվի՝ չի

նստի: Չմտածես, թե իմ մասին է խոսքը, ես այդ գործերում չկամ:

-Իսկ շատերը կան:

-Ով որ կա՝ կա: Սրանց ուզածը փողն է: Ասում են՝ տարել եք, հիմա հետ տվեք: Մեկը հինգ մանեթ է մուծվում, մեկը՝ տասը, մեկը՝ հիսուն: Չմտածես, թե իմ մասին է խոսքը:

-Իսկ ո՞ւմ են մուծվում:

-Ով որ մուծվում է, նրան հարցրու, ես այդ գործերում չկամ:

Շնագայլը որոշ ժամանակ լռեց, ինչ-որ բան մտածեց, հետո երևի հասկանալով, որ գուցե չափն անցել է, հարցրեց:

-Դու սրանց ճանաչո՞ւմ ես:

Կիրակոսն այդ հարցին սպասում էր:

-Ես ի՞նչ գործ ունեմ սրանց հետ,- ասաց նա,- ես Ռուսաստանում եմ ապրում:

-Իսկ ինչպե՞ս է ռուսների վիճակը: Ասում են, թե այնտեղ ևս նման մի բան կարող է լինել:

-Ոչ, չի կարող:

-Ինչո՞ւ չի կարող:

-Ռուս ժողովուրդը պաշտում է երկու բան՝ Նորին գերազանցություն ցարին և Նորին գերազանցություն օղուն: Աստված պահպանի ցարին, և Աստված օղի տա:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԸ ՈՐՈՇԵՑ ՄՈՐՈՒՔ ՊԱՀԵԼ

Երբ գործընկերները երկրորդ անգամ ու դարձյալ պատահաբար հայտնվեցին այն փաբում, ուր երկու ամիս առաջ ծանոթացել էին Քսյուշայի հետ, պարզվեց, որ այն փակ է՝ ինչ-որ միջոցառման համար:

Սպիտակ կեպիով հաճախորդին, ով նախորդ այցելության ժամանակ պատվիրել էր ուղիղ մեկ դյուժին շամպայն, այստեղ իհարկե հիշեցին, բայց միևնույն է, ասացին, որ երեկույթը հրավիրատոմսերով է:

-Դուք հենց նոր նեղացրիք մի հաճախորդի, ում առջև կրնկի վրա բացվում են Փարիզի, Մոնտե Կարլոյի և Սեն-Տրոպեի լավագույն ակումբների դռները,- չափազանց լուրջ տեսքով ասաց Կիրակոսը,- ես ստիպված եմ դիմել Միավորված ազգերի կազմակերպության ժամանցի գծով հանձնակատարին:

Սակայն դա էլ չօգնեց, մատուցողուհին կանգնած էր մեղավոր, կարմրած դեմքով և անընդհատ կրկնում էր, որ ինքը ոչինչ անել չի կարող: Նախորդ անգամ Կիրակոսը նրան թողել էր այնքան թեյավճար, որքան թողնում են մեկ օրում բոլոր հաճախորդները միասին:

Գործընկերներն արդեն պատրաստվում էին դուրս գալ, երբ մոտեցավ մի երիտասարդ ու հրամայական տոնով դիմեց մատուցողուհուն:

-Սպասեք, այս մարդիկ մերոնքական են:

Կիրակոսը չհասկացավ, թե ինչու և ում համար են իրենք «մերոնքական», և զարմացած նայեց երիտասարդին:

-Այս մարդիկ քայլել են մեզ հետ,- շարունակեց վերջինս,- դուք պարտավոր էիք իմանալ:

Խեղճ մատուցողուհին էլ ավելի կարմրեց և հիմա արդեն

չգիտեր, թե ինչ անել:

-Ես, ես չգիտեի...- կմկմաց նա,- ես հիմա սեղան կավելացնեմ:

-Պետք չէ սեղան, նրանք կնստեն իմ կողքին,- երիտասարդը թևը դրեց Կիրակոսի ուսին ու հարցրեց,- Դուք ինձ չհիշեցիք երևի:

-Ոչ,- տարակուսանքով ասաց Կիրակոսը, հետո մի պահ

մտածեց ու ավելացրեց,- բայց դա ինձ չի խանգարում ընդունել Ձեր հրավերը:

-Սրանից մի երկու ամիս առաջ, Դիլիջանի ճանապարհին, դուք կանգնեցիք մեզ մոտ և շոկոլադ հյուրասիրեցիք,- հիշեցրեց երիտասարդը:

-Դե իհարկե,- մտաբերեց Կիրակոսը,- դուք այն քաջարի երիտասարդներից եք...

-Այո,- առանց դույզն իսկ համեստության համաձայնեց քաջարի երիտասարդը,- հիշո՞ւմ եք, Դուք ասացիք՝ շարունակեք ձեր պայքարը, և վստահ եմ, որ մի օր կհաղթեք: Ահա եկավ այդ օրը, և մենք հաղթեցինք:

-Եվ հիմա նշում եք հաղթանակը և շատ լավ եք անում,- ասաց Կիրակոսը՝ նստելով երիտասարդի կողքին, ապա դիմեց մատուցողուհուն,- մեզ շամպայն բերեք:

-Ոչ, մեր հաղթանակը մենք վաղուց և բազմիցս նշել ենք,- բացատրեց երիտասարդը,- հիմա ուրիշ բան ենք նշում: Վարչապետն ինձ պաշտոն է առաջարկել:

-Ահա թե ի՞նչ,- բացականչեց Կիրակոսը,- և ի՞նչ պաշտոն:

Բայց երիտասարդը չհասցրեց պատասխանել, որովհետև այդ պահին սրահ մտան ինչ-որ արտասահմանցիներ, և նա մոտեցավ նրանց դիմավորելու:

-Գուցե գնա՞նք այստեղից, - Կիրակոսի ականջին շշնջաց Պետրոսը:

-Ցնդե՞լ ես,- ի պատասխան շշնջաց Կիրակոսը,- այստեղ հավաքվել է երկրի ապագա կառավարությունը:

-Այս չսափրված երիտասարդնե՞րն են լինելու կառավարությունում:

-Միայն նրանք: Ասեմ ավելին, ովքեր սափրված են, տեղ չեն ունենալու այնտեղ: Բացառությամբ, թերևս, կանանց:

Պաշտոն ստացած երիտասարդը, ում, ճիշտն ասած,

Կիրակոսն այդպես էլ չհիշեց, ուղեկցեց իր արտասահմանցի հյուրերին մեկ այլ սեղանի մոտ և նստեց նրանց կողքին: Քիչ անց մատուցողուհին բերեց Կիրակոսի պատվիրած շամպայնը և մեղավոր տոնով ասաց:

-Կներեք, ես չգիտեի, որ Դուք էլ եք քայլել: Ախր դուք մորուքով չեք:

-Ահա և իմ խոսքերի հաստատումը,- ասաց Կիրակոսը Պետրոսին, ապա դիմեց մատուցողուհուն,- պետք է ճանաչել հեղափոխության մասնակիցներին:

Հետո նա բացեց շամպայնը և հյուրասիրեց սեղանակիցներին: Նրանցից մեկը՝ ժպտերես մի օրիորդ, հարցրեց.

-Դուք երևի ֆինանսական աջակցություն ցուցաբերողներից եք, ես Ձեզ չեմ տեսել քայլարշավի ժամանակ:

-Դա ինչ կարևոր է,- համեստորեն ասաց Կիրակոսը,- կարևորն այն է, որ մենք հասանք մեր նպատակին: Ի դեպ, ովքեր են այս արտասահմանցիները:

-Նրանք Ամերիկայի Միացյալ Նահանգների Պետական դեպարտամենտից են:

-Հիմա ես հասկանում եմ, թե ինչու է այս երեկույթը փակ,- կրկին Պետրոսի ականջին շշնջաց Կիրակոսը ու ավելացրեց,- դու ճիշտ էիր, ավելի լավ է՝ գնանք: Եթե այս աղջիկը մի քանի հարց էլ տա, կարող ենք բռնվել:

Իսկ երբ դուրս էին եկել փաբից, նա վճռականորեն ասաց.

-Վաղվանից մորուք եմ պահում:

Օլիգարխը, ում այդքան անհամբեր սպասում էին գործընկերները, և ով նախ մեկնել էր Դուբայ, հետո՝ Դուբայից Մոսկվա, հիմա էլ Մոսկվայից մեկնել էր անհայտ ուղղությամբ:

Կիրակոսն արդեն անհանգիստ էր: Եթե նա հաստատ իմանար, որ Լենինի կիսանդրին օլիգարխի մոտ է, այդքան չէր մտահոգվի, որովհետև արդեն գիտեր, թե ինչ է անելու այդ դեպքում:

Իսկ ծրագիրն հետևյալն էր. Շնագայլը ծանոթացնում էր Կիրակոսին օլիգարխի հետ, և Կիրակոսը նրան հրավիրում էր որսի: Հարգարժան օլիգարխը որսորդության մեծ սիրահար էր, իսկ Կիրակոսը մի ծանոթ ուներ Բարնաուլում, ով Ալթայի երկրամասի և ամբողջ Ռուսաստանի ամենահայտնի որսապետերից մեկն էր: Նրա անունը Պետյա էր, կնոջ անունը՝ Դուսյա: Վերջինս մի քանի անգամ հյուրընկալել էր Կիրակոսին իր տանը, երբ ամուսինը որսի էր: Մի օր որսից անժամանակ ու անսպասելի վերադառնալիս, Պետյան քիչ էր մնացել՝ բռնացներ Դուսյային Կիրակոսի հետ, բայց չէր բռնացրել: Փոխարենը որսապետն ու Կիրակոսը խմել էին ողջ գիշեր ու այնչափ մտերմացել, ու Պետյան խոստացել էր ցանկացած ժամանակ կազմակերպել անսահմանափակ քանակությամբ վարազի և մարալի որս:

Որսի նման առաջարկից օլիգարխը հազիվ թե հրաժարվեր, և զուգահեռաբար, այնպես իմիջիայլոց, Կիրակոսը նրանից կխնդրեր Լենինի քանդակը, և օլիգարխը այստեղ ևս, հազիվ թե մերժեր:

Մի խոսքով այսպիսին էր պլանը, սակայն օլիգարխը համառորեն չեր վերադառնում:

Եվ Կիրակոսը որոշեց մի քիչ էլ սպասել:

Այլ էր Պետրոսի պարագան: Նա ևս ուներ իր ծրագիրը, որը, սակայն, թաքուն էր պահում Կիրակոսից: Պետրոսը խոսել էր տատի հետ և պարզել, որ օլիգարխի հայրը և իր պապը ժամանակին մտերիմներ են եղել: Հիմա նա որոշել էր ինչ-որ կերպ հանդիպել օլիգարխին, ասել նրան քանդակի հետ կապված ողջ ճշմարտությունը և առաջարկել կիսել ոսկին: Նա հույս ուներ, որ օլիգարխն այնքան մեծահոգի կգտնվի, որ ամբողջը կտա իրեն՝ նկատի ունենալով նախնիների մտերմությունը ու նաև այն, որ երկու միլիոնը նրա համար հազիվ թե մեծ փող լինի: Իսկ եթե չհամաձայնի ամբողջը տալ՝ կիսվելն էլ ձեռնտու է, չէ՞ որ նա այսպես թե այնպես պետք է կեսը տա Կիրակոսին և Քսյուշային: Սա էլ Պետրոսի ծրագիրն էր, բայց դարձյալ պետք էր սպասել օլիգարխի վերադարձին:

Իսկ Քսյուշա՞ն: Իսկ Քսյուշան, պարզվեց, ամենից մոտ էր հաջողությանը:

Մի օր Երևանի էլիտար ռեստորաններից մեկում ընթրելիս ընկերուհին՝ Լիլիթը, նրան ծանոթացրեց մի տղայի հետ, ով պարզվեց՝ օլիգարխի որդին է: Ամեն ինչ այնքան անսպասելի եղավ, որ Քսյուշան նույնիսկ մտածեց, թե Լիլիթը տեղյակ է իրենց գործին, և այս ամենը կազմակերպված է:

Օլիգարխի տղան, ով հազիվ քսան տարեկան լիներ, վստահաբար այդ քսան տարիների ընթացքում նման գեղեցկուհի չէր տեսել: Համենայնդեպս, նրա հայացքն այդ էր վկայում: Մեկ րոպեում նա չորս առաջարկ արեց Քսյուշային:

-Ես մի ժամից թռչում եմ Մալդիվներ, արի՛ քեզ տանեմ հետս:

Սա առաջինն էր:

-Երեկոյան Սևանի իմ «դաչայում» «փարթի» եմ կազմակերպել, դու հրավիրված ես:

Սա երկրորդն էր:

-Վաղը իմ ռեստորանում երգում է Աբրահամ Ռուսսոն, արի՛ քեզ ծանոթացնեմ նրա հետ:

Սա երրորդն էր:

-Նոր «Լամբորգինի» եմ առել, արի՛ քեզ ման տամ քաղաքով:

Սա էլ՝ չորրորդը:

Չորս առաջարկներին էլ Քսյուշան պատասխանեց սառը ժպիտով, մտքում ասելով՝ ես առնվազն հինգ անգամ եղել եմ Մալդիվներում, մահու չափ հոգնել եմ «փարթիներից», ատում եմ Աբրահամ Ռուսսոյին և հենց նոր եմ ազատվել իմ «Մազերատիից»: Եվ դարձյալ մտքում ավելացրեց՝ բայց դու կարող ես տալ ինձ Լենինի գլուխը:

Իհարկե, Քսյուշան կարող էր դա անել: Կարող էր համաձայնել օլիգարխի որդու առաջարկներից մեկին, մի րոպեում շահել նրա սիրտը և խնդրել Լենինի կիսանդրին: Անգամ կարող էր վերցնել կիսանդրին ու ոչինչ չասել Կիրակոսին ու Պետրոսին:

Բայց Քսյուշան չարեց դա:

ԻՍԿ ՄԵՆՔ ԿԱՐՈ՞Ղ ԵՆՔ ԱՌԱՆՁԻՆ ԽՈՍԵԼ

Երկու հազար տասնութ թվականի հուլիսի կեսերին Երևանում այնքան շոգ էր, որ չէին դիմանում անգամ շենքերի ու մեքենաների օդորակիչները: Արեգակը որոշել էր մի լավ ջերմացնել հեղափոխություն արած ժողովրդին, բայց կարծես մի բան այնպես չէր ստացվել, և տաքանալու փոխարեն մարդիկ վառվում էին: Այս ամենի հետևում, իհարկե կանգնած էին նախկին իշխանությունները:

Ցերեկվա ժամերին փողոցները գրեթե զուրկ էին մեքենաներից, մայթերը՝ անցորդներից, օդը՝ թթվածնից: Իսկ երեկոյան սկսվում էր տոթը, և մարդիկ չէին հասկանում, թե ուր են կորել Երևանին հատուկ երեկոյան քամիները: Իհարկե, նախկին իշխանությունները դա էլ էին կերել:

-Ինչի՞դ է պետք չորս հատ օդափոխիչը,- Քսյուշային հարցրեց Կիրակոսը,- այն էլ այսքան մեծ: Դրանք իմ մեքենայի բեռնախցիկում չեն տեղավորվի:

Չորս հատ օդափոխիչը Քսյուշան գնել էր «Մարդկանց երկիրը» ստուդիայի համար: Երիտասարդներն այդ օրը ներկայացում ունեին Երևանի ծայրամասերից մեկում գտնվող նույն լքված շենքում, որը նախկինում գործարան էր եղել կամ նման մի բան, ուր հարմարեցրել էին իրենց թատերասրահը: Այն զովացնել էր պետք: Տարածքը վերանորոգված չէր, հատակն ու պատերը բետոնից էին, պատուհաններին ապակիների փոխարեն ցելոֆաններ էին, իսկ լուսավորությունն ապահովում էին առաստաղից կախված հզոր լուսարձակները՝ ավելի գրգռելով անտանելի տոթը:

Նախորդ ներկայացման ժամանակ տեսնելով, թե ինչպես է քրտնում հավատարիմ հանդիսատեսը՝ Քսյուշան որոշել էր օդափոխիչներ գնել և ահա գնել էր դրանք: Թվով չորս օդափոխիչ, որոնք բավական թանկ արժեին և իսկապես

այնքան մեծ էին, որ կարող էին չտեղավորվել բեռնախցում:

-Կարո՞ղ ես ծալել հետևի նստատեղերը,- հարցրեց Քսյուշան:

-Ի՞նչ,- բացականչեց Կիրակոսը,- սա «Range Rover» է, ոչ թե ֆուրգոն:

-Այդ դեպքում երկուսը կդնենք սրահում,- տեղի չտվեց Քսյուշան,- հուսով եմ «Range Rover»-դ չի վնասվի:

-Հանուն քեզ ես պատրաստ եմ վնասել ոչ միայն մեքենաս, այլև ինձ,- խրոխտ հայտարարեց Կիրակոսը՝ զգուշորեն տեղադրելով հսկա տուփերը թանկարժեք կաշվից նստատեղերին,- բայց դու չասացիր՝ ինչի համար են այս օդափոխիչները, և ուր ենք տանելու դրանք:

-Երկար պատմություն է:

-Իսկ դու երեկոյան կընթրե՞ս ինձ հետ:

-Ոչ, բայց փոխարենը երեկոյան քեզ կհրավիրեմ ներկայացում դիտելու:

-Ի՞նչ ներկայացում:

-«Սուտլիկ որսկանը»:

Ներկայացումը, որը պիտի բեմադրեր այդ երեկո «Մարդկանց երկիրը» ստուդիան, իսկապես կոչվում էր «Սուտլիկ որսկանը:» Սակայն մեծ լոռեցու հեքիաթի հետ այն կապ ուներ միայն մասամբ: Այն պատմում էր, ոչ թե ինչպես մի օր հինգ–վեց հոգով թուր ու թվանքով որսի գնացին Հադին ու մյուսները, այլ ինչպես առանց թուր ու թվանքի քայլելու գնացին Նիկոլն ու մյուսները: Իսկ ավարտվում էր գրեթե այնպես, ինչպես Թումանյանի հեքիաթը. *«Սոված մարդի՛կ, վրա եկան, կերա՛ն, կերա՛ն. ոչ աչքերը բան տեսավ, ոչ բերանները բան մտավ»…*

Միայն թե ներկայացումը այդ օրը չպիտի կայանար: Ոչ էլ օդափոխիչները պիտի ծառայեին իրենց նպատակին:

Երբ Կիրակոսն ու Քսյուշան ներս մտան գործարանի դարպասներից, այնտեղ կանգնած էր ճիշտ իրենց «Range Rover»-ից, միայն՝ սևը: Մեքենային հենված էր մի ցմփոր մարդ և խոսում էր ուրիշ երկուսի հետ: Նրա կարմիր, անճոռնի այտերը իջնում էին մինչև պարանոցը: Ստուդիայի երիտասարդները հավաքված էին քիչ այն կողմ՝ ծառի ստվերում և վիճում էին ոստիկանների հետ:

-Ի՞նչ է այստեղ կատարվում,- Քսյուշային դիմեց Կիրակոսը:

-Ինքս էլ դեռ չգիտեմ,- ասաց Քսյուշան և իջավ մեքենայից:

Երկրորդ «Range Rover»-ը տեսնելով՝ ոստիկանները մի պահ շփոթվեցին՝ չհասկանալով, թե ում համար է եկել այն: Շփոթվեց նաև ցմփորը և ինչ-որ բան ասաց կողքին կանգնած մարդկանց:

Երիտասարդները ոգևորված դիմավորեցին Քսյուշային:

-Այսօրվա ներկայացումը չի կայանա,- ժպտալով ասաց նրանցից մեկը,- ինչպես նաև մյուս բոլոր ներկայացումները:

-Ի՞նչ է պատահել,- հարցրեց Քսյուշան:

-Մեզանից պահանջում են, որ մենք ազատենք տարածքը:

-Ո՞վ է պահանջում:

-Ահա այն մարդը,- երիտասարդը ցույց տվեց ցմփորին:

-Ո՞վ է նա:

Երիտասարդը չհասցրեց պատասխանել, որովհետև միջամտեց ոստիկաններից մեկը՝ մայորի ուսադիրներով բարձրահասակ, լղար մի տիպ:

-Նա այստեղի տեր-տիրականն է: Իսկ կասե՞ք՝ դուք ով եք:

-Տեր-տիրակա՞մնը,- ծիծաղեց Քսյուշան,- նա թագավո՞ր է, թե՞ կայսր:

-Կարելի է և այդպես ասել,- մի պահ մտածելուց հետո

կմկմաց ոստիկանը:

-Իսկ դու՞ք ով եք,- շարունակեց Քսյուշան,- նրա համհարզնե՞ը:

Այստեղ ոստիկանը, ով դեռևս չէր հասկանում, թե ում հետ գործ ունի, խուսափեց պատասխանից և հուսահատ նայեց ցմփորի կողմը: Սակայն վերջինս պակաս անորոշ վիճակում չէր, որովհետև նույնպես պատկերացում չուներ, թե ով է այս համարձակ գեղեցկուհին: Այնուամենայնիվ, հաղթահարելով անորոշությունը՝ նա առաջ եկավ:

-Մենք իրար ճանաչո՞ւմ ենք,- հարցրեց նա Քսյուշային:

-Տարօրինակ հարց է,- ծիծաղեց Քսյուշան,- եթե մենք իրար ճանաչեինք, Դուք նման հարց չէիք տա:

Ցմփորը, ըստ երևույթին չհասկացավ, թե ինչ նկատի ունի աղջիկը և կրկին անորոշության մեջ ընկավ:

-Ես ուզում եմ ասել,- կմկմաց նա,- ուզում եմ ասել… Դուք երևի նոր իշխանությունների՞ց եք: Ես շատ են հարգում Նիկոլին: Ես որոշ գումարներ եմ փոխանցել Ռուսաստանից…

-Շատ լավ, բայց…- փորձեց նրան ընդհատել Քսյուշան:

-Իսկ հեղափոխությունից հետո ես վերադարձա և ուզում եմ աշխատեցնել այս գործարանը: Վերադարձա որովհետև…

-Մի րոպե…

Բայց ցմփորը չէր լսում.

-Ես հավատում եմ նոր իշխանություններին: Առաջ ոչ ոքի չէին թողնում աշխատել, իսկ հիմա ամեն ինչ փոխվել է: Ես մի երկու անգամ եկա Հայաստան, ուզում էի վաճառել սա, բայց գնորդ չկար, որովհետև ոչ ոքի չէին թողնում աշխատել: Իսկ հիմա իրավիճակ է փոխվել:

-Ես չհասկացա,- Քսյուշային վերջապես հաջողվեց ընդհատել նրան,- հիմա Դուք ուզում եք վաճառե՞լ այս գործարանը, թե՞ աշխատեցնել այն:

Այստեղ ցմփորը վերջնականապես շփոթվեց, թաշկինակով սրբեց քրտնած կարմիր ճակատը և կմկմաց.

-Դե, ինչպես ասեմ… Եթե թողնեն…

-Լավ, դա Ձեր գործն է,- նրան հանգստացրեց Քսյուշան,- հիմա Դուք փաստորեն ուզում եք, որ այս երիտասարդները լքեն տարածքը:

-Բայց ո՞վ էր նրանց խնդրել այստեղ շոուներ սարքել: Սա իմ սեփականությունն է: Ի դեպ, նրանք ծաղրում էին պարոն վարչապետին: Ես իմ աչքով տեսա:

Այստեղ միջամտեց երիտասարդներից մեկը:

-Մեկ տարի առաջ, երբ մենք մտածեցինք այստեղ տեղակայել մեր ստուդիան, մենք խոսեցինք տարածքի լիազորի հետ և ստացանք նրա համաձայնությունը: Մենք մաքրեցինք այս տարածքը աղբից, վերականգնեցինք էլեկտրաէներգիայի մատակարարումը և մեկ տարի ամեն ամիս աշխատավարձ տվեցինք պահակին: Բացի այդ, մենք էլի բավականաչափ ծախսեր արեցինք՝ թատերասրահը կահավորելու համար: Բայց այս ամենով հանդերձ մենք հասկանում ենք, որ սա մեր տարածքը չէ, և մենք չունենք պայմանագիր: Եվ մենք պատրաստ ենք հեռանալ, միայն խնդրում ենք մեզ ժամանակ տալ, գոնե առաջիկա երկու ներկայացումների համար, որովհետև տոմսերն արդեն վաճառել ենք և այդքան արագ ուրիշ տեղ տեղափոխվել չենք կարող:

-Եվ ի՞նչ է ասում այս պարոնը,- երիտասարդին նայելով՝ հարցրեց Քսյուշան:

-Նա պահանջում է ազատել տարածքը հենց հիմա:

Քսյուշան դիմեց ցմփորին.

-Մի՞թե չի կարելի երկու շաբաթ ժամանակ տալ այս երիտասարդներին:

Ցմփորը մի պահ մտածեց և ասաց.

-Դե, եթե միջամտում են նոր իշխանությունները, ես իհարկե դեմ չեմ... Միայն թե կրկնում եմ՝ նրանք ծաղրում էին պարոն վարչապետին: Ես դա իմ աչքով տեսա: Ափսոս, չնկարեցի:

-Մենք կապ չունենք նոր իշխանությունների հետ,- արհամարհական ժպիտով նետեց Քսյուշան,- և այն, ինչ անում են այս երիտասարդները, ոչ թե ծաղր է, այլ հումոր:

-Հիմա մենք ի՞նչ անենք,- չդիմացավ լղար ոստիկանը և դիմեց ցմփորին,- ինչքա՞ն կարող ենք կանգնել այս շոգին:

-Ի՞նչ պիտի անեք, ձերբակալե՛ք սրանց,- չգիտես ինչու՝ ոգևորվեց ցմփորը:

Կիրակոսը, ով ողջ խոսակցությանը հետևում էր մեքենայի միջից, լսելով վերջին նախադասությունը, իջավ և մոտեցավ տարածքի տիրոջը:

-Բարև Ձեզ,- խիստ քաղաքավարի տոնով ասաց նա,- մի քանի հարց կարո՞ղ եմ տալ:

Ցմփորը կրկին շփոթվեց: Նայեց Կիրակոսի պատկառելի տեսքին ու նորից սկսեց կմկմալ.

-Դուք... Մենք... Մենք իրար ճանաչո՞ւմ ենք:

-Դա կարևոր չէ,- Կիրակոսն ավելի մոտեցավ նրան,- ուզում եք հարցերը տամ բոլորի ներկայությա՞մբ, թե՞ առանձին:

-Դուք... Ես,- շարունակեց կմկմալ ցմփորը,- ի՞նչ հարցեր:

-Ուրեմն՝ բոլորի ներկայությամբ, շատ լավ,- հանգիստ շարունակեց Կիրակոսը,- իսկ հարցերը հետևյալն են. ե՞րբ եք Դուք սեփականաշնորհել այս գործարանը, ինչպե՞ս եք սեփականաշնորհել, ի՞նչ եք արել այստեղի հաստոցներն ու մնացած գույքը:

-Ես...- ցմփորն ինչ-որ բան էր ուզում ասել, բայց Կիրակոսը թույլ չտվեց:

-Դուք չունեք պատասխան: Բայց ես կպատասխանեմ

Ձեր փոխարեն: Եվ ուրեմն. սեփականաշնորհել եք հեռավոր իննսունականների սկզբին, դա արել եք ապօրինի: Գործարանի հաստոցները և ողջ գույքը վաճառել եք, հետո գնացել եք Ռուսաստան և վաճառքից գոյացած գումարով բիզնես դրել: Իսկ հիմա վերադարձել եք և ուզում եք ոչ թե վերագործարկել գործարանը, այլ վաճառել այն:

Այստեղ նա հանկարծակի դադար տվեց ու մի պահ սպասեց:

Ոստիկանները և մնացած բոլորը զարմացած նայում էին Կիրակոսին: Բացի Քսյուշայից: Վերջինս քթի տակ ծիծաղում էր:

Փոքր դադարից հետո Կիրակոսն արդեն դիմեց ոստիկաններին.

-Նոր իշխանությունները տեղյա՞կ են այս մասին:

Մայորը քորեց գլուխը:

-Դա մեր գործը չէ: Մենք ահազանգ ենք ստացել, որ ապօրինի զավթել են տարածքը, և եկել ենք պարզաբանելու: Իսկ թե ինչ է եղել իննսունականներին, մեզ չի վերաբերվում:

-Մենք ոչինչ չենք զավթել,- հուզված ասաց երիտասարդներից մեկը,- մենք ընդամենը խնդրում ենք, որ մեզ երկու շաբաթ ժամանակ տան, մի՞թե դա այդքան դժվար է…

Կիրակոսը վերևից նայեց ցմփորին.

-Դե, ի՞նչ կասեք: Գուցե խնդրենք, որ ոստիկանները հեռանա՞ն: Վստահ եմ, որ նրանք ավելի կարևոր գործեր ունեն:

-Այո, ես բողոք չունեմ,- հայտարարեց տարածքի սեփականատերը, ապա նայեց Կիրակոսին ու ցածրաձայն ավելացրեց,- իսկ մենք կարո՞ղ ենք առանձին խոսել:

Օդափոխիչներն, այնուամենայնիվ, իրենց նպատակին չծառայեցին: Ճիշտ է, տարածքի ցմփոր սեփականատերն այլևս չէր պնդում, որ ստուդիան շուտափույթ կերպով լքի տարածքը, բայց արդեն երիտասարդները չէին ուզում այստեղ երկար մնալ: Նրանք որոշեցին այդ օրը տալ վերջին ներկայացումն ու տեղափոխվել այլ տարածք, որն իհարկե պետք էր դեռ գտնել:

Իսկ այն պահին, երբ լքված գործարանում ընթանում էր «Սուտլիկ որսկանը» ներկայացումը, Կիրակոսը մի ռեստորանում ընթրում էր ցմփորի հետ՝ վերջինիս հրավերով և հանգամանալից բացատրում նրան, թե որքան անհարմարություններ նա պատճառեց այսօր նոր սերունդին: Արդյունքում ցմփորը ստիպված էր փոխհատուցել օդորակիչների համար ծախսված գումարը:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՎ ՈՐՔԱՆ Է ՄՈՒԾՎԵԼ

Օլիգարխը, ում մոտ, ըստ վերջին տվյալների, հանգրվան էր գտել Վլադիմիր Իլյիչի կիսանդրին, Հայաստան վերադարձավ օգոստոսի սկզբին:

Նրա երկար բացակայությունը շատերը կապում էին երկրում տեղի ունեցող փոփոխությունների հետ: Վերջին շրջանում անգամ լուրեր էին շրջանառվում, որ օլիգարխին ուզեցել են ձերբակալել, և դա է եղել պատճառը, որ նա հեռացել է Հայաստանից: Ասում էին, որ նա «նախկինների սև ցուցակում» եղել է առաջին հորիզոնականներում:

Այդ ցուցակին Կիրակոսին հաջողվել էր ծանոթանալ: Այն բանավոր կեպով նրան էր ներկայացրել Շնագայլը, ինչից հետո Կիրակոսը մի երկար սուլոց էր արձակել: Ցուցակում այն մարդկանց անուններն էին, ովքեր, ինչպես կասեր Կիրակոսին ծանոթ նիհար մայորը, դեռ երկու ամիս առաջ իրենց տեր ու տիրական էին զգում երկրում:

-Իսկ ի՞նչ է սպասվում այդ մարդկանց,- հարցրել էր Կիրակոսը:

-Ի՞նչ պիտի սպասվի,- պատասխանել էր Շնագայլը,- կմուծեն ու իրենց համար ման կգան՝ մինչև սրանց վերջը գա:

-Ո՞ւմ վերջը գա:

-Սրանց:

-Իսկ ո՞ւմ մուծեն:

-Սրանց:

Հետո Շնագայլը բացատրել էր, թե ինչ է տեղի ունենում: Ըստ նրա՝ ցուցակում առկա մի քանի տասնյակ մարդկանցով զբաղվում էր «կգբ»-ն՝ «առաջինի» հրահանգով: Յուրաքանչյուրին ցուցաբերվում էր անհատական մոտեցում: Նախօրոք արվել են հաշվարկներ՝ պարզելու համար, թե տարի-

ների ընթացքում որքան են այդ մարդիկ «տարել»: Եվ այդ հաշվարկներին համապատասխան՝ ցուցակի մարդկանց վրա «դրվել են թվեր»: Որոշներից պահանջել են «տասը մանեթ», որոշներից՝ «երեսուն մանեթ» կան նաև այնպիսիները, ում «վրա դրված» գումարը «հարյուր մանեթից» ավելի է: Ցուցակում առկա մարդկանց մեծամասնությունը սկզբում լուրջ չի վերաբերվել այս ամենին և հրաժարվել է «մուծվել»: Սակայն հետևել են «կգբ»-ի կոնկրետ գործողություններ, և մարդիկ հասկացել են, որ ավելի լավ է՝ վճարեն իրենց ազատության գինը՝ իհարկե սակարկելուց հետո: Արդյունքում, նրանք, ովքեր պիտի վճարեին «քսան մանեթ», վճարել են «տասը մանեթ», ովքեր պիտի վճարեին «հիսուն մանեթ», վճարել են «երեսուն մանեթ», ովքեր պիտի վճարեին «երկու հարյուր մանեթ», վճարել են «հարյուր» մանեթ: Եվ նրանց հանգիստ են թողել:

-Իսկ որքա՞ն է «մուծվել» մեր օլիգարխը,- հետաքրքրվել էր Կիրակոսը:

-«Հիսուն մանեթ»,- հավաստիացրել էր Շնագայլը:

-Իսկ ո՞ւր են գնում հավաքված գումարները,- շարունակել էր հետաքրքրվել Կիրակոսը:

-Ո՞ւր պիտի գնան,- քմծիծաղ էր տվել Շնագայլը:

Այն, որ նախկին համակարգի ներկայացուցիչ պատգամավորն այդքան համարձակ էր խոսում, սկզբում Կիրակոսին մի քիչ զարմացրել էր: Բայց հետո նա հասկացել էր, թե պատճառն ինչ է. Շնագայլի համար ամենակարևորն իհարկե այն էր, որ ինքը «սև ցուցակում» չկար: Եվ նա համոզված էր, որ չէր էլ կարող լինել. համենայնդեպս, այս փուլում: Նրա տրամաչափը բավական փոքր էր, և «տարածն» այնքան չէր, որ հայտնվեր նոր իշխանությունների տեսադաշտում: Իսկ եթե փուլերը շարունակվեին, ապա դարձյալ հազիվ թե հերթը հասներ իրեն, որովհետև իրենից առաջ դեռ այնքա՞ն խո-

շոր ու միջին ձկներ կային, որ մինչև իր պես մանրերին հասնելը, նոր իշխանությունների ուռկանը հավանաբար կմաշվեր ու կքրքրվեր:

-Փաստորեն, հարգարժան օլիգարխը հիմա ոչ մի խնդիր չունի,- հետաքրքրվել էր Կիրակոսը:

-Ոչ մի խնդիր,- հաստատել էր Շնագայլը,- նա իր հարցերն արդեն լուծել է:

-Ես ուզում եմ հանդիպել նրա հետ,- ասել էր Կիրակոսը:

-Դա կարելի է կազմակերպել: Հուսով եմ, դու չես մոռացել իմ խնդրանքը,- հարցրել էր Շնագայլը:

-Իհարկե չեմ մոռացել,- պատասխանել էր Կիրակոսը:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ ԼՈՒՅՍՆ Է

Այն, ինչ նկատի ուներ նախկին համակարգի կարկառուն ներկայացուցիչ պատգամավորը, երբ ակնարկում էր, որ «մուծված» գումարները գնում էին ոչ թե պետական բյուջե, այլ ոմանց գրպանները, հավանաբար իրականությանը չէր համապատասխանում: Հնարավոր էր, որ այդ գումարները, այսինքն տարիների ընթացքում ժողովրդից ու պետությունից թալանվածը, հետո մասամբ վերադարձվածը նոր իշխանությունները չէին գրպանում: Սակայն եթե անգամ դա այդպես էր, ո՞ւր մնաց նոր իշխանությունների խոստումը, որ այսուհետև ժողովրդի թիկունքում գործարքներ չեն լինելու, որ ամեն ինչ արվելու է բաց ու թափանցիկ: Ի՞նչ երաշխիք, որ գործընթացը մի օր չէր դադարի ազնիվ լինելուց, որ իշխանավորները մինչև վերջ կդիմանային գայթակղությանը: Բացի այդ, մի՞թե ժողովուրդը տվել էր նոր իշխանություններին իր համաձայնությունը՝ իրեն թալանողների հետ գործարքի գնալ: Եվ վերջապես, ո՞ւր մնացին օրենքն ու օրինականությունը, այսպե՞ս է կառուցվում իրավական պետությունը:

Իշխանություններն իհարկե կարող էին ասել, որ ոչ մի գործարք էլ չկա, կամ ինչ-որ կերպ արդարացնեին թափանցիկության բացակայությունը: Միայն թե այդպես չի լինում:

Եթե նախկինում ամեն ինչ չափազանց մութ էր, հիմա նույնպես լույս չկար: Մինչդեռ հեղափոխություն արած ժողովրդի համար ամենակարևորը հենց այդ լույսն է: Երբ իշխանություններն անջատում են այն ու սկսում գործել տեսանելիությունից դուրս, ու ժողովուրդը ոչինչ չի տեսնում, երբ իշխանությունները թաքնվում են իրենց կաբինետներում ու գործում ծածուկ, ու ժողովուրդը ոչինչ չի լսում, դա դեռ չի նշանակում, որ ժողովուրդը ոչինչ չգիտի: Ամենևին, ժողո-

վուրդը, եթե անգամ չի տեսնում ու չի լսում, թե ինչ է կատարվում իր թիկունքում, ժողովուրդը միշտ ունի այն՝ չգիտես որերորդ զգայարանը, որը կոչվում է կանխազգացում: Ու երբեք չի կարելի այդ զգայարանն անտեսել:

Բայց կային նաև տեսանելի ու լսելի բաներ: Ամեն ինչ չէ, որ իշխանությունները կարող են թաքցնել:

Ժողովրդի ուսերին իշխանության եկած մարդիկ, հատկապես՝ ժողովրդի ուսերին իշխանության եկած մարդիկ, իրավունք չունեն ավելի լավ ապրել, քան ապրում է հասարակ ժողովուրդը, միջին վիճակագրական մարդը: Ոչ մի անվտանգության նկատառում, ոչ մի արարողակարգ չի կարող արդարացնել ժողովրդի ծոցից իշխանության եկած մարդկանց՝ ժողովրդից կտրվելը: Յոթ պարիսպների հետևում ապրելը, զրահապատ մեքենաներով ու համհարզներով շրջելը, այդ համհարզներին իրենց մեքենաների դռները բացել տալն ու իրենց վերարկուները բռնել թույլ տալը…

Մի օր ժողովուրդն անպայման կհամադրի տեսանելին ու անտեսանելին ու անպայման կհասկանա, որ իրեն խաբել են: Ու սարսափելի մեծ կլինի ժողովրդի հիասթափությունը: Ո՛չ իշխանություններից: Նրանց նկատմամբ պարզապես զզվանք ու ատելություն կառաջանա, ինչպես եղել է միշտ: Ժողովուրդը կհիասթափվի ինքն իրենից:

Ու ամենախորը կլինի նոր սերնդի հիասթափությունը: Այն պատանիների ու երիտասարդների, ովքեր պարզապես ուզում էին ավելի լավը դարձնել իրենց երկիրը:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԸ ԴԱՐՁԱՎ ՊԵՏՐՈՍԻ ՔԵՌԻՆ

Մինչ Շնագայլը կկազմակերպեր օլիգարխի հետ հանդիպումը, գործընկերները ժողովի պես մի բան արեցին Կիրակոսի պատշգամբում, որպեսզի քննարկեն, թե ինչպես են ներկայանալու այդ հանդիպմանը և ինչ են խոսելու օլիգարխի հետ: Երբ Պետրոսը ներկայացրեց իր տարբերակը և հայտարարեց, որ իր պապն ու օլիգարխի հայրը մտերիմներ են եղել, Կիրակոսի աչքերը փայլեցին: Նա վեր թռավ տեղից և բացականչեց.

-Ինչո՞ւ շուտ չէիր ասում:

-Ես երեկ իմացա տատիցս,- ստեց Պետրոսը:

-Ինչ կարգի մտերիմներ են եղել՝ գաղափարական-կոմունիստական, թե՞ վետերոկա-ռեստորանային,- հեգնեց Քսյուշան:

-Տատս ասում էր, որ նա հաճախ է հյուր եղել մեր ամառանոցում,- դարձյալ ստեց Պետրոսը, որովհետև տատն ասել էր ոչ թե «հաճախ», այլ «մի երկու անգամ»:

-Ուրեմն այսպես,- ասաց Կիրակոսը, որ վեր էր կացել և քայլում էր պատշգամբում,- լսելով պապիդ մասին՝ առաջին բանը, որ կանցնի հարգարժան օլիգարխի մտքով, կլինի այն, որ դու եկել ես իրենից փող կամ գործ խնդրելու: Դու չես շտապի հերքել դա, թող որոշ ժամանակ այդպես մտածի…

-Իսկ գուցե միանգամից փո՞ղ ուզենք նրանից,- ծիծաղեց Քսյուշան,- երկու միլիոնն ի՞նչ է նրա համար:

Բայց Կիրակոսը նրան չէր լսում.

-Դու շատ հուզված տեսք պիտի ունենաս,- շարունակեց նա՝ դիմելով Պետրոսին,- կպատմես, թե որքան կապված ես եղել պապիդ հետ, թե ինչպես է նա քեզ իր ծնկներին դրած հեքիաթներ պատմել կամ ուսերին դրած տարել զբոսանքի…

-Բայց ես նրան չեմ տեսել,- հանկարծակի ասաց Պետրոսը:

-Ո՞ւմ չես տեսել,- զարմացավ Կիրակոսը:

-Պապիս:

-Ինչպե՞ս թե չես տեսել,- Կիրակոսը մի պահ կարկամեց, ապա մտածեց ու շարունակեց,- իհա՛րկե տեսել ես: Եվ ոչ միայն տեսել ես, այլև շատ կապված ես եղել նրա հետ:

-Մեծացել ես նրա ծնկներին և ուսերին,- միջամտեց Քսյուշան, ով ողջ այս ընթացքում ծիծաղում էր:

-Մի խոսքով, մեզ խիստ հուզական նախաբան է պետք, որի կուլմինացիան կլինի պապիդ հանկարծակի մահը: Հետո կպատմես թե ինչ դաժան ճակատագիր ես ունեցել օտար ափերում, մինչև որ հարստացել ես:

-Հարստացե՞լ,- հիմա արդեն զարմացավ Պետրոսը:

-Այո՛, հարստացել,- հաստատեց Կիրակոսը,- օլիգարխները չեն սիրում անհաջողակ ու չկայացած մարդկանց:

-Այստեղ ես լիովին համաձայն եմ,- կրկին միջամտեց Քսյուշան:

-Բայց…- Պետրոսն ուզում էր ինչ-որ բան ասել, սակայն Կիրակոսը թույլ չտվեց:

-Պապիդ հետ անցկացված քաղցր մանկությանը հաջորդում է դաժան պատանեկությունն օտար ափերում, հետո երիտասարդության պրպտուն տարիները, որոնց ընթացքում դու դառնում ես հաջողակ բիզնեսմեն:

-Եվ ո՞րն է իմ բիզնեսը:

-Դա մենք դեռ կմտածենք:

-Երիտասարդության պրպտուն տարիների արդյունքում դու հիմնել ես խարդախների ակումբ, որը հաջողությամբ գործունեություն էր ծավալում Միացյալ Նահանգնե-

րի Արևմտյան և Արևելյան ափերի ողջ երկայնքով,- ասաց Քսյուշան:

Սակայն Կիրակոսը կարծես թե շատ լուրջ էր տրամադրված: Նա չլսելու տվեց Քսյուշայի հերթական հեգնանքը և կրկնեց.

-Բիզնեսի մասին մենք դեռ կմտածենք: Իսկ հիմա՝ ամենակարևորը:

-Ամենակարևո՞րը,- ծիծաղեց Քսյուշան,- իսկ ո՞րն է ամենակարևորը:

-Լենինի կիսանդրին:

-Ա՛, ինձ թվաց դուք մոռացել եք այն ու պարզապես ուզում եք մտերմանալ մեծն օլիգարխի հետ:

Կիրակոսը դադարեցրեց քայլելը և նստեց սեղանի շուրջ:

-Ամենակարևորին պետք է մոտենալ չափազանց զգույշ: Եվ դա արդեն կանեմ ես: Վստահեցնում եմ, մենք օլիգարխի հետ հանդիպումից դուրս կգանք Վլադիմիր Իլյիչի կիսանդրին ձեռքներիս:

-Սպասիր,- զարմացավ Պետրոսը,- դու է՞լ ես ուզում գալ ինձ հետ:

-Իսկ դու ի՞նչ էիր կարծում. ես քեզ մենա՞կ պիտի թողնեմ այս պատասխանատու պահին:

-Իսկ որպես ո՞ւմ ենք քեզ ներկայացնելու:

-Այդ մասին նույնպես ես դեռ չեմ մտածել:

-Քեռի՛ն,- հանկարծակի բացականչեց Քսյուշան,- ասեք, որ դու քեռին ես:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԸ ՉԴԱՐՁԱՎ ՊԵՏՐՈՍԻ ՔԵՌԻՆ, ԲԱՅՑ ՓՈԽԱՐԵՆԸ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՏԵՍԱՆ ԼԵՆԻՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ

Սակայն պիտի անցներ ևս երկու շաբաթ, մինչ կկայանար երկար սպասված հանդիպումը: Գործընկերներին օլիգարխն ընդունեց կիրակի առավոտյան՝ իր տանը, ավելի ճիշտ՝ ավտոտնակում, ուր կանգնած էր թափքը բաց մի հսկա ամենագնացի առջև և այնպիսի հայացքով էր զննում շարժիչը, որ կարելի էր մտածել, թե այնտեղ ինչ-որ բան է փչացել, և նա պատրաստվում է վերանորոգել: Բայց դա իհարկե այդպես չէր, շարժիչը բոլորովին նոր էր, ինչպես և մեքենան. վեց հարյուր ձիաուժ հզորությամբ «Lamborgini Urus», որի շուկայական արժեքը կազմում էր չորս հարյուր հազար դոլար: Ավտոտնակում կային այլ մեքենաներ ևս. մի քանի «Mercedes»-ներ, մի «Bentley» և մեկ ուրիշ սպորտային «Lamborgini», բոլորը՝ սև:

-Սրանից Հայաստանում քանի՞ հատ կա,- հարցրեց օլիգարխը կողքին կանգնած մարդուն, ով, հավանաբար, նրա թիկնապահն էր:

-Ոչ մի հատ,- պատասխանեց վերջինս,- միայն Դուք ունեք:

Օլիգարխին կարծես թե դուր եկավ պատասխանը, նա զգուշորեն փակեց շարժիչի կափարիչը, սկսեց շոյել այն, ապա մոտեցավ մեքենայի դռանը և բացեց: Սակայն մինչ կանցներ մեքենայի սրահն ուսումնասիրելուն, նկատեց հյուրերին և ասաց.

-Նստեք, ես հիմա կգամ:

Շնագայլը, Կիրակոսն ու Պետրոսը շվարած աջ ու ձախ նայեցին, որովհետև ավտոտնակում նստելու տեղ չկար:

-Բարև Ձեզ,- համարձակություն ունեցավ խոսել Շնագայլը,- ինչ լավ մեքենա է: Նո՞ր եք առել:

Բայց օլիգարխը չլսեց, քանի որ արդեն տեղավորվել էր ավտոյի սրահում: Փոխարենը պատասխանեց թիկնապահը.

-Մի քանի ամիս առաջ էինք պատվիրել, այսօր բերեցին: Հայաստանում առաջինն է:

-Իսկ…

Շնագայլն ուզում էր էլի հարց տալ, սակայն չհասցրեց: Օլիգարխը գործի գցեց մեքենայի շարժիչը և լսվեց մի հուժկու ոռնոց: Հետո նա իջեցրեց պատուհանը և ասաց.

-Նստեք, ես մի քիչ հետո կգամ:

«Lamborgini»-ն ավելի հուժկու ոռնաց և կտրուկ պոկվեց տեղից:

Այս անգամ հյուրերը ստիպված էին նստելու տեղ գտնել, որովհետև «մի քիչ հետոն» բավականաչափ ձգվեց: Տեղավորվեցին այգու տաղավարներից մեկում ու սպասեցին մոտ կես ժամ: Սակայն օլիգարխն այդպես էլ չհայտնվեց: «Lamborgini»-ն ավտոտնակ վերադարձրեց թիկնապահը, հետո մոտեցավ տաղավարին և զարմացած ասաց.

-Ինչո՞ւ եք նստել այստեղ:

-Սպասում ենք,- կմկմաց Շնագայլը:

-Ո՞ւմ եք սպասում:

-Իրեն:

-Նոր չտեսա՞ք:

Շնագայլը շփոթվեց և չգիտեր, թե ինչ ասել: Փոխարենը խոսեց Պետրոսը:

-Խնդրում եմ, փոխանցեք իրեն, որ Պետրոս Գրիգորիչի թոռն է եկել:

Թիկնապահը մի լավ զննեց հյուրերին՝ փորձելով հասկանալ թե նրանցից ով է Պետրոս Գրիգորիչի թոռը, և առհասարակ ով է Պետրոս Գրիգորիչը, այդպես էլ ոչինչ չհասկա-

ցավ և ստիպված նետեց.

-Լավ, կփոխանցեմ, բայց հիմա չեք կարող տեսնել նրան: Նրա մոտ Կուբայից հյուրեր են եկել, շատ կարևոր:

Երբ նա հեռացավ, Շնագայլը տարածեց ձեռքերն ու ասաց.

-Ինչ անեմ:

-Այդ ի՞նչ հյուրեր են Կուբայից,- հետաքրքրվեց Կիրակոսը:

-Նա հաճախ է լինում Կուբայում: Ինչ-որ գործեր ու գործընկերներ ունի այնտեղ: Որքան որ գիտեմ, ճանաչում է նաև Ֆիդելի եղբորը՝ Ռաուլ Կաստրոյին:

-Կուբացի կոմունիստները Հայաստանում,- քթի տակ ասաց Կիրակոսը,- խորհրդանշական է…

-Եկեք գնանք, ուրիշ անգամ կգանք,- առաջարկեց Շնագայլը:

-Ոչ, կսպասենք,- բոլորի փոխարեն որոշեց Պետրոսը:

Տեղափոխվեցին առանձնատան մուտքի առջև և սպասեցին ևս մեկ ժամ:

Մեկ ժամից առանձնատան դռնից գրկախառնված դուրս եկան օլիգարխը և մի կարճահասակ կուբացի՝ ծղոտե լայնեզր գլխարկով: Կուբացուն հետևում էր ակնոցներով մի երիտասարդ, ով հավանաբար նրա օգնականն էր կամ քարտուղարը: Վերջինս երկու ձեռքով ամուր գրկել էր Վլադիմիր Իլյիչ Լենինի կիսանդրին:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՔՍՅՈՒՇԱՆ ԹՈՒՅԼ ՉՏՎԵՑ, ՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՆԵՆ

Էսթեբան Ռամիրես-Նունյեսը նստած էր Երևանի հինգաստղանի հյուրանոցներից մեկի ֆոյեում և խոսում էր հեռախոսով: Երեկոյան ժամը յոթն էր: Ավելի վաղ՝ Կիրակոսի և Պետրոսի առավոտյան ձախողումից հետո, երբ նրանց քթի տակից տարել էին բաղձալի կիսանդրին, գործընկերները խուճապի էին մատնվել: Կիրակոսը փորձել էր անմիջապես խոսել օլիգարխի հետ, բայց թիկնապահները թույլ չէին տվել: Չէր կարողացել օգնել նաև Շնագայլը: Օլիգարխը, չգիտես ինչու, զայրացել էր նրա վրա ու բոլորի ներկայությամբ հայհոյելով՝ վռնդել: Պետրոսը վազել էր օլիգարխի հետևից՝ գոռալով, որ ինքը Պետրոս Գրիգորիչի թոռն է: Եկեք մյուս կիրակի՝ ասել էր օլիգարխն ու հեռացել:

Սակայն մյուս կիրակին շատ ուշ կլիներ:

Գործընկերները հապճեպ դուրս էին եկել առանձնատան տարածքից, նստել մուտքի մոտ կայանած իրենց մեքենան և փորձել հասնել կուբացու հետևից: Բարեբախտաբար հասել էին, պարզել, թե որ հյուրանոցում է նա ապրում, իսկ հետո հնարավորինս տեղեկություններ հավաքել նրա այցի մասին:

Անձամբ Էսթեբան Ռամիրես-Նունյեսի մասին շատ բան իմանալ չէր հաջողվել: Միայն պարզել էին, որ նա երկար տարիներ բարձր պաշտոններ է զբաղեցրել Կուբայի կառավարությունում, հիմա բարձր դիրք է զբաղեցնում Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի ապարատում և մտերիմ հարաբերություններ ունի Ռաուլ Կաստրոյի հետ: Հայաստան է ժամանել շաբաթ՝ օգոստոսի տասնմեկին և մեկնելու է կիրակի՝ օգոստոսի տասներկուսին: Այսինքն՝ նույն օրը:

-Եթե մենք շտապ քայլեր չձեռնարկենք, հիսուն կիլոգ-

ռամ ոսկին՝ կոմունիստների կուռքի կերպարով կարող է իր վերջին հանգրվանը գտնել աշխարհի վերջին կոմունիստական պետությունում,- ասաց Կիրակոսը գործընկերներին:

Նրանք նստած էին Կիրակոսի մեքենայում, այն հյուրանոցի առջև, ուր ապրում էր կուբացին:

-Կուբան միակ կոմունիստական պետությունը չէ,- Կիրակոսին ուղղեց Պետրոսը,- կոմունիստներն իշխում են նաև

Չինաստանում, Վիետնամում և Լաոսում:

-Որտեղի՞ց դու այդքան բան գիտես:

-Մի՛ մոռացեք, որ միջազգային հարաբերություններ եմ ուսանել Սանտա Բարբարայի համալսանում,- ստեց Պետրոսը:

Այդ պահին հյուրանոցից դուրս եկավ լայնեզր գլխարկով կուբացին՝ քարտուղարի ուղեկցությամբ, և մոտեցավ մուտքի մոտ սպասող մեքենային, որի վրա պետական-ներկայացուցչական համարներ էին:

-Կիսանդրին նրանց ձեռքին չէ,- ասաց Պետրոսը,- հավանաբար, համարում է: Ի՞նչ անենք:

-Հուսով եմ՝ դուք գողությո՞ւն չեք պլանավորում,- անհանգստացած հարցրեց Քսյուշան:

-Իհարկե, ես այդ գործում մասնագետ չեմ, բայց կարծես ուրիշ ելք չի մնում,- տրտնջաց Պետրոսը:

-Եթե դուք վերջնականապես կանգ եք առնում այդ տարբերակի վրա, ես ստիպված եմ ձեզ հրաժեշտ տալ,- Քսյուշան վերցրեց պայուսակը և բացեց մեքենայի դուռը:

-Սպասե՛ք,- անսպասելի բացականչեց Կիրակոսը,- ես ավելի լավ տարբերակ ունեմ:

Պետրոսն ու Քսյուշան թերահավատորեն նայեցին նրան:

-Ես ավելի լավ տարբերակ ունեմ,- կրկնեց Կիրակոսը,- իսկ ի՞նչ կլինի, եթե մենք խոսենք կուբացու հետ:

-Ի՞նչի մասին խոսենք,- հարցրեց Պետրոսը:

-Նախ դու կներկայանաս, կպատմես կոմունիստ պապիդ մասին, կասես, որ կիսանդրին պատկանում է քեզ և կխնդրես վերադարձնել այն:

-Իսկ եթե նա գրողի ծո՞ցը ուղարկի ինձ:

-Ամենայն հավանականությամբ այդպես էլ կլինի: Սա-

կայն այդ դեպքում դու կբացես կիսանդրու գաղտնիքը: Կասես, որ մենք տեղյակ կպահենք մաքսավորներին, և նա չի կարողանա քանդակը երկրից դուրս հանել:

Քսյուշան փակեց մեքենայի դուռը:

-Իսկապես, մենք այս մասին չէինք մտածել,- ասաց նա,- ինչպե՞ս կարելի է հիսուն կիլոգրամ ոսկին հանգիստ անցկացնել մաքսակետով: Առավել ևս, երբ դու չգիտես, որ դա ոսկի է:

-Դե ինչ՝ կանգ առնենք մ՚այս տարբերակի վրա,- ասաց Կիրակոսը՝ գործի գցելով մեքենայի շարժիչը, որպեսզի ամեն դեպքում տեսադաշտում պահեն կուբացուն:

Կուբացին տեսադաշտում մնաց մինչև կառավարության շենք, որից ներս նրան տեղափոխող ներկայացուցչական համարներով մեքենան մտավ ծառայողական հատուկ դարպասներից:

Այստեղ Էսթեբան Ռամիրես-Նունյեսն անցկացրեց մոտ կես ժամ, որից հետո ուղևորվեց Էջմիածին: Մայր տաճարի տարածք նրա մեքենան դարձյալ մտավ հատուկ մուտքով:

-Պետք է ենթադրել, որ կուբացուն այստեղ լուրջ են վերաբերվում, եթե կառավարությունում ու Էջմիածնում նրան ընդունում են կիրակի օրով,- ասաց Կիրակոսը:

-Դա լա՞վ է, թե՞ վատ,- հետաքրքրվեց Քսյուշան:

-Իհարկե վատ է: Դա նշանակում է, որ նա խնդիր չի ունենա կիսանդրին տանելիս:

-Այսինքն մեր պլանի երկրորդ մասը չի՞ աշխատի,- հարցրեց Պետրոսը:

-Ստացվում է այդպես:

-Մեզ ժամանակ չի մնում,- Պետրոսն անհանգիստ նայեց ժամացույցին,- պետք է վերադառնալ հյուրանոց և ինչ-որ ձև գտնել նրա սենյակը մտնելու համար: Այլապես կարող եք

ընդմիշտ մոռանալ ոսկու մասին:

-Միայն առանց ինձ,- ասաց Քսյուշան:

-Եկեք ճիշտ հասկանանք,- Պետրոսը շրջվեց դեպի Քսյուշան,- սա գողություն չէ: Կիսանդրին պատկանում է ինձ, և այն իմ կամքից անկախ վերցրել են ինձնից:

-Նախ կիսանդրին չի պատկանում քեզ,- բացատրեց Քսյուշան,- երկրորդը՝ եթե անգամ այդպես լիներ, միևնույն է, ձեր արածը գողություն է, և եթե ձեզ բռնեն, ոչ մեկին չեն հետաքրքրի ձեր հեքիաթները:

-Դու իզուր ես հոգնակիով խոսում,- միջամտեց Կիրակոսը,- ես ոչ պատրաստվում եմ գողություն անել, ոչ էլ առավել ևս՝ բռնվել:

-Դուք հասկանո՞ւմ եք, որ հիսուն կիլոգրամ ոսկին տանում են մեր քթի տակից,- տեղի չտվեց Պետրոսը,- իսկ դուք ոչինչ չեք ուզում անել:

-Պետք չէ հուսահատվել,- հանգստացրեց նրան Կիրակոսը,- ես համոզված եմ, որ Քսյուշան ամեն ինչ ճիշտ կանի:

-Քսյուշա՞ն:

-Այո՛, Քսյուշան,- կրկնեց Կիրակոսը և հետ նայեց,- դու ես մեր վերջին հույսը:

ՎԵՐՋԻՆ ՀՈՒՅՍԸ

Էսթեբան Ռամիրես-Նունյեսը արդեն ավարտում էր ընթրիքը հյուրանոցի ռեստորանում, երբ նրան մոտեցան Պետրոսն ու Քսյուշան.

-Ներեցեք, որ անհանգստացնում ենք,- ասաց Քսյուշան իսպաներենով,- մենք մի կարևոր գործ ունենք Ձեզ հետ: Կարո՞ղ ենք հանդիպել բարում, երբ կավարտեք ընթրիքը:

Կուբացին գլխի շարժումով հասկացրեց չգիտես որտեղից անմիջապես գլխավերևում հայտնված քարտուղարին, որ ամեն ինչ կարգին է, հետո ծնկների վրայից մի կողմ տարավ սփռոցը, ոտքի ելավ ու ձեռքը մեկնեց Քսյուշային.

-Էսթեբան Ռամիրես Նունյես,- ներկայացավ նա,- ես չգիտեի, որ հայուհիներն այսքան սիրուն են:

Նա խիտ ճերմակ ունքերով ու բեղերով, խոշոր բարի աչքերով մի ծերուկ էր:

Քսյուշան նույնպես մեկնեց ձեռքը, ներկայացավ և ասաց, որ կսպասեն բարում:

-Ի՞նչ կարիք կա ժամանակ կորցնել, ես մեկ ժամից մեկնում եմ օդանավակայան,- կուբացին հայացքով հասկացրեց քարտուղարին տեղավորել հյուրին:

Քարտուղարը տեղաշարժեց աթոռը, Քսյուշան նստեց, իսկ Պետրոսը, ում վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, մնաց կանգնած՝ քարտուղարի կողքին:

-Եթե Դուք ժամանակ ունեք,- ժպտալով ասաց Քսյուշան,- ես ուզում եմ Ձեզ մի պատմություն պատմել:

-Դու շատ սիրուն ես, շա՛տ,- անսպասելի «դու»-ի անցավ կուբացին,- քեզ համար ես ժամանակ կգտնեմ:

-Դուք առաջին անգա՛մ եք Հայաստանում:

-Ո՛չ, բայց քեզ հետ ծանոթանալուց հետո, հաստատ ավելի հաճախ կգամ: Կամ գուցե դո՞ւ գաս ինձ հետ Կուբա: Դու եղե՞լ ես Կուբայում:

-Ոչ:

-Դու անպայման պիտի գաս: Կուբան շատ սիրուն է, շա՛տ: Քեզ պես սիրուն:

-Ես անպայման մի օր կգամ Կուբա, եթե Դուք լսեք իմ պատմությունը և կատարեք իմ խնդրանքը:

-Խնդրե՞լ, ի՞նչ խնդրել: Քեզ պես գեղեցկուհիները կարող են միայն պահանջել:

Եվ Քսյուշան պատմեց մի հուզիչ պատմություն, որի գլխավոր հերոսը հավատավոր կոմունիստ, Ֆիդել Կաստրոյի «եղբայր-զինակից» Պետրոս Գրիգորիչն էր: Այդ պատմությունը ոտքի վրա հորինել էր Կիրակոսը և հընթացս ավելացրել մի կարևոր դետալ, համաձայն որի լուսահոգի հայ կոմունիստը ուներ ոչ թե մեկ այլ երկու թոռ. երկրորդը Քսյուշան էր: Պատմության երկրորդ մասը վերաբերում էր Լենինի կիսանդրուն, որը երկար ժամանակ անհետացել էր և ահա՝ հայտնվել.

-Դա միակ հիշատակն է, որ մնացել է մեր պապից,- եզրափակեց պատմությունը Քսյուշան:

Կուբացին ողջ պատմության ընթացքում այնպիսի բարի հայացքով էր նայում Քսյուշային, որ վերջինս վստահ էր՝ հիմա նա քարտուղարին կուղարկի Լենինին բերելու:

Բայց ամեն ինչ այդքան հեշտ չէր: Քանդակի մասին լսելով՝ կուբացին շփոթվեց:

-Միայն թե ոչ դա, ցանկացած ուրիշ բան, միայն ոչ դա:

-Բայց ուրիշ բան ինձ պետք չէ,- տխուր ասաց Քսյուշան:

-Հասկանո՞ւմ ես, այդ քանդակն ինձ տվել են, որ փոխանցեմ Ռաուլ Կաստրոյին: Դա նրա նվերն է: Ես քիչ առաջ

խոսեցի Ռաուլի հետ և ասացի նրան այդ մասին:

-Փաստորեն Դուք ինձ մերժում եք,- վերջին փորձն արեց Քսյուշան:

Էսթեբան Ռամիրես-Նունյեսն հավանաբար իսկապես բարի մարդ էր: Նա որոշ ժամանակ լռեց՝ շփոթված հայացքը Քսյուշային հառած, ու սկսեց մտածել:

Սակայն զուգահեռ տեղի ունեցավ այն, ինչը բոլորովին պետք չէր, որ տեղի ունենար:

Պետրոսը ողջ ընթացքում լուռ կանգնած էր Քսյուշայի կողքին և հետևում էր խոսակցությանը: Իսպաներենի իմացության այն պաշարը, որ ձեռք էր բերել Կալիֆորնիայում բնակվելու տարիներին՝ ծանոթ մեքսիկացիների հետ շփվելիս, բավական էր, որ նա հասկանար որոշ բաներ: Մասնավորապես այն, որ ծերուկը խոստացել է կիսանդրին Ռաուլ Կաստրոյին: Սա լսելուց հետո նա թաքուն ինչ-որ բան շշնջաց կողքին կանգնած քարտուղարի ականջին: Վերջինս նույնպես ինչ-որ բան շշնջաց՝ ի պատասխան: Եվ մինչ ծերուկը մտածում էր՝ շփոթված հայացքը Քսյուշային հառած, այդ երկուսը քիչ այն կողմ գնացին և շարունակեցին շշնջալ:

Այդ պահին ծերուկը ձեռքը խփեց սեղանին և բացականչեց.

-Ինչպե՞ս կարող եմ ես մերժել քեզ:

Քսյուշան վեր կացավ տեղից, մոտեցավ կուբացուն և մի ջերմ համբույր դրոշմեց նրա ձախ այտին:

-Տե՛ր իմ Աստված,- բացականչեց ծերուկը,- ների՛ր ինձ:

Ապա իր մոտ կանչեց քարտուղարին և կարգադրեց սենյակից բերել Լենինի կիսանդրին:

Քարտուղարին սպասեցին հինգ րոպե, հետո Պետրոսը սկսեց անհանգստության նշաններ ցույց տալ: Եվս հինգ րոպե սպասելուց հետո նա գնաց քարտուղարի հետևից: Քիչ

անց գնացին բոլորը:

Լյուքս համարի հատակին թափված էին սպիտակ գիպսի մի քանի մանր կտորներ, որոնցից մեկը աղոտ հիշեցնում էր Վլադիմիր Իլյիչ Լենինի քթից մի հատված:

ՎԱՐՊԵՏ ՎԱՐԱԶԴԱՏԸ

Վարպետ Վարազդատը Երևանի թիվ 2 տաքսամոտորային պարկում աշխատանքի էր անցել հազար ինը հարյուր վաթսունվեցին և քսանհինգ տարվա ընթացքում փոխել էր մի քանի «Վոլգաներ», որոնցից վերջինը՝ «Վոլգա ԳԱԶ 24 10»-ը պահել էր իրեն՝ Խորհրդային Միության և հարազատ տաքսապարկի փլուզումից հետո ու մինչև հիմա շարունակում էր վարել այն որպես տաքսի: Մեքենան ծառայում էր ազնվորեն, քանի որ վարպետն այն խնամում էր ավելի լավ,

քան սեփական կնոջը, ով ճնշման տատանումներ ուներ: Սա է մեր տունը պահողը՝ ասում էր նա:

Արեշի իր տան ավտոտնակում վարպետը ամիսը մեկ յուղում էր մեքենան, շաբաթը մեկ՝ ձգրտում, ամեն օր լվանում ու դուրս գալիս աշխատանքի: Ճերմակ «Վոլգան» փայլում էր ինչպես մարգարիտ: Երկու ամիս առաջ հարևաններից մեկն առաջարկել էր փոխել այն մի «Օփելի» հետ, և վարպետն այնպես էր կատաղել, որ վռնդել էր նրան ավտոտնակից՝ թափահարելով երկաթյա լինգը:

Եկամուտն իհարկե մի քանի անգամ պակաս էր խորհրդային տարիներին ստացածից, ինչի շուրջ ութսունամյա վարպետը պարտադիր կիսվում էր իր բոլոր ուղևորների հետ, այնուհետև մի լավ հայհոյում օրվա իշխանություններին:

Հայհոյել ու հայհոյում էր նա բոլորին. Լևոնի ժամանակ՝ Լևոնին, Ռոբի ժամանակ՝ Ռոբին, Սերժի ժամանակ՝ Սերժին, իսկ այս վերջին մի քանի ամիսներին՝ Նիկոլին: Ու քանի որ ո՛չ Լևոնը, ո՛չ Ռոբը, ո՛չ Սերժը, ո՛չ էլ Նիկոլը երբեք այնքան լավ ծանոթ չեն եղել ժողովրդի վիճակին, որքան վարպետ Վարազդատը՝ վերջինիս կարելի էր հասկանալ:

Պետության նախկին ու ներկա ղեկավարներին հայհոյելուց բացի, ծերուկ վարորդը սիրում էր պատմել խորհրդային տարիների իր երջանիկ կյանքի մասին: Օրը քսանհինգ ռուբլի փող էի առնում, հինգը տալիս էի հերթափոխի պետին, մնացածը իմն էր՝ ասում էր նա: Էլ արդարությունը ո՞նց է լինում: Հինգ տարին մեկ մեքենա էի փոխում, հինգ հարյուր ռուբլի տալիս էի տաքսապարկի պետին, հին մեքենան պահում էի ինձ՝ ավելացնում էր նա: Ի՞նչ եք ուզում Սովետից: Տարին մի անգամ Գելենջիկ էի գնում, մի անգամ՝ Մոսկվա՝ շարունակում էր: Սովետի ցա՛վը տանեմ:

Երկու հազար տասնութ թվականի օգոստոսյան այդ օրը հետաքրքիր էր սկսվել վարպետ Վարազդատի համար: Շո-

գի պատճառով նա աշխատանքի էր դուրս եկել երեկոյան, և հենց առաջին ուղևորը, ով պատահել էր, պարզվել էր՝ արտասահմանցի է: Նա խնդրել էր իրեն տանել հյուրանոց ու ամբողջ ճանապարհին հիացական խոսքեր ասել հին «Վոլգայի» մասին: Վարպետն իր հերթին ամբողջ ճանապարհին ժպտացել էր ի պատասխան՝ վստահ, որ իրեն խոշոր վարձատրություն է սպասվում: Իջնելիս, սակայն, արտասահմանցին մի հազարանոց էր տվել: Սիրում եմ հին մեքենաները՝ ասել էր նա անգլերեն, ինչին վարպետը պատասխանել էր հայերենով՝ Թրամփի մերը…

Դեռ չէր հասցրել գծուծ ուղևորն իջնել մեքենայից, երբ մոտեցել էր մեկ ուրիշը, նույնպես արտասահմանցի: Նրա ձեռքին սպիտակ սավանով փաթաթված ինչ-որ մեծ կլոր առարկա էր, որը մի կերպ էր քարշ տալիս: Ի տարբերություն նախորդի, նա խոսել էր ռուսերեն և խնդրել իրեն տանել Գյումրի: Հարյուր դոլար կտամ՝ ասել էր:

Ահա այդպես հետաքրքիր էր սկսվել օգոստոսյան այդ օրը վարպետ Վարազդատի համար:

ԱԼԵԽԱՆԴՐՈՆ

Երբ երկու հազար տասնչորս թվականի հուլիսին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը այցելեց Կուբա, Ալեխանդրոն աշխատում էր Ազատության կղզու արտաքին գործերի նախարարությունում: Նրան ընդգրկեցին մեծապատիվ հյուրի ընդունման հանձնախմբում՝ նկատի ունենալով Ալեխանդրոյի ռուսերենի և Ռուսաստանի հրաշալի իմացությունը: Այն, որ Վլադիմիր Վլադիմիրովիչի այցից և մահվան մահճում գտնվող Ֆիդել Կաստրոյի հետ ունեցած հանդիպումից հետո Կուբային ներվեց դեռևս Խորհրդային Միության ժամանակներից մնացած շուրջ երեսունհինգ միլիարդ դոլարի պարտքի իննսուն տոկոսը, իհարկե Ալեխանդրոյի ձեռքբերումը չէր, սակայն երիտասարդ դիվանագետը իրեն իրավունք վերապահեց լցվել հպարտության զգացումով: Մեկ ամիս անց նա արդեն աշխատանքի անցավ վարչապետ Ռաուլ Կաստրոյի աշխատակազմում, իսկ ևս մեկ տարի անց առաջարկ ստացավ վարչապետի ընկերոջից՝ Էսթեբան Ռամիրես Նունյեսից: Ռուս–կուբայական հարաբերությունների ջերմացումից հետո երկու երկրների միջև նաև բիզնես համագործակցության լայն հնարավորություններ էին բացվել, որոնցից շտապել էր օգտվել վարչապետի ընկերը: Բիզնեսը շուտով Ռուսաստանից տարածվեց Բելառուս, Միջին Ասիա, նաև՝ Հայաստան, և այս բոլոր երկրներ կատարած այցելությունների ժամանակ կուբացի գործարարը իր հետ սկսեց տանել Ալեխանդրոյին:

Ալեխանդրոն Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի վերջին շրջանավարտներից էր ԽՍՀՄ-ի փլուզումից հետո. ընդունվել էր հազար ինը հարյուր իննսունմեկին, ավարտել հազար ինը հարյուր իննսունվեցին: Դեռևս ուսանողական տարիներին նա սիրահարվել էր

համակուրսեցի Լյուդմիլային, սակայն նրա սրտին տիրանալ չէր կարողացել: Ինստիտուտն ավարտելուց հետո Լյուդմիլան ամուսնացել էր մի բարձրաստիճան պաշտոնյայի որդու հետ: Ալեխանդրոն, կոտրված սրտով, վերադարձել էր հայրենիք: Եվ ահա, քսան տարի անց կրկին հայտնվելով Մոսկվայում՝ նա գտել էր Լյուդմիլային և իմացել, որ վերջինս վաղուց բաժանվել է ամուսնուց: Եվ Ալեխանդրոն որոշել էր մեկ անգամ էլ փորձել գրավել նրա սիրտը: Հետո ամուսնության առաջարկ անել ու ապրել Լյուդմիլայի հետ Մոսկվայում: Իսկ դրա համար անհրաժեշտ էր շատ փող, որը Ալեխանդրոն չուներ: Եվ նա սկսել էր զգուշորեն կողոպտել շեֆին: Սակայն զգուշորեն կողոպտելով մեծ գումար հավաքել, կարծես թե, չէր ստացվում:

Հայաստան կատարած այցի վերջին օրը, երբ հայ օլիգարխի առանձնատնից դուրս գալուց շեֆը խնդրեց նրան վերցնել Լենինի կիսանդրին, այն նրան տարօրինակորեն ծանր թվաց: Չգիտես ինչու, Ալեխանդրոյի մտքով անցավ, որ կիսանդրին ոսկուց է: Մի պահ, հյուրանոցի համարում նա անգամ ուզում էր ստուգել, բայց անմիջապես էլ հետ կանգնեց այդ աբսուրդ մտքից: Բայց արի ու տես, որ զգացողությունը նրան չէր խաբել: Եվ երբ շեֆի հետ հանդիպման ժամանակ հայ երիտասարդը նրան մի կողմ տարավ, ականջին շշնջաց կիսանդրու գաղտնիքը և առաջարկեց կիսել հիսուն կիլոգրամ ոսկին, քիչ էր մնում՝ Ալեխանդրոն գլուխը տար մոտակա պատին: Բայց, այնուամենայնիվ, բախտը նրա հետ էր: Այն, ինչ արեց նախկին դիվանագետը հետագա տասը րոպեների ընթացքում, արեց բնազդաբար՝ Լյուդմիլայի պատկերն աչքերի առջև: Հյուրանոցի սենյակ նա հասավ հաշված վայրկյաններում, վերցրեց անձնագիրը, պայուսակը, հետո մահճակալի վրայից հանեց սավանը և դրանով փաթաթեց կիսանդրին: Շտապելուց քանդակն ընկավ ձեռքից և մի փոքր վնասվեց: Երկրորդ փորձը հաջող էր: Ալեխանդրոն վազեց դեպի վերելակը, արագ դուրս եկավ հյուրանոցից և մոտեցավ առաջին իսկ պատահած տաքսուն:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԸ ՆԵՐԵՑ ՊԵՏՐՈՍԻՆ ԿԱՄ ԳՐԱԶՆ Ի ՉԻՔ

Երբ Կիրակոսը գետնից բարձրացրեց սպիտակ գիպսի կտորը, որն աղոտ հիշեցնում էր Լենինի քիթը, Պետրոսը երկու ձեռքով բռնեց գլուխը և մի ձայն արձակեց, որը նման էր վիրավոր շան կաղկանձի:

-Ինչ պատահեց այս երիտասարդին,- զարմացավ Էսթեբան Ռամիրես-Նունյեսը:

Սակայն նրան ոչ ոք չպատասխանեց: Կիրակոսը կոպտորեն քաշեց Պետրոսի թևից և նրան դուրս հանեց սենյակից:

-Դու քարտուղարին ինչ-որ բա՞ն ես ասել ոսկու մասին:

-Պետք է հասնել նրա հետևից,- բացականչեց Պետրոսը և վազեց դեպի վերելակը: Կիրակոսը վերադարձավ սենյակ:

-Այդ ապուշն ասել է ոսկու մասին,- դիմեց նա Քսյուշային,- հարցրու կուբացուն, թե որտե՞ղ կարող է լինել նրա քարտուղարը:

-Նրա՞ն էլ ասեմ ոսկու մասին,- հարցրեց Քսյուշան:

-Ոչ մի դեպքում, պարզապես հետաքրքրվի քարտուղարի մասին:

Կուբացին, ով չէր հասկանում թե ինչ է տեղի ունենում, զարմացած նայում էր նրանց:

-Պարո՛ն Ռամիրես-Նունյես,- դիմեց նրան Քսյուշան,- որտե՞ղ է Ձեր քարտուղարը:

-Երևի քանդակը ձեռքից ընկել, կոտրվել է, և նա տարել է այն վերանորոգելու,- բարի ժպիտը դեմքին՝ ասաց ծերուկը,- Ալեխանդրոն լավ տղա է, նա հաստատ իրեն վատ է զգացել ու ամաչել արածի համար:

Քսյուշան թերահավատորեն նայեց նրան:

-Բայց որտեղ պետք է վերանորոգի: Նա ծանոթ է Երևանին: Ու հետո էլ, չէ՞ որ Դուք շուտով պիտի մեկնեք օդանավակայան:

-Իսկապես,- կմկմաց ծերուկը,- ես այդ մասին մոռացել էի: Բայց մի՛ անհանգստացեք, Ալեխանդրոն հիմա կգա:

Ծերուկն իհարկե սխալվում էր: Ալեխանդրոն այդ պահին սլանում էր Գյումրու ուղղությամբ: Իսկ հյուրանոցի մոտակայքում նրան գլխակորույս փնտրում էր Պետրոսը:

Կես ժամ սպասելուց և այդ ընթացքում անընդհատ և ապարդյուն քարտուղարին զանգահարելուց հետո կուբացին հայտարարեց:

-Վստահ եմ՝ նա օդանավակայանում է. ես ուշանում եմ, գնանք միասին այնտեղ:

Գործընկերներին ուրիշ ոչինչ չէր մնում անել, քան համաձայնել: Հյուրանոցի մուտքի մոտ ծերուկն առաջարկեց Քսյուշային նստել իր մեքենան:

-Ես հասկանում եմ, թե որքան ես սիրել դու պապիկիդ,- ասաց նա արդեն ճանապարհին,- բայց ինչո՞վ ես քեզ համար պապիկ չեմ: Արի ինձ հետ Կուբա:

-Խոստանում եմ մի օր գալ Կուբա, եթե գտնենք Ձեր քարտուղարին, ավելի ճիշտ պապիցս մնացած հիշատակը,- հուսադրեց նրան Քսյուշան:

-Խոստանո՞ւմ ես:

-Խոստանում եմ:

Ծերուկի աչքերը փայլեցին:

-Ալեխանդրոն լավ տղա է,- ասաց նա,- վստահ եմ, նա օդանավակայանում մեզ է սպասում:

Կուբացուն սպասարկող պետական ներկայացուցչական համարանիշերով մեքենայի հետևից ընթացող «Range Rover»-ում բոլորովին այլ տրամադրություն էր:

Պետրոսը նստել էր՝ գլուխը կախ, ու հաճախակի ափով հարվածում էր ծնկներին: Կիրակոսը երբեմն շրջվում էր նրա կողմը, ուզում էր ինչ-որ բան ասել, բայց զսպում էր իրեն:

-Մենք սխալ բան ենք անում,- վերջապես խոսեց Պետրոսը,- անհնար է, որ այդ տղան օդանավակայանում լինի:

-Կարող է՝ լինի, կարող է՝ չլինի,- զայրացած նետեց Կիրակոսը,- միայն թե դու խոսելու իրավունք չունես:

Պետրոսը գետնից բարձրացրեց մեղավոր հայացքը.

-Ես մեր մասին էի մտածում…

Որոշ ժամանակ լռելուց հետո Կիրակոսը քիչ ավելի մեղմ տոնով ասաց.

-Այնուամենայնիվ, այդ տղան կարող էր գնալ օդանավակայան: Իհարկե առանց քանդակի: Նա կարող էր մի տեղ պահել այն, գնալ օդանավակայան և սպասել շեֆին: Ասել վերջինիս, որ անփութորեն կոտրել է կիսանդրին: Հետո մեկնել Կուբա, որոշ ժամանակից վերադառնալ ու արդեն հանգիստ մտածել, թե ինչ անել ոսկու հետ:

-Ինչո՞ւ ես այդպես կարծում,- հետաքրքրվեց Կիրակոսը:

-Որովհետև մեզանից փախչել նա կարող է, բայց շեֆից՝ հազիվ թե:

-Իսկ, եթե մե՞նք օդանավակայանում նրան սպասելիս լինենք:

-Նա հանգիստ կարող է ասել նույնը: Ասել, որ քանդակը կոտրվել է: Իսկ ինչ վերաբերում է ոսկուն՝ ոչ մի ոսկի էլ այնտեղ չի եղել:

-Իսկ ի՞նչ պիտի անենք այդ դեպքում:

-Թող որ այդպես լինի, մի բան կմտածենք:

Այստեղ Պետրոսը ձեռքը դրեց գործընկերոջ ուսին:

-Ես մեղավոր եմ, կներես:

Կիրակոսը մի քիչ մտածեց ու ասաց.

-Մենք պետք է վերանայենք մեր պայմանները:

-Ինչպե՞ս վերանայենք,- մի քիչ վախվորած կմկմաց Պետրոսը:

-Եթե մենք գտնենք քանդակը, ինչը ես գրեթե բացառում եմ, մեր մասնաբաժինները դառնում են հիսուն-հիսուն:

-Բայց մենք Քսյուշային ևս տասը տոկոս ենք խոստացել:

-Ի դեպ, Քսյուշայի մասին: Մենք իհարկե կտանք նրա տասը տոկոսը: Բայց առաջարկում եմ չեղարկել մեր գրազը: Այն ավելորդ բարդություններ է ստեղծում:

ԻՆՉ ԵՂԱՎ ԱԼԵԽԱՆԴՐՈՆ

Մինչ գործընկերները նորովի բաժանում էին Վլադիմիր Իլյիչի կիսանդրին, վերջինս ժամում իննսուն կիլոմետր արագությամբ ընթանում էր Աշտարակ տանող խճուղով:

-Կարելի՞ է քիչ ավելի արագ վարել,- վարպետ Վարազդատին ռուսերենով դիմեց Ալեխանդրոն:

-Ես հիսունհինգ տարվա վարորդ եմ, և դեռ ոչ մի խախտում չեմ արել,- պատասխանեց վարպետը:

Հետո նա փորձեց զրույցի բռնվել ուղևորի հետ, բայց ապարդյուն:

Ալեխանդրոն նստած էր առջևի նստատեղին և մտածում էր իր հետագա անելիքների մասին: Պրոլետարիատի առաջնորդը, սպիտակ սավանով փաթաթված, տեղավորվել էր հետևի նստատեղին. թե ինչ էր մտածում նա՝ հասկանալի չէր:

Բայց, այնուամենայնիվ, ի՞նչ պիտի աներ Ալեխանդրոն, ինչի՞ վրա էր նա դրել հույսը և ինչո՞ւ խնդրեց տաքսու վարորդին իրեն տանել Գյումրի:

Ամեն ինչ շատ պարզ էր. Գյումրիում նա ուներ մի ծանոթ, ում ճանաչում էր դեռ Մոսկվայում անցկացրած ուսանողական տարիներից և ում հետ վերջերս առիթ էր ունեցել կրկին հանդիպելու: Նա ռուսական բանակի բարձրաստիճան սպա էր, ով այդ պահին ծառայում էր Գյումրիում տեղակայված ռուսական ռազմաբազայում: Ալեխանդրոն հույս ուներ իր հին ծանոթի հետ գործարքի մեջ մտնել և նրա օգնությամբ թաքուն մեկնել Մոսկվա: Ինչ վերաբերում է հարգարժան Էսթեբան Ռամիրես-Նունյեսին՝ նրա հերն էլ անիծած:

Միայն թե քարտուղարի ծրագրերին վիճակված չէր իրականանալ:

Երբ անցել էին Աշտարակը, ճանապարհին մի տեղ վար-

պետ Վարազդատը դանդաղեցրեց մեքենայի ընթացքը և աջ ընդունեց:

-Ի՞նչ եք անում,- անհանգստացավ կուբացին,- ինչո՞ւ եք կանգնում:

-Գազ պիտի լցնեմ,- բացատրեց վարորդը:

-Ի՞նչ գազ:

-Մեքենան գազով է աշխատում:

-Մինչև Գյումրի չի՞ հասնի:

-Կհասնի, բայց ես ապահովություն եմ սիրում: Հիսունհինգ տարվա մեջ իմ վառելիքը ոչ մի անգամ չի վերջացել:

Երբ մտան գազալցակայանի տարածք, վարորդը շարունակեց.

-Դու պետք է իջնես մեքենայից:

-Ինչո՞ւ,- զարմացավ ուղևորը:

-Կարգն է այդպես:

-Որքա՞ն է դա տևում:

-Հինգ, տասը րոպե:

Ալեխանդրոն դժկամությամբ իջավ մեքենայից և հայացքով փնտրեց այնպիսի տեղ, ուր կարող էր աննկատ սպասել, մինչև մեքենան կլիցքավորեին, և միաժամանակ տեսադաշտում պահել տաքսին: Գազալցակայանի տարածքի ծայրի անկյունում՝ սպասասրահի ու ինչ-որ շինության արանքում տեղակայված էր զուգարանը, որի դուռը բաց էր: Հենց այստեղ էլ մտավ Ալեխանդրոն:

Գուցե ամեն ինչ բարեհաջող անցներ և անգամ զուգարանը կուբացու համար ծառայեր ըստ նպատակի, եթե այդ պահին լուսային թարթիչները միացրած՝ գազալցակայանի տարածք չմտնեին երկու ոստիկանական ավտոմեքենա:

Ասել, որ Ալեխանդրոն վախեցավ, ճիշտ չի լինի: Նա չվա-

խեցավ, պարզապես հանկարծ սկսեց ամաչել: Նրա աչքերի առջև հայտնվեցին նախ՝ ծերուկ շեֆը՝ իր բարի աչքերով, ում ինքը փաստորեն թալանեց, ապա՝ Լյուդմիլան՝ իր չքնաղ աչքերով, ում ինքը փաստորեն այլևս չէր հասնի, և ապրելը Ալեխանդրոյին անիմաստ թվաց: Նա սկսեց ամաչել ինքն իրենից և պատրաստ էր ամոթից մտնել զուգարանակոնքը: Երևի այդպես էլ կվարվեր, եթե հանկարծ զուգարանակոնքի վերևում չտեսներ մի բաց պատուհան: Եվ նա բնազդաբար որոշեց փախչել:

Պատուհանը չափազանց նեղ էր. մի կերպ խցկվեց, անցավ միջով և ցած ընկնելով՝ ցավեցրեց ոտքը: Կաղալով վազեց դեպի գազալցակայանի տարածքը շրջապատող ցան-

ցե ցանկապատը, գտավ մի անցք, անցավ ու կրկին վազեց: Առջևում՝ մոտ հարյուր մետր այն կողմ, խաղողի այգիներ էին: Շարքերով կանգնած շիվերին առատորեն կախված էին կանաչ ողկույզները, որոնք դեռ չէին հասել:

Ալեխանդրոն սրընթաց անցավ մի քանի շարք, ապա զգաց, որ հոգնել է, և որոշեց մի պահ հանգստանալ: Հևալով, փորը բռնած կքանստեց և առաջին բանը, որ անցավ նրա մտքով, չգիտես ինչու, այն էր, թե ինչու Կուբայում խաղող չի աճում: Բայց ուրիշ բան մտածել չհասցրեց, որովհետև այդ պահին մի սուր ծակոց զգաց հետույքին: Շրջվեց և հետևում տեսավ շագանակագույն նախշերով մի օձ:

Ոստիկանական մեքենաները, գազալցակայանի տարածք մտնելով, կանգնեցին սպասասրահի մուտքի մոտ: Իջան չորս ոստիկան, մոտեցան սուրճի ապարատին և սկսեցին համախմբված մետաղադրամներ նետել այնտեղ:

Վարպետ Վարազդատը արդեն մի քանի տարի՝ սուրճ չէր խմում: Գուցե՝ հինգ, գուցե՝ տասը: Մինչև իր հին «Վոլգան» լիցքավորում էին գազով, նա նստած էր սպասասրահում և հեռախոսով պատմում էր կնոջն օրվա իրադարձությունների մասին: Հետո դուրս եկավ սպասասրահից ու սկսեց սուրճ խմող ոստիկաններին հարցուփորձ անել, թե ինչ վիճակում է Գյումրի տանող ճանապարհը, քանի որ վաղուց չէր անցել դրանով:

Ոստիկանները պատասխանեցին ծերունի վարորդին, ավարտեցին սրճելը, նստեցին իրենց մեքենաները, միացրին լուսային ազդանշանները և հեռացան:

Քիչ անց մոտեցավ գազ լիցքավորող տղան և ասաց, որ լիցքավորումն ավարտված է: Ծերունին վճարեց, տեղաշարժեց մեքենան և սկսեց փնտրել ուղևորին: Փնտրեց հինգ րոպե, տասը, հետո սկսեց նյարդայնանալ: Բանն այն է, որ արտասահմանցին դեռ չէր տվել խոստացած հարյուր դոլարը:

ԵՐԴՎՈՒՄ ԵՄ ՖԻԴԵԼԻ ՀԻՇԱՏԱԿՈՎ

Էսթեբան Ռամիրես-Նունյեսը «Զվարթնոց» օդանավակայանի «VIP» սրահում հեռախոսը ձեռքին անհանգիստ այսուայնկողմ էր քայլում՝ կես րոպեն մեկ հավաքելով քարտուղարի համարը: Քսյուշան ևս այստեղ էր, մինչդեռ Պետրոսն ու Կիրակոսը քարտուղարին փնտրում էին օդանավակայանի մյուս հատվածում:

Երևան-Մոսկվա չվերթով թռիչքի հաշվառումը վաղուց արդեն ավարտվել էր, և սկսվել էր ուղևորների նստեցումը օդանավ:

-Որտե՞ղ կարող է լինել այդ տղան,- բացականչեց ծերուկը՝ հուսահատված թափ տալով ձեռքը:

-Իզուր մի՛ սպասեք, նա չի գա,- հանգիստ ասաց Քսյուշան:

-Այդ քանդակը արժեքավո՞ր է,- հարցրեց կուբացին:

-Այո…- Քսյուշան ուզում էր ասել ճշմարտությունը, բայց մի պահ հապաղեց:

Ճիշտն ասած՝ նա հոգնել էր այս ամենից: Կյանքը վերածվում էր դետեկտիվի, և միակ բանը որ թույլ չէր տալիս նրան շեղվել այս սյուժեից, մեծ գումարի ակնկալիքն էր, որը նա անկեղծորեն տրամադրվել էր տալ «Մարդկանց երկիրը» ստուդիային: Բայց գուցե դեռ ամեն ինչ կորա՞ծ չէր: Եվ նա ավելացրեց՝ ինձ համար այն չափազանց արժեքավոր է:

Ծերուկը բռնեց նրա ձեռքը և հուզված ասաց.

-Մենք կգտնենք այն, խոստանում եմ: Ես ոչ մի տեղ չեմ մեկնում, մնում եմ քեզ հետ:

Մոտեցավ աշխատակցուհին և ասաց.

-Պարո՛ն Նունյես, ժամանակն է բարձրանալ օդանավ:

Քսյուշան նրբորեն ազատեց ձեռքը և սկսեց մտածել: Այդ

պահին «VIP» սրահ մտան տղաները և ասացին, որ փնտրել են քարտուղարին օդանավակայանի ողջ տարածքում ու չեն գտել:

-Ի՞նչ կա ձեզ մոտ,- հետաքրքրվեց Կիրակոսը:

-Ոչինչ: Ծերուկն ուզում է մնալ,- տեղեկացրեց Քսյուշան:

-Նա իմացե՞լ է ոսկու մասին,- անհանգստացավ Կիրակոսը:

-Ոչ, բայց իրեն մեղավոր է զգում և որոշել է մնալ:

Կիրակոսը բարձրացրեց կեպին և սկսեց քորել գլուխը.

-Ոչ, դա մեզ ձեռնտու չէ, նա մեզ կխանգարի: Ասա նրան, որ պետք չէ: Բայց անպայման հեռախոսահամար վերցրու:

Կուբացին համաձայնեց մեկնել՝ պայմանով, որ Քսյուշան ընթացիկ տարում անպայման այցելի Կուբա: Նա մի քանի անգամ էլ ապարդյուն փորձեց զանգահարել քարտուղարին, ապա գրկեց Քսյուշային և ասաց.

-Ես սիրում եմ... Հայաստանը: Եթե դու չգաս, ես կմեռնեմ: Երդվում եմ Ֆիդելի հիշատակով:

Օդանավակայանից Երևան վերադառնալիս բոլորը լուռ էին: Ճանապարհը խցանված էր, և մոտ երկու ժամ այդպես լուռ նստած էին մեքենայում: Կիրակոսը բարձրացրել էր ռադիոընդունիչի ձայնը, և հնչում էր ինչ-որ ռետրո երաժշտություն: Երբ վերջապես հասան կենտրոն, նա առաջարկեց հավաքվել իր տանը և քննարկել հետագա անելիքները:

-Իսկ ի՞նչ կարող ենք անել,- հետաքրքրվեց Պետրոսը:

-Գլխավորը՝ պետք չէ հիասթափվել,- Կիրակոսը մի փոքր իջեցրեց ռադիոընդունիչի ձայնը և շարունակեց,- նախ պետք է ամեն կերպ փորձել ձեռք բերել հյուրանոցի ներսում և դրսում տեղադրված տեսախցիկների ձայնագրությունները: Եթե դրանք չօգնեն գտնել Ալեխանդրոյի հետքը, պետք է ծանոթ գտնել ոստիկանությունում, վերջինիս շահագրգռել և

ոչ պաշտոնական հետախուզում ձեռնարկել: Եվ այս ամենը հարկավոր է անել չափազանց արագ:

Բայց պարզվեց՝ դրա անհրաժեշտությունը չկա: Ռադիոյով լրատվության ժամ էր, և հաղորդավարը ներկայացնում էր օրվա նորությունները: Դրանցից մասնավորապես վերջինն ուներ հետևյալ բովանդակությունը. *«Արագածոտնի մարզի խաղողի այգիներում գյուրզա տեսակի օձը խայթել է Կուբայի մի քաղաքացու: Վերջինս տեղափոխվել է հիվանդանոց: Բժիշկները նրա վիճակը գնահատում են կայուն ծանր»:*

ԼԵՆԻՆԸ՝ ԳԱՐԱԺՈՒՄ

Տաքսու վարորդ աշխատած հիսունհինգ տարիների ընթացքում վարպետ Վարազդատին դեռ ոչ ոք չէր խաբել: Եղել էին դեպքեր, երբ ուղևորը, պարզվել էր, գումար չունի կամ քիչ ունի, և վարպետը սահմանափակվել էր ընդամենը մի լավ հայհոյելով: Բայց այսպես, որ չվճարեն ու փախչեն՝ դեռ չէր եղել:

Միայն թե վարպետը չէր հասկանում իմաստը: Եթե տարօրինակ այդ ուղևորը պիտի փախչեր, ինչո՞ւ էր դա անում ճանապարհի սկզբում: Ենթադրենք՝ նա ուշանում էր ու որոշել էր ճանապարհը շարունակել այլ տաքսիով, այդ դեպքում՝ ինչո՞ւ էր թողնում իրերը: Իսկ եթե նա չէր փախել, ապա որտե՞ղ էր: Մի խոսքով վարպետը ոչինչ չէր հասկանում:

Տասը րոպե սպասելուց հետո՝ նա որոշեց նայել, թե ինչ է թողել ուղևորը մեքենայի սրահում: Բացեց հետևի դուռը, բարձրացրեց սպիտակ սավանը և… ա՛յ քեզ հրաշք:

Ծերուկն այնքան հուզվեց, որ մի պահ մոռացավ ուղևորին ու խոստացված հարյուր դոլարը: Նա տեղավորվեց իր մեքենայի հետևի նստատեղին, գրկեց քանդակը և սկսեց շոյել Լենինի ճաղատը: Դա այնչափ տարօրինակ տեսարան էր, որ սպասասրահի մոտ կանգնած մի մանչուկ մոտեցավ և հարցրեց.

-Պապիկ, Դուք գժվե՞լ եք:

Վարպետը երկար նայեց նրան ու ոչինչ չպատասխանեց:

-Ո՞վ է այս մարդը,- հարցրեց մանչուկը:

Վարպետը դարձյալ լուռ էր:

-Ինչո՞ւ է նրա քիթը ջարդված,- շարունակեց հետաքրքրվել տղան:

Շուտով եկավ հայրը և տարավ որդուն: Ծերուկը դեռ եր-

կար մնաց այդպես նստած՝ իր կուռքի կողքին: Թե ինչ էր կատարվում այդ պահին նրա հոգում, անհնար է նկարագրել:

Երևան վերադառնալիս վարպետը չափազանց դանդաղ էր վարում մեքենան: Սիրտը սովորականից արագ էր խփում, և աչքերի առջև կարծես մշուշ լիներ: Երբ հասավ տուն, նախ կնոջից սրտի կաթիլներ ուզեց, ապա մի քանի րոպե պառկեց բազմոցին ու նոր միայն անդրադարձավ կիսանդրուն: Միայնակ բարձրացնել չկարողացավ և հարևանին խնդրեց օգնել իրեն:

-Որտեղի՞ց սա քեզ,- հետաքրքրվեց հարևանը:

-Ճակատագիրն ուղարկեց,- ամենայն լրջությամբ ասաց ծերուկը:

Տունը, ուր բնակվում էր վարպետ Վարազդատը, այնքան էլ մեծ չէր: Վարպետն ու տիկինն ունեին ընդամենը երկու սենյակ և մի խոհանոց: Եվ իհարկե՝ ավտոտնակը, կամ ավելի ճիշտ՝ գարաժը: Այն վարպետի սրբության սրբոցն էր: Կոկիկ, մաքրամաքուր ու լուսավոր: Հենց այստեղ էլ իր հաջորդ հանգրվանը գտավ Իլյիչը, ում քիթը մի փոքր վնասվել էր:

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Երբ գործընկերներն հասան Աշտարակի հիվանդանոց, ուշ երեկո էր: Հերթապահ բժշկին հանդիպեցին այն պահին, երբ նա դուրս էր գալիս վերակենդանացման բաժանմունքից, ուր պառկած էր Ալեխանդրոն:

-Դո՞ւք եք բժիշկը,- խիստ տոնով հարցրեց Կիրակոսը:

Հերթապահը մի տեսակ վախեցած նայեց Կիրակոսին և գլխով արեց:

-Ինչպե՞ս է կուբացու վիճակը:

-Դուք նրա բարեկա՞մն եք,- անվստահ հարցրեց բժիշկը:

-Ինչպե՞ս կարող եմ ես նրա բարեկամը լինել, եթե նա կուբացի է,- շինծու զայրույթով նետեց Կիրակոսը:

-Դե…- կմկմաց բժիշկը:

-Ինչպե՞ս է նրա վիճակը,- կրկնեց Կիրակոսը:

-Հիվանդին առաջին օգնություն չի ցուցաբերվել, նրան մեզ մոտ են հասցրել շոկային վիճակում,- ասաց բժիշկը, մի տեսակ խեղճացած ձայնով, ապա ավելի վստահ ավելացրեց,- բայց մենք արել ենք հնարավոր ամեն ինչ, և նրա կյանքին վտանգ չի սպառնում:

-Անցնենք Ձեր աշխատասենյակ,- հրահանգեց Կիրակոսը:

-Բայց…- հերթապահն ուզում էր առարկել, սակայն չհամարձակվեց: Քայլեց դեպի միջանցքի վերջը, բացեց սենյակի դուռը և ներս հրավիրեց հյուրերին:

Փոքրիկ սենյակում տեղադրված էին մի գրասեղան, մի աթոռ և հնամաշ մի բազմոց: Կիրակոսը տեղավորվեց գրասեղանի առջև, Պետրոսը՝ բազմոցին, բժիշկը մնաց ոտքի վրա:

-Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչի հետ գործ ունեք, դուք գի-

տակցո՞ւմ եք, թե ով է հիվանդը,- նույն ոճով հարցրեց Կիրակոսը:

-Մենք արել ենք՝ ինչ կարող էինք, հավատացնում եմ Ձեզ,- արդարացավ բժիշկը,- նրան խայթել է գյուրզա տեսակի օձը: Առաջին օգնություն չի ցուցաբերվել: Նման պայմաններում խայթոցը կարող էր հանգեցնել մահացու երիկամային անբավարարվածության և արյունահոսության: Բայց մենք կանխել ենք դա:

-Շատ լավ, եթե ամեն ինչ իսկապես այդպես է, մենք դա չենք մոռանա,- ավելի բարյացակամ ասաց Կիրակոսը:

-Հասկանո՞ւմ եք, բանն այն է, որ օձը խայթել էր նրա հետույքը,- չգիտես ինչու շշուկով ասաց բժիշկը:

-Հետո՞ւյքը,- Կիրակոսը մի կերպ զսպեց ծիծաղը:

-Այո, նստուքի աջ հատվածը, շատ մոտ…

-Ինչևէ,- լրջացավ Կիրակոսը,- հիվանդին պետք է տեղափոխել Երևան:

-Բայց այդպես չի կարելի…- կմկմաց բժիշկը,- հիվանդին հակացուցված է շարժվելը, դա կարող է հանգեցնել ցմահ հաշմանդամության կամ անդամահատման:

-Դուք երևի լավ չեք հասկանում,- կրկին զայրացավ Կիրակոսը,- խոսքը գնում է հայ-կուբայական հարաբերությունների մասին: Սա քաղաքական հարց է:

-Հասկանում եմ, բայց…- բժիշկը չկարողացավ ավարտել խոսքը:

-Լավ, ես Ձեզ վստահում եմ,- ընդհատեց նրան Կիրակոսը,- հիվանդը կմնա այստեղ:

-Այո, այդպես ավելի ճիշտ է,- հանգստացած շունչ քաշեց բժիշկը:

Կիրակոսը որոշ ժամանակ լռեց՝ մտածելով թե ինչպես շարունակել, և այստեղ մեջ ընկավ Պետրոսը.

-Որտեղ են նրա իրերը,- հարցրեց նա:

Բժիշկը կրկին շփոթվեց.

-Ես... Ես չգիտեմ, պետք է հերթապահ բուժքույրին հարցնել:

Հերթապահ բուժքույրը ուղեկցեց գործընկերներին իր աշխատասենյակ և ցույց տվեց պատուհանի գոգին դրված մի կաշվե պայուսակ:

-Ահա,- ասաց նա,- ես այն չեմ բացել:

-Իհարկե բացել եք,- զայրացած նետեց Պետրոսը,- իսկ ո՞ւր է մնացածը:

Բուժքույրն այնպես վախեցավ, որ նրա դեմքը այլայլվեց:

-Ես միայն ուզում էի տեսնել...- նա դրեց ձեռքը սրտին ու սկսեց ծանր շնչել,- ուզում էի նայել...

-Հանգստացե՛ք,- միջամտեց Կիրակոսը,- Ձեզ ոչ ոք չի մեղադրում:

-Ես ոչինչ չեմ վերցրել, երդվում եմ,- բուժքույրը խոսում էր արդեն հեկեկալով,- իսկ ուրիշ բան չի եղել, միայն այս պայուսակն էր:

Պետրոսը պատուհանագոգից վերցրեց պայուսակը, առանց երկմտելու բացեց այն և սկսեց քրքրել:

Քանդակն իհարկե պայուսակում չէր և չէր էլ կարող լինել: Փոխարենը այնտեղ կային մի քանի ճմրթված վերնաշապիկ ու նման բաներ:

-Մանրամասն պատմեք, թե ով և ինչպես է նրան այստեղ բերել,- հերթապահ բժշկին դիմեց Կիրակոսը:

Պարզվեց, որ Ալեխանդրոյին Աշտարակի հիվանդանոց են բերել երկու գյուղացի՝ տրակտորով: Հիվանդը եղել է անգիտակից վիճակում: Գյուղացիները մնացել են այնքան, մինչև պարզել են, որ հիվանդի կյանքին վտանգ չի սպառ-

նում, ու նոր միայն գնացել:

-Հետո եկան ոստիկանները,- շարունակեց բժիշկը,- մենք պարտավոր ենք ոստիկանություն ահազանգել նման դեպքերում, արձանագրություն կազմեցին և հեռացան:

-Իսկ ինչպե՞ս կարելի է գտնել տրակտորով այդ գյուղացիներին,- հետաքրքրվեց Կիրակոսը,- և որտե՞ղ է եղել դեպքը:

Բժշկի փոխարեն պատասխանեց բուժքույրը, ով մի փոքր հանգստացել էր և այլևս չէր հեկեկում:

-Նրանք «սովխոզի» տղերքն էին... Լավ խմած էին... Ասացին, որ այդ մարդուն գտել են խաղողի այգում: Դրել են տրակտորը և բերել հիվանդանոց:

ԸԴԻԳ Ո՞Վ Ի

Գյուղացիներ Համոն ու Վարոն ավարտել էին օրվա գործը, օղին, լոլիկը, պանիրն ու էլի որոշ բաներ դրել տրակտորի թափքին և վաղուց սկսել էին խրախճանքը, երբ հեռվից լսեցին սոսկալի գոռոցներ:

-Ընդիգ ո՞վ իր,- Սասունից եկած պապերի բարբառով հարցրեց Համոն:

-Մարդ իր,- պատասխանեց Վարոն:

-Հըբը ինչի՞ կբոռա:

-Մարդ ի, կբոռա:

Ու չնայած մարդը անմարդկային գոռոցներ էր արձակում, գյուղացիները շարունակեցին խմել: Միայն երբ վերջացավ օղին, անշտապ գնացին ձայնի ուղղությամբ ու տեսան գետնին բերանքսիվայր պառկած Ալեխանդրոյին: Կանգնեցին նրա գլխավերևում ու իրար նայեցին:

-Ըսիգ ո՞վ ի,- հարցրեց Համոն:

-Մարդ ի,- պատասխանեց Վարոն:

-Մը՞ր գեղացի՞ ի,- հարցրեց Համոն:

Վարոն կռացավ, շրջեց Ալեխանդրոյին, ուշադիր նայեց դեմքին ու ասաց.

-Չըմ գինա, բայց վայ թե մը՞ր գեղացու թոռ ի:

-Ո՞ւմ թոռն ի,- հարցրեց Համոն:

Մինչդեռ Ալեխանդրոն գալարվում էր ցավից ու ինչ-որ բան էր ասում, որը սակայն գյուղացիները չէին հասկանում:

-Գսա՝ «զմեյա»,- վերջապես գլխի ընկավ Վարոն:

-Զմեյան ո՞րն ի,- չհասկացավ Համոն:

-Վայ թե «զմեյը»,- բացատրեց Վարոն:

-Իյա՜,- բացականչեց Համոն,- չեղնի՞ օձն ի խածի:

Համոզվելով, որ դա իրոք այդպես է, գյուղացիները մի փոքր լրջացան ու փորձեցին առաջին օգնություն ցուցաբերել: Հավանաբար նման դեպքերի շատ էին առնչվել և գիտեին, որ պետք է վերքից բերանով դուրս քաշել թույնը, որպեսզի այն հնարավորինս քիչ տարածվի արյան մեջ՝ մինչ հիվանդանոց հասցնելը: Բայց նախ պետք էր ճշտել, թե հատկապես որտե՞ղ է խայթել օձը: Եվ այստեղ էր, որ գյուղացիներին լուրջ փորձություն էր սպասվում: Օձն անամոթաբար խայթել էր Ալեխանդրոյի հետույքը:

-Ձը՞ը,- ասաց Համոն:

-Չըմ ձը՞ը,- ասաց Վարոն,- դու ձը՞ը:

-Իյա՜, ես լա չըմ ձը՞ը,- չհամաձայնեց Համոն:

-Հմը ո՞վ գձը՞ը,- հետաքրքրվեց Վարոն:

Մինչ գյուղացիները վիճում էին, Ալեխանդրոն դադարեց գոռալ, որովհետև ուշագնաց եղավ: Ավելորդ է ասել, որ առաջին օգնություն նրան այդպես էլ չցուցաբերվեց, բայց նաև չի կարելի ասել, որ գյուղացիները լրիվ անմարդկային գտնվեցին: Ո՛չ, նրանք քարշ տվեցին Ալեխանդրոյին մինչև

տրակտորը, դրեցին նրան թափքին ու տարան Աշտարակի հիվանդանոց: Այստեղ սպասեցին այնքան, մինչև իմացան, որ մարդու կյանքին վնաս չի սպասվում, գնացին գյուղ և սկսեցին համագյուղացի տղերքին պատմել իրենց քաջագործության մասին, ինչի շնորհիվ արժանացան նրան, որ գյուղի խանութպանը համաձայնեց «փակովի» երեք շիշ օղի տալ: Առաջին շիշը խմեցին գյուղամիջում, մյուս երկուսը՝ Համոյի տնամերձում՝ խոտի դեզի տակ: Այստեղ էլ քնեցին և հենց այստեղ էլ առավոտյան նրանց գտան Պետրոսը, Կիրակոսը և գյուղապետը: Վերջինիս, գործընկերները ներկայացել էին իբրև Արտաքին գործերի նախարարության հատուկ հանձնակատարներ: Թե ինչ է «հատուկ հանձնակատարը», գյուղապետը բնականաբար չէր հասկացել, բայց միևնույն է, գլուխը կորցրած շտապել էր գտնել Համոյին ու Վարոյին:

Նրանց արթնացնելու համար բավական երկար ժամանակ պահանջվեց: Նույնքան երկար ժամանակ պահանջվեց, մինչ նրանք ուշքի կգային ու կհասկանային, որ հյուրեր ունեն. «սերյոզնի հյուրեր»: Հենց այդպես Կիրակոսին ու Պետրոսին ներկայացրեց գյուղապետը և օգնեց գյուղացիներին վեր կենալ:

-Ինչո՞ւ առաջին օգնություն չեք ցուցաբերել արտասահմանցուն,- խիստ տոնով հարցրեց Կիրակոսը:

Համոն մի լավ ճմլկոտվեց, տրորեց աչքերը ու դիմեց Վարոյին.

-Ըսիգ ո՞վ ի:

-Մարդ ի,- պատասխանեց Վարոն՝ նույն գործողություններն անելով:

-Դուք գիտե՞ք, որ արտասահմանցին շատ ծանր վիճակում է:

Սակայն Ալեխանդրոյի առողջական վիճակին վերաբերող հարցերը այդպես էլ չհետաքրքրեցին գյուղացիներին: Համոն շրջվեց մյուս կողքի վրա ու դարձյալ քնեց, իսկ Վա-

րոն թախանձագին նայեց գյուղապետին ու ասաց.

-Սիմոնյան, մարդ էղի, խանութից պիվեմ բեր խմինք:

Խումհարից դուրս գալուց հետո միայն հնարավոր եղավ խոսել գյուղացիների հետ և պարզել, որ նրանք ոչ մի քանդակ չեն տեսել:

-Լենի՞ն,- միաբերան ասացին գյուղացիները,- ըդիգ ռ՞վ ի:

ՔՍՅՈՒՇԱՆ ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԽԱՂԻՑ ՈՒ ՆՈՐԻՑ ՄՏՆՈՒՄ

Իսկ որտեղ էր Քսյուշան, մինչ նրա գործընկերները փնտրում էին իրենց քթի տակից այդպես զավեշտալիորեն անհետացած կիսանդրին:

Քսյուշան հոգնել էր: Քսյուշան հոգնել էր և որոշել էր դուրս գալ խաղից: Նա նորից սկսել էր զբաղվել ամսագրի հրատարակման գործերով, ամեն օր գնում էր լողավազան, խաղում էր մեծ թենիս և գրանցվել էր յոգայի մի խմբակում: Երբեմն էլ ուշ երեկոյան մի քանի բաժակ ռոմ էր խմում՝ անանասի հյութով: Պետրոսի ու Կիրակոսի զանգերին չէր պատասխանում և ամեն կերպ խուսափում էր նրանց հետ հանդիպել:

Ամեն ինչ հավանաբար այդպես էլ շարունակվեր, եթե մի երեկո Երևանի զբոսայգիներից մեկով անցնելիս՝ Քսյուշան չորոշեր սուրճ խմել: Իրար հաջորդող բացօթյա սրճարանները կամ չէին աշխատում, կամ եթե աշխատում էին՝ դատարկ էին ու արհամարհված: Հասկանալի չէր, թե ինչու էր այդպես. այգին գուցե անխնամ էր, բայց կանաչ էր, զով ու գրավիչ:

Սրճարաններից մեկի մոտ Քսյուշան ականատես եղավ մի հետաքրքիր տեսարանի: Սրճարանը կարծես չէր աշխատում. ցանկապատը ծռմռված էր ու ժանգոտած, կտորե ծածկը՝ պատառոտված, իսկ սեղաններն ու աթոռները շարված էին իրար վրա ու կապված մետաղյա շղթայով: Բավական մեծ տարածքի խորքում կառուցված էր մի բեմ, որի վրա խաղում էին երեք մանչուկներ:

Քսյուշան մի քիչ կանգնեց, ապա մտավ սրճարանի տարածք և սկսեց հետևել փոքրիկների խաղին: Դա այնքան էլ խաղ չէր, ավելի շատ նման էր ներկայացման՝ իրեն անծանոթ ինչ-որ մուլտֆիլմի հերոսներով: Եվ Քսյուշայի գլխում մի

միտք ծագեց:

Նա նախ շրջեց լքված տարածքով, մի լավ ուսումնասիրեց այն, ապա անցավ կողքի աշխատող սրճարանը, նստեց առաջին իսկ սեղանի մոտ, սուրճ պատվիրեց և խնդրեց կանչել տնօրենին: Վերջինից սկսեց հարցուփորձ անել կողքի սրճարանի մասին և պարզեց, որ այն վաճառվում է: Ավելի մանրամասների տնօրենը չէր տիրապետում, բայց կարողացավ իմանալ սրճարանի տիրոջ հեռախոսահամարը և փոխանցեց Քսյուշային:

Կարճ ժամանակ անց հայտնվեց տերը: Նա ամբողջովին սև էր հագած և մարմնի տարբեր մասերին կրում էր առնվազն մեկ փութ ոսկի: Քսյուշային տեսնելով՝ նա արձակեց վերնաշապիկի ևս մեկ կոճակ, և պարզվեց, որ ոսկին երկու փութ է:

-Երեք հարյուր հազարով եմ ծախում, բայց քեզ երկու հարյուրով կտամ,- ասաց նա:

Այդ օրը Քսյուշան բավականաչափ վազվզեց: Գնաց քաղաքապետարան, թաղապետարան, անշարժ գույքի կադաստր, հանդիպեց մի ծանոթ ճարտարապետի և իմացավ այն ամենը, ինչ իրեն պետք էր: Ապա կրկին կապվեց սրճարանի տիրոջ հետ և առաջարկեց հարյուր հիսուն հազար: Տերը ժամանակ ուզեց՝ իբր մտածելու:

Հետո Քսյուշան գնաց տուն, իր համար կոկտեյլ պատրաստեց՝ ռոմով ու անանասի հյութով, և սկսեց մտածել:

Գաղափարն իրեն դուր էր գալիս. Երևանի կենտրոնում՝ օղակաձև զբոսայգում, կառուցել թատերասրահ, որն ամառները կլինի բացօթյա, իսկ ձմեռները կփակվի շարժական կոնստրուկցիաների միջոցով: Եվ այստեղ կլոր տարին կարող է գործել «Մարդկանց երկիրը» ստուդիան:

Ստուդիայի երիտասարդները, լսելով ծրագրի մասին, այնքան ոգևորվեցին, որ պատրաստ էին նույն վայրկյանին

սկսել գործը:

Բայց կար մի խնդիր. նախ հարկավոր էր այդ տարածքը գնել:

Եվ Քսյուշան զանգահարեց Կիրակոսին.

-Ինչ կա գործից,- հարցրեց նա:

-Դու նորից մտնում ես խաղի մե՞ջ,- ոգևորվեց Կիրակոսը:

-Կարելի է և այդպես ասել:

ՄԻ ՓՈՔՐ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Երբ գործընկերները պարզեցին, որ գյուղացիները ո՛չ տեսել են Լենինի քանդակը, ո՛չ էլ լսել դրա մասին, հետո նույն գյուղացիների ուղեկցությամբ գնացին այն վայրը, ուր օձը խայթել էր Ալեխանդրոյին ու այնտեղ էլ ոչինչ չգտան, նրանց այլ բան չէր մնում անել, քան սպասել, մինչ տուժածը կկազդուրվի և հնարավոր կլինի նրա հետ խոսել:

Տուժածը, բարեբախտաբար, կազդուրվեց, միայն թե նրա հետ խոսել չստացվեց: Կուբայի քաղաքացու առողջության խնդրով սկսել էին զբաղվել կառավարությունը և օլիգարխի մարդիկ: Վերջիններս նրան Աշտարակի հիվանդանոցից տեղափոխել էին Երևանի մասնավոր մի կլինիկա և սահմանել շուրջօրյա հսկողություն:

Թե ինչի համար է այդ հսկողությունը, գործընկերները սկզբում չէին հասկանում: Ո՞ւմից էին նրան պաշտպանում՝ որ օձը նորից չխայթի:

Ամենավատն այն էր, որ հիվանդի տեսակցությունը խստիվ արգելված էր, և նույնիսկ Կիրակոսը ոչ մի ձև չէր կարողանում գտնել նրա հիվանդասենյակ մտնելու համար: Ոչ մի կերպ չէր ստացվում նաև օլիգարխի հետ հանդիպում կազմակերպել:

Ամեն ինչ պարզ դարձավ միայն, երբ Քսյուշան հեռախոսով խոսեց Էսթեբան Ռամիրես-Նունյեսի հետ: Պարզվեց, որ նա է հոգ տարել, որ իր օգնականը մեկուսացված մնա մինչ կազդուրվելը, այնուհետև անմիջապես տեղափոխվի հայրենիք:

Ալեխանդրոն Երևան-Մոսկվա-Հավանա չվերթով հայրենիք մեկնեց սեպտեմբերի սկզբին, և գործընկերներին այդպես էլ չհաջողվեց խոսել նրա հետ: Սակայն նրանց հաջողվեց հարյուր տոկոսով հավաստիանալ, որ քանդակն Ալեխանդրոն իր հետ չտարավ:

Այսինքն՝ պրոլետարիատի առաջնորդը շարունակում էր մնալ Հայաստանում:

Գործընկերներին հաջողվել էր իմանալ այլ կարևոր բաներ ևս: Մասնավորապես այն, որ մինչ խաղողի այգիներում հայտնվելը, Ալեխանդրոն եղել է մոտակա գազալցակայանում: Բարեբախտաբար, այստեղ տեղադրված էին տեսախցիկներ: Երկար չարչարանքների գնով Կիրակոսը կարողացել էր վերցնել դեպքի օրվա տեսագրությունը, և այն նայելուց հետո ամեն ինչ պարզ էր դարձել: Տեսագրության մեջ հստակ երևում էր, թե ինչպես է գազալցակայանի տարածք մտած տաքսուց դուրս գալիս Ալեխանդրոն և շտապ քայլում դեպի զուգարան: Իսկ վարորդը քայլում է դեպի սպասասրահ: Այնուհետև գալիս են լուսային ազդանշանները միացրած ոստիկանական մեքենաները: Ոստիկանները սուրճ են խմում և հեռանում: Դա տևում է հինգ-տասը րոպե: Ալեխանդրոն այդպես էլ դուրս չի գալիս զուգարանից:

Այս ամենից հետո դժվար չէր հասկանալը, որ կուբացին, տեսնելով ոստիկանական մեքենաները, մտածել է, որ նրանք եկել են իր հետևից, և որոշել է փախչել զուգարանի պատուհանից: Հետո արդեն խաղողի այգիներում հանդիպել է օձին:

Ինչ վերաբերում է տաքսու վարորդին, ապա տեսագրությունից հասկանալի էր, որ նա որոշ ժամանակ իր ուղևորին սպասելուց հետո նույնպես հեռանում է: Եվ դատելով նրանից, որ Ալեխանդրոն մեքենայից իջնում է առանց քանդակի, կարելի էր վստահ լինել, որ քանդակը մնում է մեքենայում: Հետևաբար պետք էր փնտրել մեքենան՝ սպիտակ «Վոլգան», որը պատկանում էր վարպետ Վարազդատին:

ԶՐՈՒՅՑ ՆԱՐԴՈՒ ՇՈՒՐՋ

Վարպետ Վարազդատն իր հարևանների հետ վերա-

բերվում էր այնպես, ինչպես դրոշմանիշեր հավաքողն իր հավաքածուի: Գարաժի մոտ երկու երկար փայտե նստարան ուներ, ավելի ճիշտ՝ իշատնուկ: Ժամանակ առ ժամանակ հավաքում էր բոլոր հարևաններին, տեղավորում իր իշատնուկներին ու երկար-բարակ ուսումնասիրում նրանց: Հարևանները, որպես կանոն, լուռ նստում էին ու սպասում: Որոշ ժամանակ մտածելուց հետո վարպետն առանձնացնում էր դրկիցներից մի քանիսին ու հրավիրում ներս՝ գարաժ: Իսկ մնացածներին ասում էր.

-Ի՞նչ եք նստել էստեղ: Գնացեք ձեր տները, բանուգործ չունե՞ք:

Հարևանները լուռ հնազանդվում էին:

Այն բախտավորները, ովքեր հայտնվում էին գարաժում, հերթով նարդի էին խաղում վարպետի հետ և հերթով պարտվում: Լինում էին իհարկե դեպքեր, երբ նրանք հաղթում էին, բայց նման դեպքերում, որպես կանոն, վարպետը կատաղում էր, դեն նետում զառերը, և նարդու սեանսը դրանով ավարտվում էր:

Այդ երեկո վարպետը դարձյալ իշատնուկի երկայնքով որոշ ժամանակ ճեմելուց հետո կանգ առավ և ասաց.

-Սերո՛ժ՝ դու, Սաքո՛՝ դու, Ղազարյա՛ն՝ դու:

Եվ հրավիրեց նրանց գարաժ՝ նարդի խաղալու: Հետո, մուտքի մոտ փոշմանեց.

-Չէ, Սաքո՛, դու գնա տու՛ն. Ռոմի՛կ դու՛ արի:

Սաքոն մի փոքր վրդովված, բայց առանց ձայն հանելու, հեռացավ մնացածների հետ, և վարպետ Վարազդատի հետևից գարաժ մտան փաստորեն Ռոմիկը, Սերոժը և Ղազարյանը: Ռոմիկը մոտակա նպարեղենի կրպակի տերն էր, Սերոժը «դզող-փչող էր», Ղազարյանը՝ պրոֆեսոր, նախկին դասախոս: Երեքն էլ առանձնապես ուժեղ նարդի խաղացող-

ներ չէին, բայց երեքն էլ տարիքն առած՝ հոգով կոմունստ: Վարպետի այդ օրվա ընտրությունը բնավ պատահական չէր:

-Տեսեք, թե ինչ ունեմ,- ասաց նա՝ ցույց տալով Լենինի կիսանդրին, որ տեղադրված էր անկյունում՝ պատվանդանի վրա:

Որպես պատվանդան ծառայում էին «Վոլգայի»՝ իրար վրա շարված չորս ձմեռային անվադողերը՝ վերից վար կարմիր կտորով ծածկված: Պրոլետարիատի առաջնորդի ճաղատը փայլում էր դեղին լույսի տակ, որն առկայծում էր գարաժի առաստաղից հատուկ այդ նպատակով կախված «Վոլգայի» հակամառախուղային լուսարձակից:

-Սա հո Իլյի՛չն է,- բացականչեց ԽՍՀՄ պատմության նախկին դասախոս Ղազարյանը:

-Հեյ գիտի ժամանակներ...- արձագանքեց Ռոմիկը, ով իր կյանքի լավագույն ժամանակներում եղել էր գաստրոնոմի դիրեկտոր:

-Իսկ ինչո՞ւ է քիթը կոտրված,- զարմացավ Սերոժը, ով թե՛ խորհրդային տարիներին, թե՛ հիմա «դզող-փչող էր» աշխատում:

-Քիթը կարևոր չէ,- վարպետը մոտեցավ կիսանդրուն և գրկեց այն,- քիթը կարևոր չէ:

-Որտեղի՞ց սա քեզ,- հետաքրքրվեց Ղազարյանը:

Սակայն ծեր տաքսիստը ոչինչ չպատասխանեց, նստեց սեղանին դրված նարդու առջև և շարեց խաղաքարերը: Այդ օրը նա պարտվեց առաջին իսկ հակառակորդին, բայց չկատաղեց, ինչպես լինում էր սովորաբար: Գարաժից մտավ տուն ու վերադարձավ՝ ձեռքին մի շիշ «Տոնական» կոնյակ:

-Սա հո Սովետի կոնյակ է,- բացականչեց Ղազարյանը:

-Հեյ գիտի ժամանակներ...- արձագանքեց Ռոմիկը:

-Ես կբացեմ,- ասաց Սերոժը:

Նա վերցրեց հին կոնյակի շիշը վարպետի ձեռքից, թևքով մաքրեց վրայի փոշին և ատամներով հանեց խցանը: Հետո լցրեց բաժակները և ասաց.

-Խմենք վարպետ Վարազդատի կենացը:

-Ո՛չ,- առարկեց վարպետ Վարազդատը,- խմենք Լենինի՛ կենացը:

Չորսն էլ շատ արագ գինովցան. գուցե՝ հուզված էին, գուցե՝ վաղուց չէին խմել, գուցե՝ կոնյակն էր թունդ: Վերջին բաժակը խմելուց հետո վարպետ Վարազդատը մոտեցավ Լենինի քանդակին, նորից գրկեց այն և սկսեց արտասվել: Մյուս երեքը հետևեցին նրան:

ՔՍՅՈՒՇԱՆ ԲԱՑՈՒՄ Է ԽԱՂԱՔԱՐՏԵՐԸ

Սպիտակ «Վոլգայի» փնտրտուքին զուգահեռ Քսյուշան ստիպված էր մտածել մեկ այլ ուղղությամբ: Բանն այն է, որ զբոսայգու սրճարանը, որը նա պարտավորվել էր գնել «Մարդկանց երկիրը» ստուդիայի համար, կարող էր ձեռքից բաց թողնել: Սրճարանի տերը տեղեկացրել էր, որ կա մեկ այլ գնորդ, որը պատրաստ է վճարել հարյուր վաթսուն հազար, սակայն ինքն ասել է, որ խոստացել է սրճարանը մեկ ուրիշի, և եթե Քսյուշան չի մտափոխվել, պետք է շտապի: Քսյուշան չէր մտափոխվել, սակայն շտապել էլ չէր կարող: Գումարը փոքր չէր: Բացի այդ, սրճարանը գնելուց հետո անհրաժեշտ էր լինելու այն ձևափոխել, կառուցապատել և կահավորել, որպեսզի ծառայի ըստ նպատակի: Այլապես կստացվեր, որ Քսյուշան պարզապես ձեռք է բերում կապիտալ, ինչի մտադրությունը նա երբեք էլ չէր ունեցել: Մի խոսքով՝ շտապ փող էր պետք, որը Քսյուշան չուներ: Անիծյալ Լենինն էլ ոչ մի կերպ չէր ուզում գտնվել:

Եվ Քսյուշան որոշեց խորհրդակցել գործընկերների հետ, երբ բոլորը հավաքվել էին Կասկադի պատշգամբում:

-Նա ստում է,- ասաց Կիրակոսը՝ լսելով ողջ պատմությունը,- ոչ մի գնորդ էլ չկա: Բայց քո ինչի՞ն է պետք այդ սրճարանը:

-Ինչո՞ւ ես կարծում, որ ստում է,- հարցրեց Քսյուշան՝ չպատասխանելով երկրորդ հարցին:

-Դա շատ հեշտ է ստուգել: Ասա՛ ինձ նրա հեռախոսահամարը:

Կիրակոսը վերցրեց հեռախոսը և զանգահարեց սրճարանի տիրոջը: Ասաց, որ շտապ ուզում է գնել սրճարանը, ապա իջեցրեց գինը մինչև հարյուր քսանհինգ հազար, հետո հայտարարեց, որ դեռ վերջնական որոշում չի կայացրել և

ավելի ուշ կտեղեկացնի:

-Տեսնո՞ւմ ես, ամեն ինչ շատ հեշտ է,- իրենից գոհ ասաց նա՝ անջատելով հեռախոսը,- մի՛շտ իմացեք, երբ երկրում տեղի է ունենում անգամ աննշան ցնցում, մարդիկ ժամանակավորապես խուսափում են սեփականություն ձեռք բերելուց, իսկ մեր երկրում տեղի ունեցած ցնցումն այնքան էլ աննշան չէր:

-Դու երբևէ չե՞ս մտածել պատգամավոր դառնալու մասին,- չգիտես ինչու հարցրեց Պետրոսը:

-Ինձ մի անգամ ուզում էին առաջադրել Ռուսաստանի Դումայի ընտրություններում: Շահագրգռված էր անձամբ Ժիրինովսկին, բայց ես հրաժարվեցի:

Այդ պահին զանգեց Քսյուշայի հեռախոսը: Սրճարանի տերն էր: Քսյուշան լսեց նրան ժպտալով:

-Ի՞նչ էր ուզում,- հարցրեց Կիրակոսը, երբ խոսակցությունն ավարտվեց:

-Ասում էր, որ գնորդ ունի, ով պատրաստ է վճարել հարյուր յոթանասունհինգ հազար, բայց քանի որ ինքն իր խոսքի տերն է, ինձ տալիս է վերջին շանսը:

-Ես վստահ եմ, որ նա վերջում հարյուր հազարի էլ կհամաձայնի,- միջամտեց Պետրոսը,- միայն թե դուք դատարկ գործով եք զբաղված:

-Իսկապես,- համաձայնեց Կիրակոսը,- ինչի՞դ է պետք այդ սրճարանը, Քսյուշա:

Քսյուշան մի փոքր մտածեց և ասաց:

-Ձեր կարծիքով ես ինչո՞ւ եմ եմ մտել այս գործի մեջ:

Պետրոսն ու Կիրակոսը զարմացած նրան նայեցին: Եվ Քսյուշան պատմեց իր ծրագրերի մասին:

-Եթե մենք գտնենք ոսկին և իրացնենք այն, ես պատրաստ եմ տալ սրճարանը գնելու համար անհրաժեշտ գումա-

րի կեսը,- ամենայն լրջությամբ ասաց Կիրակոսը:

-Չափազանց հուզիչ է,- չարախնդաց Պետրոսը,- բայց նախ պետք է գտնել ոսկին:

-Այո՛,- համաձայնեց Կիրակոսը,- հարկավոր է էլի մի փոքր հետաքննություն:

ԷԼԻ ՄԻ ՓՈՔՐ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Գործընկերներին մոտ մեկ ամիս պահանջվեց «Վոլգան» գտնելու համար: Ճիշտ է, գազալցակայանի տեսախցիկները ֆիքսել էին մեքենայի համարանիշերը, սակայն պարզվեց ամեն ինչ այնքան էլ հեշտ չէ:

Նախ, երկար չարչարանքների գնով հաջողվեց վերցնել տեսագրությունները: Հետո պետք էր պետավտոտեսչությունից իմանալ, թե ում անունով է գրանցված սպիտակ «Վոլգան»: Կիրակոսին դա անել չհաջողվեց: Չօգնեցին նաև ծանոթ պատգամավորները, ասացին՝ իրավիճակ է փոխվել, ու փոխվել են նաև պետավտոտեսչության իրենց ղեկավար ընկերները: Ստիպված էր միջամտել Քսյուշան, ում հմայքին նոր ղեկավարը չդիմացավ և դողացող ձեռքով տվեց մեքենայի սեփականատիրոջ տվյալները: Ոմն՝ Սերոբ Սերոբյան: Գործընկերները գնացին վերջինիս գրանցման հասցեով: Սակայն այստեղ սպասվում էր հաջորդ հիասթափությունը: Պարզվեց, որ այդ հասցեում գտնվող բնակարանը տրված է վարձով, և վարձով տվողը ոչ թե Սերոբ Սերոբյանն է, այլ անշարժ գույքի ինչ-որ գործակալություն: Գործակալությունից հրաժարվեցին տրամադրել բնակարանի տիրոջ հեռախոսահամարը՝ թերևս մտածելով, որ դիմողները ցանկանում են գնել բնակարանը, որն իրենք բարձր միջնորդավճարով տալիս էին օրավարձով: Դարձյալ միջամտեց Քսյուշան, ու այս անգամ էլ գործակալության ղեկավարը չդիմացավ նրա հմայքին: Սակայն հեռախոսահամարը, որը նա տրամադրեց, Սերոբ Սերոբյանինը չէր, այլ նրա կնոջը: Ինքը՝ Սերոբ Սերոբյանը Հայաստանում չէր: Հարցին, թե որտեղ է, նրա կինը պատասխանեց՝ սև «ջհանդամում»: Տիկնոջ հետ հանդիպեց Պետրոսը և պարզեց, որ սև «ջհանդամը» Սիկտիվկարն է, ուր Սերոբ Սերոբյանը գնացել է «խոպան»: Չդիմա-

նալով Պետրոսի հմայքին՝ տիկինը պատմեց այլ մանրամասներ ևս: Մասնավորապես, որ Սերոբ Սերոբյանը Սիկտիվկարում ուներ մեկ այլ կին և այդ կնոջից՝ երկու երեխա: Ավելին, վերջին տասը տարում նա ընդամենը հինգ անգամ էր փող ուղարկել, և տիկինը ստիպված էր օրավարձով տալ կենտրոնում գտնվող բնակարանը և ապրել ծայրամասում՝ ծնողների մոտ: Սպիտակ «Վոլգայի» մասին նա առաջին անգամ էր լսում: Ամուսնու հեռախոսահամարը նա իհարկե սիրահոժար տրամադրեց Պետրոսին, բայց հետո, երբ գործընկերները փորձեցին զանգել դրանով, պարզվեց, որ նման հեռախոսահամար գոյություն չունի: Համենայնդեպս, այդպես էր ասում ռուս օպերատորի ձայնը: Սա արդեն փակուղի էր: Իսկ ամենավատն այն էր, որ քանդակի անհետանալուց արդեն անցել էր բավականաչափ ժամանակ, և սպիտակ «Վոլգայի» վարորդը, ով էլ որ նա լիներ, կարող էր այս ընթացքում իմացած լինել քանդակի գաղտնիքը:

Սակայն կարող էր նաև իմացած չլինել: Բոլոր դեպքերում պետք էր գտնել նրան: Եվ Կիրակոսը գործի դրեց Ռուսաստանում ունեցած իր կապերը: Մոսկվայի արբիտրաժային դատարանի դատավոր Կապիտոլինա Սեմյոնովնան, ով ժամանակին չէր դիմացել Կիրակոսի հմայքին, կապվեց Կոմի Հանրապետության դատարանի նախագահի հետ, նա էլ, իր հերթին՝ ոստիկանության մի գեներալի, և սեպտեմբերյան մի ցուրտ երեկո Սերոբ Սերոբյանը բերման ենթարկվեց Սիկտիվկարի ոստիկանության բաժանմունք: Հենց այստեղից էլ նա կապ հաստատեց Կիրակոսի հետ: Պարզվեց, որ խնդրո առարկա սպիտակ «Վոլգան», որը ժամանակին եղել է դեղին և ծառայել է որպես տաքսի, երբեք իրեն չի պատկանել: Հեռավոր հազար ինը հարյուր իննսունմեկին տաքսապարկից այն օտարել է իր քեռին և գրանցել զարմիկի անունով: Այդ ժամանակ տաքսին դեռ Խորհրդային Միության տիպի պետհամարանիշերով էր: Այնուհետև քեռին այն ներկել է

սպիտակ գույնի և հազար ինը հարյուր իննսունյոթին կրկին վերագրանցել Սերոբի անունով, այս անգամ՝ նոր, հայկական պետհամարանիշերով: Քեռուն վերջին անգամ տեսել է տասը տարի առաջ, նա նույն մեքենան դարձյալ վարում էր իբրև տաքսի: Բնակվում է քեռին Արեշում, նրա անունը Վարազդատ է: Այսքանը:

Թե ինչ եղավ Սիկտիվկարի ոստիկանական բաժանմունք բերված Սերոբ Սերոբյանի հետագա ճակատագիրը՝ գործընկերները չիմացան: Նրանք շտապեցին Արեշ՝ գտնելու սպիտակ «Վոլգան», ավելի ճիշտ, դրա իրական տիրոջը՝ վարպետ Վարազդատին:

Երկու հազար տասնութ թվականի սեպտեմբերի երեսունն էր, օրը՝ կիրակի: Վարպետ Վարազդատը իր գարաժի դիմաց տեղադրված իշատնուկներին հավաքել էր համաթաղեցիներին և ընտրում էր, թե ում հրավիրի ներս՝ իր հետ նարդի խաղալու, երբ դիմացը կանգնեց մի սպիտակ «Range Rover» և դրա միջից իջավ սպիտակ կոստյումով ու սպիտակ կեպիով մի տղամարդ:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԻ ՔԻԹԸ ՉՋԱՐԴՎԵՑ

Եթե Կիրակոսն իմանար, որ այդ պահին Լենինի կիսանդրին գտնվում է իրենից տասը մետր հեռավորության վրա և դեռ ավելին, նրա գաղտնիքն ամենևին էլ բացահայտված չէ, նա հավանաբար այլ մարտավարություն կընտրեր: Բայց առայժմ նա ընդամենը ուրախ էր, որ վերջապես իրենց հաջողվեց գտնել սպիտակ «Վոլգան», որն ահա փայլում էր աշնանային արևի տակ:

Կիրակոսն ինքն էլ սպիտակ «Վոլգա» ունեցել էր՝ հեռավոր իննսունականների սկզբին, և որքան էլ որ այն պահել էր աչքի լույսի պես, պետք էր ընդունել, որ այս մեկը շատ ավելի լավն էր: Թերևս կարելի էր դրա տիրոջ հետ լեզու գտնել: Եվ Կիրակոսը գործեց առաջին սխալը:

-Ո՞ւմն է այս գեղեցկուհին,- հարցրեց նա գարաժի մոտ հավաքված տղամարդկանց:

Բոլորը նայեցին վարպետ Վարազդատին՝ չհամարձակվելով նրա փոխարեն պատասխանել: Իսկ վերջինս մի խեթ հայացք նետեց Կիրակոսի վրա և ասաց.

-Գեղեցկուհին քեռուդ կինն է:

-Իմ քեռու կինը լահմաջոյի մի փոքրիկ փուռ ունի Ստամբուլում: Վերջին տվյալներով նա կշռում էր հարյուր երեսուն կիլոգրամ,- Կիրակոսը մոտեցավ վարպետին,- որքան հասկացա՝ Դուք եք Վարազդատը:

-Վարազդատը, հաստատ ես եմ,- անտարբեր ասաց վարպետը,- իսկ դո՞ւ ով ես:

-Ես Ձեզ հետ գործնական խոսակցություն ունեմ,- լրջացավ Կիրակոսը

-Ի՞նչ խոսակցություն:

Այստեղ Կիրակոսը գործեց երկրորդ սխալը.

-Կարո՞ղ ենք առանձնանալ,- հարցրեց նա:

-Աղջի՛կ ես, ինչ է, որ քեզ հետ առանձնանամ,- ծիծաղեց վարպետը:

Մնացածները նույնպես համախմբված ծիծաղեցին, և Կիրակոսն հասկացավ, որ հայտնվում է անհեթեթ վիճակում: Պետք էր ինչ-որ բան անել: Նա իհարկե փորձեց, բայց ավելի լավ է՝ չփորձեր:

-Պարոն Վարազդատ…

-Ինձ «պարոն» չասես, «պարոնը» դու՛ ես,- կատաղեց վարպետը:

-Մի րոպե լսե՛ք…

- Պարոններով թալանեցիք այս երկիրը: Որտեղի՞ց քեզ այս մեքենան,- ծերուկը մատնացույց արեց քիչ այն կողմ կանգնած ամենագնացը,- ժողովրդից թալանած փողերո՞վ ես գնել:

-Մի րոպե լսեք, ես Ձեզ ամեն ինչ կբացատրեմ,- վարպետին փորձեց հանգստացնել Կիրակոսը,- ես Ձեր բարեկամն եմ, ոչ թե թշնամին:

Սակայն վարպետը չէր ուզում լսել: Նա բացեց գարաժի դուռը ու աշխարհի բոլոր «պարոնների» հասցեին թունդ հայհոյանքներ տալով՝ ներս մտավ:

Կիրակոսը որոշեց վերջին փորձն անել և դիմեց շուրջը հավաքվածներին.

-Ես իսկապես լավ բան եմ ուզում առաջարկել նրան, կարո՞ղ եք համոզել, որ լսի:

Հավաքվածներն անվստահ իրար վրա նայեցին: Միակ համարձակը գտնվեց դզող-փչող Սերոժը:

-Վարազդատը հին մարդ է,- բացատրեց նա,- նրան մոտենալու ճիշտ ձև է պետք, իսկ դու ասում ես՝ «պարոն»:

Այստեղ Կիրակոսը գործեց վերջին՝ ճակատագրական սխալը:

-Ես ընդամենը ուզում էի գնել նրա հին մեքենան,- մեղավոր տոնով ասաց նա,- պատրաստ էի լավ գին վճարել:

Սխալը գուցե ճակատագրական չլիներ, եթե նրա ասածը լսեր միայն Սերոժը կամ անգամ բոլոր մյուս հավաքվածները, միայն ոչ վարպետ Վարազդատը: Վերջինս այդ պահին գարաժի ներսում, սեղանի մոտ նստած՝ շարում էր նար-

դու խաղաքարերը:

-Ի՞նչ ասաց,- բացականչեց նա՝ կարծես չհավատալով լսածին:

Դզող-փչող Սերոժը գուցե դեռ կարողանար փրկել իրավիճակը: Գուցե կարողանար վարպետին համոզել, որ նա սխալ է լսել և կանխել պայթյունը, եթե Կիրակոսը ներս չմտներ գարաժ:

Երբ նա մտավ գարաժ, տեղի ունեցավ երկու բան. վարպետ Վարազդատը ձեռքի խաղաքարերը նետեց նրա դեմքին, բայց մինչ այդ Կիրակոսը հասցրեց տեսնել անկյունում կարմիր շորով ծածկված պատվանդանի վրա դրված Վլադիմիր Իլյիչ Լենինի կիսանդրին՝ քիթը ջարդված:

Սեփական քիթը, որը նույնպես աշնանային այդ կիրակի օրը ամենայն հավանականությամբ կջարդվեր, Կիրակոսը բարեբախտաբար կարողացավ փրկել: Ավելի ճիշտ, փրկեցին հավաքվածները՝ դասախոս Ղազարյանի գլխավորությամբ, ովքեր կենդանի վահան կազմելով՝ չթողեցին, որ վարպետը նարդու տախտակը ձեռքին մոտենա Կիրակոսին:

ՀԱՋՈՐԴ ՕՐԸ ԿԱՐԵԼԻ Է ԲԱՑ ԹՈՂՆԵԼ

Ծեր տաքսիստի հետ ունեցած բախումից հետո Կիրակոսը մի քանի օր ուշքի չէր գալիս: «Ժուլիկի» իր երկարամյա կարիերայի ընթացքում, իհարկե, էլի եղել էին դեպքեր, երբ ինքը չէր կարողացել հասնել ուզածին, երբ անհարմար վիճակներում էր հայտնվել, երբ անգամ քաշքշուկի ու կռվի մեջ էր ընկել: Բայց, որ իրեն՝ Կիրակոսին վռնդեին, դեռ այդպիսի բան չէր եղել:

Նա այնքան ընկճված էր, որ անգամ Պետրոսն էր սկսել նրան ոգեշնչել:

-Պատահում է,- ասաց նա, երբ բոլորով հավաքվել էին Կասկադի տանը,- ինձ մի անգամ Օրեգոնի հնդկացիական համայնքում այնպես ջարդեցին, որ ստիպված էի քիթս վիրահատել:

-Ի՞նչ էիր անում հնդկացիական համայնքում,- հարցրեց Քսյուշան:

-Այնտեղ խաղատներ կան: Միացյալ Նահանգների կառավարությունը թույլ է տալիս հնդկացիներին ցեղային համայնքների շրջանակներում ծավալել խաղատնային գործունեություն: Ամերիկայում մոտ հինգ հարյուր նման խաղատուն կա, բայց հնդկացիների հետ դժվար է,- խոստովանեց Պետրոսը:

-Դու սովորաբար ի՞նչ ես խաղում կազինոյում,- հետաքրքրվեց Քսյուշան:

-«Բլեք Ջեք»:

-Իսկ նարդի խաղալ գիտե՞ս:

-Ո՛չ:

-Ափսոս:

-Ինչո՞ւ:

-Կարող էիր տաքսիստին հաղթել: Խաղալ Լենինի կիսանդրու վրա և հաղթել:

Հետո Քսյուշան դարձավ Կիրակոսին.

-Ինչո՞ւ ես քիթդ կախել, ուրախանալ է պետք: Չէ՞ որ մենք գրեթե հույսներս կորցրել էինք, որ կգտնենք Լենինին, այն էլ՝ ողջ-առողջ:

Սակայն Կիրակոսը ոչինչ չպատասխանեց:

-Հաջորդ փորձը կանեմ ես,- հայտարարեց Պետրոսը:

-Ի՞նչ փորձ,- չհասկացավ Քսյուշան:

-Տաքսիստի հետ լեզու գտնելու:

-Եվ ինչպե՞ս ես պատրաստվում դա անել:

-Շատ պարզ. ես կներկայանամ:

-Դու միայն այդ մի ձևը գիտես: Չնայած այս դեպքում դա կարող է աշխատել:

-Այո, կարող է աշխատել:

Երկուսն էլ նայեցին Կիրակոսին, սակայն նա համառորեն լռում էր:

-Ծերուկը չի սիրում հարուստներին, ճի՞շտ է,- շարունակեց Պետրոսը,- ես նրա մոտ կգնամ մաշված կոստյումով և պատռված կոշիկներով:

-Իսկ գուցե հակառա՞կը,- հեգնեց Քսյուշան,- պատռված կոստյումով և մաշված կոշիկներով:

Բայց Պետրոսը ուշադրություն չդարձրեց և շարունակեց այնպես, կարծես բարձրաձայն մտածում էր:

-Կասեմ, որ Պետրոս Գրիգորիչի թոռն եմ: Հետս կվերցնեմ մեր ընտանեկան ալբոմը: Կլացեմ մի քիչ, եթե պետք լինի: Հետո կասեմ, որ քանդակը պատկանում է պապիս և նրանից մնացած միակ հիշատակն է: Պետք է միայն մտածել, թե ինչպես է այն հայտնվել կուբացու մոտ:

Այստեղ Կիրակոսի մոտ կենդանության նշաններ հայտնվեցին: Նա նույնիսկ վեր կացավ և սկսեց քայլել:

-Կտեսնեք, որ կաշխատի,- ավելի ոգևորված շարունակեց Պետրոսը,- ես կխաղամ ծերուկի հոգու նուրբ լարերի վրա:

Կիրակոսը բարից հանեց մի շիշ իռլանդական վիսկի, դրեց սեղանին և առանց կոնկրետ մեկին դիմելու՝ ասաց.

-Այսօր խմում ենք: Ավելի ճիշտ՝ հարբում:

-Ինչո՞ւ հարբում,- զարմացավ Պետրոսը:

-Որովհետև դա է լավագույն լուծումը,- Կիրակոսը լցրեց բաժակները:

-Ես երբեք երեք բաժակից ավելի չեմ խմում,- լրջացավ Պետրոսը,- առավելագույնը երեք:

-Ինչո՞ւ,- հարցրեց Քսյուշան,- խմած ժամանակ քեզ շնորհքով չե՞ս պահում:

-Ոչ, պարզապես միշտ կա հաջորդ օրը, երբ մարմինդ կոտրտվում է և գլուխդ՝ պայթում: Ի՞նչ անեմ հաջորդ օրը:

-Հաջորդ օրը կարելի է բաց թողնել,- ասաց Կիրակոսը՝ մի շնչով դատարկելով բաժակը:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՊԵՏ ՎԱՐԱԶԴԱՏԸ ՔԱՇԵՑ ՊԵՏՐՈՍԻ ԱԿԱՆՋԸ, ԱՎԵԼԻ ՃԻՇՏ՝ ԱԿԱՆՋՆԵՐԸ

Պետրոսը վարպետ Վարազդատի տան դուռը թակեց երեկոյան ժամը ութին, երբ մութն արդեն ընկել էր, և բակում հավաքված հարևանները ցրվել էին: Նրա հագին պապի հնաոճ կոստյումն էր, ձեռքին պապի հնաոճ պայուսակը, որոնք երկար բանակցությունների արդյունքում համաձայնել էր տալ տատը՝ Սեդա Լևոնովնան:

Մինչ այդ Պետրոսը հանգամանալից զրույց էր ունեցել Կիրակոսի հետ՝ առանց Քսյուշայի:

-Ծերուկը քեզ քանդակը չի տա, մոռացի՛ր,- ասել էր Կիրակոսը,- բայց նրա տուն գնալ, իհարկե, պետք է: Ավելին, դու պետք է ամեն ինչ անես, որ նա քեզ տանի իր գարաժը: Հասկանո՞ւմ ես:

-Հասկանո՞ւմ եմ,- պատասխանել էր Պետրոսը:

Թե ի՞նչ էին այդպես թաքուն հասկանում այս երկուսը, հավանաբար հասկանալի է: Ինչևէ, երբ Պետրոսը թակեց վարպետ Վարազդատի տան դուռը՝ հագին պապի հնաոճ կոստյումը և ձեռքին պապի հնաոճ պայուսակը, ներսից արձագանքեց կանացի մի ձայն.

-Ո՞վ է:

-Վարպետ Վարազդատը տա՞ննէ,- հարցրեց Պետրոսը, չնայած հաստատ գիտեր, որ նա տանն է:

Դուռը բացեց կարմիր մազերով չափազանց կլոր մի կին և ոտքից գլուխ չափելով Պետրոսին՝ ասաց.

-Ի՞նչ է պետք:

-Ես վարպետ Վարազդատի ընկերոջ թոռն եմ:

Տիկինը մի անգամ էլ չափեց երիտասարդին և, երևի չկարողանալով հասկանալ, թե ինչ ընկերոջ մասին է խոսքը՝ նետեց.

-Նա գարաժում է:

Հետո ուղեկցեց խոհանոց, որտեղից գարաժ տանող մի փոքր դուռ էր բացվում:

Ներս մտնելով՝ Պետրոսը չէր կարող տեսնել վարպետ Վարազդատին, քանի որ վերջինս մեքենայի տակ էր՝ վերանորոգման համար նախատեսված փոսում:

Փոխարենը նա տեսավ պատվանդանին դրված Լենինի կիսանդրին: Ավելորդ է ասել, որ նա այնպես շփոթվեց, որ մոռացավ նախապես պլանավորած սցենարը, նետվեց դեպի կիսանդրին ու շատ հնարավոր է, որ գրկեր այն ու հեռանար, եթե վարպետ Վարազդատը չբացականչեր.

-Ձեռք չտա՛ս:

Պետրոսը մեխանիկորն շրջվեց, բայց ոչ մեկի չտեսավ:

-Ի՞նչ ես ուզում,- շարունակեց գոռալ վարպետը մեքենայի տակից,- և ո՞վ ես դու:

Այստեղ Պետրոսը վերջնականապես փչացրեց ամեն ինչ:

-Այս քանդակն իմն է,- ասաց նա:

Վարպետն հենց այնպես չէր մտել մեքենայի տակ: Նա յուղում էր «Վոլգայի» ընթացամասերը: Եվ, երբ դուրս եկավ փոսից, ձեռքերն ամբողջովին յուղի մեջ էին:

-Քո՞նն է,- գոռաց նա բռնելով Պետրոսի ականջը,- առը հա, թե քոնն է:

Եվ մի փառահեղ ապտակ հասցրեց լկտի երիտասարդին: Հետո դարձավ կնոջը, ով, պետք է ասել, ամենևին էլ չէր զարմացել տեսածից:

-Ինչո՞ւ ես սրան ներս թողել:

-Ասաց, որ ընկերոջդ թոռն է:

Վարպետը շարունակում էր բռնած պահել Պետրոսի ականջը, իսկ վերջինս ապարդյուն փորձում էր ազատվել:

-Բա՛ց թողեք,- գոռում էր նա,- այս պայուսակում պապիս լուսանկարներն են:

-Ի՞նչ պապ:

-Պետրոս Գրիգորիչի:

-Տաքսապարկի՞ց:

-Ոչ, Կենտկոմից: Բա՛ց թողեք, ես ցույց կտամ:

Վարպետը բաց թողեց Պետրոս կրտսերի ականջը, որը յուղից սևացել էր: Իսկ ձախ այտին դրոշմվել էր վարպետի ափի յուղոտ դաջվածքը:

Պետք է ասել, որ նկարները ծերունի տաքսու վարորդի վրա հատուկ տպավորություն չթողեցին:

-Է հետո՞,- հարցրեց նա՝ մի հպանցիկ հայացք նետելով Պետրոս ավագի վրա:

-Պապս է, նա Խորհրդային Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար էր:

Վարպետը մեկ անգամ էլ նայեց վերջին նկարին, բայց նույն սառը հայացքով: Հետո կոպտորեն դեն նետեց այն և ասաց.

-Եթե սա քո Կոմկուսի քարտուղար պապն է, ուրեմն դու կարող ես մտնել իմ գարաժ և ասել, որ Լենինի քանդակը քո՞նն է:

-Ոչ թե իմն է, այլ՝ նրանը,- փորձեց բացատրել Պետրոսը:

-Ի՞նչ,- չհասկացավ վարպետը:

-Քանդակը պատկանում էր պապիս, նա թողել է այն ինձ, և մի կուբացի…

Բայց Պետրոսը չհասցրեց ավարտել, որովհետև վարպետը կրկին բռնեց նրա ականջը՝ այս անգամ՝ աջը: Սակայն չապտակեց, այդպես ականջից քարշ տալով տարավ դեպի գարաժի դուռը և դուրս արեց Կոմկուսի կենտկոմի նախկին քարտուղարի թոռանը:

ՔՍՅՈՒՇԱՆ ՏԱՔՍԻ Է ՆՍՏՈՒՄ

Քսյուշան հազվադեպ էր օգտվում տաքսիներից: Մոսկվայում ապրելու վերջին երկու տարիներին ուներ մի «Masserati», դրանից առաջ՝ մի «Mini Cooper», իսկ դրանից առաջ՝ ապավինում էր իր երկար ոտքերին: Երևանում նույնպես սիրում էր քայլել, ու չնայած միշտ և ամենուրեք հայտնվում էր համընդհանուր ուշադրության կենտրոնում, դրանից իրեն ո՛չ լավ էր զգում, ո՛չ վատ:

-Գեղեցկուհիները լինում են երկու տեսակի,- մի անգամ ասել էր Կիրակոսը,- նրանք, ովքեր նայում են, թե ինչպես են իրենց նայում, և նրանք, ովքեր չեն նայում, թե ինչպես են իրենց նայում:

-Իմը պարզապես մասնագիտություն է,- ժպտացել էր Քսյուշան:

Համենայնդեպս, տաքսի նստել նա չէր սիրում:

Միայն թե հիմա ստիպված էր: Երկու գործընկերների փառահեղ ձախողումներից հետո դարձյալ վերջին հույսը նա էր: Ծրագիրն այսպիսին էր. առաջին անգամ Քսյուշան նստում է վարպետ Վարազդատի տաքսին իբր թե պատահական՝ այն տեղում, ուր սովորաբար կայանում է վարպետը: Ուղևորության ընթացքում նա իր հիացմունքն է հայտնում հին ու հրաշալի պահպանված «Վոլգայի» հանդեպ և փորձում սիրաշահել վարորդին: Այնուհետև առաջարկում է նրան մշտապես սպասարկել իրեն՝ խոստանալով խելամիտ բարձր վճար: Հետո արդեն՝ հանգամանքների բերումով:

Եվ ահա երկու հազար տասնութ թվականի հոկտեմբերի տասնյոթին, առավոտյան ժամը իններին Քսյուշան մոտեցավ Մաշտոցի պողոտայի փակ շուկայի մոտ կանգնած ճերմակ «Վոլգային» և բացեց հետևի դուռը:

-Ազա՛մտ եք:

Վարպետ Վարազդատը հենց նոր էր կայանել մեքենան, կողքի կրպակից գնել էր օրվա թերթերը և բացել դրանցից մեկը: Նա դեմքի չափազանց անհանգիստ արտահայտությամբ կարդում էր մի վերնագիր, այնքան անհանգիստ, որ կարելի էր մտածել, թե այն գուժում էր երրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը:

Սակայն պարզվեց՝ այլ բան էր:

-Նիկոլը հրաժարական է տվել,- հարցրեց վարորդը Քսյուշային, այնպես, կարծես հարցնում էր՝ ո՞ւր եք գնում:

-Ինչպես թե՞ հրաժարական է տվել,- զարմացավ Քսյուշան:

-Նստի՛ր,- ասաց վարպետը,- ահա՛, նայի՛ր:

Եվ մեկնեց թերթը: Առաջին էջում վարչապետի նկարն էր, իսկ վերևում նյութի վերնագիրը, ուր իսկապես գրված էր՝ *«Նիկոլ Փաշինյանը հրաժարական տվեց»:* Մնացածը Քսյուշան ընթերցեց բարձրաձայն. *«Սիրելի՛ հայրենակիցներ, սիրելի՛ ժողովուրդ, Հայաստանի Հանրապետության հպա՛րտ քաղաքացիներ, ինչպես և ասել էի, ես այսօր հրաժարական եմ տալիս Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնից: Այս հրաժարականի նպատակը սակայն վարչապետի պաշտոնից հեռանալը, այսինքն՝ ձեր առաջ ստանձնած պատասխանատվությունից փախչելը չէ, այլ ընդհակառակը՝ մեր միասին իրականացրած ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությունն ավարտին հասցնելը՝ արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու և ողջ իշխանությունը ժողովրդին վերադարձնելու միջոցով»:*

Այստեղ վարպետն ընդհատեց և անհամբեր հարցրեց.

-Չհասկացա, հիմա հրաժարական՞ն է տվել, թե՞ ոչ:

-Մի րոպե,- ասաց Քսյուշան և շարունակեց ընթերցել,- *«Այս ողջ ընթացքում կառավարության անդամները շարունակելու են իրենց պարտականությունների կատարումը, ես շարունակելու եմ կատարել Հայաստանի Հանրապետության*

վարչապետի սահմանադրական լիազորությունները, ասել է թե՝ շարունակելու եմ լինել ժողովրդի հաղթանակի երաշխավորը, ու եթե դեկտեմբերին կայանալիք ընտրություններում դուք վստահության քվե տաք մեր քաղաքական ուժին, ես կվերընտրվեմ ՀՀ վարչապետի պաշտոնում»:

-Հիմա Նիկոլը վարչապե՞տ է, թե՞ ոչ,- դարձյալ չհասկացավ վարորդը:

-Վարչապետ է,- հաստատեց Քսյուշան:

-Ես դրա…- վարպետ Վարազդատը մի կերպ զսպեց իրեն,- ո՞ւր եք գնում:

-Կասկադ: Չե՞ք սիրում նոր իշխանություններին:

-Ի՞նչ,- բարկացավ վարպետը,- ես ոչ մի իշխանությունների էլ չեմ սիրում: Թալանեցին երկիրը:

-Բայց սրանք դեռ չեն թալանել:

-Չեն թալանել, կթալանեն: Ասացիք ո՞ւր եք գնում:

-Կասկադ,- կրկնեց Քսյուշան և փորձեց փոխել խոսակցության թեման,- ի՞նչ լավ մեքենա է:

Բայց վարպետը կարծես թե դեմ էր փոխել թեման.

-Սկզբում Լևոնն էր, ես դրա… ամեն ինչ քանդեց:

-Երևի շատ հին է, հա,՞ այս մեքենան…

-Հետո եկավ Քոչարյանը, ես դրա… ամեն ինչ ծախեց:

-Ես քաղաքականությունից չեմ հասկանում…

-Հետո էլ Սերժը, ես դրա… ամեն ինչ կերավ:

-Բայց…

-Հիմա էլ Նիկոլն է, ես դրա…

Սակայն թե ինչ էր քանդել, ծախել կամ կերել երկրի վերջին ղեկավարը՝ վարպետը չհասցրեց ասել, որովհետև այդ պահին մի մեքենա կտրուկ արգելակեց առջևում, և ճերմակ «Վոլգան» ոչ մի կերպ չկարողացավ խուսափել դրա հետ բախումից:

ԹԵ ՈՐՔԱՆ ԿՓՉՎԻ ՓՈՒՉԻԿԸ

Երկրի վերջին ղեկավարը շարունակում էր պահել իր չափազանց բարձր վարկանիշը: Եվ ամենայն հավանականությամբ դեռ երկար կշարունակեր՝ չնայած հակառակ ճամբարում այլ համոզմունք կար: Հակառակ ճամբարում բոլորը միաբերան պնդում էին, որ այս իշխանությունները և անձամբ վարչապետը կպաշտոնավարեն առավելագույնը մեկ տարի:

Այդպես չէր կարող լինել:

Այդպես չէր կարող լինել, որովհետև մեկ տարվա մեջ հնարավոր չէր լինի մսխել վստահության այն պաշարը, որը կար ժողովրդի մոտ: Ու չնայած առաջին քայլերն արդեն արվում էին, բայց դեռ հարյուրավոր այդպիսի քայլեր պիտի արվեին՝ այնքան որ մեծ էր ժողովրդի այդ վստահությունը: Իսկ ինչո՞ւ էր մեծ:

Դրա համար կար ընդամենը մեկ կարևոր պատճառ: Որովհետև մեծ էր ժողովրդի ատելությունը նախորդ իշխանությունների հանդեպ: Իսկ նախորդ իշխանություններին ասպարեզից հեռացրել էին ներկա իշխանությունները: Եվ բավական էր հիշեցնել ժողովրդին, թե ինչ էին անում նախկին իշխանությունները, որ ժողովուրդը ներեր ներկաների ցանկացած սխալ: Եվ ներկաները, բնականաբար, հենց այդպես էլ անում էին: Եվ ժողովուրդը դա ընդունում էր:

Ու ոչ ոք հարց չէր տալիս՝ դեռ որքան ենք ապրելու այսպես՝ անցյալի ստվերների ներքո, միայն հետ նայելով, առանց առաջ քայլ անելու, առանց ապագայի մասին մտածելու:

Առայժմ չկար այդ հարցը: Այն չէր լինի առաջիկա մեկ, գուցե երկու տարիներին: Բայց չէ՞ որ մի օր այն հասունանալու էր: Հոգեբանական սնունդը, որով իշխանությունները

կերակրում էին հասարակ ժողովրդին, չէ՞ որ մի օր դառնալու էր ժամկետանց, իսկ օրվա հացը նույն այդ ժողովուրդը շարունակելու էր վաստակել ծայրահեղ դժվարությամբ:

Ի՞նչ պիտի աներ այդ ժամանակ իշխանությունը:

Բոլոր նախադրյալները կային, որ այն պիտի դառնար նախորդների նման: Այսինքն, պիտի ասեր ժողովրդին՝ ո՛չ, դու սխալվում ես, ամեն ինչ լավ է. ես բարձրացրել եմ քո աշխատավարձը, ես ապահովել եմ հսկա ներդրումներ, տնտեսական ու չգիտես ինչ աճ և այլ բաներ, պարզապես դու դա չես ուզում տեսնել:

Ժողովուրդը նման է երեխայի: Նա սիրում է փուչիկներ: Ինքը փչում է այդ փուչիկը ու ինքն էլ փչելիս պայթեցնում՝ չհասցնելով վայելել այն: Ամբողջ հարցն այն է, թե որքան կփչվի փուչիկը:

ՎԵՐՋԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Գործընկերներից բավական ժամանակ պահանջվեց՝ համոզվելու համար, որ ոչ միայն վարպետ Վարազդատի հետ է անհնար լեզու գտնել, այլև նրա ամրոցն է անառիկ: Ավելի ճիշտ՝ ոչ թե գործընկերների, այլ Պետրոսի և Կիրակոսի: Բանն այն է, որ իրենց նոր ծրագրերի մասին այս երկուսը Քսյուշային տեղյակ չէին պահել: Եվ չէին էլ կարող, որովհետև Քսյուշան նրանց գրողի ծոցը կուղարկեր: Ծրագրերն այդ հասկանալիորեն այնպիսին էին, որ նախատեսում էին գործողություններ, որոնք ոչ միայն չէր կարելի իրականացնել առանց օրենք խախտելու, այլև ավելին՝ դրանց համար սահմանված էին քրեական օրենսգրքի բավական ծանր հոդվածներ: Բանն, իհարկե, չէր հասնելու ծերուկ տաքսու վարորդի և նրա տիկնոջ հանդեպ բռնություն կիրառելուն: Դրան, բարեբախտաբար, թե Պետրոսը, թե Կիրակոսը դեմ էին:

Սակայն դեմ չէին ինչ-որ կերպ ավտոտնակ թափանցելու և քանդակը գողանալու տարբերակին: Երկար ու ձիգ օրեր նրանք անցկացրին այս տարբերակն իրագործելու համար ուղիներ փնտրելով: Ապարդյուն: Ճիշտ է, այս կողմերում տեսանկարահանող սարքեր չկային, բայց փոխարենը միշտ կային հարևաններ, շատ հարևաններ: Իրավիճակն ավելի էր բարդացնում այն հանգամանքը, որ թե՛ Պետրոսը, թե՛ Կիրակոսը վարպետ Վարազդատի տան մոտ երևալ չէին կարող, որովհետև երկուսին էլ ծերուկը ճանաչում էր և արդեն առիթ էր ունեցել վռնդելու:

Իսկ գիշերները վարպետը փակում էր իր սրբության սրբոցը յոթ կողպեքով: Անգամ այն օրերին, երբ վերջերս տեղի ունեցած վթարի ժամանակ վնասված «Վոլգան» դզողփչող Սերոժի մոտ էր:

Ինչ կարելի էր անել: Փաստորեն, խարդախություններ-

րի այդքան հարուստ փորձ ունեցող գործընկերների միտքն ու երևակայությունն այստեղ անզոր էին, և այս հարցի պատասխանը նրանք չունեին:

Եվ ո՞վ պետք է օգներ, եթե ոչ՝ Քսյուշան: Հասկանալով, որ տղաներն իրենից ինչ-որ բան են թաքցնում, մի օր Քսյուշան պահանջեց հավաքվել և քննարկել հետագա անելիքները: Իսկ տղաներին ոչինչ չէր մնում անել, քան խոստովանել, որ իրենք կանգնած են փակուղու առաջ:

-Պետք է մտածել ուրիշ ուղղությամբ,- ասաց Քսյուշան:

Տղաներն անօգնական հայացքով նրան նայեցին:

-Պետք է մտածել ուրիշ ուղղությամբ,- կրկնեց աղջիկը,- դուք ասում եք, որ նա անընդհատ շրջապատված է հարևաններով, ճի՞շտ է:

Տղաները հաստատական գլխով արեցին:

-Ուրեմն հենց այդ հարևանների ուղղությամբ էլ պետք է աշխատել:

Եվ Քսյուշան բացատրեց, թե ինչ նկատի ուներ: Ըստ նրա սցենարի՝ նախ պետք էր գտնել հարևանների մեջ այնպիսի մեկին, ով և՛ բավականաչափ մտերիմ էր վարպետ Վարազդատի հետ, և՛ կարելի էր նրան «գնել»: Այսինքն՝ մեկը, ով պատրաստ կլիներ որոշակի գումարի դիմաց գործարքի մտնել իրենց հետ:

-Եվ ինչպիսի՞ն է այդ գործարքը,- հետաքրքրվեց Պետրոսը:

-Նախ պետք է գտնել այդ մարդուն,- ասաց Քսյուշան,- մեկին, ով ասենք լուրջ ֆինանսական խնդիրներ ունի և նրան շտապ գումար է անհրաժեշտ:

-Ենթադրենք գտանք,- համառեց Պետրոսը,- հետո՞ ինչ ենք անելու:

-Նա պետք է փոխի քանդակը,- Քսյուշայի աչքերը փայլում էին:

-Ինչպե՞ս թե փոխի:

-Ես կարծես թե հասկանում եմ, թե դու ուր ես տանում,- միջամտեց Կիրակոսը:

-Այո՛,- ավելի ոգևորվեց Քսյուշան,- մենք նախապես մեկ այլ Լենին ենք պատվիրում՝ ճիշտ նույն չափերի և ճիշտ նույն տեսքով և մտածում ենք, թե ինչպես կարելի է փոխել այն մեր Լենինի հետ:

-Ես էլ դեռ ամեն ինչ լավ չեմ պատկերացնում,- անկեղծ ասաց Կիրակոսը,- բայց գաղափարը լավն է: Պետք է այն զարգացնել:

-Ծերուկը ոչ մեկին քանդակը չի տա,- առարկեց Պետրոսը,- այն նրա համար սրբություն է: Երբ ես նրան ասացի, որ քանդակն իմն է, քիչ էր մնում՝ ինձ սպաներ:

-Եվ ճիշտ էլ կաներ,- ծիծաղեց Կիրակոսը:

-Որովհետև դու ուզում էիր մեկընդմիշտ տանել քանդակը,- Քսյուշան ավելի լուրջ էր,- մինչդեռ մեր մարդը պետք է խնդրի այն ինչ-որ ժամանակով ու վերադարձնելու պայմանով:

-Միևնույն է, չի տա,- իրենը պնդեց Պետրոսը:

-Ամեն ինչ կախված է խնդրողից,- չհամաձայնեց Քսյուշան,- եթե մենք գտնենք ճիշտ մարդուն, կարող է և ստացվել:

-Համենայնդեպս, ուրիշ տարբերակ մենք չունենք,- եզրափակեց Կիրակոսը:

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՎԱԳԸ ԵՎ ՊԵՏՐՈՍ ԿՐՏՍԵՐԸ

ԽՍՀՄ տարիներին դասախոս Ղազարյանը այդ պետության պատմությունն էր դասավանդում Երևանի պետական համալսարանում: Պետություն, որն ունեցավ, բարեբախտաբար, շատ կարճ պատմություն: Սակայն, ավա՜ղ, այդ կարճ պատմությունն էլ բավական էր, որ մարդկանց մոտ ձևավորվեին այնպիսի ստրկական բարքեր և մտածողություն, որոնք ի զորու չեղավ խարխլել անգամ անկախությունը: Պատմություն, որի ընթացքում ձևավորվեց և թելադրող դարձավ մի այնպիսի մարդկային տեսակ, որից ազատվել չեղավ անգամ անկախությունից հետո: Կաշառակեր մարդու տեսակը, որն ամենուրեք էր՝ պետական կառավարման բոլոր օղակներում, բանակում և ոստիկանությունում, անգամ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունն ու առողջապահությունը: Եվ այդ տեսակը, դժբախտաբար, շարունակեց մնալ ամենուրեք անկախությունից հետո էլ:

Երբ դասախոս Ղազարյանը ծնողներից կաշառք էր վերցնում նրանց երեխաներին իրավաբանական կամ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ ընդունելու համար, նա թքած ուներ, թե այդ երեխաները հինգ, տասը տարի հետո անպիտան ոստիկաններ, դատավորներ կամ դիվանագետներ են դառնալու: Երբ նա ուսանողներից կաշառք էր վերցնում քննություն նշանակելու համար, նա թքած ուներ, որ համալսարանն ավարտելուց հետո նրանք իրենց հերթին են սկսելու կաշառք վերցնել:

Փոխարենը՝ պրոֆեսոր Ղազարյանը շատ լավ էր ապրում: Նա ուներ երկհարկանի առանձնատուն Արեշում՝ կահավորված բարեկամ պետությունների արտադրության թանկարժեք կահույքով և սանհանգույցի պարագաներով, նույնանման կահավորված երկհարկանի մի ամառանոց

Պտղնիում և բեժ գույնի մի «զրո վեց»՝ «Նիվայի» բամպերներով: Դա խորհրդային տարիներին: Անկախությունից հետո նա իհարկե շարունակում էր կաշառք վերցնել, բայց եկամուտներն այլևս այն չէին: Հետո արդեն իննսունյոթին կամ իննսունութին Ղազարյանը «կոոպերատիվ ինստիտուտ» բացեց, ուր կարող էր ընդունվել՝ ով պատահի, միայն թե ի վիճակի լիներ վճարել: Ինստիտուտը, սակայն, աշխատեց մի քանի տարի և չարդարացրեց իրեն: Պրոֆեսորն ընկավ պարտքերի տակ և կորցրեց իր երբեմնի «հեղինակությունը»: Բայց մինչ այդ նա հասցրել էր որդուն տեղավորել այնպիսի աշխատանքի, որ նա կարողանա անհոգ ապրել: Աշխատանքն, իհարկե, պետական համակարգում էր, և անհոգ ապրելու ձևն, իհարկե, կաշառք վերցնելն էր: Որդին չափազանց ճարպիկ էր գտնվել և կաշառք վերցնելու գործում գերազանցել հորը: Ավելին, նա կարողացել էր տարեցտարի առաջ գնալ և վերջին երեք տարիներին զբաղեցնում էր ինչոր ծրագրերի իրականացման գործակալության ղեկավարի պաշտոն: Սակայն, եթե առաջին հեղափոխությունը բացասաբար էր ազդել Ղազարյան ավագի վրա, ապա երկրորդը, կամ ավելի ճիշտ՝ «իրավիճակի փոփոխությունը», ողբերգական էր եղել Ղազարյան կրտսերի համար: Ազգային անվտանգության ծառայությունը բացահայտել էր նրա կողմից կատարված մի շարք հանցագործություններ՝ կապված բյուջեի չարաշահման հետ և ձերբակալել: Հետո, իհարկե, բաց էր թողել՝ փոխելով խափանման միջոցը չհեռանալու մասին ստորագրությամբ, բայց մինչ այդ պարտավորեցրել էր վերականգնել պետությանը հասցված վնասը և մի բան էլ ավելին: Պետությանը հասցրած վնասը Ղազարյան կրտսերը վերականգնել էր, բայց «մի բան էլ ավելիի» համար փող չէր մնացել: Եվ ահա նա կանգնած էր արդեն կալանավորվելու վտանգի առջև:

Մի խոսքով Ղազարյանների Արեշի տանը սարսափելի

վիճակ էր: Եվ այդ մասին գործընկերները իմացել էին լավատեղյակ աղբյուրից: Եվ հենց Ղազարյանների Արեշի տան դուռն էլ երկու հազար տասնութ թվականի նոյեմբերի հինգին ծեծեց Պետրոսը: Գործընկերները որոշել էին, որ հենց նա պետք է խոսի նախկին դասախոսի հետ: Վերջինս, երբ լսեց Պետրոս Գրիգորիչի անունը, բացականչեց.

-Ինչպե՞ս թե, նա քո պա՞պն էր:

-Դուք նրան ճանաչե՞լ եք,- ուրախացավ Պետրոսը:

-Ճանաչել եմ ես Պետրոս Գրիգորիչի՞ն,- քմծիծաղ տվեց պրոֆեսորը,- դու հարցնում ես՝ ճանաչել եմ ես Պետրոս Գրիգորիչի՞ն: Դու գիտե՞ս, որ քո հորը ես եմ համալսարան ընդունել:

-Ինչպե՞ս թե,- զարմացավ Պետրոսը:

-Այո, միջազգային հարաբերությունների ֆակուլտետ,- Ղազարյանը մի պահ մտածեց, հետո շարունակեց,- եթե չեմ սխալվում, դա ութսունմեկ թիվն էր, կամ ութսուներկու:

-Չեք պատկերացնի, թե որքան ուրախ եմ,- ոգևորվեց Պետրոսը:

-Ես անգամ քո պապի տանն եմ եղել,- շարունակեց նախկին դասախոսը,- Պետրոս Գրիգորիչը հենց այնտեղ ինձ տվեց… Լավ դա կարևոր չէ:

Նրանք երկար խոսեցին: Պրոֆեսորը խնդրեց կնոջը թեյ պատրաստել, իսկ Պետրոսը, որ նման զարգացման չէր սպասում, երկար ժամանակ չէր համարձակվում անցնել բուն գործին: Միայն երբ Ղազարյանը սկսեց պատմել, թե ինչ խնդիրների մեջ են իրենք հայտնվել, Պետրոսը քաջություն հավաքեց և ասաց.

-Ես կարող եմ Ձեզ օգնել:

-Իսկապե՞ս,- նախկին դասախոսը թերահավատորեն նայեց նրան:

-Ես կարող եմ ձեզ օգնել,- կրկնեց Պետրոսը,- բայց Դուք

էլ ինձ պիտի օգնեք:

Եվ նա պատմեց, թե ինչպես է պապին պատկանող Լենինի կիսանդրին հայտնվել վարպետ Վարազդատի մոտ, իսկ վերջինս ոչ մի կերպ չի ուզում վերադարձնել այն:

-Այո՛, Վարազդատը բարդ մարդ է,- հաստատեց պրոֆեսորը,- բայց ե՞ս ինչ կարող եմ անել:

-Պետք է նրան համոզել, որ մեկ օրով տա քանդակը ձեզ,- բացատրեց Պետրոսը:

-Ենթադրենք տվեց, ինչպե՞ս կարող եմ հետո չվերադարձնել: Պատկերացնո՞ւմ ես՝ նա ինձ ինչ կանի:

-Դուք այն կվերադարձնեք,- վստահ ասաց Պետրոսը:

-Այդ դեպքում...- կմկմաց Ղազարյանը,- ոչինչ չեմ հասկանում...

-Դուք կվերադարձնեք ճիշտ նույնանման մեկ այլ քանդակ,- բացատրեց Պետրոսը:

Նախկին դասախոսն ընկավ մտքերի մեջ:

-Չեմ հասկանում, ինչո՞ւ է այդ քանդակը այդքան կարևոր,- պրոֆեսորը կարծես բարձրաձայն մտածում էր,- մի՞թե նրանից ուրիշ ոչինչ չի մնացել...

Իրավիճակը կարող էր դառնալ վտանգավոր, բայց նման բան գործընկերները նախատեսել էին:

-Տատս ամեն ինչ վաճառել է, հասկանո՞ւմ եք: Եվ դա միակ բանն է, որ մնացել է պապիցս...

Նախկին դասախոսն իհարկե հիմար չէր: Թե որքանով նա հավատաց Պետրոսին, հայտնի չէ: Խորամանկ հայացքով նայեց նրան և ասաց.

-Ինչևէ, դա իմ գործը չէ: Ինձ հարկավոր է քսանհինգ միլիոն դրամ:

Պետրոսը սկսեց մտովի հաշվել: Լավատեղյակ աղբյու-

որը հայտնել էր, որ պրոֆեսոր Ղազարյանը ոտուձեռ ընկած փնտրում է երեսուն հազար դոլար:

-Որքա՞ն է քսանհինգ միլիոն դրամը՝ դոլարով:

-Հիսուն հազար:

-Կարող եմ տալ քսանհինգ:

Կանգ առան երեսուն հազարի վրա: Դա հենց այն գումարն էր, որը պիտի փրկեր Ղազարյան կրտսերին կալանավորումից:

-Բայց գումարն ինձ հիմա է անհրաժեշտ,- անառարկելի շեշտադրմամբ ասաց նախկին դասախոսը:

Սակայն Պետրոսն իր բարձրունքի վրա էր.

-Գումարը կստանաք, երբ ինձ մոտ կլինի պապիս ժառանգությունը:

-Այդպես չի լինի,- անզիջում գտնվեց նաև նախկին դասախոսը,- ինձ ավանս է պետք: Տվեք գոնե տասը հազարը:

-Տասը հազա՞ր,- կրկնեց Պետրոսը:

-Այո, տասը հազար: Եվ չմոռանա՛ք քանդակի կրկնօրինակը:

ԿԱՇԱՌՔ ՎԵՐՑՆՈՒՄ ԵՆ ՄԱՐԴԻԿ

Երկու հազար տասնութ թվականի աշնանը Հայաստանի Հանրապետությունում կարելի է ասել կաշառակերություն չկար: Ճանապարհային ոստիկանը վարորդին չտուգանելու համար փող չէր կորզում, մաքսավորը մաքսային ձևակերպումը դյուրացնելու համար գումար չէր պահանջում, դասախոսը քննություն նշանակելու համար կաշառք չէր վերցնում ու էլի նման բաներ:

Սակայն կաշառակերությունը ոչ թե արմատախիլ էր արված, այլ պարզապես արգելված էր: Ճանապարհային ոստիկանը, մաքսավորը, դասախոսն ու այլոք ոչ թե կաշառք չէին վերցնում, որովհետև գիտակցում էին, որ դա վատ բան է, այլ որովհետև վախենում էին բռնվել:

Հավանաբար, աշխարհում չկա մի պետություն, ուր կաշառակերությունն արգելված չլինի: Բայց աշխարհում կան բազմաթիվ պետություններ, ուր կաշառք վերցնողը չի վախենում կաշառք վերցնել: Չի վախենում վերցնել, որովհետև չի վախենում բռնվել: Որովհետև, եթե անգամ բռնվի, գիտի, որ կարող է կաշառք տալ բռնողին և չպատժվել: Բռնողն էլ, իր հերթին, չի վախենում կաշառք վերցնել բռնվողից: Որովհետև նա էլ իր վերցրածից բաժին է տալիս նրան, ով կարող է պատժել իրեն: Վերջինս էլ իր հերթին և այդպես շարունակ: Եվ սա, իհարկե վատ է, շատ վատ: Եվ Հայաստանի Հանրապետությունում, մինչև այս գրքում նկարագրված իրադարձությունների ժամանակահատվածը, պատկերն հենց այդպիսին էր կամ գրեթե այդպիսին:

Իսկ հիմա երկրում կաշառակերություն չկար: Միայն թե այն ոչ թե արմատախիլ էր արված, այլ արգելված էր: Ու արգելված էր երկրի առաջին դեմքի մակարդակով: Եվ դա, իհարկե, լավ էր, շատ լավ:

Բայցևայնպես, կար մի խնդիր. պաշտոնյան ոչ թե պիտի կաշառք չվերցնի՝ վախենալով, որ կբռնվի, այլ պիտի կաշառք չվերցնի՝ գիտակցելով, որ ինքը վատ բան է անում: Եվ որպեսզի կաշառակերությունն իսկապես արմատախիլ արվի, հենց այս գիտակցությունն է, որ պետք է ձևավորվի պաշտոնյայի մոտ:

Բայց այստեղ ևս կա մի խնդիր: Կաշառք վերցնողը մարդ է, սովորական մարդ: Նա ունի սիրուհի, հարևաններ, զոքանչ, ունի մի բազմոց և երկու բազկաթոռ, ապառիկով գնված ավտոմեքենա, ունի հոգսեր, հետաքրքրություններ ու թուլություններ: Վերը նշվածներից որևէ մեկի համար կաշառք վերցնելն, իհարկե, սրիկայություն է: Իհարկե, սրիկայություն է կաշառք վերցնել սիրուհուն կամ զոքանչին ծաղկեփունջ գնելու, փափուկ բազմոց ունենալու, ավտոմեքենայի ապառիկը փակելու կամ սեփական հետաքրքրություններն ու թուլությունները բավարարելու համար: Բայց կաշառք վերցնողը նաև մարդ է, ով ունի ընտանիք ու երեխաներ, որոնց պետք է պահել, կերակրել, ջերմացնել, հագցնել, մեծացնել, ուսման տալ, ամուսնացնել: Այս նպատակով կաշառք վերցնելը նույնպես վատ է, իհարկե: Բայց, մինչև այս նպատակով կաշառք վերցնողին մեղադրելն ու դատապարտելը, արդյո՞ք պետք չէ հոգ տանել, որ նա իր աշխատավայրում, ուր ստանում է կաշառքը, ստանա այնպիսի աշխատավարձ, որը կբավարարի առնվազն նրան, որ նա արժանապատվորեն հոգ տանի իր ընտանիքի կարիքներն ու մեծացնի իր երեխային:

Եթե հարյուր քսան հազար դրամ աշխատավարձ ստացող մաքսավորը, ոստիկանը կամ դասախոսը հիմա կաշառք չի վերցնում, ուրեմն նրա երեխաները սոված են մնում: Նա կարող է այդպես դիմանալ մի քանի ամիս, գուցե մի տարի՝ այդ ընթացքում բնականաբար թերի ու տհաճությամբ կատարելով իր պարտականությունները, բայց արդյո՞ք կարող է

դիմանալ դրանից ավելի: Հազիվ թե. նա կա՛մ կսկսի ուղիներ փնտրել՝ նորից կաշառք վերցնելու համար, կա՛մ կսկսի ուղիներ փնտրել՝ արտագաղթելու համար: Իսկ ի՞նչ կլինի, եթե այդպես սկսեն վարվել բոլորը. բոլորը, ովքեր ստանում են ծիծաղելի աշխատավարձ և չեն կարողանում պահել իրենց ընտանիքը: Կլինի նույնը, ինչ առաջ էր:

Բայց, այնուամենայնիվ, հույս ունենալով, որ այդպես չի լինի, վերադառնանք մեր պատմությանը:

-Ո՞վ քանդակագործ ծանոթ ունի,- հարցրեց Պետրոսը՝ միանալով գործընկերներին, ովքեր նրան էին սպասում Կասկադի սրճարաններից մեկում,- և տասը հազար դոլար:

Կիրակոսն ու Քսյուշան տարակուսանքով նայեցին նրան:

Պետրոսը տեղավորվեց սեղանի մոտ, մատուցողուհուն սուրճ պատվիրեց, սպասեց, մինչ նա կհեռանա և ասաց.

-Նա սկզբում հիսուն էր ուզում, բայց ես իջեցրի երեսուն: Միայն թե պայմանավորվեցինք, որ տասը հազարը նախա-

պես պետք է տանք: Ու քանդակի կրկօրինակը: Այլ կերպ նա համաձայն չէ:

-Դա լուրջ չէ,- ասաց Կիրակոսը,- այդպես գործ անել չի կարելի:

-Իսկ ինչպե՞ս է կարելի,- վրդովվեց Պետրոսը:

-Նա կվերցնի այդ գումարը և կփակի որդու պարտքը,- բացատրեց Կիրակոսը՝ չափազանց վստահ,- հետո նոր կփորձի Վարազդատից վերցնել քանդակը: Իսկ ինչ կլինի, եթե նա չտա:

-Կտա,- նույնքան վստահ բացականչեց Պետրոսը:

-Այնպես, ինչպես տվեց քե՞զ,- հեգնեց Կիրակոսը,- ի դեպ, ինչպե՞ս են ականջներդ:

-Իսկ քեզ նա վռնդեց ողջ Արեշի ներկայությամբ,- խոսքի տակ չմնաց Պետրոսը:

Նրանք շարունակեցին վիճել, մինչդեռ Քսյուշան լուռ լսում էր:

-Դու մոռանում ես, որ եթե չլիներ քո հիմարությունը, կուբացին չէր գողանա քանդակը, և հիմա այն մեզ մոտ կլիներ:

-Իսկ դու խոստանում էիր, որ քո ծանոթ պատգամավորները կբարեխոսեն օլիգարխի մոտ:

-Եթե ես չլինեի, դու նույնիսկ չէիր կարող գտնել քանդակի հետքը: Հենց իմ ծանոթ պատգամավորների շնորհիվ մենք գտանք այն:

-Ես ինքս էլ կարող էի գտնել:

-Դու միայն կարողանում ես կորցնել:

Այստեղ Պետրոսը հունից դուրս եկավ:

-Կորցնե՞լ,- բացականչեց նա ձեռքը խփելով սեղանին,- ես հաղթել եմ Ամերիկայի բոլոր կազինոներին՝ մինչ դու զբաղված էիր հարյուր տարեկան կանանց ծոցը մտնելով:

«Կորցնել» բառի իմաստը Պետրոսը սխալ էր հասկացել, քանի որ անգլերենով այն ավելի շուտ նշանակում է «պարտվել»: Բայց դա չէր հետաքրքիրը: Հետաքրքիրն այն էր, որ հունից դուրս չեկավ Կիրակոսը:

-Այդպես ասելով՝ դու վիրավորում ես ոչ թե ինձ, այլ կանանց,- ժպտաց նա:

Եվ այստեղ Պետրոսը ասաց մի բան, որը ոչ մի դեպքում չպիտի ասեր:

-Իսկ ինչո՞ւ չստացվեց Քսյուշայի հետ:

-Ինչը պիտի ստացվեր Քսյուշայի հետ,- զարմացավ Քսյուշան:

-Նա գրազ էր եկել:

-Ի՞նչ գրազ:

-Դե...- կմկմաց Պետրոսը,- քո հետ կապված:

-Հիմա՛ր,- արդարացիորեն ասաց Կիրակոսը:

-Հիմարը դո՛ւ ես,- անարդարացիորեն պատասխանեց Պետրոսը:

-Մի րոպե,- Քսյուշան փորձեց հանգստացնել նրանց,- եթե ձեզ թվում է, որ ես չգիտեի այդ մասին, դուք սխալվում եք:

-Ինչպե՞ս թե գիտեիր,- միաբերան բացականչեցին Պետրոսն ու Կիրակոսը:

Քսյուշան կում արեց իր հյութի բաժակից ու հանգիստ շարունակեց.

-Իսկ դուք կարծում էիք, որ ես հիմա պիտի նեղանամ ու գնա՞մ: Ես թեթև եմ նայում նման բաներին: Միայն ասեմ, որ ի սկզբանե երկուսդ էլ հավասար շանսեր ունեիք. զրո շանսեր: Հետևաբար, երկուսդ էլ պարտվել եք: Մնում է իմանալ, թե ինչի վրա էիք գրազ եկել:

Պետրոսն ու Կիրակոսը նայեցին միմյանց:

-Ենթադրում եմ՝ Լենինի ինչ-որ մասի,- Քսյուշան չսպասեց պատասխանի,- ասենք՝ տասը կիլոգրամ քաշով: Ճի՞շտ եմ ասում:

Կիրակոսը մեղավոր հայացք ընդունեց.

-Այո, մենք գրազ եկել էինք: Բայց հետո չեղարկեցինք այն: Կարող ես ճշտել Պետրոսից:

Վերջինս ինտենսիվորեն գլխով արեց:

-Դրանից ոչինչ չի փոխվում,- հանգիստ ասաց Քսյուշան,- դուք երկուսդ էլ պարտվել եք: Եվ, քանի որ պարտվել եք երկուսդ էլ, ուրեմն հաղթել եմ ես: Հետևաբար...

Բայց Կիրակսը ընդհատեց նրան.

-Հետևաբար մենք Լենինին բաժանում ենք երեք հավասար մասերի:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՊԵՏ ՎԱՐԱԶԴԱՏԸ ԿԱԹՎԱԾ ՍՏԱՑԱՎ

Երբ նախկին դասախոս Ղազարյանը Պետրոսից ստացավ մի ծրար, որի մեջ գումարն էր և մի հսկա արկղ, որի մեջ երկրորդ Իլյիչն էր, նա բոլորին խնդրեց իրեն չանհանգստացնել և սկսեց մտածել:

Տաքսու վարորդ Վարազդատին ժամանակին ինքը չէր սիրում, համարում էր սոցիալական ցածր խավի մարդ ու հետը գրեթե չէր շփվում: Բարև, բարի լույս, որոնք ասում էր բարձրից, ինչպես կասեր համալսարանի պահակին: Բայց և զգույշ էր հետը, որովհետև գիտեր՝ նա պինդ մարդ է, և մնացած հարևանները նրան հարգում են: Նրանք հարևաններ էին արդեն քառասուն տարի, այսինքն այն ժամանակվանից, երբ Ղազարյանը գնել էր Արեշի առանձնատունը: Վերջին տասը տարիներին միայն, երբ մնացել էր անգործ ու հիմնականում պարապ էր, սկսել էր ուզած-չուզած շփվել վարպետի հետ: Մանավանդ, որ նրանց կապող երկու կարևոր բան կար՝ նարդին և հին ժամանակների հուշերը: Հին ժամանակների, երբ երկուսն էլ ապրել էին ուզածի պես:

Բայց հին ժամանակներն անցել էին, անցել էին նաև նոր ժամանակները, և հիմա եկել էր բոլորովին այլ ժամանակ: Ժամանակ, երբ փաստորեն պետությանը թալանելու համար կարող են կալանավորել մարդուն: Ո՞վ չի թալանել՝ մտածում էր պրոֆեսորը: Կամ այնպիսի մարդ, ով եղել է պետական պաշտոնի, հնարավորություն է ունեցել թալանելու կամ կաշառք վերցնելու ու չի արել: Հազիվ թե: Ուրեմն ինչո՞ւ հենց իր որդու գլխին պիտի կոտրվեր այս ամենը: Էլ ո՞նց կլինի՝ հիսուն միլիոնի վնաս է հասցրել պետությանը: Ուրիշները հիսուն միլիարդի են հասցրել, հետո՞:

Ինչևէ, վնասի մեծ մասը վերականգնված էր, և մնացել

էր տասնհինգ միլիոն: Եվ այդ գումարը ինքն իրեն եկել թակել էր իրենց դուռը: Տարօրինակ էր, ինչ խոսք, բայց նաև խորհրդանշական բան կար: Ինչո՞ւ հենց Լենինը:

-Լենի՞նը,- քրթմնջաց վարպետ Վարազդատը,- ինչի՞դ է պետք Լենինը:

-Երևի գիտես,- խեղճացած ասաց նախկին դասախոսը,- դժբախտություն է եկել մեր տուն:

-Տղայի՞դ նկատի ունես,- հարցրեց վարպետը:

-Այո,- ավելի խեղճացավ պրոֆեսորը,- ուզում են նստեցնել նրան:

-Է թող չուտեր,- չարախնդաց վարպետը,- ինչքա՞ն է կերել:

-Ո՞վ չի կերել:

Վարպետն ուզում էր շարունակել նույն ոգով, բայց երևի խղճաց հարևանին և ավելի մեղմ ասաց.

-Լավ, Լենի՞նն ինչ կապ ունի:

Նախկին դասախոսը հուսահատ նայեց նրա աչքերին.

-Մտածում եմ, որ մի երկու օր դնեմ տանը, այն մեզ հաջողություն կբերի:

-Հաջողությո՞ւն, ասում ես,- վարպետը քորեց գլուխը,- արի նարդի խաղանք:

-Հիմա տալի՞ս ես, թե՞ չէ:

-Արի՜ նարդի խաղանք:

-Խաղա՞նք,- ոգևորված համաձայնեց պրոֆեսորը:

Ու հենց այդտեղ էլ սխալվեց: Անսպասելի հաջողությունից ոգևորված՝ նա չհասկացավ էլ, թե ինչպես ստացվեց, որ իրար հետևից երեք հատ «մարս» արեց վարպետին:

-Մի հատ էլ խաղանք,- կատաղած ասաց վարպետը վերջին պարտությունից հետո:

-Ես գործ ունեմ, գնամ…

-Ոչ, պիտի խաղանք:

Երկրորդ մրցամարտում Ղազարյանը հավաքեց իրեն և փորձեց ամեն ինչ անել, որ պարտվի: Բայց զառը զարմանալիորեն բարեհաճ էր, և պարտվել ոչ մի կերպ չէր ստացվում: Ինչ ասես չասաց զառերին վարպետ Վարազդատը, նախ՝ քեռակին ու մորքուր, հետո՝ հեր ու մեր, բայց՝ անօգուտ: Զառերն անդրդվելի էին և կարծես հատուկ այնպես էին անում, որ վարպետը պարտվի: Երկրորդ խաղից հետո նա շպրտեց դրանք գարաժի դռնից դուրս ու հարևաններից պահանջեց բերել նորերը:

-Այսօր քո օրը չէ, Վարազդատ, արի՛ ես գնամ, հետո կխաղանք,- աղերսագին ասաց պրոֆեսորը:

-Ո՛չ, պիտի խաղանք:

Սակայն նոր զառերն էլ չօգնեցին: Վարպետը պարտվում էր խաղ խաղի հետևից, հայհոյում, փրփրում, ձեռքով խփում սեղանին ու շարունակում խաղալ: Երրորդ խաղից հետո նա փակեց նարդին, մի քանի անգամ խփեց դրանով դազգահին ու ջարդուփշուր արեց այն: Հետո ասաց հարևաններին, որ նոր նարդի բերեն: Սակայն հարևանները չհասցրեցին: Վարպետ Վարազդատը բռնեց սիրտն ու ընկավ պրոֆեսոր Ղազարյանի գիրկը, ով այդքան անզգուշորեն հասցրել էր նրան այդ վիճակին:

Մինչ շտապօգնության գալը, վարպետը հայհոյում էր: Հայհոյում էր անխտիր ամեն ինչ և բոլորին, իսկ շտապօգնության գալուց հետո սկսեց հայհոյել բժիշկներին: Վերջիններս արձանագրեցին սրտի ծավալուն կաթված և ասացին, որ հիվանդին պետք է անմիջապես տեղափոխել հիվանդանոց: Միայն թե հիվանդը դեմ էր: Սփրթնած, անշարժ ու անհաղորդ հայացքով՝ նա շարունակում էր հազիվ լսելի հայհոյել և պահանջել, որ բոլորը հեռանան:

Այնուամենայնիվ, հարևաններին հաջողվեց դնել վար-

պետին պատգարակի վրա և տանել դեպի շտապօգնության մեքենան: Հատկապես ջանադրում էր պրոֆեսոր Ղազարյանը:

-Սպասեք,- այնպես կանչեց վարպետը, կարծես պատրաստվում էր վերջին կամքը ասել,- Լենինին բերեք:

-Վարազդատ, ախր ինձ էիր խոսք տվել…- Ղազարյանը քիչ էր մնում ձեռքից վայր գցեր պատգարակը:

-Ես քո…

Երբ վարպետ Վարազդատին ու Լենինին դրեցին շտապ օգնության մեքենան, և այն շարժվեց՝ ազդանշանները միացրած, պրոֆեսոր Ղազարյանը մնաց շվարած-կանգնած՝ անիծելով իր բախտը, որն այդքան բարեհաճ էր գտնվել այդ օրն իր հանդեպ՝ թեկուզ զառի առումով:

ՀԵՐԹԱԿԱՆ ՁԱԽՈՂՈՒՄԸ

Վարպետ Վարազդատը և Վլադիմիր Իլյիչը Էրեբունու հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքում անցկացրին երեք օր: Առաջին օրը, երբ շտապօգնության մեքենայով նրանց հասցրին հիվանդանոց, երկուսն էլ անգիտակից վիճակում էին, և երկուսի շանսերն էլ բժիշկները գնահատում էին հավասար: Հաշվի առնելով հիվանդի տարիքը՝ նրանք որոշեցին չդիմել վիրահատական միջամտության և տիկնոջն ու հարևաններին ասացին, որ պատրաստ լինեն վատագույն արդյունքին: Սակայն վարպետ Վարազդատը ուշքի եկավ մեկ ժամից և հարցրեց, թե որտեղ է Լենինը: Լենինին, ճիշտ է, հարևանները իջեցրել էին շտապօգնության մեքենայից, մեծ դժվարությամբ բարձրացրել երրորդ հարկ, ուր վերակենդանացման բաժանմունքն էր, սակայն ներս մտցնել չէին թույլատրել: Թող առայժմ մնա իմ սենյակում՝ ասել էր բժիշկը: Միայն թե հիմա, երբ անսպասելի գիտակցության եկած հիվանդը պահանջեց այն, բժիշկը ոչինչ անել չէր կարող: Չէր կարելի ծերուկին նոր սթրեսի ենթարկել և ուզած-չուզած՝ Լենինին բերեցին հիվանդասենյակ ու տեղավորեցին պատուհանի գոգին:

Վերակենդանացման բաժանմունքի դռան մոտ, միջանցքում հարևանները հերթապահություն սահմանեցին, իսկ երրորդ օրը, երբ բժիշկը հայտարարեց, որ հիվանդի վիճակը բավականաչափ լավ է, և նրան կարելի է տեղափոխել սովորական հիվանդասենյակ, գումար հավաքեցին անհրաժեշտ ծախսերի համար: Այդ ծախսերի մեջ էր մտնում նաև առանձին հիվանդասենյակի վճարը, ուր ևս երկու շաբաթ անցկացրին վարպետը, նրա կինը և Վլադիմիր Իլյիչը:

Իսկ որտե՞ղ էր այդ ընթացքում պրոֆեսոր Ղազարյանը: Պրոֆեսոր Ղազարյանին հարևանները թույլ չտվեցին ոչ

միայն տեսակցել հիվանդին, այլև ընդհանրապես՝ մոտենալ հիվանդանոցի շեմին: Բոլորը միահամուռ նրան էին մեղադրում կատարվածի համար: Դրամահավաքին մասնակցել պրոֆեսորին, իհարկե, ստիպեցին, և վերջինս տվեց բավական պատկառելի գումար՝ վերջերս ստացած ծրարի պարունակությունից: Նա արդարացիորեն հույս ուներ, որ դա կփոխի իր հանդեպ վարաբերմունքը, բայց այդպես չեղավ: Ամենավատը սակայն դա չէր, և ոչ էլ այն, որ Պետրոսը ժամը մեկ զանգում էր և հարցնում, թե ինչ եղավ կիսանդրին. ամենավատն այն էր, որ որդուն ամեն վայրկյան կարող էին կալանավորել: Եվ պրոֆեսորը որոշեց գնալ վտանգավոր քայլի: Ծրարով ստացած գումարը, որի վրայից մի քիչ ծախսել էր, և որը, ճիշտ է, պահանջվածից երեք անգամ պակաս էր, նա տվեց որդուն և ասաց, որ փոխանցի ուր որ հարկն է՝ այդպիսով հույս ունենալով ժամանակ շահել և մի փոքր երկարաձգել կալանավորումը: Նույն օրը Էրեբունի հիվանդանոցի դիմացի սրճարանում նա հանդիպեց Պետրոսին, ով եկել էր հաղթանդամ մի տղամարդու հետ: Վերջինիս, չնայած նա արևային մուգ ակնոցով էր և կեպիով, թվում էր՝ էլի է տեսել:

-Այսպես չի լինի, հարգելի՛ս,- խոսեց մուգ ակնոցներով ու կեպիով հաղթանդամ տղամարդը,- մենք ձեզ տվել ենք ձեր պահանջած գումարը, իսկ դուք մեզ չեք տվել մեր պահանջած իրը:

-Իսկ Դուք ո՞վ եք,- հարցրեց պրոֆեսորը՝ չիմանալով, թե ինչ ասել:

-Սովորաբար ինձ նման հարց չեն տալիս, իսկ եթե տալիս են, ես չեմ պատասխանում,- Կիրակոսը ուզում էր հանել մուգ ակնոցը, բայց մտափոխվեց,- իսկ Ձեզ, հաշվի առնելով Ձեր տարիքը և գիտական կոչումը, ես կասեմ հետևյալը. պայմանավորվածությունները պետք է հարգե՛լ:

-Ես ընդամենը ուզում էի ասել...- Ղազարյանն ակնհայ-

տորեն վախեցավ,- ուզում էի ասել, որ…

-Կարևոր չէ, թե Դուք ինչ էիք ուզում ասել,- ընդհատեց նրան Կիրակոսը,- որտե՞ղ է Լենինի կիսանդրին, որը Պետրոս Գրիգորիչից մնացած միակ հիշատակն է:

-Այն այստեղ է, հիվանդանոցում՝ երրորդ հարկում, երեք հարյուր քսան պալատում,- շուտասելուկի պես արտասանեց պրոֆեսորը:

-Իսկ ինչո՞ւ Դուք մինչև հիմա այն չեք վերցրել,- ավելի խիստ տոնով ասաց Կիրակոսը:

-Վարազդատը խոստացել է այն տալ, երբ դուրս կգրվի,- ստեց պրոֆեսորը,- մի քանի օր էլ համբերե՛ք, խնդրում եմ:

Կիրակոսը կրկին ձեռքը տարավ մուգ ակնոցին, որն ակնհայտորեն խանգարում էր և կրելու միակ պատճառն այն էր, որ նախկին դասախոսն իրեն չհիշի:

-Լավ, մենք Ձեզ տալիս ենք ևս երկու օր:

Սակայն երկու օրից գործընկերները քանդակը չստացան: Չստացան ոչ էլ հինգ օրից, ոչ էլ տասը, ոչ էլ այն ժամանակ, երբ վարպետ Վարազդատը դուրս գրվեց հիվանդանոցից և տեղափոխվեց տուն: Այս անգամ նա Իլյիչին տեղավորեց ոչ թե գարաժում այլ հյուրասենյակում, որովհետև բժիշկները պահանջել էին, որ նա առնվազն մեկ ամիս տանից դուրս չգա:

Պրոֆեսոր Ղազարյանը, ում հարևաններն այդպես էլ չթողեցին տեսնել վարպետ Վարազդատին, նույնպես փակվել էր իր տան հյուրասենյակում և չէր պատասխանում հեռախոսազանգերին:

Պարզ էր, որ սա հերթական ձախողումն էր, և գործընկերներին պետք էր նոր բան մտածել:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՊԵՏ ՎԱՐԱԶԴԱՏԸ ԲՈՒԿԼԵՏ ՍՏԱՑԱՎ

Ազգային ժողովի երկու հազար տասնութ թվականի ընտրությունների քարոզարշավի մեկնարկը վարպետ Վարազդատը դիմավորեց Արեշի իր տանը, որտեղից դուրս չէր գալիս արդեն տասը օր: Ամեն առավոտ օրվա մամուլը նրա համար բերում էին հարևանները՝ հերթափոխով: Առցանց լրատվամիջոցներին վարպետը չէր հետևում, քանի որ չուներ ո՛չ համակարգիչ, ո՛չ էլ համապատասխան հեռախոս: Եվ ահա, նրա առջև՝ սեղանին դրված էին օրվա երկու թերթեր, մեկը՝ առաջին, մյուսը՝ վերջին էջի վրա, մի բաժակ թթի օղի, ինչպես նաև տնական հավի մի կտոր՝ խաշած վիճակում: Առաջին էջի վրա բացված թերթին վարպետը կարդաց հետևյալ վերնագիրը՝ *«Իմ քայլը» դաշինքը սկսում է իր քարոզարշավը», վերջին էջի վրա բացված թերթին՝ «Սափկել է կենդանաբանական այգու կոկորդիլոսներից մեկը»:* Մինչ այս լուրերը կարդալը, սակայն, վարպետը խմեց թթի օղին, ապա պոկեց խաշած հավի հետույքը և սկսեց ախորժակով ծամել:

Առաջին վերնագրի տակ գրված էր հետևյալը. *«Վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Իմ քայլը» դաշինքն այսօր կսկսի իր նախընտրական քարոզչությունը Արագածոտնի մարզում: Ժամը տասնմեկին տեղի կունենա հանրահավաք Թալինի հրապարակում, ապա Փաշինյանը կայցելի Շիրակի մարզ՝ նախընտրական հանդիպումներ անցկացնելու ևս մի քանի համայնքներում: Երեկոյան հանրահավաք է նախատեսված Գյումրիում: Վարչապետի պաշտոնակատարը տեղեկացրել է, որ այսօրվանից արձակուրդ է վերցնում՝ քարոզարշավին լիարժեք մասնակցելու համար»:*

Երկրորդ վերնագրի տակ բոլորովին այլ ոլորտի լուր էր.

«Երեկ առավոտյան կենդանաբանական այգու կոկորդիլոսներից մեկին գտել են սատկած: Ալյոշա անունով կոկորդիլոսը տասը տարեկան էր: Այս մասին հայտնում են Կենդանաբանական այգու մամուլի ծառայությունից: Թե որն է կենդանու անկման պատճառը...»:

Սակայն Ալյոշայի անկման պատճառը, վարպետը չհասցրեց իմանալ, որովհետև այդ պահին հնչեց դռան զանգը: Միջանցքից լսվեց ինչ-որ խոսակցություն, ապա հյուրասենյակ մտավ տիկինը՝ ձեռքին մի քանի գունավոր թղթեր:

-Դրանք ի՞նչ են,- հարցրեց վարպետը:

-Բուկլետներ,- պատասխանեց տիկինը:

-Սկսվե՞ց,- զայրացավ վարպետը,- պատռի՛ր ու դե՛ն նետիր:

Բայց տիկինը չշտապեց այդպես վարվել: Փոխարենը՝ մեկնեց բուկլետն ամուսնուն ու ասաց.

-Մի տես՝ ով է:

-Ո՛վ ուզում է լինի,- ավելի բարկացավ վարպետը:

-Մի՛ բարկացիր, քեզ բարկանալ չի կարելի,- հանգստացրեց նրան տիկինը,- ախր Ալյոշիկն է:

-Ի՞նչ Ալյոշիկ,- զարմացավ վարպետը,- կոկորդիլո՞սը:

Զարմանալու հերթը հիմա տիկնոջն էր: Ավելին՝ նա անհանգստացած մոտեցավ ամուսնուն ու ձեռքը դրեց ճակատին: Բայց ջերմություն կարծես չկար:

-Քեզ ի՞նչ պատահեց,- հարցրեց նա:

-Ինձ ի՞նչ պիտի պատահի,- վարպետն անկախ իրենից ձեռքը մեկնեց բուկլետին:

-Ի՞նչ կոկորդիլոս:

-Գազանանոցի կոկորդիլոսն է սատկել: Անունն Ալյոշա է:

Բուկլետը, սակայն, վերջինիս հետ կապ չուներ: Դա ուրիշ Ալյոշա էր: Ավելի ճիշտ՝ Ալյոշիկ: Նա ապրում էր մի քա-

նի տուն այն կողմ:

-Ես քո հերն եմ անիծել,- ասաց վարպետ Վարազդատը և, այնուամենայնիվ, պատռեց բուկլետը:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԱԼՅՈՇԻԿԸ

Այն պահին, երբ վարպետ Վարազդատը պատռում էր բուկլետը, որից շինծու ժպիտով իրեն էր նայում գեղեցկադեմ մի երիտասարդ, նույն ինքը՝ պատգամավորության թեկնածու Ալյոշիկը, վերջինս նույն այդ ժպիտով կանգնած էր Հայաստանի փոքրիկ քաղաքներից մեկի կենտրոնական հրապարակում տեղադրված բեմի վրա և պատրաստվում էր ելույթի:

Վարպետ Վարազդատն, անշուշտ, ուներ իր պատճառները Ալյոշիկին չսիրելու համար: Նրան ճանաչում էր, երբ նա դեռ դպրոցական էր, և ինքը նրան իր տաքսիով տանում

էր դասի: Ամեն ամսվա վերջին Ալյոշիկի ծնողները վճարում էին քսան դոլար: Հազար ինը հարյուր իննսուներկուսին դա կատակ փող չէր: Ծնողները, սակայն, պայման էին դրել, որ եթե անգամ մեկ անգամ վարպետն ուշացնի իրենց որդուն դասից՝ կզրկվի ամսավճարից: Եվ ընդհանրապես, այդ փողն իր քթից էր գալիս, բացևայնպես, վարպետը ստիպված էր դիմանալ: Դժվար ժամանակներ էին և եկամտի ոչ մի աղբյուր չկար: Մի անգամ հարևաններից մեկը, իմանալով, որ վարպետն ամեն առավոտ Ալյոշիկին տանում է նույն դպրոցը, ուր հաճախում է նաև իր երեխան, խնդրեց վերջինիս էլ ճանապարհին վերցնել: Ու չնայած նա դրա համար գումար չէր տալու, վարպետը համաձայնեց. միևնույն է, մեքենայում տեղ կար: Մյուս երեխայի անունը Աշոտ էր, և նա սոցիալապես շատ ավելի անապահով ընտանիքից էր: Եվ ահա, ամեն անգամ ճանապարհին Ալյոշիկն առիթը բաց չէր թողնում նրան անհարմար վիճակի մեջ դնելու: Այս ինչ կոշիկ ես հագել՝ հարցնում էր ու ցույց տալիս իր թանկարժեք «Ադիդասները»: Իսկ դու այսպիսի ժամացույց ունե՞ս՝ ասում էր ու տղայի աչքը մտցնում իր էլեկտրոնային բազմաֆունկցիոնալ ժամացույցը: Հետո պայուսակից նարինջ կամ բանան էր հանում, մաքրում ու սկսում ճաճպացնելով ուտել՝ բնականաբար Աշոտին բաժին չհանելով: Ու մի օր էլ Աշոտը չդիմացավ ու Վոլգայի հետևի նստատեղին մի լավ քոթակեց Ալյոշիկին: Արդյունքը եղավ այն, որ վարպետ Վարազդատը զրկվեց իր ամսավճարից, իսկ Աշոտիկի ծնողներին տարան ոստիկանություն:

Տարիներ անց, երբ Ալյոշիկն արդեն ուսանող էր, նրա շնորհիվ հարևանները կրկին հայտնվեցին ոստիկանությունում: Այս անգամ տղային քոթակել էին համակուրսեցիները, որոնցից մեկը ոստիկանության ինչ-որ բարձրաստիճան պաշտոնյայի որդի էր, հետո եկել էին Արեշի իրենց բակ՝ մեկ անգամ էլ քոթակելու: Բայց հարևանները պաշտպանել էին

իրենց երեխային և իրենք էին ծեծել եկվորներին ու հատկապես՝ ոստիկանապետի որդուն: Արդյունքում հայտնվել էին ոստիկանությունում, որտեղ Ալյոշիկը ցուցմունք էր տվել նրանց դեմ:

Սույն երիտասարդի քաջագործությունները, բնականաբար, այսքանով չէին սահմանափակվում, բայց այսքանն էլ բավական էր, որ վարպետ Վարազդատը հիշեր ու կատաղեր: Ու հիմա այս երիտասարդն ուզում է պատգամավոր ընտրվել այն նույն թաղից, ուր նա անցկացրել է իր քաջարի մանկությունը, պատանեկությունն ու երիտասարդությունը՝ մտածում էր վարպետ Վարազդատը՝ պատռելով նախընտրական բուկլետը:

Իսկ քաջարի երիտասարդն այդ պահին շինծու ժպիտով կանգնած էր Հայաստանի փոքրիկ քաղաքներից մեկի կենտրոնական հրապարակում տեղադրված բեմի վրա և պատրաստվում էր ելույթի:

-Սիրուն տղա է,- ասաց հրապարակում հավաքված կանանցից մեկը:

-Դերասան է,- ասաց մյուսը:

-Չէ, ես իրեն ճանաչում եմ՝ երգիչ է,- ասաց երրորդը:

Այդ պահին պատգամավորության թեկնածուն, ով բացի Երևանում վարկանիշային ցուցակով առաջադրված լինելուց, առաջադրված էր նաև համամասնական ցուցակով և այդ ցուցակում զբաղեցնում էր բավականին բարձր դիրք, սկսել էր խոսել.

-Մենք պետք է ձեռք մեկնենք չունևորներին, մենք պետք է մեր երկրում վերացնենք աղքատությունը…

-Հրապարակում հավաքված կանացից մեկը ոգևորված ծափահարեց և ասաց.

-Խելացի տղա է:

-Երևանից է,- ասաց մյուսը:

-Չէ, ես իրեն ճանաչում եմ, մեր կողմերից է,- ասաց երրորդը:

Պատգամավորության թեկնածուն շարունակում էր ինքնամոռաց խոսել.

-Նախկինները դեռ կշարունակեն վերադառնալու իրենց փորձերը: Մենք պետք է մեկս մյուսին թև ու թիկունք լինեք, ոչնչից չվախենանք և ավարտին հասցնենք մեր պայքարը: Դուխով…

-Հզոր է,- ասաց հրապարակում հավաքված կանանցից մեկը:

-Իսկական տղամարդ է,- ասաց երկրորդը:

-Դուխով,- բացականչեց երրորդը:

Ո՛չ այս կանանց խոսակցությունները, ո՛չ էլ այս ելույթը վարպետ Վարազդատը բարեբախտաբար չէր լսում, երբ պատռում էր պատգամավորության թեկնածու Ալյոշիկի բուկլետը:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՊԵՏ ՎԱՐԱԶԴԱՏԸ ՍՏԱՑԱՎ ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՎԱԾԸ ԵՎ ՓԱՍՏՈՐԵՆ ՄԱՀԱՑԱՎ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի երկու հազար տասնութ թվականի արտահերթ ընտրությունների քարոզարշավի վերջին օրը՝ դեկտեմբերի յոթին, վարպետ Վարազդատը արթնացել էր չափազանց վատ տրամադրությամբ: Երազում տեսել էր, թե ինչպես է Վլադիմիր Իլյիչը գիշերն իջնում պատուհանագոգից և մտնում կնոջ ծոցը:

-Վլադիմիր Իլյի՛չ, այս ի՞նչ ես անում,- հարցրել էր վարպետը:

-Դու քնի՛,- շշնջացել էր Իլյիչը:

-Ինչպե՞ս թե քնի,- զարմացել էր վարպետը,- ախր նա իմ կի՞նն է:

-Դու քնի՛, քնի՛,- կրկին շշնջացել էր պրոլետարիատի առաջնորդը:

Թե ինչ էր եղել հետո, վարպետը չէր հիշում, բայց ամեն դեպքում կնոջը նայում էր կասկածամտորեն: Պատուհանագոգին դրված Լենինի կիսանդրուն ընդհանրապես չէր նայում: Նստել էր նրան թիկունքով ու թթվասերով հնդկաձավար էր ուտում: Եվ պատրաստվում էր խմել իր առավոտյան մեկ բաժակ թթի օղին, երբ լսվեց դռան զանգը: Քիչ անց հյուրասենյակ մտավ կինը և ասաց.

-Ինչ-որ պատգամավորության թեկնածու է:

-Ասա թող ռադը քաշի, գնա,- զայրացավ ծերուկը, բայց հետո փոշմանեց,- լավ, ասա թող գա:

Մտածում էր այդպիսով մի քիչ ցրվել գիշերը տեսած երազից ու հանգստանալ: Բայց եղավ հակառակը: Հյուրասենյակի դռների մեջ հայտնվեց պատգամավորության թեկնածուն, նույն ինքը՝ Ալյոշիկը:

-Ինչպե՞ս եք, վարպետ Վարազդատ,- իրեն հատուկ շինծու ժպիտով ասաց նա,- հարյուր տարի Ձեզ չեմ տեսել:

Ինչպե՞ս պիտի լիներ վարպետ Վարազդատը. բոլորովին վերջերս կաթված էր տարել, որքան ժամանակ չէր կարողանում գործի դուրս գալ ու սիրելի «Վոլգան» անտերության էր մատնել, իր կողմից աշխարհում ամենահարգված մարդը գիշերը փորձել էր մտնել կնոջ ծոցը, և հիմա էլ իր տան հյուրասենյակում կանգնած էր Ալյոշիկը:

Վերջինս մենակ չէր: Նրա հետ էին ևս երեք հոգի, որոնցից երկուսի սեռը պարզ էր՝ նրանք հաստատ աղջիկներ էին, իսկ ահա երրորդի հարցն անորոշ էր: Եվ հենց այդ երրորդն էլ, փաստորեն, պատճառ դարձավ, որ ընդհատվի ութսունամյա տաքսու վարորդի կյանքը:

Երբ վարպետ Վարազդատը ձեռքի բաժակի միջի թթի օղին լցրեց Ալյոշիկի դեմքին, անհասկանալի սեռի այդ երիտասարդը ճչաց.

-Ի՞նչ եք անում, ես հիմա ոստիկանություն կկանչեմ:

-Ի՞նչ… Ես քո…

Վարպետը չհասցրեց ավարտել: Ձեռքը տարավ սրտին ու ընկավ բազմոցին:

Իր կյանքի վերջին րոպեին նա փորձեց, բայցևայնպես չհասկացավ, թե ինչ սեռի էր ճչացողը: Սակայն հասկացավ ուրիշ բան, երբ հայացքն ընկավ պատուհանագոգին դրված Լենինի կիսանդրուն: Չի կարելի նրան առանց հսկողության թողնել կնոջ հետ մի տան մեջ:

-Ի՞նչ եղավ, Վարազդատ,- լացակումած գոռում էր կինը:

-Լենինին կթաղե՛ք ինձ հետ,- իր վերջին կամքն ասաց վարպետը:

Ու մահացավ:

ԻՆՉ ԻՄԱՆԱՐ ՊՐՈՖԵՍՈՐԸ

Գործընկերները վարպետ Վարազդատի մահկանացուն կնքելու մասին իմացան պրոֆեսոր Ղազարյանից: Մինչ այդ, սակայն, տեղի ունեցան մի քանի հետաքրքիր իրադարձություններ: Պրոֆեսորն ինքը հարևանի մահվան մասին իմացավ բավականին ուշ, քանի որ երկար ժամանակ էր փակված էր տանը և անջատել էր հեռախոսը: Հարևանների տներ շրջայցի շրջանակներում պրոֆեսորին այցելեց պատգամավորության թեկնածու Ալյոշիկը և ձեռքի հետ հայտնեց ցավալի լուրը:

-Ինչպե՞ս դա եղավ,- հարցրեց նախկին դասախոսը:

-Չգիտեմ ինչպես եղավ, բայց եղավ այն պահին, երբ ես պատրաստվում էի այցելել նրան,- ասաց Ալյոշիկը,- և ես պարտավորվեցի հոգալ նրա թաղման ծախսերը: Վարպետ Վարազդատը պատվավոր մարդ էր:

Առաջին մասում Ալյոշիկն իհարկե ստում էր, բայց երկրորդ մասը բացարձակ ճիշտ էր: Բանն այն է, որ վարպետի մահանալու պահին նրա տան հյուրասենյակում ներկա էին Ալյոշիկը՝ իր թիմով և ապագա այրին: Ուրիշ մարդ չկար: Երբ ծերուկը արտաբերել էր իր վերջին կամքը և հոգին տվել, այրին գրկել էր Ալյոշիկին և սկսել հեկեկալ: Եվ հեկեկոցների միջից ասել.

-Նրա համար Լենինն ավելի կարևոր էր, քան ես:

-Ոչ, իհարկե դա այդպես չէ,- հանգստացրել էր նրան պատգամավորության թեկնածուն:

-Հիմա ի՞նչ եմ անելու,- հեծկլտացել էր այրին,- նա ոչինչ չի թողել բացի իր հին մեքենայից:

-Դուք անհո՛գ եղեք,- ասել էր Ալյոշիկը,- ես թաղման հետ կապված բոլոր ծախսերը կվերցնեմ ինձ վրա: Ու հոգ կտանեմ

Ձեր մասին: Կարող եք ասել սա բոլոր հարևաններին: Եվ իհարկե մենք կկատարենք Ձեր հարգարժան ամուսնու վերջին կամքը:

-Իսկապե՞ս,- արցունքների միջից ժպտացել էր այրին:

-Խոստանում եմ,- հավաստիացրել էր պատգամավորության թեկնածուն:

Եվ իբրև հաստատում իր խոսքերի՝ մի քանի խոշոր թղթադրամ էր տվել տիկնոջը:

Պետք է ասել, որ Ալյոշիկը կատարել էր խոստումը: Սգո մի ծառայության պատվիրել էր կազմակերպել հոգեհանգստի և թաղման արարողությունները, Թոխմախի գերեզմանատանը տեղ էր վերցրել հանգուցյալի համար և վարձել մոտակա սգո սրահներից մեկը: Պայմանավորվել և վճարել էր նաև հոգեհացի համար: Այնուհետև հերոսի կեցվածքով վերադարձել էր հանգուցյալի տուն, ուր արդեն հավաքվել էին բոլոր հարևանները և հայտարարել, որ ամեն ինչ կազմակերպված է, թող ոչ ոք ոչինչ չձեռնարկի: Հարևանները բնականաբար կուլ էին տվել խայծը և սկսել այլ աչքով նայել Ալյոշիկին: Հիմա, եթե նա հերոս էլ չէր, ապա իրենց տարածքի ամենաարժանի պատգամավորության թեկնածուն էր:

Եվ ահա շաբաթ, դեկտեմբերի ութին՝ երկու հազար տասնութ թվականի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզարշավի լռության օրը Ալյոշիկը եկել էր պրոֆեսոր Ղազարյանի տուն: Բանն այն է, որ պատգամավորության թեկնածուն տեղյակ չէր իր թաղի անցուդարձից և չգիտեր, որ նախկին դասախոսը վաղուց արդեն չի վայելում նախկին հեղինակությունը և դեռ ավելին՝ լուրջ խնդիրների մեջ է:

-Ես չգիտեի, ազնվորեն՝ չգիտեի,- ասաց Ալյոշիկը՝ լսելով կրտսեր Ղազարյանի հետ կապված պատմությունը:

-Մենք փոխհատուցել ենք ամբողջ գումարը, դեռ մի բան էլ ավելին, բայց միևնույն է՝ ուզում են կալանավորել տղա-

յիս,- աղերսագին ասաց նախկին դասախոսը,- մի բա՛ն արա, խնդրում եմ:

-Ես չգիտեի,- կրկնեց պատգամավորության թեկնածուն՝ մտքում ծանրութեթև անելով, թե ինչպես կարող է օգնել պրոֆեսորին և արժե՞ արդյոք օգնել,- ազնվորեն չգիտեի:

-Ես բոլորին կասեմ, որ քեզ ընտրեն,- խոստացավ Ղազարյանը,- միայն թե մի բան արա:

-Կարելի է մի բան մտածել, կարելի է,- կմկմաց Ալյոշիկը՝ մտքում հաշվելով, թե այդ «բոլորը» քանի ձայն կարող է լինել,- դուք տվեք ձեր ձայները ինձ, իսկ ես մի բան կմտածեմ:

Հետո Ալյոշիկը գնաց սգո սրահ, ուր քիչ անց պետք է տեղի ունենար վարպետ Վարազդատի հոգեհանգիստը և հորդորեց պրոֆեսորին նույնպես գնալ:

Նախկին դասախոսն առանձնապես չհավատաց Ալյոշիկին: Նա ընտրություններին մասնակցել չէր պատրաստվում: Չէր պատրաստվում նաև գնալ վարպետ Վարազդատի հոգեհանգստին: Սակայն, նրա մտքով այլ բան էր անցել: Իսկ որտե՞ղ է Լենինը: Հո չի՞ կարող վարպետն իր հետ տանել նրան այն աշխարհ: Ի՞նչ իմանար պրոֆեսորը, որ հենց դա էր եղել վարպետի վերջին ցանկությունը:

Ղազարյանը միացրեց մի քանի օր անջատված հեռախոսը և զանգեց Պետրոսին:

-Վարազդատը մահացավ,- ասաց նա,- կարող ենք փոխանակել քանդակը: Բայց դուք պետք է օգնեք ինձ:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԾ ՄԱՐԴԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԹԵԹԵՎ ԼԻՆԵԼ

Վարպետ Վարազդատի հոգեհանգստի արարողությունը բավականաչափ մարդաշատ էր: Ներկա էր ողջ թաղը: Սակայն գլխավոր դերում ոչ թե հանգուցյալն էր, այլ պատգամավորության թեկնածու Ալյոշիկը, ով կազմակերպել էր հոգեհանգիստը, ինչպես նաև հուղարկավորությունը և հոգացել հոգեհացի ծախսերը: Ու հիմա նա ձայներ էր հավաքում իր համար: Հաջորդ օրը՝ երկու հազար տասնինը թվականի դեկտեմբերի ինչին, Վարազդատի հուղարկավորությանը զուգահեռ, տեղի էին ունենալու Ազգային ժողովի արտահերթ ընտրությունները:

Իսկ հոգեհանգստի արարողությանը զուգահեռ տեղի էր ունենում մեկ այլ բան: Այլ կերպ, քան՝ գողություն, այն բնորոշել չէր կարելի: Կամ գուցե կարելի՞ էր: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում կա՞ այնպիսի հոդված, որն արգելում է փոխել Լենինի մի կիսանդրին Լենինի մեկ այլ կիսանդրիով: Կամ կա՞ արդյոք հոդված, որն արգելում է մտնել ուրիշի տուն, երբ այդ տան դուռը բաց է:

Համենայնդեպս, իրավիճակն հենց այդպիսին էր, երբ Պետրոսն ու Կիրակոսը պրոֆեսոր Ղազարյանի ուղեկցությամբ մոտեցան վարպետ Վարազդատի տանը: Քսյուշան սպասում էր մեքենայի մեջ: Նա համաձայնել էր միանալ գործընկերներին՝ պայմանով, որ անօրինական ոչինչ չի լինելու. նրանք նախկին դասախոսի հետ մտնելու են ներս ու պարզապես փոխելու են քանդակները: Պետք է ասել, որ նախկին դասախոսն ինքն էլ գողության նման ոչինչ չէր նախատեսել: Համաձայն նրա ծրագրի՝ վարպետի տանը պետք է մարդ լիներ, ասենք՝ բարեկամներից կամ հարևաններից մեկը, իրենք պետք է մտնեին ներս և ասեին, որ եկել են Լենինի

քանդակը տանելու հոգեհանգստի սրահ: Այնուհետև պիտի փոխեին քանդակները: Այսքանը:

Հանգուցյալի տան դուռը բաց էր: Պրոֆեսոր Ղազարյանը, Կիրակոսն ու Պետրոսը ներս մտան չափազանց անվստահ, ասես վախենալով, որ վարպետ Վարազդատը ուր որ է կհայտնվի ու հայհոյելով կվռնդի իրենց:

Նախասրահի, ինչպես նաև խոհանոցի և հյուրասենյակի լույսերը վառ էին: Փայտե հատակը ճռճռում էր: Խոնավության ու մկնդեղի հոտ էր գալիս:

-Ո՞վ կա տանը,- վախվորած ձայն տվեց պրոֆեսորը:

Պատասխան չեղավ, և նա առաջինը մտավ հյուրասենյակ: Պետրոսն ու Կիրակոսը հետևեցին նրան: Քանդակն այստեղ չէր: Այն չկար նաև ննջասենյակում ու խոհանոցում, ուր չկայացած գողերը մտան հաջորդիվ:

-Երևի գարաժ են տեղափոխել,- ասաց պրոֆեսորը և ոտնաթաթերի վրա մոտեցավ խոհանոցից գարաժ տանող դռանը:

Այն ևս բաց էր: Գարաժում անտեր ու տխուր կանգնած էր սպիտակ «Վոլգան»: Սակայն Լենինը չկար…

-Նայենք մեքենայի մեջ,- ասաց Ղազարյանը,- ծերուկն ամենից շատ սիրում էր Լենինին և իր «Վոլգան»:

Սակայն Իլյիչն այստեղ էլ չէր:

Եվ չէր էլ կարող լինել, որովհետև այդ պահին այն գտնվում էր բոլորովին այլ մեքենայի մեջ: Ավելի ճիշտ՝ բեռնախցիկում:

Նույն օրը առավոտյան վարպետ Վարազդատի կինը զանգահարել էր պատգամավորության թեկնածուին և խնդրել էր տանել Լենինին տանից:

-Նա՛ իմ տունը քանդեց,- ասել էր նա,- ինչ Վարազդատը բերեց նրան տուն, ամեն ինչ թարս գնաց: Նախ խփեց

մեքենան, հետո կաթված ստացավ ու հիվանդանոց ընկավ, հետո մեռավ:

Եվ Ալյոշիկն իր օգնականների հետ եկել էր ու վերցրել կիսանդրին:

-Ինչ էլ ծանր է,- ասել էր օգնականներից մեկը՝ այն, ում սեռը այդպես էլ չէր հասկացել լուսահոգի վարպետը:

-Հեղափոխություն արած մարդը չի կարող թեթև լինել,- ամենայն լրջությամբ ասել էր Ալյոշիկը:

-Իսկ ո՞ւր ենք տանում,- հարցրել էր օգնականը:

-Մենք կտանեք այն Ազգային ժողով,- կարգադրել էր պատգամավորության թեկնածուն:

-Բայց չէ՞ որ այդ մարդը խնդրել էր թաղել այս քանդակն իր հետ,- զարմացել էր օգնականը, ով ներկա էր եղել այն պահին, երբ վարպետ Վարազդատը բարձրաձայնել էր իր վերջին կամքը:

-Ես նման բան չեմ լսել,- հայտարարել էր Ալյոշիկը,- տեղավորեք Լենինին իմ մեքենայի բեռնախցիկում:

Եվ հենց այդտեղ էլ գտել էր իր հերթական հանգրվանը պրոլետարիատի առաջնորդի կիսանդրին:

ԻԼՅԻՉԻ ԵՎ ԱԼՅՈՇԻԿԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Երկու հազար տասնութ թվականի Ազգային ժողովի արտահերթ ընտրություններում վարկանիշային ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածու Ալյոշիկն իր ընտրատարածքում հավաքեց ավելի քան տասը հազար ձայն: Եվ չնայած նրա անունը կար նաև իր քաղաքական ուժի համամասնական ցուցակում և բավական բարձր դիրքում, այնուամենայնիվ, նա պատգամավոր ընտրվեց վարկանիշային ընտրակարգով:

Ալյոշիկը հուզված էր, այնքան հուզված, որ թողեց գործընկերներին շտաբում, դուրս եկավ, նստեց իր մեքենան և սկսեց աննպատակ վարել այն քաղաքում: Քարուքանդ մի փողոցով անցնելիս զգաց, որ բեռնախցիկում ինչ-որ բան է դխկդխկում և հիշեց, որ այնտեղ է Լենինի կիսանդրին: Կանգնեցրեց մեքենան, իջավ և բացեց բեռնախցիկը: Լենինը չէր շրջվել, կանգնած էր այնպես, ինչպես կանգնում էր սովորաբար՝ կենդանության օրոք և խորհրդային քաղաքների հրապարակների պատվանդաններին: Դխկդխկոցն ուրիշ տեղից էր: Բանն այն է, որ պատգամավորության թեկնածուն, վստահ, որ հաղթելու է, նախօրոք մի արկղ շամպայն էր գնել և տեղադրել բեռնախցիկում:

Դե ինչ, կարելի է մի շիշը բացել՝ մտածեց Ալյոշիկը: Եվ այդպես էլ արեց: Հնչեց թեթև պայթյուն, խցանը թռավ օդ, և փրփրած հեղուկը թափվեց այսուայնկողմ:

-Ի՞նչ կարծիքի եք, որ խմենք հեղափոխության կենացը,- ասաց ժողովրդի ընտրյալը՝ դիմելով Վլադիմիր Իլյիչին և առանց պատասխանի սպասելու մի մեծ կում արեց հենց շշից:

Իսկ հին հեղափոխականը մի տեսակ թարս նայեց նրան, կարծես ասելով.

-Ա՛յ տղա, հեղափոխականները շամպայն չեն խմում, առհասարակ, հեղափոխականներն իրենց համեստ են պահում:

Միայն թե տղան հուզված էր և Իլյիչի հայացքը ճիշտ չընկալեց.

-Ես քեզ կդնեմ իմ աշխատասենյակում,- ասաց նա,-

այնպես՝ կատակի համար: Ու հետո էլ դու կարծես ինձ հաջողություն ես բերում: Հաջողության կենացը:

Ու նորից խմեց 22ից: Թևքով մաքրեց բերանը և ուշադիր նայեց Լենինին, ում ակնհայտորեն դուր չէր եկել այն, որ իրեն պիտի դնեն ինչ-որ աշխատասենյակում՝ կատակի համար: Ու նա ասաց.

-Հեղափոխությունը կատակ չէ, չի կարելի այն կատակի վերածել:

Բայց Ալյոշիկի հուզմունքը վերածվել էր ոգևորության, շամպայնը տաքացրել էր նրա գլուխը, և նա իրեն չափազանց լավ էր զգում:

-Տասը հազար ձայն, հասկանո՞ւմ ես, տասը հազար: Ես դա արեցի՛: Հասկանո՞ւմ ես:

Նա էլի մի մեծ կում արեց և սկսեց պարել մեքենայից հնչող երաժշտության տակ:

Մինչդեռ Իլյիչը սկսում էր զայրանալ.

-Ա՛յ տղա, հավաքի՛ր քեզ, հեղափոխությունը խաղ ու պար չէ:

Այստեղ նորընտիր պատգամավորը դադարեցրեց պարելը, ևս մի կում արեց 22ից, մոտեցավ բեռնախցիկին, ոտքը դրեց մեքենայի բամպերին և դիմեց Լենինին.

-Ի՞նչ ես այդպես նայում վրաս: Մենք քեզանից պակաս չենք: Մենք էլ ենք հեղափոխություն արել:

Եվ նրան թվաց, թե Իլյիչն իրեն հարցրեց.

-Իսկ դուք կուլակաթափ արե՞լ եք երկիրը:

-Կանենք:

-Իսկ դուք ձերբակալե՞լ եք «Էսեռներին»:

-Կձերբակալենք:

-Իսկ դուք սպանե՞լ եք ցարին և նրա ընտանիքին:

-Դա էլ կանենք: Դրա ժամանակն էլ կգա,- հավաստիացրեց Ալյոշիկը,- բոլորը պիտի պատժվեն:

Ու մի շնչով դատարկեց շամպայնի շիշը:

Հաջորդ հարցը Վլադիմիր Իլյիչը չհասցրեց տալ: Նա ուզում էր իմանալ, թե ինչ է լինելու իր ճակատագիրը: Բայց չիմացավ:

Չգիտես՝ հուզմունքից, ոգևորությունից, պարելուց, ցարի ընտանիքի սպանության տեսարանը պատկերացնելուց, թե պարզապես շամպայնից, Ալյոշիկը հանկարծ սկսեց իրեն վատ զգալ և օրորվելով քայլեց դեպի մոտակա աղբարկղը: Այդ աղբարկղը, կամ դրա նմանները հեղափոխության օրերին Ալյոշիկին և նրա թիմակիցներին ծառայել էին իբրև բարիկադներ: Սակայն փոխարենը դրան երկրպագելու՝ Ալյոշիկն սկսեց փսխել դրա մեջ:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՊԵՏ ՎԱՐԱԶԴԱՏԸ ՇՐՋՎԵՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՒՄ

Երբ հերթական անգամ գործընկերները կորցրին Լենինի կիսանդրու հետքը, նրանք նախկին անգամների պես չհիասթափվեցին, չհուսահատվեցին ու չնյարդայնացան: Ավելին՝ անգամ հումորով մոտեցան: Արդեն սովորական էր դարձել: Քսյուշան նույնիսկ ասել էր.

-Ինձ թվում է, թե իսկական Լենինն այնքան չի դեգերել իր կյանքում, որքան նրա այս կրկնօրինակը:

Իսկ Կիրակոսը կատակել էր.

-Մի՞թե այդպես էլ չի գալու այն պահը, երբ ես Լենինին կծեփեմ պատին ու կջարդեմ նրա գլուխը:

Պետրոսին, սակայն, այլ բան էր մտահոգում.

-Սա արդեն պատվի հարց է ինձ համար,- ասել էր նա,- արդյոք ես չե՞մ կարողանալու տեր կանգնել պապիցս մնացած ժառանգությանը:

Բայց երեքն էլ հասկանում էին, որ հարկավոր էր ինչ-որ բան ձեռնարկել, քանի դեռ ուշ չէր: Հույսը դարձյալ պրոֆեսոր Ղազարյանն էր: Վերջինս, իր հերթին, դեռ հույս ուներ գործընկերներից ստանալ փողի մնացած մասը, որն այդքան անհրաժեշտ էր իրեն:

Վարպետ Վարազդատի թաղումից հետո նախկին դասախոսը սպասեց մի քանի օր, ապա այցելեց այրուն: Տիկինը, լսելով Լենինի անունը, չկարողացավ իրեն տիրապետել և սկսեց գոռալ.

-Սպանեցիք ձեր Լենինով, հանգի՛ստ թողեք ինձ:

Պրոֆեսորը, սակայն, տեղի չտվեց.

-Մենք հին կոմունիստներ ենք՝ ես, Ձեր երջանկահիշատակ ամուսինը… Հիշե՛ք, թե ինչ լավ ժամանակներ ենք ապրել:

-Դե իհարկե հին կոմունիստներ եք,- մի քիչ փափկեց տիկինը,- Լենինը ձեզ համար ամեն ինչից կարևոր է:

-Նա մեր կուռքն է,- ամենայն լրջությամբ ասաց նախկին դասախոսը:

Այրին չափեց նրան ոտքից գլուխ ու ցածրաձայն, կարծես չուզենալով, արտաբերեց.

-Ուրեմն, դուք թաղեցիք ձեր կուռքին:

-Ի՞նչ,- չհասկացավ պրոֆեսորը:

-Ինչ-որ լսեցիք,- ավելի վստահ շարունակեց այրին,- նույնիսկ իսկական Լենինին չեն թաղել, իսկ դուք թաղեցիք ձերը:

-Ուզում եք ասել, որ...- կմկմաց պրոֆեսորը:

-Ուզում եմ ասել,- ընդհատեց նրան տիկինը,- սպանեցիք ձեր Լենինով, ինձ հանգի՛ստ թողեք:

Այրու մոտից դուրս գալուց անմիջապես հետո պրոֆեսորը զանգեց Պետրոսին և ասաց.

-Ես գիտեմ, թե որտեղ է ձեր քանդակը: Պատրաստեք փողի մնացած մասը:

Փողի մնացած մասն այս անգամ գործընկերներն իհարկե նախօրոք չտվեցին պրոֆեսորին: Կիրակոսը պահանջեց հայտնել քանդակի տեղը և խոստացավ գումարը տալ այն վերցնելուց հետո միայն: Պրոֆեսորը ստիպված էր համաձայնել:

Սակայն ամենահետաքրքիրը սկսվեց հետո: Քյուշան կտրականապես հրաժարվեց գերեզմանապղծությանը մասնակցելուց.

-Դա ավելի վատ է, քան գողությունը, հասկանո՞ւմ եք,- բացատրեց նա:

-Դու ճիշտ ես,- անսպասելիորեն համաձայնեց Կիրակոսը,- մենք դա չենք անի: Մեր փոխարեն կանեն ուրիշները:

Եվ գործընկերները նստեցին «Range Rover»-ն ու գնացին գերեզմանատուն: «Ուրիշներին» գտնելը դժվար չեղավ:

Երեք գերեզմանափորներին Կիրակոսը մոտեցավ այն պահին, երբ նրանք վերջացրել էին իրենց հերթական գործը և պատրաստվում էին մի կտոր հաց ուտել: Նա սեղանին դրեց երեք շիշ օղի: Օղիները կոչվում էին «Սերպ ի մոլոտ», և Կիրակոսը հատուկ էր ընտրել դրանք: Պիտակի վրա, մուրճ ու մանգաղից բացի պատկերված էր նաև Լենինի գլուխը:

-Ողջույն, աշխատավոր դասակարգին:

Գերեզմանափորները կարծես չհավատացին իրենց բախտին: Նրանցից մեկը, որ ամենատարեցն էր ու երևի՝ «բրիգադիրը», տեղից վեր թռավ ու քիչ էր մնում՝ պատվի կանգներ.

-Ինչ է պետք անել, շեֆ,- դիմեց նա անակնկալ բարերարին:

Եվ Կիրակոսը բացատրեց գործի էությունը: Նա դա արեց չափազանց նուրբ և գեղարվեստորեն՝ վախենալով, որ գերեզմանափորները կարող են հրաժարվել: Միայն թե դրա անհրաժեշտությունը, պարզվեց, չկար:

-Հարյուր հազար դրամ,- առանց երկար մտածելու ասաց «բրիգադիրը»:

Վարպետ Վարազդատի գերեզմանը քանդեցին գիշերը: Ծերուկը հանգիստ պառկած էր իր համար և հավանաբար մտածում էր, որ եկել են սխալն ուղղելու: Այն աշխարհ տեղափոխվելուց հետո, նա այդպես էլ չէր հասկացել, թե ինչու չկատարեցին իր վերջին կամքը ու իր հետ չթաղեցին Լենինին: Ու երբ Պետրոսն ու Կիրակոսը, որ շունչները պահած հետևում էին գերեզմանափորների գործողություններին, հասկացան, որ կիսանդրին այստեղ չէ, նրանց թվաց, թե վարպետը շուռ եկավ գերեզմանում:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԼԵՆԻՆԸ ԿՐԿԻՆ ՀԱՅՏՆՎԵՑ ԱՅՆ ՇԵՆՔՈՒՄ, ՈՐՏԵՂԻՑ ԴՈՒՐՍ ԷՐ ԵԿԵԼ ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Ալյոշիկի մեքենայի բեռնախցիկում Լենինն իրեն այնքան էլ լավ չէր զգում: Չնայած վերջին երեսուն տարիների ընթացքում ուր ասես չէր եղել, ում մոտ ասես չէր եղել, բայց նման անփույթ վերաբերմունքի, այն էլ՝ Ազգային ժողովի նորընտիր պատգամավորի կողմից, դեռ չէր արժանացել:

Իսկ որտեղ էր եղել պրոլետարիատի առաջնորդը վերջին երեսուն տարիներին:

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի քարտուղար Պետրոս Գրիգորիչի աշխատասենյակից նա տեղափոխվել էր քարտուղարուհու՝ Չնաշխարհիկի բնակարան, ուր անցկացրել էր տասը տարի՝ մինչև հազար ինը հարյուր իննսունութ թվականը: Այնուհետև Չնաշխարհիկը նվիրել էր կիսանդրին իր նոր սիրեկանին՝ բանաստեղծ Լյուդվիգին, ով ամբողջ տասնհինգ տարի պահել էր այն նկարիչ ընկերոջ արվեստանոցում: Հետո բերել էր Վերնիսաժ և վաճառել դատավոր Բոզոյանին, ում ամառանոցի այգում էլ կիսանդրին անցկացրել էր հաջորդ մի քանի տարին: Այստեղից Լենինին տարել էին կինոնկարահանումների, ուր, ըստ սցենարի, նրան պիտի դուրս նետեին տասներորդ հարկի պատուհանից: Բայց սցենարը փոխվել էր, և Լենինը փրկվել էր: Ավելին՝ նա բնակություն էր հաստատել մի օլիգարխի շքեղ առանձնատանը: Այստեղից նա պիտի տեղափոխվեր Կուբա՝ գործարար Էսթեբան Ռամիրես-Նունյեսի միջոցով ու հանգրվաներ Ռաուլ Կաստրոյի տանը կամ աշխատավայրում, սակայն գործարարի քարտուղար Ալեխանդրոյի թեթև ձեռքով Լենինը Կուբայի փոխարեն տեղա-

փոխվել էր Արեշ և հանգրվանել տաքսու վարորդ վարպետ Վարազդատի տանը, ինչից հետո քիչ էր մնում՝ իր վերջին հանգրվանը գտներ նույն այդ վարպետի գերեզմանում, սակայն հայտնվել էր ազգընտրյալ Ալյոշիկի մեքենայի բեռնախցիկում: Ահա այսպես: Եվ ինչ իմանար Վլադիմիր Իլյիչը, որ կրկին հայտնվելու է այնտեղ, որտեղից սկսել էր իր երկարուձիգ ճամփորդությունը:

Երբ երկու հազար տասնութ թվականի դեկտեմբերի քսանհինգին Ալյոշիկն իր ավտոմեքենան կայանեց Ազգային ժողովի ծառայողական մուտքից քիչ հեռու, նրա հետևում կայանեց սպիտակ «Range Rover»-ը, որի ղեկի մոտ նստած էր Կիրակոսը, կողքի նստատեղին՝ Պետրոսը, իսկ հետևում՝ Քսյուշան:

Դրան նախորդող մեկ շաբաթվա ընթացքում տեղի էին ունեցել հետևյալ իրադարձությունները: Կիրակոսը պրոֆեսոր Ղազարյանի ուղեկցությամբ այցելել էր վարպետ Վարազդատի այրուն և երկար զրուցել նրա հետ: Զրույցի ընթացքում իմացել էր, որ կա ոմն Ալյոշիկ, ով ոչ միայն կազմակերպել է վարպետի թաղումը, այլ նաև հոգացել է բոլոր ծախսերը: Հետո, արդեն առանց պրոֆեսորի, գործընկերները սկսել էին փնտրել Ալյոշիկին: Նրան գտնել, սակայն, հաջողվել էր միայն տասն օրից՝ դեկտեմբերի քսանհինգին, քանի որ երիտասարդը որոշել էր հանգստանալ բուռն ընտրարշավից հետո և մեկնել էր Եգիպտոս: Այդ ամբողջ ընթացքում կիսանդրին մնացել էր նրա մեքենայի բեռնախցում, սակայն այդ մասին գործընկերներին հայտնի չէր: Եվ մինչ ժողովրդի ընտրյալը վայելում էր իր վաստակած հանգիստը, Քսյուշան, Կիրակոսը և Պետրոսը, հատկապես՝ Պետրոսը, անհանգստությունից իրենց տեղը չէին գտնում: Կիրակոսին նույնիսկ հաջողվել էր մի պատրվակով մտնել Ալյոշիկի բնակարան, սակայն, բնականաբար, ապարդյուն:

Եվ ահա, այդ առավոտյան, իմանալով, որ երիտասարդը վերադարձել է, գործընկերները որոշել էին այլևս ժամանակ չկորցնել և հանդիպել նրա հետ: Հանդիպելը վերապահված էր Քսյուշային: Նա դա պետք է աներ իբր պատահաբար որևէ հարմար տեղում, ցանկալի էր՝ սրճարանում:

Միայն թե սրճարան այդ օրը Ալյոշիկը գնալ չէր պատրաստվում: Տանից դուրս գալով՝ նա ավտոտնակից հանեց մեքենան, նախ՝ գնաց գեղեցկության սրահ, ապա՝ կուսակցության գրասենյակ, հետո՝ Ազգային ժողով: Առաջին երկու տեղերում ոչ մի կերպ հարմար չեղավ, որ Քսյուշան, իբր պատահաբար, ծանոթանա նրա հետ: Երրորդ տեղում՝ առավել ևս: Նորընտիր պատգամավորը մեքենան կայանելուց հետո արագ մտավ Ազգային ժողովի անցակետ և կորավ դռների հետևում: Գործընկերները ստիպված էին սպասել դրսում: Կես ժամից Ալյոշիկը վերադարձավ՝ երկու ոստիկանների ուղեկցությամբ և բացեց մեքենայի բեռնախցիկը: Ոստիկաններից մեկն այնտեղից հանեց շամպայններով լցված մի արկղ, մյուսը՝ Լենինի կիսանդրին: Նրանք քայլեցին դեպի Ազգային ժողովի անցակետ, և Ալյոշիկը, թևերը թափ տալով, հետևեց նրանց:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՔՍՅՈՒՇԱՆ, ԻԲՐ ՊԱՏԱՀԱԲԱՐ, ԾԱՆՈԹԱՑԱՎ ԱԼՅՈՇԻԿԻ ՀԵՏ

Հյուսիսային պողոտայի սրճարաններից մեկում Ալյոշիկը գինի էր խմում, երբ ներս մտավ Քսյուշան և տեղավորվեց կողքի սեղանի մոտ: Նրա մուտքը սրճարանում առաջացրեց առնվազն չորս բալ ուժգնությամբ երկրաշարժ՝ հաճախակի հետցնցումներով: Երկրաշարժի էպիկենտրոնն այն սեղանի մոտ էր, ուր նստած էր Ազգային ժողովի նորընտիր պատգամավորը:

Քսյուշայի հագին նեղ ջինսե տաբատ էր և կաշվե կարճ բաճկոն՝ բազմաթիվ շղթաներով, ինչպիսին հագնում են մոտոցիկլետիստները: Սրճարան մտնելով՝ նա աչքերից բարձրացրեց արևային ակնոցը, հայացքով շրջեց սրահում և մոտեցավ դատարկ սեղաններից մեկին՝ Ալյոշիկի հարևանությամբ: Ձեռքով կանչեց մատուցողին և ասաց.

-Կամպարի՝ բալի հյութով: Եվ Wi-Fi-ի գաղտնաբառը:

Հետո պայուսակից հանեց հեռախոսը և սկսեց զբաղվել դրանով՝ ուշադրություն չդարձնելով շուրջը:

-Ձեզ երբևէ ասել են, որ Ձեզ նման գեղեցիկ Հայաստանում չկա,- ասաց Ալյոշիկը՝ հնարավորինս ցածր:

-Չափից դուրս պարզունակ միջոց է ինձ հետ ծանոթանալու համար,- պատասխանեց Քսյուշան՝ հայացքը հեռախոսից չկտրելով:

-Բանն այն է,- չափից ավելի ինքնավստահ շարունակեց Ալյոշիկը,- որ սովորաբար ես չեմ ծանոթանում, այլ ինձ հետ են ծանոթանում:

-Իսկապե՞ս,- Քսյուշան վերջապես նայեց նրա կողմը,- Դուք դերասա՞ն եք կամ գուցե երգի՞չ:

-Ո՛չ,- իբր անտարբեր նետեց Ալյոշիկը,- ես Ազգային ժո-

ղովի պատգամավոր եմ:

-Չի կարող պատահել,- Քսյուշան ձևացրեց, թե զարմացած է:

Այստեղ, Ալյոշիկը համոզված, որ իր դիրքերն ամրանում են, լայն ժպիտ ընդունեց, շոյեց սեփական մազերը և ասաց.

-Կարո՞ղ է Հայաստանի Ազգային ժողովի նորընտիր պատգամավորը հյուրասիրել Հայաստանի ամենագեղեցիկ աղջկան:

-Կարո՞ղ է- Քսյուշան նույնպես ժպտաց,- բայց նախ նա պետք է պատասխանի մի հարցի:

Ալյոշիկը ոգևորված վեր կացավ տեղից և գինու բաժակը ձեռքին՝ մոտեցավ կողքի սեղանին:

-Իսկ կարո՞ղ է Ազգային ժողովի պատգամավորը, ով, ի դեպ, տասը հազար ձայն է հավաքել ընտրությունների ժամանակ, նստել Հայաստանի ամենագեղեցիկ աղջկա կողքին:

-Բայց Դուք դեռ չեք պատասխանել իմ հարցին:

-Կպատասխանեմ,- Ալյոշիկը, առանց թույլտվություն ստանալու այնուամենայնիվ քաշեց աթոռն ու նստեց,- կարող եք հարցաքննել ինձ:

-Ես չեմ պատրաստվում հարցաքննել Ձեզ, ես ընդամենը մի հարց ունեմ…

-Միայն թե չհարցնեք՝ ամուսնացա՞ծ եք, թե՞ ոչ:

-Բոլորովին. ինձ այլ հարց է հետաքրքրում, Դուք սև՞ եք, թե՞ սպիտակ:

Այստեղ Ալյոշիկն անակնկալի եկավ:

-Ի՞նչ նկատի ունես,- անսպասելի «դու»-ի անցավ նա:

Քսյուշան նույնպես անցավ «դու»-ի:

-Նկատի ունեմ՝ դու նախկինների՞ց ես, թե՞ ներկաներից:

-Իհարկե ներկաներից,- հպարտորեն ասաց Ալյոշիկը,-

դու ի՞նչ է, կասկածո՞ւմ էիր: Մենք հեղափոխություն ենք արել:

-Այդ դեպքում կխնդրեմ Ձեզ վերադառնալ Ձեր սեղանի մոտ,- կրկին «Դուք»-ի անցավ Քսյուշան,- ես չեմ համակրում ներկա իշխանություններին:

Խոսակցության ողջ ընթացքում Ալյոշիկի ինքնավստահ հայացքը գամված էր զրուցակցին. այն մերթ իջնում էր նրա աչքերից դեպի պարանոցը, ապա աստիճանաբար ավելի ներքև՝ վերնաշապիկի արձակված մի քանի կոճակների արանքով, մերթ՝ նորից բարձրանում վերև: Սակայն լսելով Քսյուշայի վերջին բառերը նորընտիր պատգամավորի ինքնավստահությունը անմիջապես կորավ:

-Ինչպե՞ս...- կմկմաց նա,- մենք հեղափոխություն ենք արել:

-Կրկնում եմ,- հանգիստ ասաց Քսյուշան,- ես չեմ համակրում ոչ ձեզ՝ հեղափոխություն արածներիդ, ոչ էլ, առավել ևս, ձեր առաջնորդին:

Նա դա ասաց բավական բարձր, և Ալյոշիկը անհանգիստ աջուձախ նայեց՝ կարծես վախենալով, որ ինչ-որ մեկը կլսի:

-Բայց...- շարունակեց կմկմալ նա,- բայց, ինչպե՞ս կարելի է այդպես ասել...

Քսյուշան վեր կացավ տեղից, հանեց կաշվե բաճկոնը, կախեց այն աթոռի թիկնակին, կրկին նստեց ու վերադարձավ իր հեռախոսին՝ ակնարկելով, որ զրուցակիցն իրեն այլևս չի հետաքրքրում: Ապահովության համար նա արձակեց վերնաշապիկի կոճակներից ևս մեկը:

Սակայն Ալյոշիկը չէր էլ պատրաստվում հեռանալ: Ավելի ճիշտ՝ անկարող էր դա անել: Նա գամված էր մնացել իր աթոռին՝ ինչպես Լենինն իր պատվանդանին:

Մոտեցավ մատուցողը և սեղանին դրեց կամպարիով և

բալի հյութով բաժակը: Քսյուշան կում արեց՝ աչքի տակով նայելով սեղանակցին, կարծես փորձելով հասկացնել, թե ինչու է նա դեռ այդտեղ: Ալյոշիկը փորձեց հավաքել իրեն, որ վերջնական ֆիասկոյից խուսափի:

-Իսկ գուցե մի կո՞ղմ թողնենք քաղաքականությունը,- փորձեց ժպտալ,- ի՞նչ գործ ունի Ձեզ նման գեղեցկուհին քաղաքականության հետ:

-Ոչ մի,- Քսյուշան նույնպես ժպտաց:

-Տեսնո՞ւմ եք,- հուսադրված շարունակեց Ալյոշիկը,- թողեք Ձեր այդ խմիչքը և անցնենք գինու: Ես ուզում եմ Ձեզ հյուրասիրել այստեղի լավագույն գինին:

-Ես գինի խմում եմ միայն ընթրիքին:

-Ավելի լավ: Ուրեմն գնանք մի տեղ և ընթրենք:

Քսյուշան սեղանին դրեց հեռախոսը և ձևացրեց, թե ուշադիր նայում է զրուցակցին:

-Լսի՛ր, դու ինձ դուր ես գալիս,- դարձյալ «դու»-ի անցավ նա,- և գուցե ես ընդունեի քո հրավերը: Բայց կա մի խանգարող հանգամանք. Ձեր իշխանությունը…

-Ախր, դա ի՞նչ կապ ունի…

-Մեծ կապ ունի,- ընդհատեց նրան Քսյուշան,- ես սիրում եմ, երբ տղամարդը տղամարդ է լինում: Իսկ ձեր մեջ տղամարդկություն չկա: Ես կոնկրետ քեզ նկատի չունեմ, մի՛ նեղացի:

-Ես չեմ նեղանում, բայց…

-Հասկանո՞ւմ ես,- կրկին ընդհատեց նրան Քսյուշան,- ես տանել չեմ կարող ձեր իշխանությանը:

Եվ այստեղ տեղի ունեցավ այն, ինչը Քսյուշան ոչ մի կերպ չէր սպասում, որ տեղի կունենա: Պարզապես չէր հավատում:

Երբ դրանից մի քանի ժամ առաջ նա գործընկերների

հետ քննարկում էր, թե Ալյոշիկի հետ իբր պատահական ծանոթանալուց հետո ինչպես է պետք շարունակել, Կիրակոսն առաջարկել էր անհավանական թվացող մի սցենար, որի հետ Քսյուշան ոչ մի կերպ չէր ուզում համաձայնել: Բայց Կիրակոսը կարողացել էր համոզել նրան՝ վստահեցնելով, որ իր սցենարը կաշխատի: Եվ ահա, կարծես թե այն աշխատում էր: Երբ Քսյուշան ասաց, որ տանել չի կարող իշխանություններին, Ալյոշիկը մի պահ մտածեց, ապա մի փոքր առաջ եկավ և շշնջաց.

-Ես նո՛ւյնպես:

-Ի՞նչ,- անկեղծորեն զարմացավ Քսյուշան:

-Ես նույնպես տանել չեմ կարող Իրեն,- Ալյոշիկն ավելի առաջ եկավ և արդեն գոտկատեղից վերև ողջ մարմնով սեղանի վրա էր:

-Ո՞ւմ,- հարցրեց Քսյուշան:

-Դե, դու հասկանում ես:

-Չե՛մ հասկանում,- համառեց Քսյուշան:

Այստեղ Ալյոշիկը չդիմացավ և տվեց այն մարդու անունը, ում ինքը տանել չէր կարող: Ապա մարմնով հետ գնաց, արմունկով դիպավ գինու բաժակին և շրջեց այն:

ՍՅՈՒՐՊՐԻԶ

Ռեստորանի ընտրությունը Քսյուշան թողեց Ալյոշիկին, ավելին՝ առաջարկեց իրեն տանել այնպիսի տեղ, ուր կարող են ընթրել ոչ թե ընդհանուր սրահում, այլ առանձին սենյակում: Հետո արդեն, երբ տեղ էին հասել և նստել սեղանի շուրջ, Ալյոշիկը, չկարողանալով թաքցնել ոգևորությունը, ասաց.

-Սիրում եմ դուխով աղջիկներին:

Ի՞նչ իմանար նորընտիր պատգամավորը, որ դա գործընկերների գծած սցենարի մի մասն էր ընդամենը: Ու հետո էլ նա չպետք է արտաբերեր «դուխով» բառը:

-Ես էլ եմ սիրում դուխով տղաներին,- ասաց Քսյուշան՝ խորամանկ ժպիտով,- միայն թե իմ պատկերացրած «դուխովները» մի քիչ այլ են:

-Ի՞նչ նկատի ունես:

-Նկատի ունեմ, որ իրական դուխով մարդիկ դուխով են, երբ մենակ են, ոչ թե՝ երբ թաքնված են ուրիշների հետևում:

Բայց Ալյոշիկը կարծես չէր լսում.

-Ինչքա՜ն սիրուն ես դու…

Նա փորձեց բռնել Քսյուշայի ձեռքը, բայց աղջիկը ճարպկորեն մի կողմ տարավ այն:

-Հուսով եմ, դու այդպիսին չես,- շարունակեց նա:

-Ինչպիսի՞ն,- նեղսրտած հարցրեց պատգամավորը:

-Չես թաքնվում ուրիշների թիկունքում:

-Ես, միևնույն է, չեմ հասկանում, թե դու ինչ նկատի ունես,- Ալյոշիկը ավելի մոտ նստեց աղջկան,- խնդրում եմ, արի ուրիշ բանից խոսենք:

-Ոչ,- համառեց Քսյուշան,- ես պետք է իմանամ:

-Ի՞նչ իմանաս:



-Որ դու նրանցից մեկը չես:

-Բայց չէ՞ որ ես արդեն ասացի:

-Ի՞նչ ասացիր:

Եվ Ալյոշիկը ոչ միայն կրկնեց այն, ինչ ասել էր, այլ ավելի հեռուն գնաց: Ինչեր ասես չասաց իր թիմակիցներին ու առաջնորդին... Իսկ հետո եզրափակեց այսպես.

-Ես ինքնուրույն խաղ եմ խաղում: Նրանց հերն էլ անի-

ծած: Ինձ պետք էր պատգամավոր դառնալ, դարձա: Չեմ ուզում պատգամավոր ընկեր ունենալ. ուրիշները կերազեին:

Այստեղ Քսյուշան հանգիստ վեր կացավ տեղից ու ասաց.

-Պատվիրի՛ր ինձ համար ամենահին գինին, ես քիչ հետո կվերադառնամ:

Ալյոշիկը գրգռված հայացքով նայեց, թե նա ինչպես դուրս եկավ սենյակից, ապա կանչեց մատուցողին ու պատվիրեց ֆրանսիական ամենաէժան գինին, որը կար խմիչքների ցանկում: Հետո սկսեց մտածել, թե ուր կարելի է գնալ ընթրիքից հետո: Մտովի որոշեց, բայց, որպեսզի ամեն ինչ էլ ավելի էֆեկտիվ լինի, զանգեց օգնականին և պատվիրեց մի ծաղկեփունջ բերել ռեստորան: Հետո, իրենից չափազանց գոհ, հենվեց բազմոցի թիկնակին և սկսեց սպասել Քսյուշային:

Սակայն Քսյուշան չեկավ: Նրա փոխարեն եկավ Կիրակոսը՝ Պետրոսի ուղեկցությամբ:

-Դուք երևի սխալ եք մտել,- անտարբեր ասաց Ալյոշիկը՝ տեսնելով առանձնասենյակի դուռը բացած անծանոթ տղամարդկանց:

-Մենք մտել ենք հենց այնտեղ, ուր պետք է:

Կիրակոսը մոտեցավ սեղանին և առանց հրավերի սպասելու՝ նստեց: Պետրոսը մնաց կանգնած դռան մոտ:

Ալյոշիկը նախ շփոթվեց.

-Ի՞նչ եք անում, ինձ մոտ հիմա մարդ պիտի գա:

-Մա՞րդ,- կրկնեց Կիրակոսը:

Հետո Ալյոշիկն անհանգստացավ:

-Դուք գիտե՞ք՝ ես ով եմ:

-Գիտենք,- վստահ պատասխանեց Կիրակոսը:

Այստեղ արդեն Ալյոշիկը վախեցավ.

-Դուք որտեղի՞ց եք:

-Մենք հենց այնտեղից ենք, որտեղից պետք է:

Ալյոշիկն, այնուամենայնիվ, մի վերջին փորձն արեց՝ արդեն ակնհայտորեն սարսափած.

-Ես Ազգային ժողովի պատգամավոր եմ:

Կիրակոսը ծոցագրպանից հանեց ակնոցի տուփը, տուփից՝ ակնոցը, անշտապ մաքրեց այն թավշյա կտորով, դրեց աչքերին և հանգիստ ասաց.

-Ազգային ժողովի պատգամավորն էլ մարդ է: Եվ կարող է սխալվել: Անգամ կոպտորեն սխալվել:

-Բայց ես ի՞նչ եմ արել:

Կիրակոսը չհասցրեց ասել, թե ինչ է արել Ալյոշիկը, որովհետև այդ պահին բացվեց առանձնասենյակի դուռը, ու ներս մտավ մատուցողը ՝ գինու շիշը և երկու բաժակ ձեռքին: Պետրոսը ճանապարհեց նրան, փակեց դուռը ու ձիգ կանգնեց դրա առջև, ինչպես ժամապահն իր դիրքում: Այս տեսարանից Ալյոշիկն ավելի սարսափեց ու կրկնեց.

-Ես ի՞նչ եմ արել:

-Դու խաբել ես հանգուցյալին, խոստացել ու չես կատարել նրա վերջին կամքը: Դու գողացել ես նրա թանկագին մասունքը:

Ալյոշիկը կարծես թե անմիջապես չհասկացավ, թե ինչի մասին է խոսքը: Նա որոշ ժամանակ մտածեց, հետո նոր հիշեց: Այստեղ նա մի փոքր հանգստացավ, թեթևացած շունչ քաշեց ու ասաց.

-Ուրեմն դուք նրա բարեկամներն եք. անմիջապես հեռացե՛ք այստեղից, թե չէ ոստիկանություն կկանչեմ: Ես Ազգային ժողովի պատգամավոր եմ: Ի դեպ՝ վարչապետի թիմից:

Նման զարգացման Կիրակոսը բնականաբար սպասում էր: Նա իհարկե չհեռացավ: Ոչ էլ շտապեց պատասխանել:

Հանգիստ վերցրեց գինու շիշը, շուռումուռ տվեց այն, ապա նայեց պիտակին ու ասաց.

-Եվ դու ուզում էիր այս էժանագին գինով խաբե՞լ Քսյուշային:

Ալյոշիկն ուզում էր ինչ-որ բան ասել, սակայն Կիրակոսը չթողեց.

-Ասում ես՝ դու ինքնուրույն խա՞ղ ես խաղում: Ասում ես՝ դրանց հերն էլ անիծա՞ծ:

Ալյոշիկը դարձյալ միանգամից չհասկացավ, թե ինչի մասին է խոսքը: Հետո հիշեց, որ նույն բաները նա ասել է Քսյուշային և վախից այլայլվեց.

-Ես լուրջ չէի ասում, ես...- արագ-արագ խոսեց նա,- ես... Ես կատակ էի անում... Երդվում եմ:

Այդ պահին կրկին բացվեց առանձնասենյակի դուռը: Դռան մեջ նախ երևաց մի մեծ ծաղկեփունջ, ապա՝ Ալյոշիկի օգնականի դեմքը: Այն նույն օգնականի, որի սեռն անհասկանալի էր:

-Սյուրպրի՞զ,- բացականչեց նա՝ բերանը լայն բացած:

Հետո նայեց առանձնասենյակում հավաքվածներին, երկար մտածեց ու այդպես էլ չհասկացավ, թե ում է պետք տալ ծաղկեփունջը:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԼԵՆԻՆՆ ԸՆԿԱՎ ԱԼՅՈՇԱՅԻ ՈՏՔԻՆ, ԵՎ ԴՐԱՆՈՎ, ՓԱՍՏՈՐԵՆ, ԱՎԱՐՏՎԵՑ ԱՅՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Վլադիմիր Իլյիչ Լենինի մահվան պատճառը՝ ըստ դիահերձման պաշտոնական եզրակացության, եղել է տարածված անոթային աթերոսկլերոզը: Սակայն կա ոչ պաշտոնական վարկած ևս, որը երկու հազար չորս թվականին շրջանառության մեջ դրեց «European Journal of Neurology» հանդեսը: Համաձայն այդ վարկածի՝ պրոլետարիատի առաջնորդը մահացել է նեյրոսիֆիլիսից:

Լենինի մահից հետո թաղման հանձնաժողովը տասնյակ հազարավոր նամակներ և հեռագրեր էր ստանում երկրի տարբեր հատվածներից՝ առաջնորդի մարմինը պահպանելու խնդրանքով:

«Անհրաժեշտ է, որ Իլյիչը ֆիզիկապես մնա մեզ հետ, և աշխատավորների հսկա զանգվածները մշտապես կարողանան տեսնել նրան»,- ասվում էր «Պուտիլովյան» գործարանի բանվորների կողմից ստացված նամակում:

«Ժողովրդի կողմից այդչափ սիրված առաջնորդի մարմինը հողին հանձնել ոչ մի դեպքում չի կարելի»,- գրում էին Մոսկվայի Ռոգոժո-Սիմոնովյան շրջանի աշխատավորները:

«Չպահե՛լ հողում, ինչպես հասարակ մահկանացուի, չթաքցնե՛լ մեր աչքերից»,- պահանջում էին Օրենբուրգյան գուբերնիայի Շարլիկովյան վոլոստի գյուղացիները:

Արդյունքում Լենինի մարմինը տեղադրվեց Մոսկվայի Կարմիր հրապարակի դամբարանում և մինչև հիմա էլ այնտեղ է:

Պրոլետարիատի առաջնորդի մահից հետո՝ մինչև հազար ինը հարյուր իննսունմեկ թվականը, Խորհրդային Միության հանրապետություններում, Վարշավյան պայմա-

նագրի անդամ պետություններում, ինչպես նաև Մոնղոլիայում, Կուբայում, Հնդկաստանում, Վիետնամում և այլուր տեղադրվեց առաջնորդի մոտ տասնհինգ հազար արձան: Որքան էլ զարմանալի է, դրանց մոտ կեսը այսօր էլ կանգուն է:

Թե քանի Լենինի կիսանդրի է ձուլվել Խորհրդային Միության տարիներին, հայտնի չէ: Հայտնի չէ նաև, թե ինչ է եղել դրանց ճակատագիրը Խորհրդային Միության փլուզումից հետո:

Բացի մեկից:

Այն մեկից, որը մոտ երեսուն տարի առաջ մաքուր՝ իննսունինը հարգի ոսկուց ձուլել էր ոսկերիչ Հովսեփը՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի քարտուղար Պետրոս Գրիգորիչի պատվերով: Եվ նույն մարդու պատվերով էլ՝ ձուլելուց հետո քողարկել էր գիպսով, որպեսզի տպավորություն լինի, թե այն հենց գիպսից է, ոչ թե ոսկուց: Արդյունքում կիսանդրին ծանրացել էր ևս հինգ կիլոգրամով և դարձել հիսունհինգ կիլոգրամ: Հետո կուբացի Ալեխանդրոն կոտրել էր Լենինի քթի գիպսե շերտից մի կտոր, և կիսանդրին թեթևացել էր հինգ գրամով:

Մի խոսքով, երբ նորընտիր պատգամավոր Ալյոշիկն իր մեքենայի բեռնախցից հանեց Լենինի կիսանդրին այն կշռում էր ուղիղ հիսունչորս կիլոգրամ և ինը հարյուր իննսունհինգ գրամ:

Բանն այն է, որ մինչ այդ Ալյոշիկը չէր բարձրացրել սույն կիսանդրին: Առաջին անգամ, երբ այն վարպետ Վարազդատի տանից տեղափոխում էին նրա մեքենան, դա արել էին օգնականները, հետո մեքենայից Ազգային ժողով տարել էին հերթապահ ոստիկանները: Նրանք էլ Ազգային ժողովից բերել ու կրկին տեղավորել էին այն մեքենայի բեռնախցում:

Եվ գուցե հենց այդ հավելյալ չորս կիլոգրամ ինը հար-

յուր իննսունհինգ գրամն էր պատճառը, կամ գուցե պատճառը Իլյիչի քթի ձևախեղումն էր, որը նվազեցրել էր կիսանդրու քաշը հինգ գրամով, այնուամենայնիվ, բեռնախցիկից հանելուց և շրջվելուց անմիջապես հետո Ալյոշիկը կորցրեց հավասարակշռությունը, բայց անմիջապես չընկավ: Նախ ընկավ Լենինը: Ընկավ ուղիղ պատգամավորի ոտքին և ջարդուփշուր եղավ: Հետո նոր ընկավ Ալյոշան՝ ցավից գոռալով և ոտքը բռնելով:

Պետք է ասել, որ Ալյոշային օգնության հասնողներ չեղան: Մինչդեռ Վլադիմիր Իլյիչին միաժամանակ օգնության հասան բոլոր երեք գործընկերները:

ԵՐՆԵԿ, ԹԵ ԱՅՍ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Նոր տարին գործընկերները դիմավորեցին օղակաձև զբոսայգու բացության սրճարանում՝ «Մարդկանց երկիրը» ստուդիայի տղաների ու աղջիկների հետ: Սրճարանն այդ Քսյուշան, Կիրակոսն ու Պետրոսը գնել էին միասին՝ իրացնելով Լենինին և նվիրել երիտասարդներին:

Սեղանները հարուստ չէին՝ հաց և գինի, սակայն հարուստ էր տոնի բովանդակությունը: Երիտասարդներից մեկը սկսեց արտասանել.

Երնեկ, թե այս Նոր տարին
Վերջ տար հայի ցավերուն.
Չարը կորչեր ու բարին
Բուն դներ մեր սրտերուն:

Հետո շխկացրին բաժակները, խմեցին, մեկը սկսեց կիթառ նվագել, ու մի աղջնակ երգեց.

Երնեկ, թե այս Նոր տարին
Ազատ շնչեր Հայաստան,
Եվ շուրջ Մասիս մեր սարին
Փայլեին արտ-անդաստան:

Հետո ինչ-որ տեղից սկսեց զարկել թմբուկը, ու միացավ տղաների երգչախումբը.

Երնեկ թե այս Նոր տարին
Հայ ազգ ի մի գումարվեր,
Ի գլոխ Կարնո հայ ամրին
Հայի դրոշակ ծածաներ:

Եվ վերջում միացան բոլորը.

Հայեր երբեք չերկմտեք,
Կրկատարվի այս ամեն,
Եթե իսպառ մենք հանենք
Փոքրոգություն մեր սրրտեն...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4 ՆԱԽԱԲԱՆ
6 ՆԱԽԱԲԱՆԻ ՊԵՍ ՄԻ ԲԱՆ
8 ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ԿԻՐԱԿՈՍԸ
11 ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍԸ ՍՆԱՆԿԱՑԱՎ
14 ԿԻՐԱԿՈՍՆ ՈՒ «ԿՈՐՈՎԿԻՆԸ»
17 «ԺՈՒԼԻԿՆԵՐԸ»
19 ՔՍՅՈՒՇԱՆ
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԼԵՆԻՆՆ ԱՉՔՈՎ ԱՐԵՑ ՊԵՏՐՈՍ
21 ԳՐԻԳՈՐԻՉԻ ՏԻԿՆՈՋԸ՝ ՍԵԴԱ ԼԵՎՈՆՈՎՆԱՅԻՆ
ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ, ԿԱՄ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍՆ
26 ԱՅՑԵԼԵՑ ՀՈԳԵԲՈՒԺԱՐԱՆ
29 ՈՍԿԵՐԻՉ ՀՈՎՍԵՓԸ
32 ԱՐԻ ԲԱԺԱՆՎԵՆՔ
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ԿԻՐԱԿՈՍԸ
34 ԾԱՆՈԹԱՑԱՆ
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ԿԻՐԱԿՈՍՆ
37 ԱՐԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՔԱՅԼԸ
41 ՔՍՅՈՒՇԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՀԱՅՐԵՆԻՔ
43 ԹԵ ԻՆՉ ԷԻՆ ՄՏԱԾՈՒՄ ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ԿԻՐԱԿՈՍԸ
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ԿԻՐԱԿՈՍԸ
46 ԴԱՐՁԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ
ՏԱՏՈՒ ԵՎ ԹՈՌԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ. ԻՍԿ ՈՐՏԵՂ Է
50 ԼԵՆԻՆԸ
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԸ ՈՐՈՇԵՑ
53 ՀԵՏԱՔՐՔՐՎԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ
56 ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ
59 ՔՍՅՈՒՇԱՅԻՆ
63 ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍՆ ՈՒ ԿԻՐԱԿՈՍԸ ԳՐԱՉ ԵԿԱՆ
66 ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐ
68 ՇԵՖԻ ԿԵՆԱՑԸ 1
74 ՇԵՖԻ ԿԵՆԱՑԸ 2
77 ԻՍԿ Ո՞ՒՐ Է ՔՍՅՈՒՇԱՆ
80 ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՔԱՄԻՆ
83 ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԸ ԿՈՐՑՐԵՑ ԻՐ ԿԵՊԻՆ
86 ԵՍ ՀՈՎԱՆԱՎՈՐ ԿԳՏՆԵՄ
90 ՇԵՖԻ ԿԵՆԱՑԸ 3
ՀԻՆ ՄԱՐԴԸ, ԿԱՄ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՐՈՍԸ ՓՈԽԵՑ

94 ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
98 ՆԻԿՈԼԸ ՃԻՇՏ ԷՐ, ԵՍ ՍԽԱԼՎԵՑԻ
101 ՔՍՅՈՒՇԱՆ ԻՐ ԽՈՍՏՄԱՆ ՏԵՐՆ Է
105 ԺՈՒԼԻԿՆԵՐԸ 2
107 ՊԵՏՐՈՍ ԳՐԻԳՈՐԻՉԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻՆ
ԱՀԱ ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ԿԵՐՏՎՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
111 ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
115 ՄԱՔՈՒՐ ԷՋԻՑ
118 ՎԼԱԴԻՄԻՐ ԼԵՆԻՆԸ ԵՎ ՎՍԵՎՈԼՈԴ ԺՈՊԿԻՆԸ
Ո՞ՒՄ Է ՀԱՂԹԵԼ ԵՐԿՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ ԵՎ Ո՞ՒՄ
128 ՊԻՏԻ ԴԵՌ ՀԱՂԹԻ
130 «ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ «ՍԻԹՔՈՄԸ»
ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ
135 ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՆՈՐ ՍԵՐՆԴԻ
141 ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ 2
145 ԻՍԿ ԻՆՉ ԿԱ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ
148 ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԸ ՈՐՈՇԵՑ ՄՈՐՈՒՔ ՊԱՀԵԼ
152 ՔՍՅՈՒՇԱՆ ՉԱՐԵՑ ԴԱ
155 ԻՍԿ ՄԵՆՔ ԿԱՐՈ՞Ղ ԵՆՔ ԱՌԱՆՁԻՆ ԽՈՍԵԼ
163 ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՎ ՈՐՔԱՆ Է ՄՈՒԾՎԵԼ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ
166 ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ ԼՈՒՅՍՆ Է
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԸ ԴԱՐՁԱՎ
168 ՊԵՏՐՈՍԻ ՔԵՌԻՆ
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԸ ՉԴԱՐՁԱՎ ՊԵՏՐՈՍԻ
ՔԵՌԻՆ, ԲԱՅՑ ՓՈԽԱՐԵՆԸ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ
171 ԱՆԳԱՄ ՏԵՍԱՆ ԼԵՆԻՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՔՍՅՈՒՇԱՆ ԹՈՒՅԼ ՉՏՎԵՑ, ՈՐ
174 ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՆԵՆ
179 ՎԵՐՋԻՆ ՀՈՒՅՍԸ
183 ՎԱՐՊԵՏ ՎԱՐԱԶԴԱՏԸ
186 ԱԼԵԽԱՆԴՐՈՆ
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԸ ՆԵՐԵՑ ՊԵՏՐՈՍԻՆ
188 ԿԱՄ ԳՐԱՁՆ Ի ՉԻՔ
192 ԻՆՉ ԵՂԱՎ ԱԼԵԽԱՆԴՐՈՆ
196 ԵՐԴՎՈՒՄ ԵՄ ՖԻԴԵԼԻ ՀԻՇԱՏԱԿՈՎ
199 ԼԵՆԻՆԸ՝ ԳԱՐԱԺՈՒՄ
201 ԱՇՏԱՐԱԿԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ
205 ԸԴԻԳ Ո՞Վ Ի

ՔՍՅՈՒՇԱՆ ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ԽԱՂԻՑ ՈՒ
209 ՆՈՐԻՑ ՄՏՆՈՒՄ 209
212 ՄԻ ՓՈՔՐ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ 212
217 ՔՍՅՈՒՇԱՆ ԲԱՑՈՒՄ Է ԽԱՂԱՔԱՐՏԵՐԸ 217
220 ԷԼԻ ՄԻ ՓՈՔՐ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ 220
223 ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱԿՈՍԻ ՔԻԹԸ ՉՋԱՐԴԵՑ 223
227 ՀԱՋՈՐԴ ՕՐԸ ԿԱՐԵԼԻ Է ԲԱՑ ԹՈՂՆԵԼ 227
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՊԵՏ ՎԱՐԱՉԴԱՏԸ ՔԱՇԵՑ
230 ՊԵՏՐՈՍԻ ԱԿԱՆՋԸ, ԱՎԵԼԻ ՃԻՇՏ՝ ԱԿԱՆՋՆԵՐԸ 230
233 ՔՍՅՈՒՇԱՆ ՏԱՔՍԻ Է ՆՍՏՈՒՄ 233
236 ԹԵ ՈՐՔԱՆ ԿՓՉՎԻ ՓՈՒՉԻԿԸ 236
238 ՎԵՐՋԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ 238
242 ՂԱՉԱՐՅԱՆ ԱՎԱԳԸ ԵՎ ՊԵՏՐՈՍ ԿՐՏՍԵՐԸ 242
247 ԿԱՇԱՌՔ ՎԵՐՑՆՈՒՄ ԵՆ ՄԱՐԴԻԿ 247
250 ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ 250
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՊԵՏ ՎԱՐԱՉԴԱՏԸ
254 ԿԱԹՎԱԾ ՍՏԱՑԱՎ 254
258 ՀԵՐԹԱԿԱՆ ՁԱԽՈՂՈՒՄԸ 258
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՊԵՏ ՎԱՐԱՉԴԱՏԸ
261 ԲՈՒԿԼԵՏ ՍՏԱՑԱՎ 261
264 ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԱԼՅՈՇԻԿԸ 264
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՊԵՏ ՎԱՐԱՉԴԱՏԸ ՍՏԱՑԱՎ
268 ԵՐԿՐՈՐԴ ԿԱԹՎԱԾԸ ԵՎ ՓԱՍՏՈՐԵՆ ՄԱՀԱՑԱՎ 268
270 ԻՆՉ ԻՄԱՆԱՐ ՊՐՈՖԵՍՈՐԸ 270
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԾ ՄԱՐԴԸ ՉԻ
273 ԿԱՐՈՂ ԹԵԹԵՎ ԼԻՆԵԼ 273
276 ԻԼՅԻՉԻ ԵՎ ԱԼՅՈՇԻԿԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ 276
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՐՊԵՏ ՎԱՐԱՉԴԱՏԸ ՇՐՋՎԵՑ
280 ԳԵՐԵԶՄԱՆՈՒՄ 280
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԼԵՆԻՆԸ ԿՐԿԻՆ ՀԱՅՏՆՎԵՑ ԱՅՆ
ՇԵՆՔՈՒՄ, ՈՐՏԵՂԻՑ ԴՈՒՐՍ ԷՐ ԵԿԵԼ ԵՐԵՍՈՒՆ
283 ՏԱՐԻ ԱՌԱՋ 283
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՔՍՅՈՒՇԱՆ, ԻԲՐ ՊԱՏԱՀԱԲԱՐ,
286 ԾԱՆՈԹԱՑԱՎ ԱԼՅՈՇԻԿԻ ՀԵՏ 286
291 ՍՅՈՒՐՊՐԻԶ 291
ԹԵ ԻՆՉՊԵՍ ԼԵՆԻՆՆ ԸՆԿԱՎ ԱԼՅՈՇԱՅԻ ՈՏՔԻՆ,
ԵՎ ԴՐԱՆՈՎ, ՓԱՍՏՈՐԵՆ, ԱՎԱՐՏՎԵՑ ԱՅՍ
296 ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 296
299 ԵՐՆԵԿ, ԹԵ ԱՅՍ ՆՈՐ ՏԱՐԻՆ 299

ԱԲԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՔԱՄԻՆ

DARAK
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Խմբագիր՝ Վարդան Օնանյան
Հրատ. խմբագիր՝ Աշոտ Գաբրիելյան
Նկարիչ՝ Արիկ Գրիգորյան
Գեղարվեստական խմբագիր՝
Դավիթ Հակոբյան

Չափսը՝ 135x210մմ
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ^2
Տառատեսակը՝ GHEA Grapalat, չափը 10 pt

Տպագրվել է «Մագաղաթ» տպագրատանը